«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն

«Zoravar Sepouh» historical-political analytical center

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԹԻՎ 1(12)

# HISTORY AND POLITICS

## ACADEMIC JOURNAL

№1(12)

ԵՐԵՎԱՆ 2021

**Հանդեսը տպագրվում է «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ**

**Գլխավոր խմբագիր՝** ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

**Խմբագրական խորհուրդ**

Աշոտ Ենգոյան, Արմեն Ճուղուրյան, Արմեն Սահակյան, Բագրատ Էսդուգյան ( Թուրքիա, Ստամբուլ), Գարիկ Քեռյան,
Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյան, Էդիկ Մինասյան,
Ժիրայր Լիպարիտյան (ԱՄՆ, Բոստոն), Հովսեփ Աղաջանյան,
Մարտին Գիլավյան, Վալերի Միրզոյան, Վալերի Թունյան,
Ռաֆիկ Նահապետյան

**Գլխավոր խմբագրի տեղակալ՝** Արտաշես Ղազարյան

**Պատասխանատու քարտուղար՝** Թամարա Սարգսյան

# “НОВОЕ ПРОЧТЕНИЕ” ЭТНОКОНФЛИКТА АРМЯН И “ЗАКАВКАЗСКИХ ТАТАР“ В 1905-1906 ГГ.

ВАЛЕРИЙ ТУНЯН

**Ключевые слова** - армяне, “татары”, этноконфликт, “терроризм”, партия “Дифаи”, фальсификация.

В поле внимания исторических манипуляций азербайджанской пропаганды находятся события 1905-1906 гг., связанные с революционным кризисом в Российской империи начала XX в., включенные президентом Г. Алиевым в официальный реестр неизвестных геноцидов армян над азербайджанцами.[1]

Основные положения фальсификации событий 1905-1906 гг. имеют следующий вид.

**Таблица N 1**

| Положения | Реальное значение |
|---|---|
| 1. “События” 1905 г. | 1.“Пролог к геноциду 1918 г.” |
| 2. Инициаторы столкновений армяне, а татары - защитники строя, | 2. Причина - стремление к созданию автономного государства.[2] |
| 3. Публикация тенденциозных документов | 3. Цель распространение “истины” об армянах. |
| 4. “Геноцид армян” над азербайджанцами в 1905-1906 гг. | 4. Различие этнических интересов и политических элит. |
| 5. Формирование новой истории Кавказа. | 5. Борьба против признанной истории Кавказа.[3] |
| 6. События 1905 г. | 6. “Пролог к геноциду 1905 г.” |
| 7. Использование косвенных обвинительных данных. | 7. Игнорирование числа жертв февральских события 1905 г. в Баку. |

[1] Указ президента Азербайджанской Республики о геноциде азербайджанцев. http://1905.a. az/ru

[2] **Джаббаров Ф.**”События 1905 года были прологом к геноциду 1918 года”.- http://1905.az/ru/; Власти Российской империи и армяно-азербаджанский конфликт. http://vestnik.spbu.ru/html17/s02/s02v3/02.pdf

[3] Армянский вопрос на Кавказе. 1724-1914.СПб., 2011, т.2. с, 56,.568.

По мнению ученого секретаря Национального музея истории Азербайджана Фархад Джаббаров события 1905 г. г. являются малоисследованными, что объясняет установкой советской исторической науки по их освещению “сквозь призму революции 1905 г.” В результате возникла необходимость к новому прочтению этнических конфликтов в регионе: “Наша историковедческая наука нацелена преимущественно на изучение геноцида 1918 года, хотя своего рода прологом к нему являются события 1905 года. И корни событий 1918 года на самом деле нужно искать в событиях, произошедших в 1905 году. Но в то же время можно сказать, что в последние годы были сделаны определенные шаги и по изучению событий 1905 года“.

По его мнению, имеющийся подход отражал точку зрения, что “царское правительство в 1905 году спровоцировало стол-кновения армян и азербайджанцев“. Изучение архивов, позволяет выделить ряд этапов этноконфликта: в Баку имели место три резни в 1905 г.- 6-9 февраля, августе и октябре; Ереване - четыре, Нахичеване, Шуши и проч. Он пишет “Во время событий, начавшихся в феврале, армяне хотели истребить мусульманское население и создать в регионе нестабильную ситуацию”. Основой представляется “армянский сепаратизм” по созданию автономного государства в конце XIX-начале XX веков на территории России. Татары Закавказья представлены защитниками самодержавного строя: “В феврале азербайджанцам удалось это предотвратить”.[1]

Определенное значение для освещения данной темы имеет трехтомник документов “Армянский вопрос на Кавказе”,[2] призванном раскрыть борьбу “против закавказских татар” на английском, русском и азербайджанском языках.[3] Второй том сборника, представляет 1905-1906 гг., содержит изложение несостоятельных положений о ”геноциде азербайджанского народа” и “армянском терроризме”.[4] Между тем, особый отдел канцелярии наместника Кавказа фиксирует террористическую деятельность закавказских татар. Отмечается организация партии “Дифаи” (Защита”) в 1905-1906 гг., как ударной силы панисламизма, действующей по принципам шариата и терроризма.[5] Громкими терактами “Дефаи” признаны в 1906 г. убийство генерал-майора Голошапова, подполковника Энкеля

[1] **Джаббаров Ф.**”События 1905 года были … - http://1905.az/ru/.html

[2] В Баку состоялась презентация трехтомника «Армянский вопрос” на Кавказе. По материалам российских архивов и изданий.- http:// www.trend.az/azerbaijan/society/1865225.htm

[3] Т**але Гейдаров:** “Мы пытались противостоять вековой пропаганде армянской лобби”. - http://vesti.az/news/286458

[4] Армянский вопрос на Кавказе. По материалам российских архиво и изданий. СПб, 2011, т.2, с. 567, 568.

[5] **Байрамов Р.** Особенности национальной истории, или “Некоторые истины” национального движения Азербайджана. ч. I. - http://www.1news.az/analytics /2010052501483 0268.html

и д.ст. сов. Клещинского.[1] Эти теракты Джаббаров списывает на самооборону азербайджанцев.

Касаясь её деятельности Джаббаров ретуширует действительность: "Дифаи" является первой из трех организаций, созданных для защиты азербайджанцев от резни, осуществляемой армянами. Очень интересно, что "Дифаи" упоминается в полицейских документах и по завершению этих событий в 1907 - 1908 годах. Из этого можно сделать вывод, что "Дифаи" не приостановила свою деятельность, потому что несмотря на завершение кровопролития, продолжало оставаться определенное отрицательное отношение царского правительства и армян к азербайджанцам".[2] Не говорится, что "Дифаи" являлось ударным инструментом панисламистов.

Политическим прикрытием партии служило Центральное мусульманское благотворительное общество с главным правлением в Баку, которое возглавлял Ахмедбек Агаев. Последний являясь сторонником панисламизма затем эмигрирует в Турцию. Партия "Дифаи" завершила деятельность в 1909 г. из-за компрометации панисламизма терроризмом. Несмотря на это, Джаббаров партию "Дифаи" признает венцом национальных чаяний, а не просто оплотом терроризма: "Дифаи" сыграла большую роль в пробуждении национального самосознания азербайджанцев. В газете "Иршад" была опубликована программа партии "Дифаи". То есть, у организации была также определенная политическая платформа".[3] Более того она набирала и использовала в своих рядах мусульман Персии.[4]

Вся эта деятельность вписывается не просто в "определенную платформу", а экспансионисткую. Весной 1907 г. в Елисаветполе мусульманский съезд постановил:1) провести в Крыму мусульманский съезд для организации "всеобщего мусульманского союза"; 2) при содействии бакинских нефтяных капиталистов как Тагиев и других купить у армянского населения все земли от Агдама до Ходжалу; 3) превратить Карабах в мусульманскую провинцию.[5]

Азерпроп стремится насаждать миф о том, что в феврале 1905 г. армяне спровоцировали в Баку четырехдневную межнациональную резню, обернувшейся гибелью множества людей.[6]

---

[1] **Дякин В. С.** Национальный вопрос во внутренней политике царизма (XIX- начало XX вв.). СПб, 1998, с.629.

[2] **Джаббаров Ф.**"События 1905 года были …- http://1905.az/ru/.html

[3] **Джаббаров Ф.**"События 1905 года были …- http://1905.az/ru/

[4] Национальный архив Армении (НАА), ф. 102, оп. 2,д. 193, л. 4.

[5] **Дякин В. С.** Национальный вопрос.., с.630.

[6] Охота на губернатора:армянский террор против России. – Историческая призма. – 1905.az/ru/охота-на-губернатора-армянский-терро//

В этом отношение верхом постулатов Джаббарова является тезис оправдания бездеятельности Бакинского губернатора князя М. А. Накашидзем неприязнью к нему во время вице-губернаторства в Ереванской губернии (1892-1903 гг.),[1] что определялось критицизмом армян к деятельности царской администрации по закрытию армянских школ в 1896 г. и секуляризацией церковного достояния в 1903 г.

При этом армяне не вели борьбу за создание автономного государства на территории Российской державы, а стремились добиться от великих держав обещанных реформ по 61 ст. Берлинского конгресса 1878 г. и майских реформ 1895 г. в Западной Армении. В данном же случае Джаббаров лишь перелаживает тезис журнала "Русское обозрение" за апрель 1896 г. о том, что армяне рассматривают Кавказ как базу для создания "Великой Армении". В это время армяне пережили протогеноцид, когда во время "зулума" 1894-1896 гг. потеряли 300 тыс. жизней.[2] Азерпроп же антиармянский тезис об "Великой Армении переставляет на внутреннюю жизнь России 1905 г., игнорируя собственные установки.

В 1905 г. глава бакинской администрации Накашидзе действительно закрыл глаза на происходящие события и не принял мер по пресечению происходящих погромов, заняв односторонюю позицию в начале межэтнического конфликта. Об этом М. Гасымлы отмечает: "Губернатор Баку князь М.А. Накашидзе сказал тогда представителям влиятельных азербайджанцев, что протесты армян направлены не только против власти, но и против азербайджанцев, и они должны помочь в их пресечении, за что правительство будет только благодарно".[3]

В всеподданнейшем докладе министра финансов В.Н. Коковцева царю Николаю II от 14 февраля 1905 г. указана позиция администрации во время "бакинской смуты":"Местная власть оказалась совершенно бессильной предупредить их или хотя бы пресечь кровавый погром. Город получил военное подкрепление только тогда, когда акты насилия уже совершились и спокойствие было, до некоторой степени, восстановлено вмешательством влиятельного духовенства".[4]

И отнюдь не случайно, что Джаббаров выдвинул риторическую формулу оценки его деятельности: кн. Накашидзе организатор резни 1905 г. или жертва клеветы. И сам же дает от- веты: "Все эти обвинения в адрес

---

[1] **Фархад Джаббаров. Князь М. А.** Накашидзе:организатор армяно-азербайджанской резни 1905 г. или жертва клевет? – Труды Инститита истории Грузии - XII. Тбилиси, 2017, с. 340-342.
[2] **Тунян В.Г.** Легенды и Были: охранка и Армения, XX – нач. XX вв.Ереван, 2008, с.40-42, 56.
[3] **Гасымлы М.** Анатолия и Южный Кавказ в 1724-1920 - гг.: в поисках исторической истины.М., 2014,(2016) с. 106.
[4] **Эдельман О.** Межнациональные столкновения в Баку 7-10 февраля 1905 года, N 4. - https://regnum.ru/news/polit/2273761.html

М. Накашидзе, а в его лице - в адрес властей не опирались на какую-либо серьёзную доказательную базу и ссылки на достоверные источники, следовательно, они преследовали единственную цель - объявить имперское правительство главным виновником резни, скрыв более глубинные причины конфликта“.[1]

Джаббаров не рассматривает противоположную точку зрения: “Бакинский губернатор Накашидзе - государственный изменник и военный преступник”.[2] В сонм виновников февральского бакинского погрома признаются местные пантюркисты: нефтяной магнат Г. Тагиев, редактор газеты “Каспий” А. М. Топчибашев, сотрудник газеты ”Каспий” Ахмед Агаев и переводчик губернатора Шахтахтинский. В результате погрома 6-9 февраля 1905 г. в Баку погибло 225 армян, а мусульман -111. Данные Бакинского статистического бюро и “татаро-русско-армянского комитета” (созданного после резни) содержат также число раненых: армян - 121, а мусульман - 128.[3]

По данным отчета сенатора А.М. Кузминского о ревизии города Баку и Бакинской губернии: в событиях 6-9 февраля погибло 232 человека: армяне - 192, азербайджанцы - 36, русские - 4. Раненых 185: армян - 66, азербайджанцы - 83, другие национальности -36.[4] Эти данные Кузминского фиксирует М. Гасымлы,[5] но Джаббаров ставит их под “сомнение”, указывая, что Статистическое бюро - комитет помощи в апреле 1905 г. привел цифру убитых в событиях 6-9 февраля в 333 человека, а мае - 378 “пострадавших”. Делается предположение, “что число жертв сознательно приуменьшалось, чтобы не вызывать и без того острое раздражение в обществе”.[6]

Критицизм к данным Бакинского статистического бюро и “татаро-русско-армянского комитета”, а также сенатора Кузминского обусловлен тем, что они противоречат геноцидной картине пострадавших азербайджанцев. Поэтому используются сомнение и вспомогательные данные, призванные представить желанный миф об армянском терроризме против царской администрации, который должен отвлечь от реального числа пострадавших в бакинских событиях 6-9 февраля 1905 г. и создать нужное впечатление.

[1] **Фархад Джаббаров.** Князь М. А. Накашидзе…, с. 342.

[2] **Козубски К.** Бакинский губернатор Накашидзе - государственный изменник и военный преступник.- https://www.facebook.com/Iran.and.the.Caucasus /posts/ 1717138375015243/

[3] Там же. Источник Санкт-Петербургские Ведомости. -25 мая 1905 г.

[4] **Джаббаров Ф.** Рафиг оглы. Материалы ревизии сенатора А. М. Кузминскогоского как источника по изучению армяно-азербайджанской резни.- Северо-Кавказский Юридический Вестник. 2016, N 4, с. 139.

[5] **Гасымлы М.** Анатолия и Южный Кавказ…, с.118, 119.

[6] **Джаббаров Ф.** Рафиг огл. Материалы ревизии сенатора…,с.138.

Наглядно метод манипуляции данными представлен у И. Нифталиева: "Только с 1 февраля 1905 года по 1 мая 1906 года в Баку армянами были убиты городской губернатор, 1 полицейский надзиратель, 4 сотрудника городской полиции, а 4 сотрудника полиции и 1 сотрудник жандармерии были ранены. За тот же период в Иреванской губернии были убиты 1 пристав, 1 работник городской полиции, 1 гражданский чиновник, 2 представителя сельской власти, 1 купец, 1 часовой, 1 сотрудник жандармерии, 2 гражданских чиновника, был ранен помошник уездного начальника, 2 человека пропали без вести".[1]

Если в г. Баку число погибших представителей власти приводится в 6 человек, то по Ереванской губернии 9 служащих. Причем состав расширен за счет данных по Ереванской губернии, чтобы добиться масштабности происходящего. Эти манипуляции данными со стороны Джаббарова и Нифталиева в отношении числа погибших этноконфлита 6-9 февраля 1905 г. в Баку делаются осознано, чтобы избежать вопроса: кто кого подверг геноциду?

Наряду с этим, вольно или невольно Джаббаров выступает наследником определенных страстей, а не исследователем исторических явлений. Так, 1905 г. мэр г. Тифлиса Х. А. Вермишев получил черную метку от "Исполнителя политического правосудия" после гибели Накашидзе от теракта 11 мая 1905 г. Относительно гибели Бакинского губернатора сказано: "Князь Накашидзе злодейский убит, с ним погибли другие невинные жертвы, Их убили армяне. Вы все злорадствуете…".[2]

Армянское население края пыталось достучаться до руководства администрации региона, чтобы пресечь попустите- льство погромам со стороны местных властей. Исполняющий обязанностей епархиального Ереванской губернии архимандрит Карапет 12 мая 1905 г. направил наместнику Кавказа доклад о происходящих армянских погромах до мая в Нахичеванской провинции. В нем отмечалось: "Нахичеванская резня и погром со своими чудовищными последствиями постепенно подготовлялась и приняла такой широкий размах, благодаря тому, что местной администрации не было принято никаких мер для предупреждения настоящей грозы".[3] Ответственность за произошедшее возлагалась на вице-губернатора Тарановского, уездного начальника Энгели, высокопоставленных нахичеванских ханов и ген Алиханова.[4]

---

[1] **Нифталиев И.** Царское правительство против преступной армянской церкви. - https: //news.day.az/politics/1055819.html
[2] НАА, ф.43, оп. 1, д. 383, л.16.
[3]Там же, ф. 113, оп.3, д. 92, л.2.
[4] Там же, л. 1-2.

Произошедшие события армянское общество оценило неоднозначно. 1 июня 1905 г. армянская делегация, состоящая из 15 представителей от весомых районов региона, вручила наместнику Кавказа графу И. Воронцову-Дашкову адрес с запиской о нуждах армянского народа. Депутация предложила силой подавлять беспорядки в самом их начале, удалять одиозных администраторов, обеспечить возвращение церковного достояния, добиться прекращения вражды между кавказскими народами. Указано, что возвращение имущества св.Эчмиадзина будет содействовать прекращению гонений.[1]

1 августа 1905 г. царь Николай II, по представлению наме- стника Кавказа, подписал указ о возвращении имущества Армянской Апостольской церкви и армянских школ, что способствовало стабилизации ситуации в регионе.

В умиротворение края позитивную роль сыграли духовные лидеры - католикос Мкртич I Хримян и шейхульислам А. Ахундзаде. В их присутствии национальные представители армян и мусульман 1 декабря 1905 г. в помещении Тифлисской Думы подписали мировую, предполагающую примирительный съезд, образование комиссии из 12 уполномоченных для составления положения третейском суде и рассмотрения частных случаев. 4 марта 1906 г. совещание армяно-татарские представители в Тифлисе подписали протокол "Положений " по прекращению межнациональной распри.[2]

Необходимость реализации договоренности между армянами и закавказскими татарами побудила руководство региональной администрации выступить против попустительства эксцессов.Так, в циркулярном предписании наместника Кавказа от 14 апреля 1906 г. губернаторам Кавказского края говорится: "По поводу происходящих в минувшем году в частях Закавказского края со смешанным армяно-татарским населением вооруженные столкновения между армянами и мусульманами, мною обращено внимание на колебания, растерянность и слабость, проявленные местными властями при возникновении этих беспорядков, что послужило одною из главнейших причин значительного их развития".

От местных властей наместник Кавказа граф Воронцов-Дашков требовал "на будущее" проявлять соответствующую реакцию: "В случае возобновления подобных беспорядков, возникновения таковых приступить к немедленному решительному их подавлению".[3]

---

[1] Армянская депутация у наместника Кавказа е.и.в. графа И.И. Воронцова-Дашкова.- Новое Обозрение.1905, 8 июня.

[2] **Тунян В. Г.** Политика самодержавия России в Закавказье XX - нач. XX вв. Ереван, 2010 ч. VI, с.42-44, 53 -55. 54.

[3] НАА, ф. 102, оп. 1, д. 191. л.62.

Таким образом, “новое прочтение” событий 1905-1906 г. Джаббарова представляет собой обоснование режимной установки о наличие “геноцида азербайджанцев” со стороны армян. Этноконфликт в азербайджанской историографии подвергается политисторической манипуляции азерпропа. В узком смысле Бакинские события 1905 г. представляли собой попытку этнической зачистки армян, которая затем повторится в 1918-1920 гг. и 1990 г. В широком смысле, события 1905 - 1906 гг. ознаменовали собой разжигание национальных страстей, ставящих целью подготовить контроль закавказских татар над регионом, что затем получило отражение в военных конфликтах Азербайджана с Арменией в XX в. - начале XXI в.

**Վալերի Թունյան, 1905թ. հայ-թաթարական բախման “նոր ընթերցումը“** - 1905 թ. ազգամիջյան բախման “նոր ընթերցումը“ նպատակ ունի ապացուցել Ադրբեջանի իշխանության այն դրույթի սխալականությունը, որի համաձայն այդ ժամանակ հայերը ձեռնարկել են ցեղասպանություն ադրբեջանցիների նկատմամբ: Նեղ իմաստով 1905 թ. Բաքվի դեպքերը ուղված էին հայերի զտմանը, որոնք կրկնվել են 1918-1920 թթ.. և 1990թ.: Լայն իմաստով 1905 - 1906 թթ. բախումը ազգային կրքերի զրգռում էր, որի նպատակն էր Անդրկովկասի թաթարների գերիշխանության հաստատումը տարածաշրջանում: Արդյունքում հանդես եկան Ադրբեջանի և Հայաստանի ռազմական բախումները XX - XXI դ. սկզբում:

**Valeri Tunyan, 1905 the «new reading» of the Armenian - Tatar conflict** - The new reading of the inter-ethnic conflict Armenian-Tatar aims to prove the position of the Azerbaijani authorities that at that time the Armenians committed genocide against the Azerbaijanis. From a close look, the events of 1905 in Baku were aimed at the purge of the Armenians, which were repeated in 1928-1920 and 1990: Broadly looking, the clash of 1905-1906 was the arousal of national passions and the establishment of the supremacy of the Transcaucasian Tatars in the region. As a result, the military conflicts between Azerbaijan and Armenia in the beginning of the 20th century.

# ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄՈՒՄ

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆ

**Բանալի բառեր** - Ատրպատականի թեմ, Ներսես արք.Մելիք-Թանգյան, Մեծ Եղեռն, գաղթականություն, Թավրիզի կենտրոնական թեմական դպրոց, Ռեզա Փեհլևի շահ, Արամյան թատրոն:

Հայոց եկեղեցու պատմության մեջ եզակի են այն թեմակալ առաջնորդները, ովքեր շուրջ չորս տասնամյակ հոգևոր, հասարակական և կրթամշակութային բեղուն գործունություն են ծավալել միևնույն թեմում՝ արժանանալով հոգևոր հոտի անվերապահ վստահությանն ու հարգանքին: Տ. Ներսես արք. Մելիք-Թանգյանը վերոհիշյալ հոգևոր հովիվներից մեկն էր, ում ջանքերով մեր ժողովրդի համար ամենադժնդակ տարիներին Ատրպատականի կամ Թավրիզի թեմը դարձավ և՛ ապաստան եղեռնապուրծ գաղթականության ու խորհրդային իշխանություններից հալածյալների համար, և՛ կրթամշակութային երևելի կենտրոն իրանահայ գաղթօջախում:

Ներսես արք. Մելիք-Թանգյանը ծնվել է 1866թ. մարտի 16-ին (Նոր տոմարով 28-ին) Սյունյաց աշխարհի Բռնակոթ գյուղում Պետրոս Բեկ Մելիք-Թանգյանի ընտանիքում: Մկրտության անունը Նիկողայոս[1] էր և սերում էր հինավուրց ազնվանական տոհմից: Տոհմական ավանդության համաձայն Թանգյանների գերդաստանը սերում էր Անի մայրաքաղաքից,[2] որտեղից հեռանալով բնակություն էին հաստատել Վաղարշապատի գավառի Շահրիար (այժմ՝ Արմավիրի մարզի Նալբանդյան) գյուղում: Նույն ավանդության համաձայն Թանգյանների տոհմը այստեղ բախվում է Շահխաթունյանցների ընտանիքի հետ և հեռանում Վայոց ձոր, այնտեղից էլ Բռնակոթ: Թանգյան տոհմի մելիքական իրավունքը հաստատվել է թե՛ Պարսից շահերի և թե ռուսական ցարերի հրովարտակներով: Հայրենի գյուղի հոգևոր դպրոցում Նիկողայոսը սովորում է մեկ տարի և 1877թ. ըն-

---

[1] Նույն գյուղում 5 տարի հետո ծնվել էր մեկ այլ Նիկողայոս՝ մեծանուն պատմաբան և բյուզանդագետ Ադոնցը:

[2] **Ա. Բոզոյան**, Տ. Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան, Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Ա, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 2005, էջ 365:

դունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան:[1] Ըմբոստ խառնվածքով և ամեն տեսակի բռնության հանդեպ հակակրանք ունեցող Նիկողայոսը չհամակերպվելով ճեմարանում հաստատված խիստ ու ճնշող կարգերից միաժամանակ հեռանում է այնտեղից: Հետագայում վերադառնալով ճեմարան 1886թ. փայլուն առաջադիմությամբ ավարտում է այն յուրացնելով դասարանային և լսարանային լրիվ դասընթացը: Ուսյալ ճեմարանական Նիկողայոսն ընտրում է իր ժամանակի համար վեհ գաղափար հանդիսացող լուսավորությունը դեպի գավառահայությունը տանելու ուղին և երկու տարի որպես ուսուցիչ աշխատում է հայրենի Բռնակոթում: 1888-1894 թթ. ընթացքում ուսուցչությամբ է զբաղվում Շուշիի հոչակավոր թեմական դպրոցում և 1893թ. կազմակերպում է Ամենայն Հայոց Հայրապետ Մկրտիչ Ա Խրիմյանի հանդիսավոր ընդունելությունը: Այս ընթացքում Մելիք--Թանգյանն իր մի քանի համախոհների հետ նույնիսկ փորձում է հատել ռուս-թուրքական սահմանը և զինվորագրվել ազատագրական պայքար սկսած հայդուկական խմբերին: Ղարաբաղի թեմակալ առաջնորդ Կարապետ սրբազանի հետ բախումից հետո Նիկողայոսը հեռանում է Բաքու և սկսում է դասավանդել տեղի Մարդասիրական ընկերության դպրոցում: Ճեմարանական կրթությունը չէր բավարարում գիտության նկատմամբ մեծ հագուրդ ունեցող Նիկողայոսին և ազգային բարերար Համբարձում Մելիքյանի միջոցներով ուսումը շարունակում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանության ֆակուլտետում, որն ավարտելուց հետո վերադառնում է Սբ.Էջմիածին և 1900թ. ստանում սարկավագության աստիճան,[2] հաջորդ տարի ընդունելով կուսակրոնության ուխտ, ձեռնադրվում է վարդապետ՝ վերցնելով Ներսես հոգևոր անունը: Խրիմյան Հայրիկ Վեհափառը գնահատելով նորընծա վարդապետի կազմակերպչական շնորհներն ու Հայոց եկեղեցուն անձնվիրաբար ծառայելու նրա պատրաստակամությունը, նույն տարում Ներսես Մելիք-Թանգյանին նշանակում է Տաթև վանքի վանահայր և Սյունյաց թեմի առաջնորդական փոխանորդ: Ներսես Վարդապետին հաջողվում է շատ արագ և գործունյա ջանքերով վերականգնել Տաթևի վանական կալվածքները, հիմնում է դպրոցներ, գրադարան, վերանորոգում է վանքի օժանդակ տնտեսական կառույցները և շատ շուտով մեծ հարգանք ու պատիվ է ձեռք բերում սյունեցիների շրջանում: 1903թ. Նիկոլայ II ցարի հակահայկական հրովարտակի դեմ ըմբոստացած հոգևորականներից մեկն էր Մելիք-Թանգյանը, ով գործուն պայքար սկսեց դրա դեմ և նույնիսկ մեկ ամիս բանտարկության մեջ անց-

---

[1] **Տ. Բաբկեն արեղա Սալբիյան,** Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան (կյանքն ու գործունեությունը), «Էջմիածին» պՊաշտոնական ամսագիր Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, հ.Զ, հունիս, Էջմիածին, 2012, էջ 96:

[2] **Ա. Բոզոյան**, նշվ.աշխ, էջ 366:

կացրեց: Ցարական կառավարության հրահրած հայ-թաթարական բախումների ժամանակ Ներսես վարդապետը որպես իրական հայրենասեր և ազգային-հոգևոր գործիչ խրախուսում է հայկական ինքնապաշտպանական խմբերի ստեղծմանը և իր օրհնությունն է պարգևում դրանց առաջնորդներին: Ըմբոստ հոգևորականն իր հայրենասիրական կեցվածքի պատճառով արդեն հայտնվել էր ցարական գաղտնի ոստիկանության սև ցուցակում և երբ Խրիմյան Հայրիկը որոշեց Մելքի-Թանգյանին նշանակել Մայր աթոռի դիվանապետ, Էջմիածնի Սինոդի համաձայնությամբ ոստիկանությունը 1907թ. նրան աքսորեց Ղրիմի Սբ.Խաչ վանքը: Միայն Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսի ջանքերով 1909թ. Մելիք-Թանգյանը վերադարձավ աքսորից: գալով Սբ Էջմիածին Ներսես վարդապետը որպես «Վանական կառավարության» նախագահ[1] ձեռամուխ է լինում Մայրավանքի տարածքի և վանական կալվածքների բարենորոգման գործին: 1912թ. Գևորգ Ե Տփխիսեցի կաթողիկոսը գործուղում է Ներսես վարդապետին Ատրպատականի թեմ,[2] տեղում ծանոթանալու իրավիճակին, քանզի թեմական պատգամավորական ժողովը դժգոհ էր թեմակալ առաջնորդ Կարապետ սրբազանի անգործությունից, ում օրոք առաջնորդարանը թաղվել էր պարտքերի մեջ: Նույն թվականին պատգամավորական ժողովն ընտրում է Մելիք-Թանգյանին առաջնորդ և շուրջ 36 տարի նա որպես իսկական հոգևոր հովիվ և հայրենասեր հայորդի անձնուրաց ծառայում է իր ժողովրդին: Ներսես վարդապետը Ռուսաստանի հարուստ գաղթօջախներից կարողանում է հանգանակությամբ մեծ գումարներ հավաքել և փակել առաջնորդարանի կուտակած պարտքերը, այցելում իր թեմի հոգևորիշխանության տակ գտնվող Սբ.Թադեոսի և Դարաշամբի Սբ.Ստեփաննոսի հռչակավոր վանքերը, ձեռամուխ լինելով դրանց վերանորոգման գործին: 1914թ. Ատրպատականի թեմական պատգամավորական ժողովի խնդրագիրը հաշվի առնելով Գևորգ Ե կաթղիկոսը Ներսես Մելիք--Թանգյանին ձեռնադրում է եպիսկոպոս, իսկ 1917թ. նրան շնորհվում է արքության աստիճան:[3] Նույն թվականին Գևորգ Ե կաթողիկոսը նշանակում է Ներսես սրբազանին Վասպուրականի առաջնորդ:[4]

Առաջին աշխարհամարտի մղձավանջային տարիներին Ներսես սրբազանը հավատարիմ իր ուխտին և կոչումիննեցուկ կանգնեց իր ժողովրդին՝ փրկելով հազարավոր հայերիկյանքը թուրքական յաթաղանից: Ներսես սրբազանի ազգանվեր գործունեությանը 1914-1918թթ. բավակա-

---

[1] Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան, մահախոսական, «Էջմիածին» Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս.Էջմիածնի, X-XI-XII, Ե տարի, Էջմիածին, 1948, էջ 25:

[2] Նույն տեղում:

[3] **Տ. Բաբկեն արքեպս Սալբիյան**, նշվ.աշխ, էջ 98:

[4] **Ա. Բոզոյան,** նշվ. աշխ., էջ 368:

նին հանգամանալից անդրադարձել է Դերենիկ Մելիքյանը «21-րդ Դար» գիտական պարբերականում[1] հրապարակված իր ծավալուն հոդվածում, ուստի կարիքը չենք տեսնում կրկնել մանրամասները: Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մի քանի տիպական դրվագ Ներսես սրբազանի ծավալած գործունեությունից այդ տարիներին, որոնք ամբողջացնում են նրա, որպես քաջ հոգևոր հովվի և իրական քրիստոնեի կերպարը:

Այսպես. 1914թ. նոյեմբեր-դեկտեմբերին, երբ օսմանյան զորքերը գրավեցին Ատրպատականի արևելյան շրջանները, տեղի ռուս, կաթոլիկ, բողոքական և ասորի հոգևորականներն ու հասարակական-քաղաքական գործիչները իրենց ժողովրդին թողնելով անտերունչ, հեռացան Ռուսաստանի խորքերը: Միայն Ատրպատականի հայոց թեմակալ առաջնորդ Ներսես արք.Մելիք-Թանգյանը մնաց տեղում և առանց ազգի ու դավանանքի խտրականության կազմակերպեց բոլոր քրիստոնյա գաղթականների խնամակալությունը:[2]1915թ. ապրիլին ռուսական զորքերի կողմից Սալմաստի երկրորդ գրավումից անմիջապես հետո, Ներսես սրբազանը տեղում իրավիճակին ծանոթանալու և իրանահայ գաղթականության վերադարձն ապահովելու նպատակով ժամանում է Խոյ, Սալմաստ և Ուրմիա: 1915թ. Վան-վասպուրականի  բնակչության գաղթի մի ալիքը ուղղվեց դեպի Պարսկաստան: Ներսես Մելիք-Թանգյանի և Գաղթականության կոմիտեի անդամների եռանդուն և գործունյա ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ կանխել մարդկային մեծաթիվ կորուստները և ապահովել Վանից, Շատախից և Մոկսից գաղթված հայության կյանքը: 1917թ. նոյեմբերին, երբ ռուսական բանակը հեռացավ Ատրպատականից Ներսես սրբազանը Թավրիզում ստեղծված «Տասնվեցի խորհրդի» գործուն օժանդակությամբ կարողացավ իր դիվանագիտական անուրանալի տաղանդի և հեռատեսության շնորհիվ լեզու գտնել թուրք և պարսիկ իշխանավորների հետ և փրկել տեղի հայ բնակչությանն ու արևմտահայ գաղթականությանը վերահաս կոտորածից:

Հայաստանի առաջին հանրապետության գոյության ողջ ընթացքում հայրենասեր եկղեղեցականն ու հայոց նորաստեղծ պետականության ջերմ նվիրյալը հսկայական ջանքեր գործադրեց Պարսկաստանում ՀՀ դեսպանատան և հանրապետության միջև անխափան կապն ապահովելու ուղղությամբ: վայելելով պարսկական կառավարող շրջանների հար-

[1] **Դ. Մելիքեան,** Ատրպատականի առաջնորդ Տ.Ներսէս արք. Մելիք-Թանգեանի գործունէութիւնը 1914-1918թթ., «21-րդ ԴԱՐ», թիվ 2/72/, 2017, էջ 112-122:

[2] **Է. Բաղդասարյան,** Իրանահայ համայնքների ամբողջական պատմություն, հ. I, Թեհրան-Թորոնտո-Երևան, 2012, էջ 366-367:

գանքը[1] Ներսես արք.Մելիք-Թանգյանը այն օգտագործում էր հայրենի նորանկախ պետությանը ամեն կերպ աջակցելու և ՀՀ շուրջ ստեղծված տեղեկատվական շրջափակումը հաղթահարելու վեհ նպատակով: Այս մասին են վկայում Պարսկաստանում ՀՀ դեսպան իշխան Հովսեփ Արղությանի հեռագրեն ուղղված Ներսես սրբազանին:[2]

Թավրիզի հայությունը և այնտեղ ապաստանած գաղթականությունը այնքան ջերմ սիրով էին տոգորված դեպի իրենց առաջնորդը, որ երբ 1919թ. նախորդած ծանր տարիների բեռից հոգնած Ներսես սրբազանը հրաժարականի դիմում ներկայացրեց տեղի պատգամավորական ժողովին, անմիջապես հազարավոր ցուցարարներ հավաքվեցին առաջնորդարանի բակում պահանջելով ժողովից չընդունել հրաժարականը:

Նրսես արք. Մելիք-Թանգյանի հոգևոր և քաղաքացիական կեցվածքի բարձրակետերից մեկը կարելի համարել 1921թ. փետրվարյան ապստամբությունից հետո Պարսկաստան տարագրված շուրջ 8000 քաղաքական վտարանդիների խնամակալությանը ձեռամուխ լինելով: Մելիք--Թանգյանը քաջ գիտակցում էր, որ բոլշևիկյան հալածանքներից փրկված և Ատրպատականում հանգրված գտած վտարանդիներին սատարելը նշանակում էր ձեռք բերել թշնամի ի դեմս խորհրդային ՎՉԿ-ի, որի լրտեսները վխտում էին ողջ Պարսկաստանում: Սակայն ցարական ախրանկայի հալածանքներն ու աքսորը տեսած, ազգային-ազատագրական պայքարը խրախուսած հոգևոր քաջ հովվին այս հանգամանքը չկանգնեցրեց: Շուտով Ատրպատականի առաջնորդի եռանդուն ջանքերի շնորհիվ մեծաքանակ դրամական աջակցություն ստացվեց աշխարհասփյուռ տարբեր հայկական գաղութներից և ազգային բարերարներից, ովքեր գիտեին և համոզված էին, որ իրենց ուղարկած միջոցները ազնիվ և հայրենասեր հոգևորականի ձեռքերում է: Արդյունքները երկար սպասել չտվեցին և Թավրիզում ապաստանած վտարանդիների կյանքը բարելավվեց:

Խորհրդային իշխանությունները Ներսես սրբազանի այս քայլերը չներեցին և նրանց ստիպմամբ սկզբում Գևորգ Ե, ապա նաև Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսները մի քանի անգամ Ատրպատականի առաջնորդին կանչեցին Էջմիածին տարբեր պատրվակներով, սակայն հեռատես ու զգուշավոր Մելիք-Թանգյանը այդպես էլ մինչ իր մահկանացուն կնքելը չեկավ հայրենիք: Երկրորդ աշխարհամարտի տարիներին ևս Ներսես արք. Մելիք-Թանգյանը մնաց իր բարձրության վրա հեռու պահե-

---

[1] Պարսից շահի հրամանագրով Ներսես սրբազանը 1919թ. պարգևատրվել է Շիր-խուրշիդ (առյուծ-արև) շքանշանով:

[2] **Է. Հակոբյան,** Հայաստանի հանրապետության Իրանի դեսպան Իշխան Հովսեփ Արղությանի հեռագրերը հղված Ներսես արք. Մելիք-Թանգյանին-Թավրիզ, «Հասկ», Հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Զ տարի, Բեյրութ, 1994, էջ 397-412:

լով իր հոգևոր հոտը նորաթուխ ազերի «դեմոկրատների» սադրանքներից՝ լեզու գտնելով խորհրդային ռազմական իշխանությունների հետ: Սակայն բազմավաստակ առաջնորդի առողջությունը քայքայվել էր և նա նույնիսկ չկարողացավ ժամանել Էջմիածին՝ մասնակցելու Ազգային եկեղեցական ժողովին, որն ընտրելու էր նոր հայոց եկեղեցու նոր գահակալին: Մելիք -- Թանգյանն իր մահկանացուն կնքեց 1948թ. սեպտեմբերի 16-ին և նրա աճյունն ամփոփվեց Թավրիզի գերեզմանատան մատուռի առջևում:[1]

Անչափելի էր Ներսես արք.Մելիք-Թանգյանի վաստակը Ատրպատականի հայության կրթական գործի կազմակերպման և հովանավորության ասպարեզում: Ատրպատականում, մանավանդ երկրամասի կենտրոն Թավրիզում և Սալմաստում, XIXդ. վերջին և XXդ. սկզբին հայկական բազմամարդ գաղթօջախներ էին շարունակում հարատևել որոնց ուսումնասեր և հայրենասեր բնակչության և տեղի հոգևոր առաջնորդների ջանքերով գործում էին մի քանի չորսդասյա և վեցդասյա հայկական դպրոցներ: Տարրական և թերի միջնակարգ կրթությունը հնարավորություն չէր տալիս ուսումնատենչ հայ պատանիներին կրթությունը շարունակելու տեղի և արտերկրի համալսարաններում, ուստի XIXդ. վերջին, ժամանակի հրամայականն էր դառնում լիարժեք հայկական միջնակարգ դպրոցի ստեղծումը: Արդեն 1893թ. Թավրիզում տեղի երևելի քաղաքացիները հրավիրում են ժողով և ընտրում 15 անձից բաղկացած մի գործադիր մարմին, որը պետք է զբաղվեր Թավրիզում Կենտրոնական երկսեռ միջնկարգ դպրոցի հիմնադրման խնդրով: Երկսեռ միջնակարգ կրթության հանգամանքը, հատկապես շարիաթի օրենքներով ապրող Պարսկաստանում և ինչու չէ նաև այլ երկրներում, իր ժամանակի համար ոչ միայն համարձակ, այլև չափազանց առաջադիմական քայլ էր, ինչի իրագործմանը մինչև վերջ հավատարիմ մնացին Կենտրոնական դպրոցի հիմնադիրներն ու թեմակալ առաջնորդները: Երկարատև պայքարի, կենտրոնական իշխանություններին հասցեագրված բազմաթիվ խնդրագրերի և թեմակալ առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի ջանքերի արդյունքում 1909-1910թթ. ուսումնական տարում Թավրիզի Կենտրոնական թեմական միջնակարգ դպրոցն ընդունում է իր առաջին սաներին: 1911-1912թթ. ուստարում դպրոցն ուներ 12 աշակերտ՝ 4 աղջիկ և 8 տղա: Ներսես սրբազանի կողմից թեմակալ առաջնորդությունը ստանձնելուց հետո դպրոցը նոր շունչ է առնում՝ դառնալով ոչ միայն Ատրպատականի և Թավրիզի, այլև ողջ իրանահայության համար երևելի կրթական հաստատություն, որտեղ ուսանել են ժամանակի բազմաթիվ հայրենասեր ազգային գործիչներ, մանկավարժներ, գիտնականներ, արվեստագետներ, գրողներ և այլք, ո-

[1] Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան, մահախոսական, «Էջմիածին» Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս.Էջմիածնի, X-XI-XII, Ե տարի, Էջմիածին, 1948, էջ26:

րոնց ջանքերով իրանահայության մի ստվար հատված ստացավ հայեցի կրթություն և տոգորվեց ազգային առողջ գաղափարախոսությամբ: Մեծ էր դպրոցի դերը մանկավարժական կադրեի պատրաստման գործում: 1911-1936թթ. Կենտրոնական թեմական միջնակարգ դպրոցի շուրջ 118 երկու սեռի շրջանավարտ ուսուցչական աշխատանքի անցան Իրանի տարբեր գավառներում սփռված հայկական դպրոցներում:[1] Հիշյալ ժամանակաշրջանում, մինչև Ռեզա շահի կողմից դպրոցի փակվելը, այն ունեցավ միջնակարգ կրթության վկայագրով 455 շրջանավարտ (239- աղջիկ և 216-տղա):[2] Հատկանշական է, որ Ներսես արք.Մելիք-Թանգյանի օրհնությամբ և հորդորով Թավրիզի Կենտրոնական թեմական միջնակարգ դպրոցի շրջանավարտները գնում էին ուսուցչություն անելու Պարսկաստանի տարբեր գավառներում սփռված հայկական գյուղերի դպրոցներում, օրինակ, հայ մեծանուն բանաստեղծ Գեղամ Սարյանը (Տեր-Բաղդասարյան) 1920թ. ավարտելով ուսումը Կենտրոնականում, հետևելով սիրելի առաջնորդի հորդորին շուրջ երկու տարի դասավանդեց գյուղական տարրական դպրոցում: Պետք փաստել, որ Թավրիզի Կենտրոնականի սան-սանուհիներ դառնում էին տեղի «Հայոց արամյան» և «Հայկազյան-Թամարյան» վեցդասյա դպրոցների շրջանավարտները, որոնք Ներսես սրբազանի օրհնությամբ և խրախուսանքով ստանում էին լիակատար միջնակարգկրթություն: Ներսես սրբազանի միջնորդությամբ Կենտրոնականի ուսուցիչների շարքերը համալրեցին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Պարսկաստան տարագրված բազմաթիվ երևելի հայ գիտնականներ, որոնցից հարկ է հիշատակել Հրաչյա Աճառյանի անունը:[3]

Կենտրոնական դպրոցի ազգանվեր ընթացքը խաթարվեց 1936թ.: 1934թ. Իրանի շահ Ռեզա Փեհլևին պետական այցով ժամանեց Թուրքիա, որտեղ բանակցություններ վարեց Մուսթաֆա Քեմալի հետ: Շատ հետազոտողների կարծիքով, ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ բացահայտ ատելությամբ տոգորված Քեմալ Աթաթուրքը «եղբայրական խորհուրդ» տվեց Ռեզա շահին «իրանացնել» երկիրը, որին հասնելու առաջին քայլը պետք է լիներ ոչպարսկական դպրոցների փակումը և Իրանում ապրող ազգային փոքրամասնությունների լեզվով դասավանդման արգելքը:[4] Ռեզա շահը Քեմալի «ջանասեր աշակերտ» դուրս

---

[1] **Բ. Բալեան Տէր-Յակոբեան,** Ս. Բալեան Տէր Հակոբյան, Պատմութիւն իրանահայերի, Գլենդէլ, 1985, էջ 157:

[2] Միջնակարգ լիակատար կրթությամբ 239 աղջկա գոյությունը Իրանի պայմաններում չտեսնված երևույթ էր:

[3] **Արամ Գառօնէ**-100, ծաղկաքաղ-հուշամատեան մատենաշար, թիվ 5, տպարան «Ալիք», Թեհրան, 2005,էջ 3: Արամ Գառօնէն (Տեր-Բաղդասարյան) Գեղամ սարյանի կրտսեր եղբայրն էր, նույնպես բանաստեղծ, Թավրիզի Կենտրոնականի սան:

[4] **Է. Բաղդասարյան**, Իրանահայ համայնքների ամբողջական պատմություն, էջ 451:

եկավ և երկու տարի անց կյանքի կոչեց երկիրը «իրանացնելու» բացահայտ ազգայնամոլական գաղափարը: 1936թ. նոյեմբերի 4-ին Կենտրոնական թեմական դպրոցի տեսուչ Հայրապետ Պանիրյանը Իրանի կրթության նախարարությունից ստանում է խիստ հրահանգ, որով կարգադրվում էր անմիջապես փակել դպրոցը, որն անվանափոխվել էր, ստանալով «Սորուշ» (պարսկերեն՝ «Հրեշտակ») անունը: Պանիրյանն անմիջապես դիմում է դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ներսես արք.Մելիք-Թանգյանին, ով խորհրդի նիստից հետո հեռագիր-խնդրագրով դիմում է Ռեզա շահին: Ներսես սրբազանը հորդորում և խնդրում էր շահին վերաբացել Կենտրոնականը կամ ծայրահեղ դեպքում թույլ տալ պարսկական տարրական և միջնակարգ դպրոցներում հայ աշակերտներին դասավանդել հայոց լեզու և կրոն: Պատասխան հեռագրում ուղղված Ներսես սրբազանին, Իրանի կրթության նախարարության պաշտոնյաները հայտնում էին, որ կրթական պետական ծրագիրը պարտադիր է բոլոր դպրոցների համար և չի կարող լինել բացառություն հայկական կրթօջախների պարագայում: Հեռագրում նաև նշվում էր, որ որպես բացառություն «Իսլամի կրոնին» հատկացված ժամերին պարսկական դպրոցներում հայ երեխաները կարող են իրենց կրոնն ուսումնասիրել պայմանով, որ կրոնի ուսուցիչներն ունենան պետության կողմից տրված հատուկ հավաստագիր և լինեն փորձառու մասնագետներ:[1]

Շուրջ հինգ տարի իրանահայությունը հայտնվեց ծանր կացության առջև: Պարսկական դպրոցներն իրենց կրթական և մանկավարժական կադրերի մակարդակով այնքան ցածր և ողբալի վիճակում էին գտնվում,[2] որ հայ մանուկներն ու պատանիները գիտելիք ձեռքբերելու հարցում ոչինչ չունեին ստանալու: Վտանգված էր ոչ միայն ուսումը համալսարաններում շարունակելու խնդիրը, այլև հայոց լեզվի և հայոց պատմության յուրացման միջոցով հայկական ինքնության պահպանման խնդիրը: Ներսես սրբազանն իր հոգևոր հոտի հայրենասեր զավակների հետ ձեռք-ձեռքի տված շարունակեց պայքարը հայկական դպրոցների վերաբացման համար և կարողացավ կրոնի դասերի միջոցով հայ աշակերտներին հասու դարձնել մայրենի լեզվին ու պատմությանը: Այս ազգանվեր գործում Ներսես սրբազանին աջակից ու համախոհ էին իրանահայության մի շարք երևելի դեմքեր, որոնցից հարկ ենք համարում նշել ազգային-հեղափոխական գործիչներ Մարտին Շաթիրյանին, Սամսոն Խան Թաղևոսյանին, Առաջնորդական փոխանորդ և տեղապահ Տեր Կարապետ ավ.քհն. Մանուկյանին և Առաջնորդարանի քարտուղար Միքայել Ստեփանյանին:

---

[1] **Բ. Բալեն Տէր-Յակոբեան,** Ս.Բալեան Տէր Հակոբյան, Պատմութիւն իրանահայերի, էջ 160:

[2] **Վ. Բայբուրդյան,** Իրանի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), «Զանգակ-97» հրատ., Երևան, 2005, էջ 613:

Ներսես արք. Մելիք-Թանգյանի համար այս տարիները չափազանց ծանր հետևանքներ ունեցան: Գիտության և կրթության նվիրյալ թեմակալ առաջնորդը, ում ջանքերով լուսավորության գործը իրանահայության շրջանում բարձրացել էր աներևակայելի մակարդակի երկրորդ ծանր հարվածն էր տանում Ատրպատականի թուրքական զավթումից և Մեծ եղեռնից փրկված գաղթականության փրկության գործը ձեռնարկելուց հետո: Ներսես սրբազանն, ով թուրքերի հեռանալուց անմիջապես հետո 1919թ. վերաբացեց Կենտրոնական թեմական դպրոցը, չէր կարող համակերպվել Իրանի ազգայնամոլ կառավարական շրջանակների կողմից իր սիրելի կրթօջախի փակման փաստի հետ: 1940-ականների սկզբին զգացնել տվեցին առողջական խնդիրները, որոնք արդյունք էին վերոհիշյալ ծանր հարվածների:

1941թ., երբ խորհրդային զորքերը հյուսիսից և անգլիականը՝ հարավից բռնակալեցին Իրանը, Ռեզա շահը գահընկեց արվեց և տարագրվեց երկրից: Ատրպատականում հաստատվեց խամաճիկային այսպես կոչված Ադրբեջանի ժողովրդական հանրապետությունը, որը կառավարվում էր խորհրդային զինվորական ադմինիստրացիայի կողմից: Ներսես սրբազանին հաջողվեց շատ արագ լեզու գտնել նոր «իշխանությունների» հետ և վերաբացել Թավրիզի Կենտրոնական դպրոցը:

Ներսես սրբազանը շինարար առաջնորդ էր, ում ջանքերով նորոգվեցին Ատրպատականի նշանավոր վանքերն ու Թավրիզի եկեղեցիների զանգակատները, կառուցվեցին նոր ջրամատակակարման համակարգեր: Միևնույն ժամանակ Ներսես սրբազանը թեմի մշակութային կյանքի զարգացման, աշխուժացման ջատագով էր և հովանավոր, ինչի առհավատչյան նրա ջանքերի շնորհիվ Թավրիզում կառուցված Արամյան թատրոնի գեղեցիկ ու ինքնատիպ շենքն էր:

Ներսես արք.Մելիք-Թանգյան գիտնականի գլուխգործոցը «Հայոց եկեղեցական իրավունք» երկու գրքից բաղկացած կոթողային աշխատությունն է, որը մինչ այսօր իր տեսակի մեջ անկրկնելի: Նրա գրչին է պատկանում նաև «Աշխարհաբարի քերականությունը» դասագիրքը, որով մայրենի էին ուսումնասիրում հայկական դպրոցներում: Ցավով պետք է արձանագրենք, որ թեմակալ առաջնորդի բազմահոգս և դժվարին ծառայությունը թույլ չտվեց Ներսես Մելիք-Թանգյան գիտնականին իր գիտական հսկայական պաշարը թղթին հանձնել:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ Ներսես արք.Մելիք-Թանգյանը իր բազմաբեղուն հոգևոր և կրթական գործունեության ընթացքում միշտ մնաց հավատարիմ իր ուխտին և ազգին անձնվիրաբար ու անմնացորդ ծառայելու իր առաքելությանը:

**Арман Андрикян, Общественная и культурно-образовательная деятельность Архиепископа Нерсеса Мелик-Тангяна в Атрпатаканской епархии** - В статье сделана попытка представить общественную и культурно-образовательную деятельность архиерея Атрпатаканской епархии Армянской Апостольской церкви, знаменитого духовного деятеля и ученного Нерсеса архиепископа Мелик-Тангяна с 1912 по 1948гг. Особое внимание уделено деятельности Архиепископа Нерсеса в деле спасения армянских беженцев из Османской империи в результате Геноцида, в годы Первой мировой войны, а также вынужденных переселенцев-эмигрантов из Советской Армении после антибольшевикского февральского восстания 1921г. Представленна и весомое участие Архиепископа Нерсеса в становлении епархальной армянской школы Тебриза -Кентронакан, с полным средным образованием для обеих полов.

**Arman Andrikyan, Archbishop Nerses Melik-Tangyan's public and educational activities diogese of Atrpatakan** - The article attempts to present the long-term leader of the Atrpatakan Diocese of the Armenian Apostolic Church, prominent figure, scientist Archbishop Nerses. Melik-Tankyan's prosperous social, educational and cultural activity in 1912-1948. Special attention was paid to the efforts of Bishop Nerses to support the Armenian emigrants who survived the Armenian Genocide and found refuge in Atrpatakan. The efforts of Archbishop Nerses to provide Armenian education in the context of the closure of Armenian schools in Iran during the reign of Reza Shah were discussed. Reference was made to the construction of the Aramyan Theater in Tabriz and the activation of theatrical life. Archbishop Nerses. Melik-Tankyan's active participation.

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԱՐՄԵՆՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

ՆԻՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

**Բանալի բառեր** - մոդել, գույն, սյուժե, հնչյուն, սիմֆոնիզմ, ալիտերացիա, ասոնանս, գույնի հնչյունավորում, հնչյունի գունավորում:

Ա. Մարտիրոսյանի պոեզիան նրա հոգու հայելին է և այնպիսին է, ինչպես ինքը բանաստեղծը: Իսկ Ա. Մարտիրոսյանը, որպես անհատ, իր բնավորությամբ, խառնվածքով, տարբերվում է սերնդի բանաստեղծներից շատերից՝ բռնկուն էր, ընդգծված կերպով զգացմունքային, միաժամանակ՝ նաև խոհուն, խոսքի մեջ զուսպ, ինը հուշում է, որ նրա բանաստեղծություններում փիլիսոփայական մտորումները երիզված պիտի լինեն քնարական նրբազծերով, զուսպ, հուզականությամբ: Բերենք մի օրինակ՝

Ինձ առաքված նշխարի ուրախության առջև
բացել եմ հոգուս դարպասները մութ.
նա հազվադեպ է ինձ այցի գալիս,
երբ այցելում է
նրա ուսերին բուսնում են խկույն թռիչքի թևեր,
ծովը թվում է ծնկներիցս հետ է,
և հեշտանում է նավարկությունը երկնային ծովում:
Այդ ես եմ քշում աստղերի հոտը լռության միջով՝
իմ ներաշխարհի դալար հովիտում հանգրվանելու[1]:

Բառի գունավորումը, թերևս, նորություն չէ մեր պոեզիայում: Ա. Մարտիրոսյանի պարագայում նորություն կարելի է համարել գույնի և մեղեդու աստիճանակարգումը: Միաձուլվելով իրար՝ գույներն ու մեղեդիները գտնվում են շարժման մեջ, ապրում են իրենց գարուններն ու ամառները՝ ցողաթաթախ՝ կանաչով ու արևի բորբ շողերով երիզված, աշուններն ու ձմեռները՝ մրգահասի երկունքով, հնձանների գինեվետ բույրերով ու ճերմակ մայրամուտով:

---

[1] **Մարտիրոսյան Ա.**, Ներաշխարհի լռությունը, էջ 18:

Այդ համաձուլվածքի համապատկերում բառերը ծնվում են, հասունանում, ճերմակում ու մեռնում, համբարձվում երկինք, Արքայության պարտեզներում նորից հարություն առնում: Նրանք նման են աստղերի, և այդ աստղերից յուրաքանչյուրի կորուստը տխրության ու ցավի մեջ է, ուրախությունը՝ ծննդի, տեսակի շարունակականություն ազդարարող մանկան առաջին ճիչի մեջ:

Բանաստեղծի «ներաշխարհի դալար հովիտներում» գույնի ու մեղեդու նրբերանգներով ու ելևէջներով երիզված բառերն արթնանում են որպես «ուրախության նշխարահատիկ»:

Բառերը դժվարին ճանապարհ են անցնում, մինչև դառնում են գույն ու մեղեդի, շրջում են «եղինջների խիտ շարքերի միջև», փշերի մեջ պատառոտում են իրենց հագուստները և «որոնում են իմաստ իրենց ծննդի», հարստանում են՝ «իմաստ փնտրելով հեռացումի մեջ, որովհետև այն, ինչ կորչում է, լքված մի վայր է թողնում, որտեղ աճում է հիշողությունը»:

Դժվարին ճանապարհ են անցնում բառերը և, մինչև սպիտակ թղթի ճերմակությանը հասնելը, ճանապարհին բազմաթիվ արգելքներ են հաղթահարում՝ «խրթին խութեր ջրասույզ և ուղղաձիգ ժայռեր՝ վերձիգ ու սառցապատ, և զահավեժ գետեր՝ կեռմաններով, խեղդող պտտանով հարուստ», և «ով որ զիրկն ընկավ այդ խելահեղ պարի, կխճճվի իսկույն և կկորչի անհետք»,- սա է բանաստեղծության մեջ բառի արժևորման արմենմարտիրոսյանական փիլիսոփայությունը, որին միշտ հավատարիմ է մնում բանաստեղծը՝ «անցնելու համար խաչմերուկով հատվող հայացքների և պահելու համար իր տեսակը ազնիվ ու միամիտ»:

Համասփյուռ գորշության պայմաններում դժվար է պահել այդ տեսակը, և դրա համար բանաստեղծից անասելի ջանքեր են պահանջվում.

և պահելու համար իմ տեսակը ազնիվ ու միամիտ<br>
ես ամեն օր բուժիչ դեղահաբի նման<br>
բուռ-բուռ կուլ եմ տալիս<br>
առյուծի լյարդ և թույն, և դառնություն լեղի.<br>
Այդպես անխոցելի և զրահապատ<br>
ես քայլում եմ, անցնում հայացքների միջով բամբասանքի[1]:

Բառերից հյուսված բամբասանքի «չոր խաչափայտը՝ անեծքածին, կպչուն», կախված է եղել ոչ միայն Ա. Մարտիրոսյանի գլխին. սերնդի բանաստեղծներից շատերն են համբերատար կերպով անցել այդ բամբասանքների մացառուտներով, որոնց համեմատությամբ «փոքրիկ խաղալիք են կարծես» և «գողգոթա, և ցավ, և խաչափայտ կոպիտ»: «Հարուստնե-

[1] **Մարտիրոսյան Ա.,** Արգելված պտուղ, Եր., ՀԳՄ հրտ., 2019, էջ 19-20:

րի» համար այդ բամբասանքները եղել են «կամուրջ փորձության», « թույլերի համար՝ ամենակուլ ու ունայն»:

Ա. Մարտիրոսյանը փորձարկում է բանաստեղծության կառուցվածքի տարբեր ձևեր, որն արտահայտվում է մի շարք դրսևորումներով՝ ներքին հանգավորում, բառամիջի դադար տողի կեսում (հատած, цензура), բաղաձայնույթներ (ալիտերացիա) և առձայնույթներ (ասոնանս), նմանաձայնություններ և այլն:

Ներքին հանգերը բանաստեղծության մեղեդին դարձնում են ավելի արտահայտիչ, գունավորում են ելևէջները, աստիճանակարգում ռիթմերը: Բավական հետաքրքիր են Ա. Մարտիրոսյանի բանաստեղծությունների ներքին և տողի վերջին հանգերի համադրումները.

Ժամանակն է, ասի, ոչ ոք թող չխոսի,
Ոչ ոք թող չլսի, ոչինչ թող չհոսի,
և ինձանից ոչ ոք չբամբասի,
ժամանակն է, ասի, դողէրոցքի…
Ախր ես շատ ձանձրացա ես ինձնից
և ձեզանից, անշուշտ, շատ ձանձրացա,
ես իմ միջով հազար մազե կամուրջ անցա,
իմ մեջ ես գործեցի հազար ու մի հանցանք՝
իբրև անլույս անձավ և անկատար բաղձանք
և էլ տեղ չմնաց ապաշխարիման[1]:

Ներքին հանգերով առանձնապես հարուստ են «Մայրամուտի ծիածանը» շարքի բանաստեղծությունները:

Ահա մի քանի բնորոշ օրինակներ.

Անձրև չէր հաստատ, ոչ էլ արեգակն էր թիավարող
ես կասեմ ով էր՝ բացեց գոց դռները մայրամուտի,
ներսում այնքան զով էր ու շնկշնկան հով էր,
ու ծավալուն ծով էր գույնի ու կարոտի,
մեկը ինձ կանչում էր, ու ձայնը հնչուն էր ու նվագուն
և նա մաքրամքուր էր, երգում-նվագում էր
իր զաղտնիքի լարի ու գույնի ընմպանակում[2]:

Կամ՝

Հոգնած այգեպան եմ, շվար ու անկամ եմ,
Առաջին անգամ եմ անցնում այդ դարպասով

[1] Նույն տեղում, էջ 8:

[2] Նույն տեղում, էջ 23:

քայլս երերուն է, և պարզ երևում է՝
հենց առաջին քայլից կսայթաքեմ[1]:
…………………………………………..
Իբրև անշարժ արձան, իմ լռության անձայն քարացումը ցրտում
անարձագանք տրտում- ծալ-ծալ փռված սրտում-
օձագալար երկար չի դիմանա, նրան կհաջորդեն
ճյուղատարած խոքի արծաթագույն հոքի հորձանքները գարնան[2]:
……………………………………
Այս տեսիլքը սուտ էր ու խաբկանքի խութ էր
իմ լռության սառչող ջրերի տակ
աներևույթ սուզված ու ծանրանիստ,
իսկ թե բախտաբեր էր, ինձ նոր պիտի բերեր
սպասումի կանչող նավահանգիստ[3]:

Ա. Մարտիրոսյանը փորձարկում է նաև բանաստեղծական կառույցի տարբեր միջոցներ: Օրինակ՝ բանաստեղծության տողերը սկսելով շաղկապներով, որոնք շարժումը ներկայացնում են աստիճանական արագացման ընթացքում, նոր ելևէջներ հաղորդում տողին, ավելի ընդգծում ռիթմական միավորները:

Բայց եղյամն, ավաղ, վայրկյաններ է տևում,
և դու աղքատն ես նույն ներսուզվելու պահին,
և դու աղքատն ես նույն տուն վերադառնալիս,
և գրիչդ հալվող սառցաղաշտի վրա
թողնում է թաց հետքեր…անջնջելի սալին[4]:
……………………………………………
Գոնե զինի թափվեր լուսնեղջյուրից
վաղնջական, սիրած, տտիպ զինի,
և իմ նախնյաց նման ես խմեի զինին լուսնեղջյուրից
և մի եղջյուր զինով մոռանայի անդարձ
իմ ճակատը ծածկող կոհակները հոգսի
և լուռ նմանվեի այս անտարբեր խաղաղ
մանկահասակ և թարմ լռությունը
և լռեի երկար[5]:

[1] Նույն տեղում, էջ 24:
[2] Նույն տեղում, էջ 81:
[3] Նույն տեղում, էջ 82:
[4] Նույն տեղում, էջ 48:
[5] Նույն տեղում, էջ 61:

……………………………………………..
Եվ արքայի ապարանքից ընկնում է ցած,
և խրճիթի առաստաղն է ծածկում երկնի պաստառներով
և արքայի ապարանքը թևատարած[1]:
……………………………………………
և լռությունը այս-քար անտարբեր
և ցնծությունը այս-անհողաբաշխ
և կուրությունը այս-հար խարխափող
և աղոթքով սնված իմ այս արարումը
վերածնունդ չի սովորական[2]:

Հանդիպում են նաև այլ խուքի մասերով սկսվող տողերով բանաստեղծություններ, որոնք տարբեր հոգեվիճակներ են արտահայտում, գույներ ու ելևէջներ ավելացնում բանաստեղծությանը:

Ա. Մարտիրոսյանի բանաստեղծություններից շատերն ունեն սյուժե, ֆաբուլա, հանգույցներ ու հանգուցալուծում, («Ինքնանկար», «Արթնացում», «Սուզվում է ցանցը» և այլն), որոնք ներկայացված են շարքերով, թողնում են առանձին նովելների տպավորություն և ամբողջական համակարգում հանդես են գալիս որպես կենսագրության առանձին դրվանգների գեղարվեստական պատումներ:

Ուշադրության արժանի են Ա. Մարտիրոսյանի բնապատկերները (-Փակագծում նշենք, որ սերնդի բանաստեղծներից շատերը, հետևելով արևմտյան ժամանակակից բանաստեղծներին, ուղղակի խուսափում են բնապատկերներից): Բնապատկերները Ա. Մարտիրոսյանն օգտագործում է որպես հոգեվիճակների բացահայտման միջոց՝ անտեսանելի ձայների երևակման, անլսելի շշուկների մեղեդավորման նկատառումներով:

Նրա գույները մերթ թանձր են, բայց ոչ միատոն, մերթ տարբեր երանգներով երիզված, ձայները՝ գույներին համահունչ՝ մերթ շշուկով արտաբերվող, մերթ վարարուն ու հնչեղ, պատկերները՝ տեսանելի ու շոշափելի:

Լեռան լանջին գարունը կանաչ շավիղ է բացել,
Որը ձուլվում է հորիզոններին:
Թփերի խորքում միայնակ քամին քաղցից դողում է
Եվ հասուն միրգ է որոնում ընկած տերևների մեջ
Եվ փոքրիկ սունկեր:
Աղջիկը բոբիկ ելնում է կանաչ արահետն ի վեր՝
Իր գաղտնիքները այնտեղ թողնելու,

[1] Նույն տեղույմ, էջ 74:
[2] Նույն տեղում, էջ 110:

Կանաչ որսորդն է բարձրանում կանաչ
շավիղներն ի վեր
Հորիզոններից ամպեր քաշելու[1]:

Մարտիրոսյանի ներկապնակի գույներըհամահունչ են բնապատկերներին. աշնանայինը՝ ոսկեգույն ու տաք են, ձմեռայինը՝ անբիծ ու լուսավոր: Ավելի թանձր են ամառային գույները.

Անձրևը երկար ճառագայթներով
Սպիտակ լույս է ասեղնագործում
դաշտերի հեռվում,
հասկերը դեղին թիկնոցների մեջ
Աղերսում են լույս
Երկունքի ցավ կա դաշտերում,
Եվ ցավերի դեմ կռվելու համար՝
հասկերը դեղին թիկնոցների մեջ
աղերսում են լույս:[2]:

Անցնելով որոնումների դժվարին, խոչընդոտներով լեցուն ճանապարհ, «վարպետության դասեր» առնելով հայ և համաշխարհային գրականության մեծերից՝ Ա. Մարտիրոսյանը չմնաց աշակերտի համեստ կարգավիճակում: Նա ունեցավ բանաստեղծության իր տարածքը, ստեղծեց իր զուտ արմենմարտիրոսյանական մոդելը:

**Нинел Сарксян, Стихотворная модель Армена Мартиросяна -** В статье исследуются особенности стихотворной модель лирики Армена Мартиросяна. Сопоставляя традиции армянской средневековой и классической поэзии с русской и современной зарубежной лирикой, в частности, подчеркивается, как А.Мартиросян в своих произведениях формирует своеобразную поэтическую модель, присущую его художественному слову.

**Ninel Sarksyan, Armen Martirosyan's Model of Poem** - Armen Martirosyan's model characteristics are examined in the article,espacially it is mentioned that combining Armenian medieval,classical and modern periods, Russioan and Western traditions,the writer builds his own original model of poem.

[1] Նույն տեղում, էջ 35:

[2] Նույն տեղում, էջ 37:

# ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ՀԱԶԱՐՏՈՂԵԱՆԻ» ԺԱՆՐԻ ՀԱՐՑԸ

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**Բանալի բառեր** - Գրիգոր Մագիստրոս, տաղաչափություն, տաղաչափություն, տաղ, ձեռագիր տարընթերցումներ, կաֆա, հանգ, Աստվածաշունչ:

Հայ մատենագրության մեջ Գրիգոր Մագիստրոսի ծավալուն չափածո ստեղծագործությանն առնչվող մի շարք կարևորագույն հարցեր՝ այդ թվում ժանրի խնդիրը ուսումնասիրված չեն, իսկ եղած վկայություններն էլ թեև միօրինակ չեն, այնուամենայնիվ առաջ են բերում «Հազարտողեանի» կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Աստվածաշնչի չափածո այսպիսի մշակումը մատենագետ Գարեգին Զարբհանալյանն իր «Պատմութիւն հայ հին դպրութեան» աշխատության մեջ կոչում է «հազարտողեան ոտանաւոր»՝ «աստուածաշունչ հին և նոր գրոց պատմութիւնը բանաստեղծական չափով…»[1]: Գրականագետ Շավիղ Գրիգորյանն իր «Դիտարկումներ Գրիգոր Մագիստրոսի հիշատակած «Գուսանական» երգերի վերաբերյալ» հոդվածում անդրադառնալով այն հարցին, թե ինչու և ինչպես է Մագիստրոսը «Հազարտողեանը» շարադրել չափածո՝ գրում է, որ վերջինս իր աչքի առաջ ունեցել է արաբական կաֆան, «որի սկզբունքներով ոչ միայն Ղուրանը, այլև միջնադարի մահմեդական ողջ պոեզիան է հորինվել»[2] և նկատում է, որ ««Հազարտողեանը» Մագիստրոսը միանման կանոնավոր հանգով ստեղծեց Ղուրանին նմանվելու դիտավորությամբ, չմտածելով, որ այդ կերպ նա արաբական տաղաչափության ազդեցությունն է «սկզբնավորում» հայ պոեզիայում»[3]: Հետաքրքրական է գրականագետ Վարագ Ներսիսյանի տեսակետը. «Անկասկած՝ չի կարելի «Հազարտողեանի» առաջաբանից ենթադրել, թե հայերը հանգի գործածությունը Մագիստրոսի միջոցով սովորել կամ ընդօրինակել են արաբներից»[4]: Վարագ Ներսիսյանը ծանոթ էր Շավիղ Գրիգորյանի առաջ քաշած տեսակետին, թե սխալը հենց Մագիստրոսի այն վկայության մեջ է, որ հայերը հանգը փոխառել են արաբներից, սակայն վերջինս անընդունելի է համարում

---

[1] Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ-ԺԳ դար), բարձրագոյն դպրոցաց համար, Վենետիկ, 1932, էջ 584:

[2] **Գրիգորյան Շ. Ս.,** ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1965 № 1, էջ 83:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 118:

հանգը արաբներից փոխ առնելու տեսակետը Մագիստրոսին պարտադրելը. «Այլ բան է արաբական ազդեցությամբ «Հազարտողեանի» հանգի փաստը, և մի այլ բան՝ ընդհանրապես հայերի կողմից հանգի գործածությունը արաբներից սովորելու տեսակետը: Ասել, որ Մագիստրոսը այն կարծիքն է ունեցել, թե իբր հանգի գործածությունը հայ բանաստեղծության մեջ սկսվում է «Հազարտողեանով», չենք կարող, որովհետև այդ անելու համար բավարար փաստեր չունենք»[1], իսկ Ղուրանի ազդեցությունը բնութագրում է ձևական՝ որոշակի շարժառիթից ելնելով: Վարագ Ներսիսյանն ուշադրություն է հրավիրում «Հազարտողեանի» «Պատճառ ոտանաւոր բանից» առաջաբանի այն հանգամանքին, որում ընդգծվում է Աստվածաշնչի բովանդակությունն արտացոլող այս հանգավոր չափածո երկի ստեղծման կրոնական կողմը, իսկ հանգի հարցը վեճի երևութական կողմն է ներկայացնում[2]: Նկատենք, որ Վարագ Ներսիսյանն իր զարգացած բոլոր տեսակետներում խուսափում է նշել ժանրը՝ այն կոչելով ուղղակի «Հազարտողեան»: Հայագետ Մանուկ Աբեղյանը «Հազարտողեանը» բնութագրում է պարզապես որպես չափածո գործ՝ առանց ժանրային որոշակի գնահատության և այն տեսակետն է հայտնում, թե Մագիստրոսը օժտված չէ քերթողական տաղանդով, այլ հմուտ ու վարժ տաղաչափ է, ուստի հայագետը այն և մի քանի այլ չափածո գործեր արժևորում է միայն տաղաչափական տեսակետից[3]: Գրականագետ Հասմիկ Սիմոնյանն իր «-Կաֆայի ժանրը հայ միջնադարյան պոեզիայում» ուսումնասիրության մեջ կաֆայի հատկանիշներից նույնահանգության մասին խոսելիս անդրադարձել է նաև Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեանին»՝ այս ստեղծագործության համար խորագրից հետո գործածելով «չափածո երկ» հասկացությունը[4]: Ի տարբերություն նախորդ հետազոտողների, որոնք «Տաղաացութիւնը» համարում էին կա՛մ հազարտողյան ոտանավոր, կա՛մ ուղղակի չափածո գրվածք՝ զերծ մնալով ժանրային գնահատությունից՝ գրականագետ Արշակ Մադոյանն իր «Ուսուցական պոեմը» հոդվածում այն քննում է որպես ուսուցական պոեմի առաջին գործերից մեկը մեր գրականության մեջ[5]: Գրականագետ Սարգիս Մխիթարյանը նույնպես աստվածաշնչյան հիմնական դրվագները ներկայացնող ծավալուն այս երկն անվանում է պոեմ և այն գնահատելով որպես նոր ժամանակաշրջանի սկիզբ՝ գրում է. «Ճիշտ է, արագ գրված լինելու պատճառով պոեմը ավելի փաստաշատ է ու պակաս զգացմունքային, բայց իր մտահղացման, իրա-

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 119:

[3] **Աբեղյան Մ.,** Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 48:

[4] Հայ միջնադարյան գրականության ժանրեր, Եր., 1984, էջ 355:

[5] Նույն տեղում, էջ 263:

կանացման և գեղարվեստական իդեալի կարևորության իմաստով՝ չափազանց արժեքավոր»[1]: Այս ստեղծագործության մասին խոսելիս գրականագետ Գոհար Մուրադյանը գրեթե միշտ գործածում է «պոեմ» եզրույթը:

Նկատի ունենալով «Հազարտողեանի» ժանրի հետ կապված տարբեր ըմռնումներն ու հիմնավորումների բացակայությունը՝ առաջնային ենք համարում ժանրային գնահատությունը հստակեցնելու խնդիրը: Նախ՝ ուշադրություն դարձնենք այս չափածո երկի հրատարակված տարբերակների խորագրերին և ձեռագիր աղբյուրներում ընդօրինակված ամբողջական վերնագրերին: Ամենաhին հրատարակության մեջ այն ունի «-Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի, ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի»[2], Պոլսի 1825 թ. հրատարության մեջ՝ «Տաղասացութիւն ներհուն առն Գրիգորի Մագիստրոսի ուղղափառ Իշխանի»[3], 1868 թ. վենետիկյան տպագիր օրինակում՝ «Գրիգորի Մագիստրոսի ոտանավոր բանք առ Մանուչէ»[4], գրականագետ Գոհար Մուրադյանի կազմած քննական բնագրում՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի՝ ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի»[5] խորագրերը:

Մաշտոցի անվան Մատենադարանի 1696 թ. գրված 98 ձեռագրում[6] Մագիստրոսի ծավալուն չափածո գործը, «գրեալ ոտաչափութեամբ զաբարչագործութիւնն Աստուծոյ»[7], հանդիպում ենք «Տաղասացութուն Գրիգորի Մագիստրոսի ճշմարիտ և ուղղափառ վարդապետի–Մեծ են գործքն աստուածային...»[8] խորագրով, 18-րդ դարում ընդօրինակված 1638 ձեռագիր տաղարանում՝ «Տաղասացութիւն զԱրարչութեանն Աստուծոյ և զՔրիստոսի տնօրինութեանն»[9], 1651 թ. գրված 1741 ձեռագրում[10]՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի.

---

1 **Մխիթարյան Ս.,** Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, մենագրություն, Եր., 2001, էջ 106:

2 Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի, ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի: Ի տպարանի չնչին Յովհաննիսի, Կ. Պոլիս, 1746:

3 Գրքի վերջում կցված է հիշատակարան, որտեղ ասվում է, թե այս տպագրության նախաձեռնողը բարեսեր իշխան Աբրահամ ամիրան է:

4 Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունոյ, Վենետիկ, 1868:

5 Մատենագիրք հայոց, հ. ԺԶ, ԺԱ. դար, Երեւան, 2012, էջ 141-186:

6 Ժողովածուն գրվել է Կոստանդնուպոլսում, ստացողը՝ Եփրեմ երաժիշտ պատրիարքը և վարդապետը, որը Էջմիածնի Ամենայն հայոց սրբազան կաթողիկոսի՝ Հակոբի աշակերտն էր (Հիշատակարանը տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. հմր. 98, թերթ 271բ):

7 ՄՄ ձեռ. հմր. 98, թերթ 118ա-119ա:

8 ՄՄ ձեռ. հմր. 98, թերթ 121ա-140բ:

9 ՄՄ ձեռ. հմր. 1638, թերթ 12ա-67բ:

10 Գրվել է Հռհանավանքում, ստացողը եղել է վանքի առաջնորդ Հռհաննես վարդապետը (Հիշատակարանը տե՛ս ՄՄ ձեռ. հմր. 1741, թերթ 91ա, 454ա):

Մեծ են գործք աստուածային սքանչելի նորա բանին»[1], 17-րդ դ. Լիմ անապատի գրչագիր կենտրոնում գրված 2079 ժողովածուում[2]՝ «Գրիգորի Մագիստրոսի ասացեալ ընդդէմ Անաւրէն Տաճկին Մանուչէի ու պայքարէր ընդ նմա եւ յաղթեալ ի Գրիգորէ եղև Քրիստոնեայ»[3], 17-րդ դ. ընդօրինակված 3068 ձեռագրում՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի Մեծ են գործք աստուածային, սքանչելի նորա բանին»[4], 1677-1695 թթ. գրված 3172 ձեռագիր ժողովածուում[5]՝ «Գրիգոր[ի] Մագիստրոսի ասա-ցե[ալ] [ո]տան[աւորս] – Մեծ են գործք աստուածա-յին,/ ըսքանչելի Նոր[ա] բանին... որպէս եւ գրեալ է վերստին, / քեզ փառք եւ գոհութիւն, / պատիւ ընդ Հօր եւ Սուրբ Հոգին, / այժմ եւ հանապազ եւ յապազայ յաւիտենին»[6], դարձյալ 17-րդ դարի ձեռագիր 4232-ում՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի»[7], ձեռագիր 6045-ում «Գրիգոր Մագիստրոսի Ասացեալ Ոտանաւորս մեծ են գործք աստուածային. ըսքանչելի նորա բանին: Հրաշալի անպատմելին. յամենայնի զարմանալին»[8], 1570 թ. Կարինում գրված ձեռագիր 6734-ում «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի ճշմարիտ և ուղղափառ վարդապետի մեծ են գործք աստուածային, սքանչելի նորա բանին»[9], 18-րդ դարում Թեոդուպոլսում Մելքոն Կարնեցու կողմից ընդօրինակված ձեռագիր 6988-ում «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի ճշմարիտ և ուղղափառ վարդապետի մեծ են գործք աստուածային, ըսքանչելի նորա բանին»[10], Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության Անթիլիասի ձեռագրական հավաքածուի 96 ժողովածուի մեջ «Տաղաչափություն Ս. Գրոց»[11], Վիեննայի ձեռագրացուցակի 866 հավաքածուում՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի կատարեալ ճշմարիտ եւ ուղղափառ

---

[1] ՄՄ ձեռ. հմր. 1741, թերթ 272ա-293բ:

[2] Ձեռագիր այս ժողովածուն գրվել է 17-րդ դարում Հովհաննես Մոկացու կողմից՝ շատախեցի Հովհաննես աբեղայի խնդրանքով (տե՛ս ՄՄ ձեռ. հմր. 2079, թերթ 141բ, 153բ):

[3] ՄՄ ձեռ. հմր. 2079, թերթ 363ա-381ա:

[4] ՄՄ ձեռ. հմր. 3068, թերթ 4ա-24բ:

[5] Գրիչը Սիմեոն Տաթևացին, ստացողը՝ տեր Ղուկասը (Գրչության ժամանակի հիշատակարանը տե՛ս ՄՄ ձեռ. հմր. 3172, թերթ 188բ, 216բ, հետագայի հիշատակարանը՝ ՄՄ ձեռ. հմր. 3172, թերթ 263ա):

[6] ՄՄ ձեռ. հմր. 3172, թերթ 217ա-263ա:

[7] ՄՄ ձեռ. հմր. 4232, թերթ 8-53:

[8] ՄՄ ձեռ. հմր. 6045, թերթ 62ա-111ա:

[9] ՄՄ ձեռ. հմր. 6734, թերթ 23բ-38բ:

[10] ՄՄ ձեռ. հմր. 6988, թերթ 149ա-193բ:

[11] Ժողովածուն գրվել է 1652-57 թթ., գրիչն ու ստացողը Հովհաննես երեցն է, վայրը՝ Տանծին, (տե՛ս Դանիէլեան, Ցուցակ ձեռգրց., Մեծի տանն Կիլ., Կազմեց՝ Անուշավան վարդապետ Դանիէլեան, Անթիլիաս-Լիբանան, 1984, էջ 339):

վարդապետի»[1], Զմմառի վանքի մատենադարանի 198 հավաքածուում[2]՝ «Գրիգորի Մագիստրոսի տաղասացութիւն կամ ոտանաւոր բանք առ Մանուչէ», Զմմառի վանքի մատենադարանի 661 ժողովածուում՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի: Մեծ են գործք աստուածային: Ըսքանչելի նորա բանքն»[3], Երուսաղեմի 940 ձեռագրում՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի ճշմարիտ եւ ուղղափառ սրբազան վարդապետին»[4], Երուսաղեմի 1345 ժողովածուի Ե բաժնում՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի, ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի»[5], Երուսաղեմի 3333 ձեռագրում՝ «Տաղասացութիւն Գրի[գ]որի Մագիստրոսի ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի»[6], Երուսաղեմի 3397 ժողովածուի Զ բաժնում՝ «Գրիգորիսի Մաքիստոոսի ասացեալ ընդդէմ անաւրէն տաճկաց որ պաքառեալ էր ընդ նմա եւ յաղթեալ ի նմանէ եղեւ քրիստոնեայ.- Մեծ են գործք աստուածային»[7], Վենետիկի 1250 ժողովածուում՝ «Գրիգորի Մագիստրոսի ասացեալ ընդդէմ անաւրէն տաճկին Մանուչէի, որ պայքարէր ընդ նմա, եւ յաղթեալ ի Գրիգորէ եղեւ քրիստոնեայ. Մեծ եւ շնորիք աստուածային, եւ սքանչելի նորա բանին, հրաշալի անպատմելի, յամենայնի զարմանալին»[8], Վենետիկի 1258 ժողովածո-

---

[1] «866 հաւաքածոյ, ԺԸ-ԺԹ (1829), հիշատակագրություն չունի, Տեղեկութիւնք՝ Հ. Գրիգորիս Կ. Պոլսոյ մէջ 20 դրշ.ի գնած է (տե՛ս Ոսկեան Համազասպ, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատաենադարանին ի Վիեննա, Վիեննա, հ. Բ., 1963, էջ 441-442):

[2] Հավաքածուն գրվել է 19-րդ դարում Անթափ քաղաքում (տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Կազմեց՝ Մեսրոպ վրդ. Քէշիշեան (միաբան Զմմառի), Վիեննա 1964, էջ 477-478):

[3] 661 Ժողովածու եւ թուղթք Գրիգորի Մագիստրոսի, ԺԹ դար, գրիչը և տեղը անյայտ, Տէր՝ Զաքարիա վրդ., յիշատակագրութիւն չունի (տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Կազմեցին՝ Ն. Ակինեան, Հ. Ոսկեան, Վիեննա, 1971, հ. բ, Անտոնեան հաւաքածոյ, էջ 264-265):

[4] 940 Տաղասացութիւնք. Գրիգոր Մագիստրոս, ԺԷ դար, գրիչ՝ Մկրտիչ, ստացող՝ Սուքիաս Ռաբունապետ (Պողարեան Նորայր, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտ. 3, Երուսաղէմ, 1968, էջ 493-494):

[5] ժողովածուն գրված է 1790 թ., վայրը՝ Բիւզանդիոն, Կնիք սեւադրոշմ փակագիր. «Ք. Ծ. Մինաս Վարդապետ, ՌՄԼԹ» [=1790], էջ Ա, 268: Այլ կնիք սեւադրոշմ, «Յունան», էջ 270: Ստացող՝ Մինաս Աբեղայ (Պողարեան Նորայր, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտ. 4, Երուսաղէմ, 1969, էջ 615-617):

[6] 3333 Տաղք եւ Նամականի Գ Մագիստրոս, Նկար՝ Գր. Մագիստրոս ընդօրինակված են Հազարտողյանն ու 21 թղթեր, գրիչ, ստացող, ժամանակ չկան (Պողարեան Նորայր, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտ. 10, Երուսաղէմ, 1990, էջ 183-184):

[7] Գրիչներն են՝ Բարսեղ, Յոհաննէս, ստացողներն են՝ Ներսէս Վարդապետ, Յոհաննէս Աբեղայ (Պողարեան Նորայր, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտ. 10, Երուսաղէմ, 1990, էջ 287, 293-294):

[8] 1250 Ժողովածոյ ԼԳ, Ձեռ. Թիւ 171, գրված է 1620-4 տարիներին, գրիչը՝ Ստեփանոս վարդապետ Շատախեցի, ծաղկող՝ Սահակ Բաղիշեցի, ստացող գրիչը՝ Ստեփանոց Վրդ. Շատախեցի: 1682ին՝ Մինաս Վրդ. Թոխաթցի, ի Պուղտան, տեղը՝ Բաղեշ, Ամրտոլու վանք,

ւում՝ «Գրիգորի Մագիստրոսի տաղասացութիւն զարարչա(կան) գործունէութենէ Աստուծոյ եւ զՔրիստոսի տնօրէնութենթէն. Մեծ են գործք աստուածային, ըսքանչելի նորա բանին, հրաշալի անպատմելին, յամենայնի զարմանալին»[1], Վենետիկի 1335 ժողովածուում՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի գերապանծ իշխանի Պահլաւունոյ հայոց յարքայութեանն Կիլիկեցւոց, իմաստնագոյն իմաստասիրի եւ կորովաբան հռետորի. Մեծ են գործք աստուածային, հրաշալի անպատմելին, ի բարձրութիւն սերովբէին»[2], Սեբաստիայի 222 ձեռագրում՝ «Գր. Մագիստրոսի զարարչագործութենէն եւն առ ազգն Տաճկաց»[3] խորագրերով: Ընդհանուր առմամբ «Հազարտողեանն» ունի շուրջ 22 ձեռագիր օրինակներ, որոնցից 10-ը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում: Ընդ որում՝ բացի այս տասը օրինակներից, Մաշտոցյան Մատենադարանի ձեռագիր մատյաններից մեկն էլ՝ հմր. 7257-ը[4], պարունակում է մի պատառիկ, որը պա-

---

երկրորդ մասը՝ Լիմ անապատ (տե՛ս Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայ. ձեռագրաց, Մատենադարան Մխիթ. ի Վենետիկ, հտր. Է., 1996, էջ 295-297), Մագիստրոսը երկրորդ մասում է՝ 67. Թղ. 344ա. «Գրիգորի Մագիստրոսի ասացեալ ընդդէմ անաւրէն տաճկին Մանուչէի, որ պայքարէր ընդ նմա, եւ յաղթեալ ի Գրիգորէ եղեւ քրիստոնեայ. Մեծ եւ շնորհք աստուածային, եւ սքանչելի նորա բանին, հրաշալի անպատմելի, յամենայնի զարմանալին» (տե՛ս Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայ. ձեռագրաց, Մատենադարան Մխիթ. ի Վենետիկ, հտր. Է., 1996, էջ 306-307):

[1] 1258 ժողովածոյ ԽԱ, ձեռ. թիւ 461, գրիչ՝ Արիստակէս երէց, ի Պոլիս, տեղը՝ Պոլիս, կազմողը և ստացողը անյայտ, գրվել է 1688-ին: Ժողովածուն սկսվում է Մագիստրոսի ստեղծագործությամբ՝ «Գրիգորի Մագիստրոսի տաղասացութիւն զարարչա(կան) գործունէութենէ Աստուծոյ եւ զՔրիստոսի տնօրէնութենթէն. Մեծ են գործք աստուածային, ըսքանչելի նորա բանին, հրաշալի անպատմելին, յամենայնի զարմանալին» (տունս Ա-Ռ) (տե՛ս Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայ. ձեռագրաց, Մատենադարան Մխիթ. ի Վենետիկ, հտր. Է., 1996, էջ 356-357):

[2] 1335 Գրիգոր Մագիստրոս, ձեռ. թիւ 850, տարի 1762, գրիչ՝ Ստեփանոս եւ Գէորգ, որ ըլլալու է Պալատեցի Տէր Յովհաննիսեանը, ստացող՝ անյայտ, տեղ՝ Պոլիս, երկու տողերուն վրայ գրուած է աղագրութեամբ՝ «ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ՝ որ է Յարութիւն Արքեպս. Բասենցի, նուիրող Ձեռագիրս Մխիթարեան Հարց, Տեղեկութիւնք 1790ին նուիրած է Յարութիւն Արքեպս. Բասենցին, Թրիեստ քաղաքէն, եւ այդ առիթով Ձեռագրիս սկիզբը գրուած է տաղաչափեալ ոտանաւոր մը (տե՛ս Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայ. ձեռագրաց, Մատենադարան Մխիթ. ի Վենետիկ, հտր. Է., 1996, էջ 594-600), «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի գերապանծ իշխանի Պահլաւունոյ հայոց յարքայութեանն Կիլիկեցւոց, իմաստնագոյն իմաստասիրի եւ կորովաբան հռետորի. Մեծ են գործք աստուածային, հրաշալի անպատմելին, ի բարձրութիւն սերովբէին» (Ա-Ռ տուն) (տե՛ս Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայ. ձեռագրաց, Մատենադարան Մխիթ. ի Վենետիկ, հտր. Է., 1996, էջ 599):

[3] Միայն հայտնի է, որ գրիչը Բարսեղ վարդապետն է, և որ ձեռագիրը սեփականությունն է Սուրբ Նշան եկեղեցու (տե՛ս Գուշակեան Թ., Ցուցակ հայերէն ձեռագրաց ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, Վիեննա, 1961, էջ 117):

[4] Գրվել է 19-րդ դարում Կեսարիայի Ս. Կարապետ վանքում (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, Երևան, 1970, էջ 493-494):

բունակում է միայն երկի ստեղծման պատճառները ներկայացնող առաջաբանը[1]: Կարծում ենք՝ այս հանգամանքով է պայմանավորված, որ քննական բնագրի հեղինակ Գոհար Մուրադյանը չի հիշատակել այս ձեռագիրը: Հնագույն ձեռագիրը Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 6734՝ 1570 թ. Կարինում Շմայոն Մողնցի կողմից գրված նոտրգիր օրինակն է[2]: Ինչպես նկատում ենք խորագրերը միաձև չեն և այդուհանդերձ տեսականորեն նրանցում ընդգրկված են «տաղասացութիւն»[3], «տաղաչափութիւն», «տաղ ասացեալ», «ոտանաւոր բանք», «ասացեալ ոտանաւորս» հասկացությունները, որոնք ընդհանուր առմամբ ժանրանունների որոշակի պատկեր են ներկայացնում՝ արտահայտելով գրիչների կամ հեղինակի կողմից ստեղծագործության ժանրի ըմբռնումը: Առերևույթ պարզ է դառնում, որ մենք գործ ունենք «տաղ» գրական եզրույթի հետ: Այս հասկացության արդի և հնագույն ըմբռնումների քննությանը նվիրված ուշագրավ աշխատություն ունի գրականագետ Վարագ Ներսիսյանը («Հայ միջնադարյան տաղերգության ժանրերն ու տաղաչափությունը» (X-XIII դդ.)), որտեղ վերջինս ընդգծում է «տաղ» հասկացության «չափածո ստեղծագործություն», «չափածո գրվածք», «բանաստեղծություն», «ոտանավոր», «բան չափաբերական» միջնադարյան ըմբռնումները, որոնք փաստորեն հոմանշային շարք են ներկայացնում: Ուշագրավ է, որ Մագիստրոսն իր «Հազարտողեանի» առաջաբանը, որում տեղեկություն է տալիս գրության հանգամանքների մասին, կոչում է «Պատճառ ոտանաւոր բանիցս»[4], այսինքն՝ տաղի հոմանիշներից մեկն էլ միջնադարյան ըմբռնմամբ «ոտանաւոր բանքն» է: Գրականագետ Վարագ Ներսիսյանը նկատում է, որ տաղը չափածո խոսքի ըմբռնմամբ ներկայացվել է նաև 19-20-րդ դդ. որոշ հայ հեղինակների գործերի առիթով («Տաղք Մխիթարեան վարդապետաց» վերտառությունը, Խ. Աբովյանի կանոնավոր տաղաչափությամբ գրված քնարական ստեղծագործությունների շարքերից մեկը, Միսաք Մեծարենցի երկրորդ գիրքը՝ «Նոր տաղեր», Եղիշե Չարենցի «Տաղարանը» և «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ զետեղված տաղերը և այլն)[5]:

Այսպիսով՝ լայն առումով տաղը միջնադարյան չափածո խոսքի ընդհանուր անվանումն էր՝ գրական այս տեսակը արձակ խոսքից տարբերակելու, այսինքն՝ սեռի իմաստով: Տաղի մասին այսպիսի գիտելիքի ու պարզաբանված չափանիշների վերլուծության արդյունքները էական են

---

[1] ՄՄ ձեռ. հմր. 7257, թերթ 62ա-63ա:

[2] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 384:

[3] Տաղասացութիւն/տաղասութիւն. տաղաչափութիւն և տաղերգութիւն (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 840):

[4] **Ներսիսյան Վ.**, Հայ միջնադարյան տաղերգության ժանրերն ու տաղաչափությունը (X-XVIII դդ.), էջ 139:

[5] Նույն տեղում, էջ 23-24:

այնքանով, որ պարզ է դառնում, թե միջնադարյան ըմբռնմամբ Մագիստրոսի այս չափածո ստեղծագործությունը տաղ է և բոլորովին պատահական չէ, որ ձեռագիր ժողովածուներում ընդօրինակված լինելուց զատ՝ այս բնագիրը տեղ է գտել Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 1638 ձեռագիրը ներկայացնող «Տաղարանում», ընդ որում՝ այն պարունակում է միայն «Հազարտողեան» տաղը: Այստեղ արդեն անհրաժեշտ է դառնում «Հազարտողեան» տաղի տեսակի կամ բնույթի որոշման խնդիրը, որի լուծման բանալին դարձյալ արտացոլված է ձեռագրերում ընդօրինակված խորագրերի համակարգում: Գրականագետ Վարագ Ներսիսյանն իր տաղերգությանը նվիրված աշխատության մեջ ընդհանրացնելով որոշակի փաստեր, ընդ որում՝ խորագրերում պահպանված տվյալների վերլուծությունների արդյունքում, առանձնացրել է տաղը բնութագրող ամենաէական հատկանիշները՝ խոսքի ռիթմիկ կառուցման ձևը[1] (տաղ, ոտանավոր), բովանդակության կամ արտահայտած տրամադրության ընդհանուր բնույթը (ողբ, գովեստ, խրատ), արծարծած նյութը կամ պատկերման առարկան, գործառնական նպատակը, հեղինակային պատկանելությունը: Եթե այս հիմնական սկզբունքներից ելնելով վերլուծենք «Հազարտողեանի» խորագրերի՝ գրական որոշակի տեսակ ներկայացնող արտահայտությունները, ապա դրանց համադրական քննության արդյունքում ունենում ենք հետյալ պատկերը՝ ա) չափածո կառուցվածքը՝ տաղ, իսկ տեսակը՝ բանաստեղծություն, և այս հանգամանքը ակնհայտ է նախ հենց Մագիստրոսի առաջաբանի խորագրից, որտեղ նա իր ստեղծագործությունը բնորոշում է որպես «ոտանավոր խոսք», ապա արտագրող գրիչների վկայություններից («ոտանաւոր», «տաղաչափական ոտանաւոր») կամ ձեռագրերի նկարագրություններից. ինչպես օրինակ՝ «Գրիգորիսի Մաքիստռոսի **ոտանաւորը** (ընդգծումը մերն է) կը գտնուի էջ 409»[2], բ) արծարծված նյութը՝ աստվածաշնչյան հիմնական դրվագների վերապատում, ընդ որում, Աստվածաշնչի գրքերի թեմաների արծարծումից զատ նաև Գրիգոր Լուսավորչի դերի, եկեղեցու, ինչպես նաև գրերի ստեղծման համապատկերը, գ) ըստ բովանդակության արտահայտած ընդհանուր բնույթի՝ գովեստ, «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի Ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի **Մեծ են գործք աստուածային, սքանչելի նորա բանին**» (ընդգծումը մերն է), գրեթե բոլոր խորագրերում արտացոլվում է ընդգծված տողը՝ **«Մեծ են գործք աստուածային, սքանչելի նորա բանին»,** ապա հետևում է Աստծուն և նրա գործը դրվատող պատումը: Մագիստրոսը հենց քրիստոնեական կրոնի դիրքերը ամրապնդելու նպատակով է ընդդիմանում ա-

[1] Նույն տեղում, էջ 29-30:

[2] **Պողարեան Նորայր,** Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտ. 10, Երուսաղէմ, 1990, էջ 293:

բաբ բանաստեղծին՝ չորս օրում ստեղծելով այս երկը՝ կանոնավոր չափով, գովաբանող շեշտված բնույթով, այստեղ պիտի նկատենք, որ աստվածաշնչյան, ինչպես նաև ազգային մեծ նշանակություն ունեցող դեպքերի ու դեմքերի մասին դրվատական այս ստեղծագործությունը զուտ տաղաչափական արժեքից բացի ձեռք է բերում նաև դաստիարակչական նշանակություն, որն էլ լրացնում է նյութի ստեղծման հիմնական շարժառիթին, դ)նախորդ դիտարկումից արդեն պարզ է դառնում, որ նյութը ստեղծվել է գործնական նպատակով, չմոռանանք, որ քրիստոնեական կրոնի դերն ու առավելությունն ընդգծելու, «Ավետարանների հեղինակությունը փրկելու մտադրությամբ»[1] է Մագիստրոսը ընդդիմանում արաբ բանաստեղծին, միաժամանակ, իր դաստիարակչական և ուսուցողական նպատակով ձեռք է բերում ծրագրային նշանակություն՝ աղերսներ դրսևորելով Ն. Շնորհալու «Յիսուս որդին» երկի հետ, ե)հեղինակային պատկանելությունը՝ սա արտացոլվում է խորագրերում, ինչպես բնորոշ է միջնադարյան բանաստեղծությանը, օրինակ՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի», «Գրիգորիսի Մագիստրոսի ասացեալ ընդդէմ անաւրէն տաճկաց», «Գրիգորի Մագիստրոսի ոտանավոր բանք առ Մանուչէ»:

Այսպիսով՝ կարծում ենք՝ «Հազարտողեանը» տաղ է՝ գովեստի բնույթով, արաբական տաղասացությամբ ՝ կափայով գրված ծավալուն բանաստեղծություն ՝ ստեղծված կոնկրետ գործնական նպատակով և ունի տաղաչափական, ինչպես նաև ուսուցողական արժեք:

«Տաղասացութեան»՝ Գոհար Մուրադյանի կազմած քննական բնագիրը հիմնվում է երեք հին հրատարակությունների և Մաշտոցի անվան Մատենադարանի 98, 1741, 4232, 6045 ձեռագրերի վրա: Քննական բնագրի հեղինակը նախապատվությունը տվել է 6045 ձեռագրին: 98, 6045 ձեռագրերը եղել են նաև Աբրահամ Տերյանի կազմած բնագրի հիմքում: Գոհար Մուրադյանը խոսել է իր և Ա. Տերյանի կազմած բնագրերի տարբերությունների մասին: Նա նշում է, որ Աբրահամ Տերյանն իր հրատարակության ձեռագիր աղբյուրները երկու խմբի է բաժանում: Առաջին խմբի ձեռագրերն են Մաշտոցի անվան Մատենադարանի 98, 6734 և Երուսաղեմի 3333 ձեռագրերը, իսկ երկրորդ խմբի մեջ են մտնում Մատոցի անվան Մատենադարանի 2079, 3172, 6045 ձեռագրերը, և Ա. Տերյանը նախապատվությունը տվել է առաջին խմբի ձեռագրերի տարընթերցումներին[2]: Բացի այս կամ այն ձեռագրերի նախապատվություն տալու հանգամանքին, տարբեր են նաև Գոհար Մուրադյանի և Աբրահամ Տերյանի բնագրե-

---

[1] **Ներսիսյան Վ.,** *Հայ միջնադարյան տաղերգության ժանրերն ու տաղաչափությունը (X-XVIII դդ.),* էջ 119:

[2] Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, ԺԱ. դար, տե՛ս Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի՝ ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետի, Առաջաբանը՝ Մուրադեան Գ., էջ 127:

րի ստեղծման նպատակները: Գոհար Մուրադյանը նշում է, որ իր նպատակը հնարավորինս ամբողջական բնագիր ներկայացնելն է, մինչդեռ «Տերյանը ձգտել է չորս չափանիշի կիրառութեամբ նախնական բնագրից տարանջատել հետագայ խմբագրի ստեղծագործութիւնը»[1]:

Ե՛վ Ա. Տերյանը, և՛ Գոհար Մուրադյանը բնագիրը կազմելիս չեն օգտագործել միակ «Տաղարանում» ընդօրինակված տարընթերցումը, կարծում ենք՝ պատճառն այն է, որ Մաշտոցյան Մատենադարանի հմր. 1638 ձեռագիրը ուշ շրջանում է ընդօրինակվել՝ 18-րդ դարում, իսկ բնագիրը կազմողները հիմնականում օգտագործել են 17-րդ դարի ձեռագրեր և հնագույն օրինակը՝ ընդօրինակված 16-րդ դարում: Այնուամենայնիվ, քննարկվող բնագրի թե՛ ժանրային գնահատության և թե՛ իր տեսակի մեջ միօրինակ լինելու հանգամանքով պայմանավորված՝ հմր. 1638 ձեռագիր միավորը եղել է մեր ուշադրության կենտրոնում և, միաժամանակ, այն Գ. Մուրադյանի կազմած բնագրի հետ համեմատության արդյունքում դրսևորում է բնագրային այլասացության որոշ տարրեր՝ հիմնականում բառային մակարդակում, որոնց թիվը մեծ չէ: Այսպիսով՝ ձեռագիր այս օրինակը սկզբունքորեն մոտ է Աբրահամ Տերյանի և Գոհար Մուրադյանի ուշադրության կենտրոնում եղած ձեռագրերի տարընթերցումներին:

| | |
|---|---|
| «Տաղասացութեան» քնն. բնագիր (կազմեց Գ. Մուրադյանը) | ՄՄ ձեռ. հմր. 1638 |
| Յերկուց քերցն ընկալեալ զբազմութիւն ազգատոհմին (տողատակում արտացոլված են՝ եւ **ծառայիցն**, որ մերձ կային/կեցին/կացին տարբերակները) (էջ 147): | Յերկուցըն Լաբանու և **ծառիցն** որ մերձ կացին (թերթ 20ա): |
| **Խըստացեալ** փարաւոնի՝ ընդ Մովսիսի հակառակին (էջ 151): | **Խոստացեալ** Փարաւոնի ընդ Մովսիսի հակառակին (թերթ 24ա): |
| Նա **թացեալ** տայ զպատառըն այնմ, որ ուտէր ի սեղանին (տողատակում արտացոլված է նաև *բազմեալ* տարբերակը) (էջ 169): | Նա **թաղեալ** զպատառն տայ այնմ, որ ուտէր ի սեղանին (թերթ 46ա): |

[1] Նույն տեղում, էջ 130:

| | |
|---|---|
| Յառնէ յընթրեաց անտի, դընէ ի բաց **զհանդերձնին** (տողատակում արտացոլված են նաև *զփածանելին, զոր սփածանին, սփածանելին*) (էջ 169): | Յառնէ յընթրեաց անտի, դընէ զոր **զսփածանին** (թերթ 46ա): |
| Յետ **աւուր ութից** մտեալ ուր փակելաւք դրունքըն կային (էջ 177): | Յետ **ը աւուր** մտեալ ուր փակելաւք դրունքըն կային (թերթ 57ա): |
| **Սաւսոյ** նուիրէին եւ կենդանի անդ զոհէին (էջ 180): | **Սւսոյ** նուիրէին եւ կենդանի անդ զոհէին (թերթ 59բ): |
| ՋԿիւրեղ Աղեքսանդրին եւ **զհոմանունն** իւր զառաջին (էջ 181): | ՋԿիւրեղ Աղեքսանդրին եւ **զհամանունն** իւր զառաջին (թերթ 61բ): |
| Արդ զիս **յայս** տոհմէ զիտեմ ազգաւ Պարթեւ ըստ հայրենին (էջ 183): | Արդ զիս **ի յոյս** տոհմէ զիտեմ ազգաւ Պարթեւ ըստ հայրենին (թերթ 63բ): |
| Ոչ տուր կայ, ոչ առնուլ, բանըն կապած է **Հոետորին** (էջ 184): | Ոչ տուր կայ, ոչ առնուլ, բանըն կապած է **Հեռետորին** (թերթ 65ա): |

Այսպիսով՝ արաբական տաղաչափությամբ (կաֆայով) գրված այս ստեղծագործությունը բանաստեղծություն է, որի ծավալուն լինելը պայմանավորված է արծարծված թեմայի ընտրությամբ՝ սուրբգրային հիմնական դրվագների և քաղվածքների անհրաժեշտ առատությամբ: Այս բանաստեղծությունն ունի դաստիարակչական և կիրառական նշանակություն, որի մասին փաստում են շուրջ 22 ձեռագիր մատյաններում եղած ընդօրինակումները, և, միաժամանակ, այն Մագիստրոսի՝ տաղաչափության մեջ հմուտ լինելու խոսուն վկայությունն է:

**Асмик Овсепян, Вопрос жанра «Тысячастрочника» Григора Магистроса** - Принимая во внимание отсутствие разных пониманий и обоснованний жанра «Тысячастрочника» Григора Магистроса, в статье мы попытались уточнить вопрос о жанровой оценке последнего. В результате изучения структурных и содержательных особенностей этого произведения мы выдвинули точку зрения, что это стихотворение, написанное по арабской метрике (кафа), объем которого обусловлен выбором обсуждаемой темы: необходимым обилием основных библейских эпизодов и отрывков. Копии этого стихотворения, дошедшие до нас примерно в 22 рукописях, доказывают, что оно имеет учебно-практическое значение, и в то же время является ярким свидетельством владения грамматикой Магистросом.

**Hasmik Hovsepyan, The issue of the genre "Thousand of liness" of Grigor Magistros** - Taking into account the lack of different understandings and substantiations of the genre of "Thousand of lines" by Grigor Magistros, in this article we tried to clarify the question of the genre assessment of the latter. As a result of studying the structural and content features of this work, we put forward the point of view that this is a poem written according to the Arabic metric (kafa), the volume of which is due to the choice of the topic under discussion: the necessary abundance of basic biblical episodes and passages. Copies of this poem, which have come down to us in about 22 manuscripts, prove that it has educational and practical value, and at the same time is a vivid evidence of the mastery of grammar by Magistros.

# ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԱՐՇԱԿՈՒՆԻՆ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ, ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

**Բանալի բառեր** - Արշակ Երկրորդ, Պերճ Զեյթունցյան, պատմավեպ, գլխավոր հերոս, կերպար, հոգեկան դրամա, Արշակավան։

Արշակ Երկրորդի զեյթունցյանական կերպավորումը մեր գրականության մեջ նոր ու ինքնատիպ երևույթ էր՝ դուրս պատմական անձի կերպավորման ավանդական ձևերից։ Պ. Զեյթունցյանի մտահղացումներն ու դրանց արտացոլման եղանակները, չտեղավորվելով հայ դասական պատմավիպասանության սահմանած շրջանակներում, «Արշակ Երկրորդ» երկով նորովի պատկերեցին պատմական անցյալը։ Ինչպես նկատում է գրականագետ Ս. Արզումանյանը. «Սա գեղարվեստական լուրջ ձեռքբերում էր, պատմագեղարվեստական և ժամանակակից հոգեբանական վեպերի ժանրային սկզբունքների ներհյուսման հետաքրքիր փորձ»[1]։

«Արշակ Երկրորդ» պատմավեպի ինքնատիպությունը պայմանավորող գործոններից էր Պ. Զեյթունցյանի շատ ստեղծագործությունների հատուկ՝ հերոսների ներաշխարհային պայքարի հայելացումը, որով արձագանքվում են համաժամանակյա ու համամարդկային, ազգային ու հավերժ մարդկային խնդիրները։ Փիլիսոփայական դիտակետից ընդհանրանում է կյանքը՝ իրեն հատուկ օրինաչափություններով և անմեկնելի առեղծվածներով։ «Արշակ Երկրորդ» վեպում պատմական անցյալը դառնում է արդիական հնչեղության հարցերի արծարծման հարթակ, հերոսները՝ աշխարհընկալման տարբեր մոտեցումներ ու կենսական գաղափարներ մատուցելու միջոց։ «Նրա հերոսները գործում են պատմական անցյալի իրադարձությունների մեջ, իրագործում են անցյալի խնդիրները, բայց ներկայի պահանջով ու տրամաբանությամբ»[2]։

Պերճ Զեյթունցյանի համոզմունքով՝ պատմավեպն արժևորվում է ժանրի՝բարոյաճանաչողական նշանակության և արդիական ուղղվածության հնարավորությունների օգտագործմամբ։ Գրողը 1985 թվականին գրած հոդվածներից մեկում իրավացիորեն նշում է. «Ո՞ւմ է պետք այն պատմավեպը, որ ունի սոսկ ճանաչողական նշանակություն և չի հարա-

---

[1] **Արզումանյան Ս.,** Խորհրդահայ վեպը, հատոր չորրորդ, Եր., 1990, էջ 530։

[2] **Ավետիսյան Զ.,** Նորագույն գրականության զարգացման միտումները, «70-ական թվականների հայ պատմավեպը», Եր., 2003, էջ 125։

բերակցվում ժողովրդի այսօրվա հարցերի ու խնդիրների հետ, այսինքն, ճանաչելի չէ նաև այսօր»[1]:

Կերպարների, հատկապես Արշակ արքայի միջոցով հնչեցվում են դարերով ամրակայված ճշմարտություններ: Ինչպես նշում է Զ. Ավետիսյանը. «Իր գեղարվեստական խնդրի իրագործման համար Պ. Զեյթունցյանը վերակառուցում է պատմական իրողությունը, բայց ոչ երբեք պատմության տրամաբանությունը, որովհետև, ինչպես ինքն է նկատում՝ իր նպատակն է ոչ թե ճշտության հետքով գնալ, այլ՝ ճշմարտության»[2]: Եթե Ստեփան Զորյանը, հետևելով հայ դասական պատմավեպի ավանդներին, ստեղծեց պատմագիտական նյութով հագեցած երկ՝ նպատակ ունենալով պատմական անցյալի միջոցով բարոյական դասեր ավանդելու, ապա Պերճ Զեյթունցյանը, ժամանակի գրականության պահանջներով և սեփական ստեղծագործական համոզմունքներով պայմանավորված, դիմեց պատմությանը՝ ստեղծելով պայմանական միջավայր՝ տարիների ձևավորած կենսական՝ ազգային ու համամարդկային գաղափարներն արդիական դիտակետից հնչեցնելու համար: «Պ. Զեյթունցյանի միտումը «պատմության հոգեբանական ճշմարտության հայտնաբերումն է: Դրանով է պայմանավորված «Արշակ Երկրորդ» վեպի ամենակենսական լիցքը՝ արդիական իմաստավորումը, հարցադրումների այժմեականությունը: Հեղինակը «Ավերված քաղաքի առասպելի» մեջ որոնում է մարդուն, բարձրացնում է մարդու պրոբլեմը անցյալի թեմատիկայի լուծումներում: Նրա գլխավոր հերոսի՝ Արշակի մեջ կարելի է տեսնել մեր օրերի մարդու շատ գծեր ու հատկություններ: Եվ ոչ միայն Արշակի»[3]:

«Արշակ Երկրորդ» պատմավեպի վերոնշյալ առանձնահատկությունններն ապահովում են Արշակունյաց արքայի ինքնատիպ կերպարակերտումը: Զեյթունցյանական Արշակը թե՛ գեղարվեստական մեկնաբանության տեսակետից, թե՛ իր ներքին գոյափիլիսոփայության խորհրդով բոլորովին տարբեր է նախորդած մյուս Արշակներից: Չնայած դրան՝ անժխտելի է նաև, որ նա նախորդ շրջանի պատմավիպասանական կերպարընկալման անմիջական զարգացումն է:

Պատմավեպի գլխավոր հերոսը հանդես է գալիս հոգեկան բարդ ու հակասական ապրումների մեջ: Նրա կերպարը բացահայտվում է հաճախ ինքնախոստովանության և ինքնավերլուծության տեսքով ներկայացված խոհ-մենախոսությունների, երկխոսությունների, կերպարի արտաքին ու ներքին հակադրման, իհարկե նաև՝ գործողությունների միջոցով:

---

[1] Սյունյաց երկիր, Զեյթունցյան Պ., «Սեր և պատասխանատվություն», Եր., 2015, N 32 (374), էջ 17:

[2] **Ավետիսյան Զ.**, նշվ. աշխ., «Գրական կերպարի հոգեբանությունը», էջ 157:

[3] **Արզումանյան Ս.,** նշվ. աշխ., էջ 535:

Զեյթունցյանական Արշակի հոգեկան դրաման բազմաճյուղ է. նրա խոհերում  արտացոլվում են արքայի և մարդու, հայի, ծնողի և զավակի մտահոգությունները: Հերոսի ներքին տառապանքի բազմաթիվ ակունքները ոչ թե անջրպետվում են, այլ ներհյուսվում և բացահայտում միմյանց: Արքայի ապրումներից յուրաքանչյուրը բացում է մտորումների մի նոր աշխարհ՝ վերացնելով ժամանակային սահմանները: «Արշակ թագավորի հոգեբանական դեգերումների շառավիղը չափազանց մեծ է, մեղմ բարությունից ու վիճակի խեղճությունից մինչև դեսպոտիզմն ու ահավոր սադիզմը, և այս ամենը հանուն մարդու, նրա գերագույն իդեալի, հանուն ազգի և հայրենիքի»[1]:

Պ. Զեյթունցյանը դառնում է Արշակի հոգու թարգմանը, Արշակը՝ գրողի պատմափիլիսոփայական հայեցողությունը կրող ու ներկայացնող գաղափարատիպ: Նրա մտորումներում բացահայտվում են փոքր երկրի արքայի տառապանքները, որ հաճախ ծնունդ են տալիս հրապարակախոսական շեշտադրմամբ և համաժամանակյա հնչեղությամբ ուշագրավ տողերի. «Հայոց արքան միշտ է խոցելի: Մոր արգանդից, իր ծնունդից, իր առաջին ճիչից, իր առաջին ինքնուրույն քայլից, երբ բոլորին թվում է, թե նա այլևս չի կառչում շրջապատի իրերից»[2]:

«Թագավորական լարախաղացությունը» Արշակին պահում է մշտական լարվածության ու տագնապների մեջ: Արքայի համար թագավորական իշխանությունն անհրապուրիչ են դարձնում նողկալի ու պարտադրված սիրաշահությունը բոլորին՝ հային ու օտարին, կաշկանդված արքա և կաշկանդված մարդ լինելու դատապարտվածությունը: Դրանք շարունակաբար զայրույթ, բողոք ու ցավ են սերմանում նրա հոգում՝ պատմական ճշմարտությամբ մեկնելով փոքր երկրների արքաների ողբերգությունը. «Խորամանկ պիտի ապրես: Պիտի ապրես քծնելով: Վախ ու դողի մեջ: Ամեն մի քայլդ կախված ուրիշի քայլից: Երբ խոսում եմ մեկի հետ, նրա աչքերում կարդում եմ՝ դու ի՞նչ թագավոր ես, թագավորը ՆՐԱՆՔ են: Գիտե՞ս՝ ես ինչի համար եմ նրանց պետք: Որպես զարդարանք, թանկարժեք աղամանդ, ազնիվ ցեղական ձի: Որովհետև եթե թագավոր ունես, ծառաղ էլ ինչ-որ արժեք է ստանում» (147):

Զեյթունցյանը հայոց արքաներին վիճակված լարախաղացի դերը ներկայացրել է նաև «Աստծո տասներկու օրը» պատմական դրամայում, որ շատ ընդհանուր գաղափարներ ունի «Արշակ Երկրորդ» պատմավեպի հետ: Գրողը պատկերում է Տիգրան Մեծի գահակալման բարդ ժամանակ-

---

[1] **Ավետիսյան Զ.**, նշվ. աշխ., «Գրական կերպարի հոգեբանությունը», էջ 157:

[2] **Զեյթունցյան Պ.**, Ընտիր երկեր 2 հատորով, հատոր երկրորդ, Եր., 1987, էջ 142: Այսուհետև այս  գլխում երկից հղումները կտանք փակագծերում՝ նշելով  միայն էջը:

ներից մեկում ստեղծված իրավիճակը՝ դաշնակից Միհրդատին հանձնելու հռոմեական հրամանի շուրջ ձևավորված դրությունը, որ դրամատիկ լարման մեջ է դնում արքային՝ բացելով տառապալից մտորումների շղթան: Տիգրան Մեծն իրեն անվանում է «երկրի առաջին լարախաղաց»[1]: Ինչպես տեսնում ենք, արքաների կերպարները, անկախ իրենց՝ պատմության մեջ արձանագրված վերելքներից ու անկումներից, պատմական նվաճումներից ու կորուստներից, Պ. Զեյթունցյանի գրչին ծառայում են պատմափիլիսոփայական և կենսափիլիսոփայական կարևոր գաղափարների բարձրաձայնման համար:

Զորյանական հայոց բերդի խորհրդանշած ազգային ինքնուրույնությունն ու միասնականությունը Պ. Զեյթունցյանի պատմավեպում վերաձևվում են իբրև «երրորդ ճանապարհ»: Պատմավեպում Դրաստամատը՝ սենեկապետը, արքայի գլխավոր խորհրդատուն, շարունակաբար նրա առջև դնում է անխուսափելի երկընտրանքը. «Իմ պարտքն է միայն հիշեցնել, որ դու պետք է ընտրություն կատարես: Կա՛մ Բյուզանդիա, կա՛մ Պարսկաստան: Կա՛մ հունասեր խմբակցություն, կա՛մ պարսկասեր: Դու քո ուժը չունես, արքա՛» (147): Սա պատմականորեն մեզ մշտապես հետապնդած քաղաքական ընտրությունն էր արևելքի և արևմուտքի միջև, որ Արշակ արքան որոշում է մի կողմ թողնել՝ կառուցելով իր երրորդ ճանապարհը. «Ես ուզում եմ ի՛մ կողմը լինել: Ինքս ինձ հետ» (146-147):

Արշակավանի կառուցմամբ արքան ձգտում էր դնել իր սեփական՝ երրորդ ճանապարհի սկիզբը: Այս խելահեղ մտահղացումը դառնում է Արշակի և ներքին ու արտաքին քաղաքական ուժերի հարաբերությունների բացահայտման հիմքը: Զեյթունցյանական Արշակը քաջ գիտակցում էր Արշակավանի հնարավոր աղետաբերությունը, սակայն այն համարում էր միակ ելքը՝ ազատվելու ոչ միայն արտաքին ուժերի, այլև՝ ներքին՝ նախարարական հովանավորության կախումից. «Ես արշակավանցիներին արտոնություններ կտամ… կազատեմ հարկերից… Չեմ թողնի, որ մեկը մյուսի հաշվին ապրի… Եվ նրանք կսիրեն ինձ… Ատամներով կպաշտպանեն իրենց քաղաքը… Իրենց ազատությունը… Մինչև վերջին շունչը կկռվեն… Էլ ստիպված չեմ լինի սողալու մեկ պարսիկի, մեկ բյուզանդացու առաջ… Եթե վաղը պատերազմ սկսի, էլ զորք չեմ մուրա իմ նախարարներից: Ես իմ սեփական ուժը կունենամ…» (178):

Զեյթունցյանական Արշակը, ինչպես զորյանական Պապը, փորձում էր կոտրել փոքր ազգի համար նախանշված ուղղու տրամաբանությունը, ինչի մասին խոսում է սպարապետ Վասակը. «Մեծ ազգերը հույսները դնում են իրականության վրա, փոքր ազգերը՝ հրաշքի: Ուժերն այստեղ հավասարակշռվում են, մեծերը կորցնում են իրենց առավելությունը,

[1] **Զեյթունցյան Պ.,** Ընտիր երկեր 2 հատորով, հատոր առաջին, Եր., 1987, էջ 314:

փոքրերը՝ ազատվում իրենց պակասություններից: Իսկ հենց որ փոքրերն ուզում են մեծերին նմանվել, ահավոր ու ճակատագրական ջարդ են ուտում: Սա է զաղտնիքը, ուրիշ բան չկա» (319): Արշակ արքան, հույս չդնելով որևէ հրաշքի վրա, փորձում էր իր ուժը ստեղծել, նմանվել մեծ ազգերին:

Պ. Զեյթունցյանը Արշակավանի կառուցումը ներկայացնում է իբրև Արշակի գոյության իմաստ, մոլության հասնող սևեռուն գաղափար, զլորված արքայական տարիների արդարացում, գործած մեծ ու փոքր սխալների հիմնավորում և արժևորում. «Ով-ով, բայց ես ինքս հո լա՞վ գիտեմ, որ եթե հարկ է եղել խաբելու, խաբել եմ, եթե պետք էր անազնիվ բան անել, արել եմ, եթե անհրաժեշտ էր դաժան լինել, եղել եմ, եթե անխուսափելի էր սուտ երդում տալը, տվել եմ…» (215): Պատմավեպի ընթացքում Արշակն ինքն իրեն հաճախ կոչում է տասնվեցերորդ Արշակունի, որ զեյթունցյանական կերպարի լավագույն բնորոշումն է: Նա և՛ հերթական Արշակունին էր՝ իշխանությունն ատամներով պահելու ջանքերով ու Արշակունիներին մշտապես ուղեկցող մտահոգություններով, և՛ տասնվեցերորդը, որ առանձնացավ մյուսներից՝ ընտրելով սեփական ճանապարհը կառուցելու դժվարին տարբերակը:

Պ. Զեյթունցյանը նկարագրում է Արշակավանի կառուցման ընթացքը, որ ուղեկցվում էր օրեցօր ավելացող աղետներով. «Արշակավանը դեռ չէր կառուցվել, բայց արդեն գերեզմանոց ուներ» (246): Մի նախադասությունն արդեն իսկ պարզում է քաղաքի ահավոր աղետաբերությունը: Ս. Զորյանն Արշակավանի բնակչության մեջ ավելի շատ պատկերում էր հասարակ շինականներին, որ պայքարում էին օրվա հացի համար: Պ. Զեյթունցյանը չի իդեալականացրել, ավելին, իրենց բոլոր ախտերով ու ապականություններով է ներկայացրել քաղաք փախած մարդկային զանգվածներին, որ բերում էին իրենց հետ մեղսագործությունն իր բոլոր դրսևորումներով՝ դավաճանություն, բանսարկություն, թշնամություն, գողություն, մարդասպանություն: Այդ ամենը քաղաքը դարձնում էր իսկական «հեթանոս բույն»:

«Արշակ Երկրորդ» պատմավեպում հասարակության ստորին խավը պատկերվում է ամբոխի տեսքով, ոչ՝ ժողովրդի: Արշակը՝ իբրև մարդ, ձուլվում էր ամբոխին իր կարոտով, մարդկային կյանքի հասարակ առօրյայի հանդեպ տենչով, իսկ իբրև արքա՝ անջրպետվում նրանից:

Արշակի և Ներսեսի հարաբերությամբ բացահայտվում է ժամանակին բնորոշ լարումը աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև: Կաթողիկոսը, չնայած ծավալած բարենորոգումներին և օգտակար գործունեությանը, զերծ չէր մնում սեփական իշխանությունն ամրացնելու նկրտումներից:

Արշակավանի կառուցմամբ Արշակ արքան իր հերթին փորձում էր երկրի համար նոր հավատ հաստատել՝ երկրի հավատը: Իհարկե, հոգևոր և քաղաքական բարձրագույն իշխանությունների գործունեության

մեջ կար նաև սեփական դիրքի ապահովման հարցը, սակայն գաղափարական առումով արքայի և կաթողիկոսի ելակետերը նույնն էին՝ թշվառ ու ծվատված երկրի անկախությունն ու երջանկությունը, պարզապես տարբեր էին ընտրված ճանապարհները: Ներսեսը, կանխազգալով երկրի ողբերգական գալիքը, ցանկանում էր, որ ավերակների վրա մնա գոնե փարատիչ եկեղեցին, ուստի ամեն կերպ ամրացնում էր եկեղեցական իշխանությունը, իսկ արքան, վստահ լինելով, որ անհնար է երկրի հետագա ապահով գոյությունն առանց հզոր թագավորական իշխանության, շարունակաբար ձգտում էր հասնել կենտրոնաձիգ թագավորության ձևավորմանը: Ա. Ղուլյանը գրում է. «Զեյթունցյանը ոչ միայն չի հեռացել պատմական Արշակից, այլև լրացրել ու հարստացրել է ավանդականը, նրանով մարմնավորել կենտրոնաձիգ պետություն ստեղծելու մաքառումները, հայ ժողովրդի աննկուն ոգին և կամքը»[1]: Արշակ Երկրորդի կերպավորման նկատմամբ գրողի նոր մոտեցումն իրավամբ նպաստել է արքայի կերպաընկալման ավանդական ձևերի հարստացմանը:

Արշակավանի կառուցմանն ուղղված ձեռնարկումների պատճառով խիստ սրվում են ներքաղաքական հարաբերությունները: Նախարարական և հոգևոր դասերից ձևավորված բյուզանդամետ և պարսկամետ հոսանքներն ակնհայտորեն ըմբոստանում են թագավորական իշխանության դեմ: Պատմավեպում գեղարվեստական նոր շունչ են ստանում նախարարական դասի շատ ներկայացուցիչներ: Ի տարբերություն դասական պատմավիպասանության մեջ առկա կերպարավորումների, Պ. Զեյթունցյանի վեպում Մերուժանը պատկերվում է բազմաթիվ դրական գծերով: Նա իր քաջությամբ և համարձակությամբ սիրելի էր բոլորին, անգամ՝ Արշակ արքային: Արծրունյաց նախարարը դեմ էր ոչ թե թագավորական իշխանությանը, այլ արքայի ծրագրին՝ սեփական ուժերին ապավինելու որոշմանը, որ, ըստ նրա, կործանարար հետևանքներ կարող էր ունենալ: Արքայի դեմ էին գործում նաև Ներսեհ Կամսարականը, Վահան և Վարդան Մամիկոնյանները և բազմաթիվ այլ նախարարներ: Հակառակ եղբայրներին՝ Վասակը տիրասիրության ու հայրենապաշտության վառ օրինակ էր: Նախարարական և հոգևոր դասերի հետ հարաբերությունների յուրատեսակ գեղարվեստական մեկնությունը զգալիորեն նպաստում է արքայի կերպարի ամբողջացմանը:

Զեյթունցյանական Արշակը շատ հակասական է՝ կտրուկ իր որոշումներում: Այս կերպարը զգալիորեն տարբերվում է զորյանական և խեչոյանական Արշակներից, որ աչքի էին ընկնում իրենց համբերատարությամբ ու շրջահայացությամբ: «Գլխավոր հերոսի բնավորության «պայթ-

---

[1] **Ղուլյան Ա.**, Պերճ Զեյթունցյանի արձակը (թեկնածուական ատենախոսություն), Եր., 2005, էջ 77:

յուններն» ու միմյանց հաջորդող տրամադրությունների տարբեր հոր-ձանքները զարմանալի վարպետությամբ են տրվում վեպում»[1]: Ժամանակի համար բնութագրական քաղաքական, սոցիալական, մարդկային հարաբերությունները խիստ լարված էին և բնորոշվում էին սեփական նպատակի ու շահի համար ցուցաբերած դաժանությամբ ու կատաղի պայքարով: Ս. Արզումանյանն այս առթիվ գրում է. «Խառնվածքով Պ. Զեյթունցյանի Արշակը դյուրաբորբոք է, արագ բռնկվող, զգայուն, կրակոտ, սկզբունքների ու դիրքերի մեջ աննահանջ: Պատմական-քաղաքական հանգամանքները, ժամանակը և Արշակի անհատականությունը հանդիպել են սուր մի կետում, և դա իր խոր կնիքը թողել է հերոսի բնավորության վրա»[2]:

Արշակ արքայի ողբերգականությունն ավելի է ընդգծվում սեփական ժողովրդի կողմից չսիրված և չընդունված լինելու գիտակցմամբ. «Չէ՛, իմ ժողովուրդը չսիրեց ինձ: Չսիրե՛ց, չսիրե՛ց: Եվ ո՞վ է ընդհանրապես սիրում արքաներին: Ուզում է լավ լինեն, թե վատ, միևնույն է, սեր չի հասնում նրանց» (296): Պատմավեպում բազմիցս ենք նկատում կերպարի՝ սեփական ողբերգությունից առավել մեծ ընդհանրացումների գնալու միտումը:

Արշակի՝ իբրև արքայի կերպավորումն ամբողջացնելու, հոգևոր և աշխարհիկ դասերի բնութագրերն առավել ընդգրկուն դարձնելու համար Պ. Զեյթունցյանն ինքնատիպորեն պատկերում է մարդու և դիրքի, պաշտոնի՝ աթոռի կապը. «Եթե ամեն բազմական լեզու առներ, ապա կպատմեր, թե որքան մարդկային կիրք է ծախսված իր համար, թե ինչպիսի քնքշությամբ են տիրոջ ձեռքերը հպվել իր արմունկներին, համենայն դեպս՝ միայն այս փայտի կտորը գիտի, և աշխարհում ոչ մի կին արարած դեռ չգիտի, թե որքան քնքուշ կարող են լինել տղամարդու ձեռքերը, …. իսկ երբեմն էլ, անգամ զրույցի ամենաթեժ պահին, բնազդաբար և զգուշությամբ քսվել նրան, կարծես ստուգելու նրանց գոյությունը, ամրությունը, հավատարմությունը, համոզվելու, որ, չէ՛, չի խախտվել մարդու և աթոռի կապը» (155): Աթոռի՝ մարդկային հոգեբանության վրա ունեցած ապականիչ ազդեցությունը լավագույնս պատկերվում է իշխան Վաչակի՝ գահին բազմելու տեսարանում: Անսահմանափակ իշխանության ընձեռած ազատությունը հաճախ աղետաբեր ուղղվածություն է ստանում՝ դառնալով բազմաթիվ անդառնալի սխալների պատճառ: Արշակն իր բոլոր արատները, մեղքերը փորձում էր արդարացնել «աթոռի ազդեցությամբ». «Ասե՛ք, ասե՛ք, ինչքան ուզե՛ք, ասե՛ք, մի՞թե ես առարկում եմ, որ փառասեր եմ, փառասեր եմ, ինչու՞ չէ, մինչև ուղն ու ծուծը փչացած, վա-

---

[1] **Արզումանյան Ս.,** նշվ. աշխ., էջ 535:

[2] Նույն տեղում, էջ 540:

յելքներից խենթացած, հարստությունից հղփացած… Ավելացնե՞մ էլի… Սակայն չէ՞ որ եթե Գնելը լինի թագավոր, նույն բանն է դառնալու» (221):

Գրողը չի իդեալականացնում Արշակի կերպարը, ավելին, հնարավորինս «մարդկայնացնում է» նրան՝ պատկերելով բազմակողմանիորեն՝ իր թուլություններով ու արժանիքներով՝ ամբողջովին չկտրելով հերոսի պատմականությունը: «Դասական գրականության «արշակապատումը» չի վախեցրել Պ. Զեյթունցյանին, նախորդ փորձի «բեռը» կրել է յուրովի»[1]: Նա հաղթահարել է կերպարի դասական մեկնության սխեմատիզմը և միակողմանիությունը՝ ավանդականի հանդեպ ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով:

Պատմավեպում Արշակ Երկրորդի կերպավորման կարևոր կողմերից է արքայի «մարդկային կյանքի» դրամայի պատկերումը: Արշակն ամենից առաջ մարդ է՝ իր թուլություններով ու առավելություններով: Նրա մարդկային էությունը և արքայական դերն անընդհատ բախվում և չեն ներդաշնակվում, ինչի պատճառն իբրև արքա՝ անսահմանափակ ազատություն ունենալու և իբրև մարդ՝ անտանելիորեն սահմանափակված լինելու հակադրությունն է: Գահը զրկում է նրան որևէ «գեղեցիկ և փառավոր սխալ» գործելու հնարավորությունից, դատապարտում անհագուրդ ծառայության, ամենօրյա զոհաբերման: Արքայի կարոտն ու տենչը հասարակ մարդու առօրյային, որ ծնվում է վճռական որոշումներ կայացնելու մշտական լարվածությունից, դրսևորվում է մանկության ընկերոջ՝ Եփրեմ ազատի հետ հանդիպելու և ճատրակ խաղալու ցանկության միջոցով: Ամենադժվարին պահերին արքայի համար երանելի է դառնում քաղաքական պայքարը շախմատային քարերի հասարակ քայլերի վերածելու և մանկության անհոգությունը վերապրելու միտքը: Եվ Արշակավանում մանկության ընկերոջ հետ միակ հանդիպման ժամանակ ցուցաբերած հոգատարությունն առաջին հերթին ոչ արքայական անցյալի և հանգիստ կյանքի հանդեպ Արշակի անհուն կարոտն է մատնում:

Արքան դրամա է ապրում իբրև հայ մարդ: Հայրենասեր լինելով՝ Արշակը ցույց է տալիս մեր ազգային կյանքի արատները: Եթե Ս. Զորյանն իր պատմավեպով մեկնում է հայոց բերդի անավարտության պատճառը, ապա Պ. Զեյթունցյանն իր գործում լավագույնս ներկայացնում է մեր երբորդ ճանապարհի՝ ներքին միասնության ու ինքնուրույնության բացակայության պատճառը՝ պատճառի պատճառը՝ ազգային անհաջողությունների բուն նախահիմքը՝ այն տեսնելով մեր ազգային բնավորության արատների մեջ: Պ. Զեյթունցյանն իր վեպում չի ճոխացնում ու գունազարդում մեր պատմությունն ու այն կերտողներին, հակառակը՝ բազմիցս տարբեր կերպարների միջոցով բարձրաձայնում է բարոյական հաղթա-

[1] **Արզումանյան Ս.,** նշվ. աշխ., էջ 536:

նակներով ազգին սնուցելու, ազգային սնափառություն սերմանելու վտանգավորությունը:

Վասակ սպարապետի մտորումներում բարձրացվում է մեր ազգային բնավորության մեծագույն ախտերի՝ չարակամության, նախանձի, դավադիր բամբասանքների, անհեռատեսության, սեփական դերն ու սահմանը չիմանալու մոլորության քննադատությունը, որ հրապարակախոսական զորեղ շեշտ է ստանում՝ սլաքն ուղղելով բոլոր ժամանակներին. «Ամե՜ն ինչ գիտեն: Գիտեն նույնիսկ, թե ում մտքին ինչ կա: Քո մասին գիտեն նաև այն, ինչ ինքդ դեռ չգիտես: Ամե՜ն ինչ գիտեն, ամե՛ն ինչ: Եվ իմանալը ամեն մեկն իր իրավունքն է համարում» (158): Սեփական սահմանը չգիտակցելով ու չճանաչելով՝ հայն իր երկրի սահմաններն էլ է կորցրել այնքան, որ բոլորը դարձել են իրար ծանոթ: Քննադատությամբ, տագնապով ու ցավով է արձանագրվում այն փաստը, որ հայ ազգը, բարոյական ախտերի պատճառով թուլացնելով երկրի հիմքերը, հեշտացնում է թշնամու գործը՝ նրան մղելով երկրի՝ առանց այն էլ խեղճուկրակ մարմնից մի պատառ էլ պոկելու ցանկության իրականացմանը. «Որպեսզի երկրում թեկուզ երկու հոգի էլ անծանոթ չմնան իրար: Որպեսզի երկրում չմնա և ոչ մի զաղտնիք: Եվ երկի՛ր չմնա, երկի՛ր: Այ քեզ Հայաստա՜ն» (159):

Հայերի կյանքում իշխում է միայն «ծերերի պաշտամունքը», իսկ ջահելությունը մեծ թերություն է: Ազգը միաբանության կարիքը զգում է միայն ծանր պահերին: Երբ Արշակը բարձրաձայնում է Արշակավանի կառուցմանն օժանդակելու պահանջը, որ նաև միասնականության կոչ էր, Վարձա Ապահունու կողմից հնչում է պատմական դառը ճշմարտությունն ամփոփող միտքը. «Պատերազմ հո չի՞, որ միանանք» (170): Արշակը ցավով է խոսում նաև հայ ազգի շարունակաբար «Պարույր Հայկազններ» կորցնելու՝ ունեցածը չգնահատելու և բաց թողնելու մասին, որ մինչ այսօր ցավալի խնդիր է մեր իրականության մեջ. «Մինչև ե՞րբ Պարույր Հայկազնները ասպարեզ չպիտի գտնեն իրենց հողի վրա և օտար երկրներ մեկնեն: Մտածե՞լ ես երբևիցե, թե ինչու ոչ ոք այս երկրում մեծություն չի դառնում: Քթներիս տակ ապրում են, իսկ մենք չենք էլ նկատում, բանի տեղ էլ չենք դնում: Բավական է օտար տեղ ընկնեն ու համբավի տեր դառնան, որ մենք հպարտանանք նրանցով, կուրծք ծեծենք, երդվենք նրանց անուններով: Մինչդեռ այդ մարդկանց պահել, պահե՜լ պիտի կարողանանք» (208):

Արքայի ողբերգությունն ավելի է մեծանում ազգային կյանքի քայքայիչ երևույթների դեմ պայքարելու անզորությունից: Ցասումով բարձրաձանելով այդ երևույթների դեմ իր քննադատությունը՝ Արշակը հուշում է դրանք վերացնելու անհրաժեշտությունը: Նրա խոհերում սուր քննադատական երանգ են ստանում հայոց անմիաբանությունը, օտարամոլությունը, նյութապաշտությունը: Ինչպես նշում է Զ. Ավետիսյանը. «Հայոց ար-

քան ծանրագույն ողբերգություն էր ապրում այն բանի համար, որ ի հեճուկս իր՝ երկիրը զորացնելու, միասնության բերելու ցանկության, այն փլուզվում է: Նյութը, պաշտոնը, ծանոթությունը, արյունակցական կապը ավելի վճռական էր, առավել քննություն բռնող, քան ազգի փրկությունը»[1]: Վեպում արքայի խոհերի միջոցով հեգնախառն քննադատությամբ այս մասին խոսում է գրողը. «Աստված միայն երկու սեր է ստեղծել հայ նախարարների համար: Նրանք սիրում են ոչ թե երկնի անհատակ կապույտը, զլզլան առվակի հնիհն վազքը, իրենց կողից ծնված կին արարածին, ընկերոջը, հայրենիքը, այլ՝ պարսիկին կամ բյուզանդացուն: Եթե նրանց նեղացնես ու վիրավորես, ոչ ոք տղամարդավարի չի հայհոյի քեզ, չի ապտակի, ձեռքը չի տանի սրի պատյանին, կանցնի պարսիկի կամ բյուզանդացու կողմը: Եթե կնոջ հետ կռիվ է արել կամ նրան կասկածում է դավաճանության մեջ, կանցնի պարսիկի կամ բյուզանդացու կողմը: Իսկ թագավորը պետք է հայացքը անընդհատ աջ ու ձախ թեքի, բռնի փախչողների փեշերից, խնդրի, աղերսի, բացատրի, հասկացնի, սպառնա, վախեցնի, հետո տեսնելով, որ բան դուրս չի գալիս, ինքն էլ, նեղացած, անցնի պարսիկի կամ բյուզանդացու կողմը» (223): Այս կործանիչ երևույթը մտատանջությունների առարկա էր դարձել նաև զորյանական Պապ թագավորի համար, որին գրականագիտության մեջ բազմաթիվ գծերով նմանեցնում են զեյթունցյանական Արշակին: Ս. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպում արքան ժողովրդի տունն ավերող իրական թշնամի է համարում հայ նախարարին. «Մինչև հիմա այդպես է եղել. բավական է մեկը՝ մի նախարար, դժգոհի կամ զժտվի թագավորից, իսկույն ձիավազ գնում է Տիզբոն կամ Բյուզանդիոն, թե՝ եկեք մեր թագավորին խրատեցեք կամ փոխեցեք, նա վատ խորհուրդ է հղացել ձեր դեմ, նա ուզում է կանգնել այս կամ այն կողմը և վնասել ձեզ»[2]:

Արշակունյաց արքան անընդհատ գտնվում է եռակողմ պայքարի մեջ: Նա փորձում է հաղթահարել Գնել-Արշակ-Տիրիթ ներքաղաքական եռանկյունին, որի հեղինակները հայության պարսկասեր և բյուզանդասեր հոսանքներն էին: Հետաքրքիր էր այս եռակողմ հակադրությունը լուծելու ճանապարհին առաջացած նոր եռանկյունին՝ Գնել-Արշակ-Փառանձեմ, որի զարգացումը Պ. Զեյթունցյանը ներկայացնում է յուրովի:

Արշակի սերը Փառանձեմի նկատմամբ կերպարի ամբողջացման գործում կարևոր դեր է խաղում: Փառանձեմն իր բնավորությամբ և գործողություններով դառնում է Արշակի կերպավորման կարևոր բաղկացուցիչը: Զեյթունցյանական Փառանձեմը բավականին տարբեր է զորյանական

---

[1] **Ավետիսյան Զ.**, նշվ. աշխ., «70-ական թվականների հայ պատմավեպը», էջ 128:

[2] **Զորյան Ստ.**, Երկերի ժողովածու 12 հատորով, հատոր ութերորդ, Պապ թագավոր, Եր., 1983, էջ 105:

Փառանձեմից, որի կամային հատկանիշները պատմավեպում աստիճանական զարգացում են ապրում: Զեյթունցյանի Փառանձեմը ի սկզբանե պատկերվում է իր զորեղ կամքով և հանդգնությամբ, որ ամենևին չէին ներդաշնակվում ամուսնու՝ Գնելի բնավորությանը: Վիպական գործողությունների ընթացքում հանդուգն ու սառնասիրտ կնոջ բնավորությունը պարզապես բացվում և արտացոլվում է տարբեր իրավիճակներում: Եթե զորյանական Փառանձեմը Գնելի մահը ողբում է՝ դատապարտելով իր աղետաբեր գեղեցկությունը, ապա զեյթունցյանական Փառանձեմը մեղադրում է իրեն, որ չօգնեց ամուսնուն. «Նրա ողբը ոչ թե սովորական լաց ու կոծ էր, այլ հաշվեհարդար աստծո հետ, հավասարների վեճ» (298): Փառանձեմն իր հանդուգն ու համարձակ էությամբ զերում է արքային:

Պ. Զեյթունցյանը, պատմական փաստերից շեղվելով, ողջ է թողնում Գնելին, որ, զգալով սպասվող դավադրությունը, փախուստի է դիմում Արշակից, ապաստանում Արշակավանում: Գրողը արքայի կողմից ամենատուժած, ամեն ինչ կորցրած կերպարի մեջ է մարմնավորում թագավորական իշխանության բարձրագույն գիտակցումը, գահին բազմած մարդու էության և նրա դերի տարբերության ըմբռնումը՝ ցույց տալով դրա մեծ ուժը. «Մի՛ խառնիր անարժան անձդ: Ես արքայի՛ մասին եմ մտածում: Իսկ արքան դու չես միայն: Ես եմ: Մեծ թե փոքր նախարարները: Ամենահետին շինականն անգամ: Մեր ապազան: Մեր գոյությունը: Ի՞նչ անենք, որ այդ ամենը մարմնավորված է քո պես չնչին ու անպետք մարդու մեջ» (341): Գնելն այդ գիտակցմամբ վեր է կանգնում անգամ Արշակից, որ հաճախ շփոթում էր իր արքայական և մարդկային կողմերը: Այդ մասին են վկայում նաև սենեկապետի խոսքերը. «Որպես մարդ՝ նա գոյություն չունի, արքա՛: Դու քո ներկայությունն ես սիրում նրա մեջ: Քո մտքերն ու երազները: Քո լավագույն կեսը: Թուլություններից ազատված քո երկրորդ անձը» (406): Գնելը դառնում է Արշակի ներքին ձայնը, ճշմարտախոսն ու խորհրդատուն, միավորված հայրենիքի գաղափարի ոգեկոչողը, Արշակավանի շունչն ու ոգին: Նմանատիպ դեր ունի գրողի «Աստծո տասներկու օրը» պատմական դրամայում գործող կերպարներից մեկը՝ թագավորական ծաղրածուն, որ աչքի է ընկնում իր անկաշկանդությամբ, ճշմարտախոսությամբ ու համարձակությամբ:

Գնելի համար կարևորը հայրենիքի հզորությունն ու ապահովությունն էր, ինչի համար անհրաժեշտ էր հետևել և օգնել արքային՝ անկախ նրանից, թե ով է նա: Նրա համար արքան մարդ չէր, այլ գաղափար, արքայական իշխանության մարմնավորում: Իհարկե, գեղարվեստական առումով, Գնելի կերպարը առավել արհեստական է թվում, խոսքերը՝ շատ պաթետիկ, սակայն գրողը նրա միջոցով կարողանում է կենսականորեն կարևոր գաղափարներ առաջ քաշել: Նրա կերպարը ստեղծված է ի լրումն

Արշակի կերպարի: Գնելը դառնում է Արշակի հոգեբանական հակադիր դրսևորումների մարմնավորումը:

Պատմավեպի առաջին մասում Արշակ արքան առավել շատ դրսևորվում է ներքին հոգեկան ու ներքաղաքական պայքարում, իսկ երկրորդ մասում լայնորեն պատկերվում է նաև արտաքին քաղաքական եռանկյունին՝ Պարսկաստան-Հայաստան-Բյուզանդիա, որի հաղթահարումն ավելի բարդ էր, քանի որ այն հետաքրքիր գեղարվեստական մտահղացմամբ տեղափոխվում է նաև Արշակի անձնական կյանք: Ծավալվող պարսկա-բյուզանդական պատերազմի, հայոց արքայի կողմից Արշակավանի կառուցման տագնապահարույց փաստի պատճառով հայոց երկրի ռազմական դաշնակցությունն ապահովագրելը դառնում է անհրաժեշտություն, այդ իսկ պատճառով երկու գերտերությունների պատվիրակությունները Արշակի համար հարսնացուներ են բերում Կոստանդիանոս կայսեր մեռած եղբայր Կոստասի նշանածին՝ Օլիմպիային և Շապուհի քույր Որմիզդուխտին: Պատմական փաստերից շեղվելով՝ գրողը արքայի անձնական կյանքի եռընտրանքը ձևավորելու համար Որմիզդուխտին ևս դարձնում է Արշակի կինը: Արշակի ողբերգականությունն ավելի է մեծանում: Երեք կանայք՝ Փառանձեմ, Օլիմպիա, Որմիզդուխտ, երեք երկրներ էին մարմնավորում. այս փաստը պարտադրում էր արքային դիվանագետ դառնալ, պայքարել նաև անձնական կյանքում:

Որմիզդուխտին և Օլիմպիային կնության առնելով՝ հայոց արքան դնում է արտաքին պայքարն արտահայտող անձնական եռակողմ պայքարի սկիզբը: Նրանցից մեկի՝ թագուհի դառնալը կենթադրեր արքայի ընտրությունը արտաքին ռազմական պայքարում: Փառանձեմը, ի տարբերություն ամուսնու, կարողանում է հաղթանակած դուրս գալ իր եռակողմ պայքարից: Հաշվենկատ, համառ ու սառնասիրտ կինը հաճախ ամուսնուց ավելի խելամիտ ու ճարպիկ է գտնվում: Փառանձեմը սիրում էր իր իշխանական դիրքը, զգում հայրենիքի թշվառ վիճակը, սակայն պայքարի մղող գլխավոր ազդակներից մեկը մայրական եսասիրությունն էր՝ որդու ժառանգական իրավունքներն ամեն գնով պաշտպանելու բնազդը: Փառանձեմը թունավորում է Օլիմպիային, իսկ պարսկուհին կամովին զիջում է իր դիրքերը՝ հեռանալով պալատից:

Արշակը նաև սերնդային հաջորդականության մի օղակն էր, ողբերգություն էր ապրում և՛ իբրև հայր, և՛ իբրև որդի: Արքայահայր Տիրանը՝ իբրև գործող կերպար, պատմավեպում հանդես չի գալիս, սակայն Արշակի խոհերում ուրվագծվում է որպես գահակիր որդուն խանդող հայր, որ իր ատելության ու սիրո մեջ միայն շահով է առաջնորդվում: Արշակը, խուսափելով ներքաղաքական կյանքում հոր հնարավոր վատ ազդեցութ-

յունից, Գնելի միջոցով երկրի փաստական տերը լինելու ցանկությունից, սպանում է նրան:

Արշակունյաց արքան դժբախտ էր նաև իբրև հայր, որ ակամա կտակում էր իր որդուն մութ ու դժվարին ապագա: Անգամ արքայի՝ որդու հետ ունեցած հարաբերությունները, նրա մասին խոհերը գրողը ծառայեցնում է կյանքի չգրված օրենքների, վաղուց հաստատված ճշմարտությունների արձանագրմանը: Արշակն իր կենսափորձն ու աշխարհընկալումը հայրական ջերմ սիրով փոխանցում է զավակին՝ առանց թաքցնելու դրա մութ ու զարշելի կողմերը. «Որովհետև, սու՛տ է, աշխարհում չկան առաքինություն և ստորություն, քաջություն ու վախկոտություն, թույլատրելին ու անթույլատրելին, լավն ու վատը, սնն ու սպիտակը, չէ՛, չկան, աշխարհն իր հիմքում երկու պարզ ու թափանցիկ մասերի է բաժանված՝ ուտողների և ուտվողների: Հայրդ ամենադժբախտն է, որդի՛ս, ավելի դժբախտ, քան քո տեսած շինականներից որևէ մեկը, որի ճակատին արդեն վաղուց է գրված, թե ուտվողների խմբին է պատկանում: Եվ գիտես՝ ինչո՞ւ: Որովհետև հայրդ և՛ ուտող է, և՛ ուտվող է միաժամանակ: Պատկերացնու՞մ ես ավելի ստոր և ողբերգական վիճակ: Իսկ դու պիտի ուտող լինես, սու՛ր ատամներով, երկա՛ր մագիլներով» (371): Հայրը որդուն ծանոթացնում է զահակալի համար անխուսափելի իրականությանը՝ դավադրություն, քծնանք, մենակություն, դաժանություն:

Արշակն իր ամեն մի կորստով ավելի է խորացնում իր մենության սահմանները: Հեռանում են Ներսեսը, Դրաստամատը, նախարարական և հոգոր դասերի շատ ներկայացուցիչներ, իսկ իր կողքին մնացածների մեջ արքան սկսում է տեսնել քողարկված դավաճանների, դառնում շփոթ ու անօգնական, տենդագին կասկածամիտ: Արշակավանը կուռ ամբողջություն այդպես էլ չի դառնում, և հայկական ու պարսկական ուժերի դեմ համատարած սովի, ծարավի ու քաոսի պայմաններում համախմբված պայքար չի ծնվում: Արքան ականատես է լինում իր մեծագույն երազանքի կործանմանը, որ դառնում է ինքնաքննադատական խոհերի աղբյուրը: Ս. Զորյանի պատմավեպում արշակավանցի այրի կնոջ մեղադրանքի նմանությամբ այստեղ հնչում է արշակավանցի ծերունու խոսքը. «Ինչի՞ մեզ գժտեցրիր մեր տերերի հետ... Հիմա մենք ի՞նչ երեսով պիտի նայենք նրանց աչքերին...» (553): Այստեղ ողբերգականն ավելի մեծ չափերի է հասնում. արշակավանցիները ցանկանում են Արշակին հանձնել իրենց տերերին՝ նրանց ներողությանն արժանանալու համար: Սա դառնում է արքայի ողբերգության և ողբերգականության զորեղ արտահայտությունը՝ ծնկի բերելով և փախուստի մատնելով նրան:

Շապուհի հրովարտակի ազդեցությամբ արքան մոլեգնում է: Երկիրը կա՛մ հրաշքով կփրկվեր, կա՛մ կկործանվեր: Կորչում է երրորդ ճանա-

պարիի երազը: Զեյթունցյանական Արշակը գիտակցաբար է ընդառաջ գնում պարսից դավին: Արշակավանն ավերած նախարարներից վրեժն արդեն անձնական դավ էր, որ չուներ ոչ մի արդարացում. «Նա կռիվ էր տալիս ոչ թե երկրի, այլ ի՛ր թշնամիների դեմ: Իսկ երբ թշնամին դառնում է միայն քոնը, ուրեմն դու այլևս անելիք չունես: Իրերդ պիտի հավաքես, հրաժեշտ տաս ամենքին, ինչպես նաև՝ ինքդ քեզ և սուսուփուս ճամփա ընկնես» (574):

Արշակավանի կործանման ժամանակ Գնելի առաջարկը Արշակին՝ փառավոր վախճանը, արքան փոխարինում է ճիշտ պահին հեռանալու որոշմամբ: Ի տարբերություն զորյանական Արշակի, որ, խճճվելով իր իսկ ստեղծածում, հավատում է Շապուհի դավին և գնում ընդառաջ հրավերին՝ Մերուժանից վրեժ լուծելու, ապա զեյթունցյանական Արշակը, որ ամեն ինչ քաջ գիտակցում էր, հեռանում է ճիշտ պահին՝ իր արքայական դերն ավարտված համարելով:

Բուզանդի միջոցով մեզ ավանդված լավագույն դրվագներից մեկը՝ Շապուհի, Արշակի և Վասակի շուրջ ստեղծված, գրողը ներկայացնում է Անհուշ բերդում բանտարկված արքայի մենախոսության միջոցով: Արշակը պատմավեպի ողջ ընթացքում ներկայացվում է մենակության մեջ, պարզապես արքայական մենությանը աստիճանաբար փոխարինում է մարդու մենությունը: Լ. Գալստյանն ընդգծում է զեյթունցյանական Արշակի մենության յուրահատուկ բնույթը. ««Արքայի մենության» մոտիվը պատմավիպասանության մեջ իհարկե նոր չէ. և՛ «Գևորգ Մարզպետունի» և՛ «Պապ թագավոր» պատմավեպերում թագավորները մենակ են, մենակ է Աշոտ Երկաթը, մենակ է Պապը, բայց Զեյթունցյանը արքայի կերպարում փորձում է ցույց տալ «մարդու մենությունը»: Արշակը ոչ թե մենակ է, այլ մենության դատապարտված անհատ»[1]:

Շղթայված արքայի խոհերը հավերժություն են հյուսում հայի համար. «Ոսոխը քանդում է, իսկ հայը կառուցում է նորից, սակայն ոչ ես եմ այդ տեսնում, ոչ էլ դու» (593): Մուշեղի ազնիվ քայլերը հիշատակելով՝ Արշակը շեշտում է մեր մեծագույն սխալներից մեկը՝ անազնվության դեմ ազնվությամբ կռվելը: Ազգային կյանքի թերությունների շարքը համալրվում է թշնամու հանդեպ ատելության անկարողության, մարդկայնության գերառատության և բարոյական հաղթանակների աստվածացման քննադատությամբ:

Արշակի կերպարի ողբերգականությունն ամբողջանում է Դրաստամատի խոսքերով. «Բայց դու միայն գլխով առաջ անցար ժամանակից: Իսկ հոգով ու մարմնով կապված էիր քո ժամանակին: Որպես բիրտ և դաժան

---

[1] https://aspu.am/website/images/journal/Hayagitakan%20438.pdf:

մի բռնապետ: Այս հակասությունն էր քո ողբերգությունը, արքա՛» (605): Ժամանակի և գաղափարի աններդաշնակությունը անխուսափելի են դարձնում մարդկային ողբերգությունը:

«Գոնե կուշտ ուտեիր, արքա,- արցունքն աչքերին ափսոսանքով շշնջաց Դրաստամատը: - Տես ի՛նչ փառավոր սեղան է… Որքան գինի կա սափորների մեջ…» (606): Պատմավեպն ամփոփող միտքը, որ հնչեցնում է Դրաստամատը Արշակի ինքնասպանությունից հետո, Լ. Գալստյանը մեկնաբանում է էկզիստենցիալիզմի սկզբունքների դիրքերից. «Ահա և անհեթեթությունը: Մի՞թե մահից առաջ բացված փառավոր սեղանը չի իմաստազրկում մարդու ապրելու, գործելու համար արված բոլոր ջանքերը: Սա է էկզիստենցիալիզմի հուսահատ եզրակացությունը: Ամեն ինչ հանգում է մահվան և իմաստազրկում Արշակի՝ պատմություն կերտելու փորձերը. պատմությունը դուրս է գալիս նրա հսկողությունից, նա էկզիստենցիալ վեպերի հերոսների պես դիտում է, թե ինչպես է խզվում իր և իրադարձությունների կապը, որպես պատմական անհատ, չի կարողանում պատմության ընթացքը ենթարկել իրեն. սրանով է նաև էկզիստենցիալ պատմավեպը տարբերվում դասական պատմավեպից»[1]: Գրականագետը, «Արշակ Երկրորդը» քննելով էկզիստենցիալ՝ գոյապաշտական պատմավեպին բնորոշ առանձնահատկությունների դիտակետից, գործում հանդիպող բազմաթիվ երևույթներ՝ Արշակավանում տրված բացարձակ ազատությունն ու քաղաքի կործանումը, Արշակի՝ իշխան Վաչակին գահին նստեցնելու և այլ հատվածներ, մեկնում է վերոնշյալ գրական ուղղության սկզբունքներով:

Զեյթունցյանական Արշակն իր ողբերգականությամբ, շիկացած դրամատիզմով, պատմական անհատի նոր կերպավորմամբ դարձավ գաղափարական, բարոյական և կենսափիլիսոփայական արժեհամակարգային սկզբունքների խտացում: Զեյթունցյանական Արշակը անհանգիստ է, կամային, փորձության պահերին՝ տագնապած ու շտապող, մենության պահերին՝ չհասկացված, ինքն իրենից ու աշխարհից օտարված ու խռով: «Արշակն ինքն իրենով արտացոլում է իր իսկ «շառավղից դուրս սայթաքած ժամանակը», որի մեջ փորձում է ստեղծել սեփական երկրի ու ժողովրդի պատմությունը»[2]: Ճիշտ է՝ Զեյթունցյանի կերտած Արշակի կերպարը ևս զերծ չէ թերացումներից՝ երբեմն չհիմնավորված դաժանությունից, շատ ձգձգված մենախոսություններից, նույն խոհերի տարաբնույթ կրկնություններից, սակայն գրողի կողմից դառնում է յուրահատուկ միջոց՝ պատմականի և արդիականի մշտական ներդաշնակման միտումով, ներքին տառապանքներով վեր հանելու բոլոր ժամանակների համար բյուրեղացված ճշմարտություններ: Այսքանով Արշակ Երկրորդի զեյ-

---

[1] https://aspu.am/website/images/journal/Hayagitakan%20438.pdf:

[2] **Մարգարյան Ս.,** Պատմության ժամանակը, Եր., 2000, էջ 15-16:

թունցյանական կերպարն արդեն իսկ դառնում է պատմական անձի կերպավորման նշանակալից նորություն:

**Ваган Агабабян, Мери Саргсян, Шестнадцатый Аршакуни и третий путь -** В современных армянских исторических романах образ Аршака Второго - мощное воплощение политических, нравственных, национальных и общечеловеческих идей, постоянно подвергающихся изменениям под воздействием времени, обстоятельств, творческого воображения автора. Аршак Зейтунянца - своеобразное воплощение всевременных вопросов и морально-философских идей. Ломая стереотипы армянской классической исторической романистики, писатель изображает человеческую сущность царя, раскрывая многогранность его трагедии.

**Vahan Aghababyan, Mery Sargsyan, The Sixteenth Arshakuni and the Third Way** - In modern Armenian novels, the image of Arshak II is a powerful embodiment of political, moral, national, universal and eternal human ideas, which are constantly being remodeled in accordance with the time, circumstances and the author's creative imagination.

Zeytuntsyan’s Arshak is a unique embodiment of contemporary issues and moral-philosophical ideas. Breaking the stereotypes of the Armenian classical historical fiction, the writer depicts the human essence of the king, reveals his many-sided tragedy.

# ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ – ԵՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1988 – 2018 ԹԹ.

ԳԵՎՈՐԳ ՂՈՒԿԱՍՅԱՆ

**Բանալի բառեր** - Ղարաբաղյան հակամարտություն, Եվրոպական Միություն, Եվրոպական Խորհրդարան, ինքնորոշման իրավունք, տարածքային ամբողջականություն, էներգետիկ քաղաքականություն:

**Խնդրո առարկա տարածաշրջանի աշխարհաքաղաքական բնութագիրը**

Միջազգային հարաբերություններում և քաղաքական գիտության մեջ ԽՍՀՄ փլուզումից հետո առաջին կարևոր արձանագրումներից մեկը աշխարհի երկբևեռ մոդելից միաբևեռի անցման շուրջ ամերիկյան քաղաքագիտական մտքի մի շարք հայտնի ներկայացուցիչների անթաքույց հավակնությունն էր: Նրանք սկսեցին գիտավերլուծական դատողություններ իրականացնել, Միացյալ Նահանգների առաջնորդությամբ, միաբևեռ աշխարհի ձևավորման անխուսափելիության շուրջ: Միաբևեռության շուրջ հայտնի աշխատանքներով հանդես եկան Չ. Քրաութհեմերը, Դ. Մադսենը, Ա. Լիվենը, Ու. Վոլֆորթը և այլոք: Ամերիկյան քաղաքագետների փոքրաթիվ, բայց ոչ պակաս հեղինակավոր մի այլ խումբ (Կ. Լեյն, Չ. Մեյնս, Հ. Քիսինջեր, Ֆ. Ֆուկույամա) այլ կերպ էր գնահատում համաշխարհային զարգացումները և միաբևեռ աշխարհը համարում էր անհեռանկար, իսկ նեոռեալիստները կարծում էին, որ աշխարհի միաբևեռ կարգն անոմալիա է:

2008 թ. արդեն Ռ. Հաասը՝ «ԱՄՆ-ն որպես համաշխարհային շերիֆ» հայեցակարգի հեղինակը, ընդունեց, որ կայուն միաբևեռության ժամանակն ավարտվել է և «աշխարհը թևակոխել է անբևեռ կարգի դարաշրջան, որը բնութագրվում է ուժի և ազդեցության դիֆուզիայով, ակտիվ, այդ թվում և պետական խաղացողների աճով»[1]:

Երկբևեռ աշխարհի փլուզումը, ի թիվս այլնի, առաջին հերթին ենթադրում էր ազդեցության գոտիների վերաբաժանում: Այս առումով 90-ա-

---

[1] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան 2012, էջ 62-70:

կան թթ. սկզբից մինչև 2000-ականն թթ. առաջին տասնամյակը քաղաքական, և ինչու նաև ռազմաքաղաքական նախաձեռնությունը, որպես այդպիսին պատկանում էր ԱՄՆ-ին, որը հաջողությամբ կարողացավ իր ազդեցությունը տարածել նախկինում ԽՍՀՄ տարածքում գտնվող, կամ վերջինիս ազդեցության տակ եղած տարածքների՝ առաջին հերթին բալկանյան երկրների վրա: Հետևաբար, Եվրասիական այն տարածքը, որը դեռևս անտիկ ժամանակաշրջանից եղել է ուժային տարբեր կենտրոնների բախման թատերաբեմ, ԽՍՀՄ փլուզումից հետո նոր աշխարհաարգի ձևավորման պայմաններում նորովի իմաստավորվեց և իր վրա բևեռեց ինչպես խոշոր պետությունների, այնպես էլ հետազոտողների ուշադրությունը: 1997 թվականին արտաքին քաղաքականության ամերիկյան աշխարհահռչակ հետազոտողներից Զ. Բժեժինսկին Հարավային Կովկասը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանն ու Աֆղանստանն ընդգրկող տարածությունն անվանեց «Եվրասիական Բալկաններ»՝ կապված մեկ դար առաջ Բալկաններում տիրած իրավիճակի և քննարկվող տարածքի նմանության հետ, այն է՝ մեծ տերությունների սուր մրցակցություն և էթնիկ հակամարտությունների առկայություն[1]:

Բժեժինսկու և այլ գիտնականների կանխորոշած միջազգային նոր վերադասավորումները կամ դրանց փորձերը, որպես կանոն, առավել ցայտուն դրսևորվեցին հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ գոյություն ունեն միջէթնիկ հակամարտություններ կամ կան այդպիսի հակամարտությունների բռնկման իրական վտանգներ:

Այս առումով Հարավային Կովկասը ևս միջազգային ուժային կենտրոնների հետաքրքրությունների հետապնդման պարարտ թատերաբեմ է՝ երեք չլուծված հակամարտությունների (Աբխազիա, Լեռնային Ղարաբաղ, Հարավային Օսիա) գոյությամբ պայմանավորված:

Վերն ասվածի համատեքստում ամենևին պատահական չէ, Ուիլյամ Ջերթմանի այն կարծիքը, որ աշխարհաքաղաքական գործոնն ուժեղ ազդեցություն ունի Հարավային Կովկասի բոլոր երեք երկրների ինչպես ներքաղաքական, այնպես էլ միջպետական հարաբերությունների, մասնավորապես, հակամարտությունների ծագման, ընթացքի կարգավորման վրա, ու շատ հաճախ հենց այդ գործոնով է պայմանավորված էթնոքաղաքական հակամարտությունների անլուծելիությունը[2]:

Քննարկվող տեսական նյութի պրակտիկ մասն ամրապնդելու համար տեղին է հիշել երկար տարիներ ղարաբաղյան հիմնախնդրով զբաղ-

[1] **Brzezinski Z.,** The Grand Chessboard: America Primacy its Geostrategic Imperatives. Perseus Books Group. 1997, Chapter 5.

[2] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան 2012, էջ 112:

վող անգլիացի հետազոտող Թոմաս դը Վաալի 2011թ. արտաբերված այն միտքը, որ «Միացյալ Նահանգներն, ըստ էության, որևէ ռազմավարական շահ չունի Արևմտյան Բալկաններում: Համեմատեք Լեռնային Ղարաբաղի հետ: Հակամարտության գոտու հյուսիսում Վրաստանն ու Ռուսաստանն են, արևմուտքում՝ Թուրքիան, հարավում՝ Իրանը: Բաքու-Թբիլիսի-Ջեհյան նավթամուղն անցնում է շփման գծից ընդամենը 12 մղոն դեպի հյուսիս: Ադրբեջանը դեպի Աֆղանստան զինուժի տեղափոխման հանգուցային կետ է: Հայ համայնքը Վաշինգտոնում ամենաբարձր ձայն ունեցողներից է: Այլ խոսքով, օբյեկտիվորեն ասած, այդ հակամարտությունը Միացյալ նահանգների համար շատ ավելի մեծ ռազմավարական նշանակություն ունի, քան երբևէ Բոսնիան ունեցել է»[1]: Տեղին է նաև հիշել ռուս հայտնի դիվանագետ, Մինսկի Խմբում ռուսական կողմի նախկին ներկայացուցիչ Վ. Կազիմիրովի հետևյալ միտքը, թե «Դժվար է անգամ ասել, ինչով է ավելի հարուստ ղարաբաղյան կարգավորման փորձը՝ Ռուսաստանի և ոռոշ արևմտյան երկրների համագործակցությա՞մբ, թե՞ նրանց մոտեցումների տարբերությամբ և միմյանց դեմ պայքարով»[2]:

Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ տեսամեթոդական և գիտավերլուծական աշխատանքներում անխուսափելիորեն պետք է հաշվի առնել Տ. Թորոսյանի այն պնդումը, որ «հակամարտության վրա տարածաշրջանում ծավալված աշխարհաքաղաքական պայքարի ազդեցությունը, հատկապես ընդգծված դրսևորումներ ունեցավ 2008թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմից հետո, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերջին փուլի ընթացքում, որի հիմքում «Մադրիդյան սկզբունքներն» են: Եթե Բալկաններում 1999թ. ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությունից հետո աշխարհաքաղաքական կողմնորոշումների հարցը վերջնականապես լուծվեց, ապա Հարավային Կովկասում ազդեցության գոտիների վերաբաժանման պայքարը 2008թ. հնգօրյա օգոստոսյան պատերազմից հետո ավելի բորբոքվեց ու դեռևս ընթացքի մեջ է»[3]:

### Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում ԵՄ քաղաքականության ուսումնասիրման այլ կարևորություններ

Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում Եվրոպական Միության քաղաքական վարքագծի ուսումնասիրումը կարևոր է նաև երկու այլ հանգամանքներով պայմանավորված: Առաջին, նեոլիբերալիզմի և

[1] **De Waal T.,** Armenia and Azerbaijan Are at it Again- The National Interest, March 30, 2011, https://nationalinterest.org/commentary/armenia-azerbaijan-at-it-again-5087.

[2] **Казимироа В. Н.,** Мир Карабаху. Посредничество Росии в урегулировании нагорно-карабахского конфликта. М., 2009, с.с. 174-201.

[3] **Torosyan T.,** The Return of Turkey.-Russia in Global Affairs, 2009, 3, July-September: 120-129.

գլոբալիզացիայի տեսամեթոդական ձևավորումից հետո, 20-րդ դարի վերջին քառորդից, միջազգային հարաբերություններում նկատելի է մեկ այլ կարևոր զարգացում՝ գործուն միջազգային կազմակերպությունների ձևավորումը, ինչպես նաև դաշինքների կառուցվածքային ու գործառութային նեխանիզմների հստակեցումը: Ասվածի համատեքստում առաջնայիններից մեկը պետք է նկատի ունենալ հենց Եվրոպական Միությանը, որպես պետությունների տնտեսաքաղաքական խոշորագույն միություն: Սակայն, ամենևին չպետք է աչքաթող արվի պետությունների՝ բացարձակ պատասխանատվությունը՝ սոցիալական, քաղաքական և տնտեսական գործառույթների առումով[1], ինչը սույն աշխատանքի համապատասխան հատվածում կքննարկվի:

Երկրորդ, ակնհայտ է, որ Կոսովոյի հակամարտության կարգավորման տրամաբանությունը և, ինչու չէ նաև ղարաբաղյան հակամարտության բանակցային վերջին փուլը ցուցում են, որ միջազգային հարաբերություններում, գնալով մեծ կարևորություն է ստանում հակամարտությունների կարգավորման իրավական գործոնը: Սակայն չպետք է, նկատի չառնել, որ քաղաքական բաղադրիչը դառնում է իրավական բաղադրիչի ընձեռած հնարավորությունների լուրջ խոչընդոտ՝ նորից առաջ բերելով քաղաքական շահ թե իրավական լուծում դիլեման: Վերջինս հատկապես սրվում է այն տարածաշրջաններում, որտեղ բախվում են գերտերությունների կամ նման կարգավիճակի հավակնող երկրների շահերը: Դարեր շարունակ այդ շահերի պաշտպանության միակ գործիքը եղել է ուժը, սակայն, միաժամանակ կասկածից վեր է, որ Երկրորդ աշխարհամարտից հետո միջազգային հարաբերություններում իրավական բաղադրիչն ունի կարևոր կազմակերպական նշանակություն[2]:

Այս առումով, հաշվի առնելով Եվրոպական Միության կողմից արժեքահեն քաղաքականության վերաբերյալ հայտարարությունները, որոնք ընկած են նաև ԵՄ հիմնադիր փաստաթղթերի և ղեկավար ինստիտուտների գործունեության հիմքում, ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ համակողմանի աշխատանքը՝ հիմնախնդրի թե՛ իրավական և թե՛ քաղաքական պատշաճ սպասարկման առումով, չափազանց կարևոր է:

Պատահական չէ, որ վերջին երկու-երեք տասնամյակներում մեծացել է այն ոլորտների և խնդիրների թիվը, որոնք փորձ է արվում կարգավորել միջազգային իրավունքի շրջանակներում: Հետևաբար, «քաղաքական շահեր, թե՞ իրավական լուծումներ» երկընտրանքային հարցադրման իրա-

---

[1] **Waltz K.,** Globalization and American power,- The international interest, vol. 59, spring. 2000, p. 48.

[2] **Кутейников А.,** Правовые нормы международного регулирования: “Волны унификации”.- Международные процессы, т. 1, No 1(1), 2003, http://intertrends.ru/old/one/002.html.

կան և ամբողջական պատասխանն ստանալու համար պահանջվում է անդրադարձ միջազգային հարաբերություններում արժեքաբանական (աքսիոլոգիական) գործոնների նշանակությանը։ Այդ գործոնները, մասնավորապես, ներառում են բարոյա-էթիկական և իրավական նորմերը[1]։

### ԵՄ տարածաշրջանային հետաքրքրությունները

Եվրոպական Միության տարածաշրջանային հետաքրքրությունները Հարավային Կովկասում, պետք է դիտել ամբողջ արևելաեվրոպական տարածքի համար նույն օրինաչափություններով և երկու մակարդակով, այն է՝ քաղաքական-արժեհամակարգային համագործակցության ու ընդլայնման, ինչպես նաև էներգետիկ հարցերով։

Հարավային Կովկասը, որպես ԵՄ-ի արևելյան «հարևան» հանդիսանում է Միության չափազանց կարևոր երկու ծրագրերի՝ Հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության (ԱլԳ) տարածք։

Եվրոպական հարևանության քաղաքականությունը մեկնարկեց 2003 թվականին և նպատակ ուներ կառավարել Եվրոպական Միության հարաբերությունները ԵՄ 16 հարևան-պետությունների հետ՝ հարավային և արևելյան ուղղություններով։

Ըստ պաշտոնական փաստաթղթերի՝ Հարևանության քաղաքականության նպատակն է. «Խուսափել ընդլայնված Եվրոպայի և հարևանների միջև բաժանարար գծերի առաջացումից, փոխարենը ամրապնդել բարգավաճումը, կայունությունը և անվտանգությունը բոլորի համար»[2]։

ՀՀ-ԵՄ հարաբերությունների թերևս կարևորագույն հարթակը՝ Արևելյան գործընկերությունը, մեկնարկեց 2009 թվականի մայիսին Պրահայի գագաթաժողովով՝ նպատակ ունենալով ուժեղացնելու և խորացնելու ԵՄ-ի հարաբերությունները 6 հարևան պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի միջև։

Արևելյան գործընկերության քաղաքականության առաջնահերթությունների կիրառական դաշտերը չորսն են[3]։

Ավելի ուժեղ տնտեսություն (տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ)

Ավելի ուժեղ կառավարում ({պետական} կառույցների և ամրապնդում և լավ կառավարում)

---

[1] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան 2012, էջ 24։

[2] European Neighborhood Policy (ENP), https://eeas.europa.eu/diplomatic-network/european-neighbourhood-policy-enp/330/european-neighbourhood-policy-enp_en.

[3] Eastern Partnership, https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/neighbourhood/eastern-partnership_en.

Ավելի ուժեղ փոխկապակցվածություն (փոխկապակցվածություն, էներգախնայողություն, և կլիմայական փոփոխություններ)

Ավելի ուժող հասարակություն (շարժունակություն և միջմարդկային շփումներ)

Ներկայումս ԵՄ-ի և ԱլԳ պետությունների հարաբերություններում առկա է բովանդակային երեք հարթություն՝ասոցացման (Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա), համագործակցության (Հայաստան) և գործակցության (Բելառուս, Ադրբեջան):

Արևելյան գործընկերության շրջանակներում ցայսօր տեղի են ունեցել թվով հինգ գագաթաժողովներ, որոնց կողմից ընդունված համատեղ հռչակագրերը կենսական նշանակություն ունեն, տեղ գտած ձևակերպումների միջոցով, ղարաբաղյան հիմնախնդրում Եվրոպական Միության քաղաքականությունը հասկանալու համար:

**ԵՄ էներգետիկ քաղաքականությունը Հարավային Կովկասում**

Կասպյան էներգակիրներին առնչվող՝ միմյանց հետ մրցակցող նախագծերը որոշակիորեն իրենց ազդեցությունն ունեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի քաղաքական բաղադրիչի վրա, քանզի այդ գործընթացին բոլոր առնչվողները (Ռուսաստամ, ԱՄՆ, ԵՄ՝ ի դեմս Ֆրանսիայի[1], Թուրքիա) այս կամ այն ձևով ուղղակիորեն մասնակցում են կասպյան էներգակիրների արտադրման, տեղափոխման և սպառման գործընթացներին[2]:

Այս համատեքստում մեզ հետաքրքրում է Եմ էներգետիկ հետաքրքրությունների հիմնական ուղղությունները տարածաշրջանում: Նախ և առաջ նկատենք, որ ԽՍՀՄ փլուզումից հետո կասպյան ավազանի էներգակիրների նկատմամբ արևմտյան աճող հետաքրքրությունը պայմանավորված է ռուսական էներգակիրներին այլընտանք գտնելու նպատակադրումով: Հատկանշական է, որ 2009 թ. հունվարին Ռուսաստանի և Ուկրաինայի միջև գազի վաճառքի և փոխադրումների հետ կապված վեճը հանգեցրեց նրան, որ Եվրոպան տևական ժամանակ զրկվեց ռուսական գազի մատակարարումներից: Այս ընթացքում էր, որ Թուրքիայի քաղաքական ղեկավարությունը չաձազանց մեծ ու հավակնոտ հայտ ներկայացրեց՝

---

[1] Մեր կարծիքով այնուամենայնիվ հազվադեպ է, որ բանակցային գործընթացում Ֆրանսիան հանդես է գալիս իբրև Եվրոպական Միության ներկայացուցիչ: Հակված ենք կարծելու, որ այս գործընթացում Ֆրանսիան գրեթե միշտ հանդես է գալիս որպես առանձին խաղացող:

[2] **Թորոսյան Տ.**, Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան 2012, էջ 116:

դառնալու դեպի Եվրոպա և Բալկաններ կասպյան, մերձավոր արևելյան և պարսկական ծոցի գազի տարանցման հանգուցային կենտրոն[1]:

Շրջանցելով վերոհիշյալ հավակնության թուրքական շահը, որը մի կողմից կապված էր Արևմուտքի հետ հարաբերությունները որակական նոր մակարդակի բարձրացնելու, իսկ մյուս կողմից ռուսական էներգակիրներից կախվածությունը որոշակիորեն թոթափելու, ինչպես նաև զուտ բյուջետային հույսերի սպասումների հետ, անդրադառնանք զուտ եվրոպական հետաքրքրություններին:

Այս համատեքստում առաջին խոշորամասշտաբ խոսակցությունները վերաբերեցին «Նաբուկո» ծրագրին, որը նախատեսում էր կասպիական ավազնից Վրաստանի, Թուրքիայի, Բուլղարիայի, Ռումինիայի և Հունգարիայի տարածքներով Ավստրիա հասցնել տարեկան շուրջ 31 միլիարդ խորանարդ մետր գազ, որի հիմնական մատակարարներն էին լինելու Ադրբեջանը, Իրաքը, Թուրքմենստանը: Նախատեսվում էր շինարարությունը սկսել 2012թ.ին և ավարտել երեք տարի անց[2]: Այս ծրագրի հետ կապված ժամկետերի առարկայական հետաձգումները, ապա նախնական հաշվարկներից էական շեղումները, ինչպես նաև ադրբեջանական գազի հանքավայրերում ծավալային ցուցանիշներն աստիճանաբար անհնար դարձրեցին նախագծի այդ ձևով իրականացումը:

Հատկանշական է, որ «Նաբուկոյի» շահագործման հետևանքով Եվրոպայից ղարաբաղյան հակամարտության առումով դրական ազդակներ ակնկալելու ադրբեջանական քաղաքականության մասին ադրբեջանցի հետազոտող Զ. Գուլիևը, դեռևս 2011 թ.ին նկատել էր. «արդեն կարելի է արձանագրել, որ «նավթ Ղարաբաղի դիմաց» բանաձևն նույնպես չհանգեցրեց սպասվող արդյունքներին: Հաշվարկը, որ «նավթային դիվանագիտությունը» կխթանի Արևմուտքի հետաքրքրությանը հակամարտության արագ կարգավորման նկատմամբ, ստացվեց անհիմն: Արևմուտքի համար, ինչպես և Ռուսաստանի, ավելի կարևոր է ոչ այնքան խնդրի վերջնական լուծումը, որքան հակամարտող կողմերի և բուն հակամարտության աշխարհաքաղաքական կապը՝ ըստ սեփական շահերի դրանց ուղղորդելու նպատակով»[3]:

Այնուամենայնիվ ասվածը և դեպի եվրոպա կասպիական ավազանի և հարակից տարածաշրջանի գազի տեղափոխման շուրջ ադրբեջանա-

---

[1] **Winrow G.** Turkey, Russia and the Caucasus: Common and Diverging Interests. Chatham House Paper, November 2009:

[2] Болгария займет 1,2 млрд. евро для строительства NABUCCO.- https://regnum.ru/news/polit/1366950.html, 07.05.2020.

[3] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան 2012, էջ 123:

թուրքական նկրտումները դեռևս պահպանվում են՝ վերածվելով նաև գործնական ծրագրերի:

2018թ. հունիսին «Բրիթիշ Փեթրոլիումի» հրապարակած «Համաշխարհային էներգիայի վիճակագրական վերլուծության»[1] համաձայն՝ 2017թ. տարեվերջի դրությամբ Ադրբեջանում գազի հաստատված պաշարները կազմել են 1.3 տրլն խ. մ. (համաշխարհային պաշարների 0.7%-ը): Նույն աղբյուրի համաձայն՝ 2017թ. Ադրբեջանում գազի արդյունահանման ծավալները կազմել են 17.7 մլրդ խ. մ. (համաշխարհային արդյունահանման 0.5%-ը), իսկ ներքին սպառումը՝ 10.6 մլրդ խ. մ. (համաշխարհային սպառման 0.3%-ը): Նշենք, որ ադրբեջանական աղբյուրներում երկրի գազի պաշարները գնահատվում են 2.6 տրլն խ. մ.:

Ներկայումս Եվրոպական Միությանը հետաքրքրող ադրբեջանի գազային նկրտումներն ամփոփված են «Հարավային գազային միջանցք» ծրագրում, որը նախատեսում է ադրբեջանական «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման 2-րդ փուլի արդյունքում արդյունահանվող գազն ուղղել դեպի թուրքական և եվրոպական շուկաներ: Ծրագիրը պայմանականորեն բաղկացած է չորս հատվածից՝ «Շահ Դենիզի» շահագործման 2-րդ փուլի մեկնարկ, Հարավկովկասյան խողովակաշարի արդիականացում, «TANAP» ծրագրի իրագործում (որը ենթադրում է խողովակաշարի կառուցում Թուրքիայի տարածքում, ինչը թույլ կտա ադրբեջանական գազը Վրաստանի սահմանից հասցնել մինչև Բալկաններ), ինչպես նաև «TAP» ծրագրի իրականացում (որի շրջանակներում խողովակաշարը Թուրքիայի սահմանից բալկանյան երկրների տարածքով և Ադրիատիկ ծովով պետք է հասնի Իտալիա)[2]: Այս ծրագրի ամբողջական գործարկումը նախատեսվում էր 2020 թվականի ընթացքում: Գազը պետք է մատակարարվի Հարավարևելյան Եվրոպայի մի շարք երկրների, թեև նախատեսվող ծավալները (10 մլրդ խ. մ.) բավարար չեն տարածաշրջանի շուկայի ամբողջ կարիքները բավարարելու համար: Այդուհանդերձ, երկարաժամկետ հեռանկարում ծրագրի հեղինակները մտադիր են ավելացնել Հարավային գազային միջանցքի հզորությունը և կրկնապատկել մատակարարվող գազի ծավալները, թեև նման ծրագրի իրագործելիությունը կապված է մի շարք բարդությունների հետ, որոնց կանդրադառնանք ստորև:

[1] BP Statistical Review of World Energy 2018, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf.

[2] «Ադրբեջանական գազի արտահանման ծավալների սպասվող աճը որպես արտաքին քաղաքական ազդեցության գործիք. Հնարավոր հետևանքները տարածաշրջանի և Հայաստանի համար», «Լույս հիմնադրամ», Երևան 2019թ.:

Ակնհայտ է, որ ադրբեջանական էներգետիկ ծրագրերում ԵՄ հետաքրքրության նպատակը Միության էներգետիկ քաղաքականության դիվերսիֆիկացիան է: Սակայն այս հազամանքը պետք չէ գերագնահատել, հատկապես այն դեպքում, որ ԵՄ կողմից Ադրբեջանը որպես այդպիսին քաղաքական ցանկալի ուղերձներ չի ստանում: Բավական է նշել, որ Հարավային գազային միջանցքով ԵՄ հասնող ադրբեջանական գազի իրատեսական ծավալը կարող է լինել շուրջ 10 միլիարդ խորանարդ, ինչը եվրոպական տարեկան սպառման 3%-ն է, իսկ ներմուծման 2%-ը[1]: Մյուս կողմից, Ռուսաստանը շարունակում է հսկայամասշտաբ ծրագեր՝ ավելացնելու համար Եվրոպա հասնող գազի ծավալները, այդ ծրագրերն իրենց ծավալներով անհամեմատելի են ադրբեջանական գազի ծավալների հետ:

Վերոգրյալի համատեքստում ամենևին պատահական չէր, որ Արևելյան գործընկերության տարածքում ԵՄ արտաքին քաղաքականությունը որոշակի վերաձևակերպումների ենթարկվեց, ինչն արտացելվեց Արևելյան գործընկերության Ռիգայի գագաթաժողովում, երբ ընդունվեց ԱլԳ երկրների հետ ԵՄ տարբերակված քաղաքականության մոդելը, որը ենթադրում էր ԵՄ արտաքին քաղաքականության հստակ տարբերակվածությունը քաղաքական և էներգետիկ ոլորտներում և միջէթնիկ հակամարտություններում: Այս խնդրին կանդրադառնանք սույն աշխատանքի համապատասխան հատվածում:

**Եվրոպական Միության ղեկավար կառույցներն ու դրանց առնչությունը ղարաբաղյան հակամարտությանը**

**Եվրոպական Խորհրդարան**

Եվրոպական Խորհրդարանը (այսուհետ նաև ԵԽ, Խորհրդարան), ԵՄ հիմնարար փաստաթղթերով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում իր գործառնական նշանակությամբ ու առօրյա աշխատանքով, եվրոպական կառույցներից ղարաբաղյան հակամարտությանն ամենաշատը առնչվողն է:

Եվրոպական Խորհրդարանը, Եվրոպական Միության Խորհրդի հետ միասին, ԵՄ երկու օրենսդիր մարմիններից մեկն է և հիմնականը: Խորհրդարանը ներկայացուցչական մանդատով օժտված միակ մարմինն է: Այն իրականացնում է վերահսկողական լիազորություններ, Եվրոպական Միության Խորհրդի հետ համատեղ հաստատում է ԵՄ բյուջեն, հաստատում է Եվրոպական հանձնաժողովի նախագահությանը և հանձնակատարներին, վավերացնում է Եվրոպական Միության հետ կնքված մի-

[1] Նույն տեղում:

ջազգային պայմանագրերը, կատարում է խորհրդարանական բնույթի հսկայածավալ գործառույթներ: Խորհրդարանի լիազորություններն էականորեն մեծացել են 2009 թվականից ուժի մեջ մտած Լիսաբոնյան համաձայնագրով (Lisbon Treaty).

Եվրոպական Խորհրդարանը ղարաբաղյան հակամարտությանը սկսեց առնչվել շարժման սկզբից: 1988 թվականի սկզբից մինչև 1994 թվականի սկիզբը ԵԽ-ն ուղղակիորեն Արցախին առնչվող ավելի քան մեկ տասնյակ բանաձևեր է ընդունել:

Որպես այդպիսին առաջին անդրադարձ կարելի է համարել 1988 թվականի մարտի 10-ի **«Խորհրդային Հայաստանում վերջին զարգացումների վերաբերյալ ԵԽ բանաձևը»**[1], որտեղ առաջին անգամ արձանագրում է. «Եվրոպական Խորհրդարանը մտահոգություն է հայտնում և ուշադիր հետևելու է ԽՍՀՄ տարբեր ժողովուրդների կողմից իրենց ինքնությունը, մշակույթը և ինքնավարությունը հաստատելու փորձերին»: **Հատկանշական է, որ բանաձևի անվանման մեջ, որպես տարածք չի հիշատակվել Ադրբեջանը կամ Լեռնային Ղարաբաղը, այլ հիշատակվել է Խորհրդային Հայաստանը:**

Շարունակելով իր հետևողականությունը՝ 1988 թվականի հուլիսի 7-ին **«**Եվրոպական Խորհրդարանն ընդունում է «Սովետական Հայաստանի իրավիճակի վերաբերյալ»[2] **բանաձևը, որտեղ նկատում է. «Լեռնային Ղարաբաղի ինքնավար շրջանի պատմական կարգավիճակը (որի ներկայիս բնակչության 80% -ը հայ է) որպես Հայաստանի մաս, 1923-ին Ադրբեջանի ներսում այդ տարածքի կամայական ներառմանը և ադրբեջանական Սումգայիթ քաղաքում հայերի կոտորածը 1988-ի փետրվարին… վատթարացող քաղաքական իրավիճակը, որը հանգեցրել է Սումգայիթում հակահայկական ջարդերի և Բաքվում բռնությունների լուրջ գործողությունների, ինքնին սպառնալիք է Ադրբեջանում ապրող հայերի անվտանգության համար…»** ապա Խորհրդարանը հանդես է գալիս հետևալով. «**դատապարտում է Ադրբեջանում հայ ցուցարարների նկատմամբ կիրառված բռնությունները, աջակցում է հայ փոքրամասնության պահանջին՝ Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորվելու համար»:**

Այսպիսով վերոհիշյալ երկու բանաձևերով Եվրոպական Խորհրդարանն ըստ էության ոչ միայն չի առարկում հայկական կողմի՝ Արցախը Խորհրդային Հայաստանի կազմ փոխադրելու պահանջին, այլև լիովին ընդունում է դա՝ վկայակոչելով երկրամասի՝ 1923 թվականին Ադրբեջանի

[1] European Parliament Resolution on recent events in Soviet Armenia, https://publications.europa.eu/en/publication-detail/-/publication/dcb14e6e-782e-4b1b-8f85-6d729f74d5b6/language-en

[2] European Parliament Resolution on the situation in Soviet Armenia, http://www.nkr.am/en/documents/1988-07-07-EuroParl-Resolution-on-situation-in-Armenia.

կազմում կամայական ներառումը և հաշվի առնելով պատմական իրականությունը՝ օգտագործելով **վերամիավորում** տերմինը:

1989 թվականի ընթացքում երկու անգամ՝ հունվար և մայիս ամիսներին ԵԽ-ն բանաձևեր է ընդունել համապատասխանաբար **«Խորհրդային Հայաստանում բռնաճնշումների վերաբերյալ»**[1] և **«Ղարաբաղ կոմիտեի անդամների ազատ արձակման վերաբերյալ»**[2] անվանումներով:

Այս բանաձևերում ԵԽ-ն մի դեպքում խստորեն քննադատում է Ղարաբաղ կոմիտեի անդամների ձերբակալությունը, մյուս դեպքում՝ ողջունում 1989 թվականի հունվարի 12-ին «Լեռնային Ղարաբաղին հատուկ կարգավիճակ տրամադրելու մասին»[3] {25} ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի որոշումը: Ղարաբաղ կոմիտեի անդամների ազատ արձակման վերաբերյալ ընդունված բանաձևով ԵԽ-ն նաև կարծիք է հայտնում, որ **«քաղաքական գործընթացները Հայաստանում ավելին են քան Ղարաբաղի միացումը Հայաստանին և նպատակ ունեն, ինչպես Բալթյան երկրներում, ժողովրդավարացնեն Խորհրդային պետության քաղաքական կյանքը»:**

Այսպիսով, Եվրոպական Խորհրդարանը հստակորեն ցուցում է ներհայաստանյան գործընթացների ժողովրդավարական բնույթը, ինչով էլ հավանաբար լեգիտիմացնում է իր հստակ արտահայտված քաղաքական դիրքորոշումը:

ՀՀ-ԵՄ հարաբերություններում ժողովրդավարական զուգահեռների և հետխորհրդային տարածքում ապազա ենթադրվելիք ժողովրդավարական գործընթացների վերաբերյալ համապատասխան անդրադարձ կանենք աշխատանքի սույն հատվածի ամփոփմանն ընթացքում:

Արդեն 1990 թվականի ընթացքում կրկին երկու անգամ՝ հունվար և մարտ ամիսներին Եվրոպական Խորհրդարանը կրկին հատուկ անդրադառնում է ղարաբաղյան հակամարտությանը: Ընդունվում են **«Խորհրդային Հայաստանում իրավիճակի վերաբերյալ»** անվանումը կրող երկու բանաձևեր[4]:

Այս բանաձևերի կարևորությունը կայանում է նրանում, որ կրկին խոսվում է 1923 թվականի որոշման անարդարացիության մասին և ըստ էության առաջին անգամ ԵԽ-ն կոչ է ուղղում Եվրոպական Հանձնաժողովին և Խորհրդին՝ ներկայացուցչություն կյանքի կոչել ԽՍՀՄ ղեկավարության մոտ՝ քաղաքական իրավիճակի գնահատման, Ադրբեջանում ապրող

---

[1] European Parliament Resolution on repression in Soviet Armenia, http://karabakhfacts.com/wp-content/uploads/2013/12/c_04719890220en01210152.pdf.

[2] European Parliament Resolution on the release of the members of the Karabakh Committee, 25 May 1989, https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/39d0daab-1473-459d-9e66-677284277ec6/language-en.

[3] Указ Президиума Верховного Совета СССР от 12 января 1989 года.

[4] European Parliament resolution on the situation in Armenia, http://www.nkr.am/sites/default/files/europarl_resolution_on_situation_in_armenia_18-01-1990.pdf.

հայերի ֆիզիկական անվտանգությունը երաշխավորելու, Արցախի մեկուսացումը ճեղքելու և առաջին անհրաժեշտության ապրանքների անցկացումը և հումանիտար բնույթի այլ գործողություններ ապահովելու համար։

ԵԽ-ն, ի թիվս այլնի, հիշատակում է նաև Լեռնային Ղարաբաղի բնակչության 75%-ի հայկականության մասին, խոսում ՄԱԿ-ի և Եվրոպական տարբեր մարմինների ներգրավվածության մեծացման անհրաժեշտության մասին։

Վերը հիշատակված երկու բանաձևերից կարող ենք եզրակացնել, որ Եվրոպական Միության գործադիր իշխանությունն ու ՄԱԿ-ը Խորհրդարանի կողմից քաղաքական ուղերձ են ստանում՝ հակամարտության գոտում ներգրավածության մեծացման համար, ԵԽ դիրքորոշումներում հետզհետե ավելի է ուժեղանում ժողովրդի կամքին հակադրվելու Ադրբեջանական քաղաքականության ընդգծումը, ուշադրությունը ստեղծված հումանիտար ճգնաժամին և այլն։

1991 թվականին խորհրդային զորքերի և ադրբեջանական ՕՄՕՆ-ի կողմից Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում հայկական բնակավայրերում կատարված էթնիկ զտումներին (և ոչ միայն դրան) Եվրոպական Խորհրդարանը կոշտ անդրադարձ կատարեց 1991 թվականի մայիսի 16-ին ընդունված **«Հայաստանում և Ադրբեջանում իրավիճակի վերաբերյալ»**[1] բանաձևով, դրան երկու ամիս առաջ, մարտի 14-ին նախորդել էր ԵԽ մեկ այլ բանաձև՝ **«Հայաստանի շրջափաման և այնտեղ մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ»**, որտեղ կրկին խոշոր հաշվով բարձրացվում են հումանիտար հարցեր, խոսվում է երկրաշարժի և ղարաբաղյան շարժման արդյունքում 500.000 անօթևան հայերի առկայության մասին և այլն[2]։

Հատուկ դիտարկման է արժանի մայիսի 16-ի բանաձևը, որտեղ Եվրոպական Խորհրդարանը ցավում է Ղարաբաղում հայերի նկատմամբ բռնությունների կապակցությամբ և դատապարտում խորհրդային և ադրբեջանական զինված ուժերի կողմից հայերի նկատմամբ հերթական բռնությունները։ Ապա ԵԽ-ն խորհրդային իշխանություններին հորդորում է քայլեր ձեռնարկել, որոնք կապահովեն հայերի ֆիզիկական անվտանգությունը, տեղաշարժի ազատությունը, Ադրբեջանի կողմից ապաշրջափակման վերացումը և մարդկանց՝ իրենց տներ վերադարձը։

Ղարաբաղյան պատերազմի ժամանակ Եվրոպական Խորհրդարանի դիրքորոշումը առավել կոշտանում է 1992 թվականի փետրվարին ըն-

---

[1] European Parliament Resolution on the situation in Armenia and Azerbaijan, http://www.nkr.am/sites/default/files/1991_05_16_european_parliament_resolution_on_the_situation_in_armenia_and_azerbaijan.pdf.

[2] European Parliament Resolution on the blockade of Armenia and the human rights situation there, http://www.nkr.am/sites/default/files/1991_03_14_europarl_resolution_on_blockade_of_armenia.pdf.

դունված **«Լեռնային Ղարաբաղին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ»**[1] բանաձևով, որն իր բնույթով կարելի է բեկումնային համարել։

Այսպիսով, ԵԽ-ն առաջին անգամ ադրբեջանական քաղաքականությունը որակում է որպես ագրեսիա՝ արձանագրելով, որ վերջին երեք տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ենթարկվել է շարունակական շրջափակման և ագրեսիայի և, որ 1991 թվականի դեկտեմբերին Ադրբեջանը սանձազերծել է աննախադեպ հարձակողական գործողություններ Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի նկատմամբ։ ԵԽ-ն նաև արձանագրում է Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչության, այդ թվում երեխաների վրա ադրբեջանական ուժերի հարձակումը։

**Ուշագրավ է նաև, որ բանաձևի կետերից մեկում Խորհրդարանն ընդունում է Լեռնային Ղարաբաղի իշխանություններին, իբրև ժողովրդավարական կարգերով ընտրված**՝ դրանով ըստ էության ցուցելով իր քաղաքական կամքը՝ ժողովրդավարական գործընթացների անշրջելիության նկատմամբ։

Եվրոպական Խորհրդարանի կողմից 1993 թվականի հունվարի 21-ին ընդունված **«Հայաստանի վերաբերյալ»**[2] բանաձևը նույնպես որոշակի նախադեպայնություն է պարունակում այն առումով, որ **ԵԽ-ն իր ամբողջական աջակցությունն է հայտնում ԵԱՀԽ խաղաղ գործընթացին**։ Վերջինս մի հանգամանք է, որը դրանից հետո էլ, ընդհուպ ցայսօր կարևոր է դիտվում ՀՀ-ԵՄ հարաբերություններում։ Նույն բանաձևով ԵԽ-ն կրկին բարձրաձայնում է շուրջ 300.000 հայ փախստականների հարցը, ինչպես նաև դիմում է Եվրոպական Խորհրդին՝ Հայաստանում ժողովրդավարացման գործընթացներին օժանդակելու առումով։

Մինչև զինադադարի ստորագրումը, մարտերի թերևս ամենաթեժ պահին՝ 1994 թվականի փետրվարի 10-ին, Եվրոպական Խորհրդարանն ընդունեց ևս մեկ՝ **«Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության վերաբերյալ»**[3] բանաձևը։ Այս բանաձևում ի շարս արդեն իսկ նախադեպային որակավորումների կարևոր է ընդգծել այն, որ Եվրոպական Խորհրդարանը նկատում է. **«Անկախացումից ի վեր Հայաստանն իրական ջանքեր է գործադրել սահմանադրական պետություն կառուցելու համար, որը հիմնված է ժողովրդավարական ինստիտուտների, հիմնարար ազատութ-**

---

[1] European Parliament Resolution on aid to Nagorno Karabakh, http://www.nkr.am/sites/default/files/1992_02_13_european_parliament_resolution_on_aid_to_nagorno_karabakh_b3-0155_92.pdf.

[2] European Parliament Resolution on Armenia, http://www.nkr.am/sites/default/files/1993_01_21_european_parliament_resolution_on_armenia.pdf.

[3] European Parliament Resolution on the conflict between Armenia and Azerbaijan, https://karabakhfacts.com/european-parliament-resolution-on-the-conflict-between-armenia-and-azerbaijan-b3-0181-0186-0188-0197-and-020494/.

**յունների և մարդու իրավունքների պաշտպանության վրա, և ձեռնարկել է տնտեսական բարեփոխումներ՝ բնակչության համար առավել բարեն-պաստ պայմաններ ստեղծելու համար, մինչդեռ այդ ջանքերը սպառնալի-քի տակ են՝ հակամարտության ազդեցություններով»:**

Այսպիսով, հերթական անգամ ԵՄ Խորհրդարանը ցուցում է Հայաս-տանում կատարվող իրադարձությունների ժողովրդավարական բնույթը՝ ինչպես վերը նշեցինք, ըստ էության անցկացնելով քաղաքակրթական զուգահեռումներ:

ԵԱՀԽ շրջանակներում 1992 թվականի մեկնարկած բանակցային գործնթացի տրամաբանությունը՝ Մինսկի խմբի համանախագահության բացառիկ մանդատը, իրադադարի հաստատումը պայմանավորեցին Եվ-րոպական Խորհրդարանի կողմից ղարաբաղյան հակամարտության վե-րաբերյալ բանաձերի ընդունման դինամիկայի կտրուկ անկում:

Խոշոր հաշվով Եվրոպական Խորհրդարանը ղարաբաղյան հակա-մարտությանն ուղղակի անդրադարձավ 1999թ. մարտի 11-ի **«Կովկասում խաղաղ գործընթացներին աջակցելու վերաբերյալ»**[1] պատմական բանաձ-ևով, որով ԵԽ-ն հաշվի է առնում Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակման հանգամանքը՝ արձանագրելով. **«Լեռնային Ղարաբաղը հռչակել է իր անկախությունը՝ հետևելով միութենական հանրապետությունների համանման հայտարարությունների ընդունմանը»: Նույն բանաձի մեկ այլ կետով Եվրոպայի Խորհրդարանը նկատում է. «Ժողովրդավարության ամ-րապնդումը և մարդու իրավունքների հարգումը նախադրյալներ են Լեռ-նային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման համար»:**

Այս բանաձևի ընդունումը խիստ կարևոր է երկու հարթության մեջ՝ առաջին ԵԽ-ն ըստ էության Լեռնային Ղարաբաղի անկախությունը դի-տում է ԽՍՀՄ ներքին օրենսդրության և միջազգային իրավունքի շրջա-նակներում, երկրորդ՝ կոնֆլիկտի հանգուցալուծման հարցում կարևորում է ժողովրդավարական զարգացումները: **Վերջինս կարող է քննարկման նյութ լինել նաև Հայաստան-ԵՄ երկկողմ հարաբերություններում այն ի-մաստով, որ ԵՄ-ն անկախ դերակատարում ունենա Լեռնային Ղարաբա-ղի տարածքում ժողովրդավարական ինտիտուտների և կարգերի զար-գացման գործում, մի բան ինչին Արցախը պատշտոնապես պատրաստ է, իսկ ԵՄ-ն, պայմանավորված աղբբեջանական ճնշմամբ, ոչ:**

Այս բանաձևից հետո Եվրոպական Խորհրդարանը Լեռնային Ղա-րաբաղի հակամարտությանն սկսեց անդրադառնալ որոշակի գործողութ-

---

[1] European Parliament Resolution on support for the peace process in the Caucasus https://publications.europa.eu/en/publication-detail/-/publication/1c8edb49-c670-426d-bc4f-26 7f0d5509a4.

յունների, իրեն վերապահված փաստաթղթերի քննարկման, փոփոխման կամ ընդունման համատեքստում:

1990-ական թվականների կեսերց, ՀՀ-ԵՄ զարգացող հարաբերություններով պայմանավորված, ներեվրոպական ինստիտուտներից Հայաստանի ու Ղարաբաղի հարցով ծանրության կենտրոնը փոխվեց ԵՄ գործադիր իշխանության՝ Եվրոպական Հանձնաժողովի կողմ, իսկ խորհրդարանը, ինչպես ասվեց, շարունակեց ղարաբաղյան հակամարտությանն ուղղակի կամ անուղղակի անդրադառնալ ամենատարբեր փաստաթղթերի քննարկման ժամանակ:

2017 թվականի վերջին, երբ արդեն ստորագրված էր ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համագործակցության մասին համաձայնագիրը, Եվրոպական Խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի (AFET) կողմից հրապարակվեց «**Եվրոպական Միության հարաբերությունները Հայաստանի և Ադրբեջանի հետ**»[1] խորհրդատվական ձեռնարկը (ԵՄ կառույցների համար), որում առանձին հատված, երեք կետով հատկացված է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: Ըստ այդմ, կարևորվում է ԵՄ ներգրավվածությունը Հայաստանի ու Ադրբեջանի քաղաքացիական հասարակությունների միջև երկխոսություն ստեղծելու համար՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ հանգուցալուծման եվրոպական գործընկերության (EPNK) միջոցով: Երկրորդ կետով խոսվում է ԵՄ-ի կողմից տարածաշրջանում ժողովրդավարության և ԵՄ ինտեգրացիային, այդ թվում վիզայի ռեժիմի ազատականացմանը նպաստելու անհրաժեշտության մասին: Վերջին կետով նաև նշվում է, որ ԵՄ-ն պետք է շարունակի օժանդակել Մադրիդյան սկզբունքներին և հընթացս բանակցային ջանքերին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում:

Այլ գործողությունների կամ ծրագրերի շրջանակներում՝ ղարաբաղյան հակամարտությանն առնչվող՝ Եվրոպական Խորհրդարանի կողմից ընդունված բանաձևերին կանդրադառնանք սույն աշխատանքի այլ հատվածներում՝ ըստ հարկի և ոլորտային պատկանելիության:

Այսպիսով, Եվրոպական Խորհրդարանի կողմից ընդունված՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը վերաբերող բանաձևերի մեծ մասի վերլուծությունից, եզրակացնում ենք.

Հակամարտության էսկալացիոն ժամանակահատվածում ԵԽ-ն, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը դիտել է միջազգային իրավունքի և ԽՍՀՄ ներքին օրենսդրության շրջանակներում:

---

[1] EU relations with Armenia and Azerbaijan, Directorate-General for External Policies, Policy Department, Brussels 2017, http://www.europarl.europa.eu/cmsdata/133502/EU%20relations%20with%20Armenia%20and%20Azerbaijan.pdf.

ԵԽ-ն ընդունել է Արցախում Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտման, զանգվածային տեղահանությունների ու բռնությունների, հայերի ֆիզիկական անվտանգության խաթարման, քաղաքացիական անձնաց նկատմամբ հանցագործություններ կատարելու փաստը:

ԵԽ-ն ընդունել է Ղարաբաղի ընտրված իշխանություններին՝ նրանց համարելով որպես ժողովրդավարական գործընթացների արդյունք:

Եխ-ն նկատել է Հայաստանում հետանկախական գործընթացների ժողովրդավարական բնույթը, ըստ էության ցուցելով Հայաստան-Եվրոպա հարաբերությունների հնարավոր զարգացումը քաղաքակրթական համատեղելիության ծիրի մեջ:

Հակամարտության էսկալացիոն փուլի ավարտից և բանակցային գործընթացի մեկնարկից հետո, Խորհրդարանը, ղարաբաղյան հիմնախնդրին առնձվող բանաձներ ընդունել է որոշակի գործողությունների, քաղաքականության ճշգրտումների շրջանակներում՝ որպես կանոն համերաշխություն հայտնելով Մինսկյան գործընթացին և հղում անելով միջազգային իրավունքի՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքին, ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության իրավունքին և տարածքային ամբողջականության սկզբունքին:

Վերոգրյալ եզրակացությունները, կարելի է բացատրել, այն հանգամանքով, որ միգուցե ԽՍՀՄ անհավատալի հեշտ փլուզումման հետևանքով իրադարձությունների հետագա զարգացման վերաբերյալ Արևմուտքում ձևավորվեցին ծայրահեղ լավատեսական սպասումներ: Այս շրջանակներում պետք է նկատել Ս. Հանթինգթոնի այն տեսակետը, որ սկսվող վերափոխման գործընթացը պետք էր դիտարկել ժողովրդավարեցման երրորդ ալիքի հայեցակարգի շրջանակներում՝[1] բացառելով նրանից որևէ շեղում: Արևմտյան քաղաքագիտական միտքը նաև ենթադրում էր, որ որ այդ գործընթացի արդյունքում նախկին սոցճամբարի բոլոր երկրներում կհաստատվեն արևմտյան արժեքների վրա հիմնված քաղաքական վարչակարգեր, հետևաբար անիմաստ է այդ գործընթացի ուղղորդման համար ներդնել մեծ ջանքեր ու ծախսեր:

### Եվրոպական Հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության հարաբերությունները ինստիտուցիոնալ հենքի վրա դնելու նախաքայլերը սկսվեցին 1996թ.-ից, երբ ՀՀ և ԵՄ միջև ստորագրվեց, իսկ 1999թ.-ից ուժի մեջ մտավ «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագիրը: Այդ ժամանակաշրջանից սկսած ՀՀ-ԵՄ հարաբերություններում Հայաստանի հետ առնչակից հիմնական կառույցը դարձավ Եվրոպական

[1] **Huntington S.,** The Third Wave: Democratization in the Late Twentieth Century. Norman 1991.

Հանձնաժողովը՝ իբրև ԵՄ գործադիր իշխանության մարմին: Հիմնական քաղաքական դիրքորոշումները ձևավորվում, իսկ սուբստանտիվ բանակցությունններն իրականացվում էին հենց ԵՄ Հանձնաժողովի կողմից՝ մասամբ ի դեմս արտաքին գործողությունների եվրոպական ծառայության (սկսած 2009թ.-ից):

Եվրոպական Միության գործունեության աշխատանքներում արտաքին քաղաքական բաղադրիչի ուժեղացման հարցը լուծվեց 2009 թվականին՝ Եվրոպական Միության հիմնադիր պայմանագրերը (Հռոմի (1958թ.) և Մաաստրիխտի (1993թ.)) լրացնող Լիսաբոնյան համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, երբ ձևավորվեց Արտաքին գործողությունների եվրոպական ծառայությունը, որի ղեկավարը արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով ԵՄ բարձր հանձնակատարն է:

Եվրոպական Հանձնաժողովը բաղկացած է հանձնաժողովի նախագահից, փոխնախագահից, ով միաժամանակ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով ԵՄ բարձր հանձնակատարն է, առաջին փոխնախագահից, չորս փոխնախագահներից և 21 ոլորտային հանձնակատարներից:

Մեծ հաշվով ՀՀ-ԵՄ հարաբերությունները տեղավորվում են ԵՄ հարևանության քաղաքականության (Neighborhood Policy) և Արևելյան գործընկերության (այսուհետև նաև ԱլԳ) շրջանակներում (Eastern Partnership): Սույն աշխատանքի նպատակները հաշվի առնելով՝ ղարաբաղյան հակամարտությանը ԵՄ անդրադարձները ստորև կվերլուծենք հիշյալ երկու հարթություններում, ինչպես նաև 2017 թվականի նոյեմբերին ստորագրված և ԵՄ անդամ պետությունների ազգային խորհրդարաններում վավերացման ընթացքի մեջ գտնվող ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրի շրջանակներում:

Ինչպես արդեն ասվեց, Արևելյան գործընկերության շրջանակներում տեղի են ունեցած թվով հինգ գագաթաժողովներ, դրանց համատեղ հռչակագրերի վերլուծությունները չափազանց կարևոր են հասկանալու ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ԵՄ դիրքորոշումներն ու դրանց որոշակի փոփոխությունները:

Այսպես, Արևելյան գործընկերության Պրահայի՝ 2009 թվականի մայիսի 7-ի[1] և Վարշավայի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի[2] գագաթաժողովները Ղարաբաղյան հակամարտությանն անվանական անդրադարձ չեն կատարում: Պրահայի գագաթաժողովն ընդհանրական առումով ըն-

[1]Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit, Prague, 7 May 2009, https://www.consilium.europa.eu/media/31797/2009_eap_declaration.pdf.

[2] Joint Declaration of the Eastern Partnership Summit, Warsaw, 29-30 September 2011, https://www.consilium.europa.eu/media/31798/2011_eap_warsaw_summit_declaration_en.pdf.

դամենը նկատում է, որ **«հակամարտությունները խոչընդոտում են համագործակցությանը, ուստի Պրահայի գագաթաժողովի մասնակիցները շեշտում են հակամարտությունների կարգավորման անհրաժեշտությունը՝ միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների, ինչպես նաև այդ շրջանակներում ընդունված միջազգային փաստաթղթերի ու քննարկումների հիման վրա»:** Վարշավայի գագաթաժողովը նույնպես մեծ հաշվեվ կրկնում է Պրահայի գագաթաժողովի տեքստը՝ նկատելով, որ **«հակամարտությունների կարգավորումը, լավ և վստահելի հարևանության ձևավորումը կարևոր են տարածաշրջանում տնտեսական և սոցիալական զարգացման և գործակցության համար»:** Վարշավայի գագաթաժողովը նաև պատրաստակամություն է հայտնում Եվրոպական Միության և ԱլԳ երկրների միջև քաղաքական գործակցության խորացում և երկխոսության համաձայնության մասին՝ ի թիվս այլնի ներառելով նաև հակամարտությունների հանգուցալուծումն ու համատեղ հետաքրքրության անվտանգային հարցերը:

Այսպիսով, պարզ է, որ Եվրոպական Միությունը ԱլԳ տարածաշրջանի հակամարտություններին տարբերակված մոտոցում չէր ցուցաբերում՝ մինչդեռ այդ հակամարտությունները ծագումնաբանական առումով և ներկա իրավիճակով միմյանից բավականաչափ տարբեր են: Բացի այդ ԱլԳ անդամ երկրները, յուրաքանչյուրն իր շահից թելադրված, պետք էր որ պահանջեին առավել բարենպաստ ձևակերպումներ: Խոսքն առաջին հերթին Վրաստանի, իսկ հետ նաև Ուկրաինայի մասին է: Հետևաբար, Եվրոպական Միությունը չէր կարող հակամարտություններին անդրադառնալ համահարթ՝ առանց տարբերակված մոտեցման, պարզ ասած՝ ԵՄ-ն չէր կարող ԱլԳ ամբողջ տարածաշրջանի հակամարտությունների լուծման բանաձև տեսնել օրինակ տարածքային ամբողջականության սկզբունքը:

Բացի այդ Վարշավայի գագաթաժողովից հետո սկիզբ առած քաղաքական զարգացումները հանգեցրեցին Վիլնյուսի 2013 թվականի նոյեմբերի 28-29-ի գագաթաժողովի անարդյունավետությանը, երբ ԱլԳ տարածաշրջանի երկրներում լարվում էին աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված քաղաքական գործընթացները, իսկ Հայաստանը առհասարակ հրաժարվեց ասոցացման համաձայնագրի նախաստորագրումից: Խնդիրը կրկին ԵՄ կողմից տարբերակված մոտեցման բացակայությունն էր, ոչ միայն հակամարտությունների համատեքստում այլ նաև առհասարակ՝ երկրների հետ համագործակցության առումով:

Այլ խոսքով ԱլԳ անդամ երկրները և հատկապես Հայաստանը պահանջում էին, որպեսզի Հայաստանի եվրոպական ինտեգրացիան չհակադրվի Հայաստան-Ռուսաստան հարաբերություններին, և մի կողմի հետ հարաբերությունները չլինեն ի հաշիվ մյուսի: Հատկանշական է, որ Վիլնյուսի գագաթաժողովում Հայաստանը հրաժարվեց ստորագրել ՀՀ-

ԵՄ ասոցացման համաձայնագիրը և Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը՝ առաջարկելով ստորագրել ասոցացման համաձայնագրի քաղաքական մասը միայն, ինչը ԵՄ կողմից մերժվեց: Այնուամենայնիվ Վիլնյուսի գագաթաժողովը որոշիչ էր Արևելյան գործընկերության փիլիսոփայության փոփոխությունը սկսելու առումով, քանի որ առհասարակ վտանգված էր արևելյան ուղղությամբ ԵՄ հարևանության քաղաքականության ապագան: Հետևաբար, Վիլնյուսյան գագաթաժողովը որոշակիորեն ազդվեց առկա քաղաքական գործընթացներից և իր հռչակագրում ոչ հիմնարար կերպով, բայց ընդգծեց տարբերակված քաղաքականության կարևորությունը, որն իր հերթին **«հնարավորություն կընձեռնի առանձին գործընկերներին՝ առավել լավ գնահատել իրենց ձգտումները և կարիքները»**[1]:

Վիլնյուսի գագաթաժողովն առաջինն էր, որ անվանական առումով անդրադարձավ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը՝ ընդամենը կարևորելով ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների հանդիպումը՝ պահպանելով հակամարտություններին անդրադառնալու ոչ տարբերակված մոտեցումը:

Եվրոպական Հարևանության քաղաքականությունը և Արևելյան գործընկերությունն էական վերաձևումների ենթարկվեցին 2014 թվականի համաեվրոպական ընտրություններից հետո: Նոր ձևավորված Եվրոպական հանձնաժողովն ընդունեց ճգնաժամի հասած Արևելյան գործընկերության քաղաքականության սխալները և սկսեց ԱլԳ նոր ճարտարապետությունը:

2015 թվականի մարտի 4-ին, Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայումները ներկայացնելիս, անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով ԵՄ նախկին բարձր հանձնակատար Ֆ. Մոգերինին նկատեց. **«Մեզ անհրաժեշտ է վերանայել մեր քաղաքականությունը, մեր աշխատելաոճը և գործընկերությունը տարածաշրջանի երկրների հետ, քանի որ պետք է դատող մոտեցումը փոխարինել քաղաքական երկխոսությամբ, ավելի գործընկերային բնույթ տալ դրան՝ հավասարը հավասարի հետ սկզբունքով»**[2]: Նույն հանդիպման ընթացքում Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման հարցերի նախկին հանձնակատար Յոհաննես Հանն ընդգծեց. **«Պետք է ավելին անենք ճանաչելու համար մեր գործընկերների խիստ տարբերակվածությունը: Որոշներն ուզում են ավելի սերտ ինտեգրվել մեզ հետ, և այս**

---

[1] Joint Declaration of the Eastern Partnership Summit, Vilnius, 28-29 ovember 2013, https://www.consilium.europa.eu/uedocs/cms_Data/docs/pressdata/EN/foraff/139765.pdf.

[2] Joint press conference by High Representative/ Vice-President Federica MOGHERINI and Commissioner Johannes HAHN on European Neighborhood Policy Review, Brussels, 04 March 2015, https://europa.eu/rapid/press-release_SPEECH-15-4553_en.htm.

**դեպքերում մենք պետք է մտածենք, թե հետագա ինչ քայլեր են հնարավոր: Որոշներն ուզում են տարբեր տեսակի հարաբերություններ ունենալ, և նրանց համար մենք պետք է հաշվի առնենք, թե ինչպես կարող ենք լավագույնս հետամուտ լինել այդ հարաբերությունների հաստատման, հնարավոր է ՝ նոր ձևաչափերով»**[1]: Հանն ընդգծեց նաև այն երկրների հետ հարաբերություններին հետևողական լինելու և նրանց համար համագործակցության նոր ոլորտներ ապահովելու անհրաժեշտությունը, ովքեր չկարողացան ստորագրել ասոցացման համաձայնագիրը:

Եվրոպական Հանձնաժողովի բարձրաստիճան պաշտոնյաների այս հայտարարություններին երկու ամիս անց հաջորդեց Արևելյան գործընկերության Ռիգայի գագաթնաժողովը՝ 2015 թվականի մայիսի 21-22-ին:

Ռիգայի գագաթաժողովում արդեն էական դարձավ գերծընկերների հետ ԵՄ հարաբերությունների տարբերակված մոտեցման հաստատումը, գագաթաժողովի հայտարարության երկրորդ կետն ընդգծում է. **«Եվրոպական հարևանության և Արևելյան գործընկերության շրջանակներում գագաթաժողովի մասնակիցները վերահաստատում են գործընկերներից յուրաքանչյուրի ինքնիշխան իրավունքը՝ ազատորեն ընտրելու հավակնությունների մակարդակը և նպատակները, որոնց նա ձգտում է ԵՄ-ի հետ հարաբերություններում: ԵՄ-ն և նրա ինքնիշխան գործընկերները պետք է որոշեն, թե ինչպես են ցանկանում շարունակել իրենց հարաբերությունները»**[2]:

Նոր՝ տարբերակված քաղաքականությունն արտացոլվեց նաև հակամարտություններին վերաբերող ձևակերպումներում: Արդեն կարող ենք խոսել այն մասին, որ սկսած Ռիգյի գագաթաժողովից Եվրոպական Միությունն ըստ էության ընդունեց Արևելյան գործընկերության տարածքում առկա հակամարտությունների ծագումնաբանական տարբերությունը՝ որպես Եմ դիրքորոշման տարբերակման գործոն: Այսպես Հայաստանին հաջողվեց դուրս գալ հակամարտությունների այն շրջանակից, որոնք Եվրոպական Միությունը դիտում է ռուսական գործունեությա արդյունքում առաջացած:

Հայաստան-Եվրոպական Միություն հարաբերություններում ղարաբաղյան հիմնախնդրի ազդեցությունը հասկանալու տեսանկյունից Ռիգայի գագաթաժողովի հայտարարությունը չափազանց կարևոր է: Հիմնախնդրի վերաբերյալ Ռիգայի գագաթաժողովը ընդգծեց. **«ամբողջական աջակցությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերին՝ ներառյալ**

---

[1] Նույն տեղում:

[2] Joint Declaration of the Eastern Partnership Summit, Riga, 21-22, May 2015, https://www.consilium.europa.eu/media/21526/riga-declaration-220515-final.pdf.

**նախագահների մակարդակով և նրանց հայտարարություններին՝ 2009 թվականից ի վեր»**[1]:

Հայկական կողմի համար առանձնակի կկարևորություն էր ներկայացնում հատկապես վերջին ձևակերպումը՝ 2009 թվականից ի վեր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարների հայտարարությունների մասին: Բանն այն է, որ Համանախագահ երկրների ղեկավարների կողմից 2009 թվականի հուլիսի 10-ի Լ'Աքվիլայի հայտրարությամբ[2], որով նրանք փաստորեն զաղտնազերծեցին այսպես կոչված «մադրիդյան սկզբունքները», առաջին անգամ, երկար ընդմիջումից հետո խոսք էր գնում նաև ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին: Համանախագահներն արձանագրեցին. **«Հիմնական սկզբունքները արտացոլում են տեսանելի փոխզիջում՝ հիմնված Հելսինկիի Եզրափակիչ ակտի սկզբունքների վրա՝ ուժի չկիրառում, տարածքային ամբողջականություն ու ժողովուրդների իրավահավասարություն և ինքնորոշման իրավունք»:**

*Ընդհանրապես ճիշտ գնահատելու համար Լեռնային Ղարաբաղի հարցում հայկական կողմի համար ձեռնտու դիրքորոշումները պետք է մեկնակետ ունենալ Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում. այն է.*

- *Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք պետք է հանդիսանա Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ճանաչումը,*
- *Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Հայաստանի հետ պետք է ունենա հայկական կողմի իրավազորության տակ գտնվող անխափան ցամաքային կապ,*
- *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգությունը պետք է միջազգայնորեն երաշխավորված լինի*[3]*:*

*Պատկերն առավել լավ հասկանալու համար անհրաժեշտ է նաև նկատել, որ Ադրբեջանը Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը պատկերացնում է բացառապես տարածքային ամբողջականության սկզբունքի սեփական ընկալման համատեքստում՝ իր տարածքում Արցախին լայն ինքնավարություն տալու միջոցով:*

---

[1] Նույն տեղում:

[2] Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev, and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight, July 10, 2009, https://obamawhitehouse.archives.gov/realitycheck/the-press-office/joint-statement-nagorno-karabakh-conflict.

[3] ՀՀ արտաքին քաղաքականություն, https://www.mfa.am/hy/foreign-policy/.

Վերորգրյալի շրջանակում ակնհայտ է, որ Ռիգայի հռչակագրի տեքստը ամբողջապես համընկնում էր հայկական կողմի քաղաքական դիրքորոշմանը, ինչը չէր կարելի ասել Ադրբեջանի մասին, որի արտաքին գործերի նախարարը ստորագրեց հռչակագրի տեքստը բավական սկանդալային իրավիճակում:

Հետևապես կարող ենք փաստել, որ Արևելյան գործընկերության նոր ճարտարապետության համար կենսական նշանակություն ունեցող Ռիգայի գագաթաժողովն ամբողջությամբ սատարում հայտնեց Մինսկյան բանակցային գործընթացին և համանախագահ երկրների ղեկավարների հայտարարություններին, որոնք ամրագրում են ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության իրավունքը, որպես համակարտության կարգավորման սկզբունքներից մեկը:

Ինչպես վերը նշվեց՝ Ռիգայի գագաթաժողովով նաև ամբողջացավ ԵՄ-ի հետ ԱլԳ երկրների համալրիր տարբերակված քաղաքականության կոնցեպտը: ԱլԳ երկրները Եվրոպական Միության հետ պետք է հարաբերվեին անհատապես՝ հաշվի առնելով սեփական շահերը և սպասելիքները: Այսպես, օրինակ եթե ԵՄ-ն Հայաստանի հետ աշխատում է ժողովրդավարական գործիքակազմերի ներդրման, օրենսդրաիրավական մոտարկման, քաղաքացիական հասարակության կայացման ուղղությամբ, ապա Ադրբեջանի հետ աշխատում է էներգետիկ անվտանգության, էներգակիրների տեղափոխության և այլ շերտերում:

**ՀՀ-ԵՄ «Խորը և համապարփաակ համագործակցության համաձայնագիր»**

Վերափոխված Եվրոպական հարևանության քաղաքականությունն ու Արևելյան գործընկերությունը առաջինն արտացոլվեցին Հայաստան-Եվրոպական Միություն հարաբերություններում: Ռիգայի գագաթնաժողովից ամիս ու կես անց Հայաստան ժամանած Եվրոպական Խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ տվեց ՀՀ-ԵՄ նոր փաստաթղթի շուրջ բանակցությունների մեկնարկը: ՀՀ-ԵՄ նոր փաստաթուղթը՝ **«Համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագիրը»** բանակցվեց երկու տարի՝ 2015-2017թթ., նախաստորագրվեց 2017 թվականի մարտի 27-ին: Այն ըստ էության կրկնում էր ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծի քաղաքական մասը, իսկ տնտեսական մասը համաձայնեցված էր Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցության պահանջներին:

Համաձայնագիրը ստորագրվեց 2017 թվականի նոյեմբերի 27-ին՝ Արևելյան գործընկերության 5-րդ գագաթաժողովի ընթացքում՝ Բրյուսելում: Ներկայումս այն գտնվում է ԵՄ անդամ երկրներում վավերացման

ներքին ընթացակարգերում: Այն իր բնույթով չափազանց հավակնոտ և ե-զակի համաձայնագիր է Արևելյան գործընկերության ամբողջ տարածքի համար, ներառում է հանրային կյանքի բոլոր ոլորտներն ու որակական և բովանդակային բոլորովին նոր մակարդակի է բարձրացնում ՀՀ-ԵՄ հա-րաբերությունները՝ իրավամբ հավակնելով լինել ՀՀ արտաքին քաղաքա-կանության ամենախոշոր ձեռքբերումներից մեկը: Սույն աշխատանքի շրջանակներում մեզ առավելապես հետաքրքրվում է համաձայնագրի այն հատվածը, որը վերաբերում է ղարաբաղյան հակամարտությանը:

ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայ-նագրի նախաբանում ծավալուն անդրադարձ կա Ղարաբաղյան հակա-մարտությանը, որը մեջբերվում է ստորև.

«Ընդունելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ և տ-ևական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության հանձնա-ռության կարևորությունը և **ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից վարվող բանակցությունների շրջանակներում** այդ կարգավորմա-նը հնարավորինս շուտ հասնելու անհրաժեշտությունը. ընդունելով նաև ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում ամրագրված **նպատակների և սկզբունքների հիման վրա** այդ կարգավոր-մանը հասնելու անհրաժեշտությունը, մասնավորապես, այն նպատակնե-րի և սկզբունքների, որոնք առնչվում են **ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից հրաժարվելուն, պետությունների տարածքային ամբողջա-կանությանը և ժողովուրդների իրավահավասարությանն ու ինքնորոշմա-նը, և արտացոլված են ԵԱՀԿ 2008 թվականի նախարարների խորհրդի 16-րդ հանդիպումից ի վեր** ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում արված բոլոր հայտարարություններում. նշելով նաև կարգավորման այս գործընթացին աջակցելու՝ Եվրոպական միության կողմից հայտարարված հանձնառությունը»[1]:

Այսպիսով, հաշվի առնելով ղարաբաղյան հիմնահարցում ՀՀ պաշ-տոնական դիրքորոշումը՝ ՀՀ-ԵՄ հարաբերությունները երկարաժամկետ կտրվածքով պայմանավորող այս համաձայնագրում ներառված՝ ղարա-բաղյան հակամարտությանը վերաբերող դրույթները ամբողջապես սպա-սարկում են Հայաստանի Հանրապետության քաղաքական շահը: Առանձ-նացնենք համաձայնագրի որոշ դրույթների կարևորությունն ու փորձենք քննարկման առարկա դարձնել դրանց տողատակային կարևորությունը.

1) Համաձայնագրի մեջ հստակորեն նշված է բանակցային գործըն-թացի ձևաչափը՝ ի դեմս ԵԱՀԿ Մինսկի խմբի: Հայտնի է, որ բանակցային գործընթացի մեկնարկից հետո ադրբեջանական կողմը մշտապես փորձել

[1] ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf.

է հասնել բանակցային գործընթացի ձևաչափի փոփոխությանը, փորձելով դրա մեջ ներգրավել միջազգային այլ կառույցների ու պետությունների: Ադրբեջանի այդպիսի քաղաքական նախաձեռնությունները մշտապես հանդիպել են նաև Մինսկի խմբի դիմադրությանը:

2) Համաձայնագրում նշվում է հակամարտության կարգավորման անհրաժեշտությունը «ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում ամրագրված **նպատակների և սկզբունքների** հիման վրա»: Այստեղ շատ կարևոր է նպատակներ և սկզբունքներ ձևակերպումը:

Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում հատուկ անդրադարձ կատարել **տարածքային ամբողջականության սկզբունքի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարաբերակցությունը**: Բանն այն է, որ ՄԱԿ-ի կանոնադրության առաջին գլուխը սահմանում է ՄԱԿ-ի նպատակներն ու սկզբունքները: Առաջին հոդվածով սահմանվում են ՄԱԿ-ի նպատակները, իսկ երկրորդով՝ այդ նպատակներին հասնելու սկզբունքները: Առաջին հոդվածի երկրորդ կետը, իբրև ՄԱԿ-ի նկատակ է սահմանում նաև ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը: Համաձայն նույն գլխի երկրորդ հոդվածի նախաբանի՝ ՄԱԿ-ը և իր անդամները պետք է հետապնդեն առաջին հոդվածում նշված նպատակները՝ թվով յոթ սկզբունքների շրջանակներում և խուսափեն «ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ ՄԱԿ-ի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից»[1]: Այսպիսով ՄԱԿ-ը սահմանում է նպատակներ և այդ նպատակների կատարմանը նպաստող սկզբունքներ, այլ խոսքով՝ մի դեպքում գործ ունենք իրավունքի, մեկ այլ դեպքում այդ իրավունքի կենսագործմումն ապահովելուն կոչված սկզբունքի հետ: Հետևաբար դրանք որպես այդպիսին չեն կարող հակադրվել իրար:

Խնդրո առարկահարցը, մեկ այլ դիտանկյունից նկատել է Տ. Թորոսյանը՝ այն առումով, որ Հելսինկյան Եզրափակիչ ակտում բերված տասը սկզբունքների սահմանումների համաձայն, Ադրբեջան-Հայաստան միջպետական հարաբերությունների պարազայում պետք է կիրառվի տարածքային ամբողջականության սկզբունքը, իսկ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի հարաբերությունները պետք է կարգավորվեն ինքնորոշման իրավունքի հիման վրա: Ամեն դեպքում հետագայում, ոչ միայն փորձ չարվեց երեք սկզբունքների կիրառման ոլորտների հստակեցման տեսակետից, այլև տարատեսակ ու հակասական հայտարարություններով համանախագահները խառնաշփոթ էին ստեղծում սկզբունքների հանրային ըն-

[1] Charter of the United Nations, https://www.un.org/en/charter-united-nations/.

կալման վրա[1]: Հետաքրքիր է, որ վերը ասվածին համապատասխան մի ձևակերպում էլ արել է ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահներից, Ֆրանսիայի ներկայացուցիչ Բ. Ֆասիեն՝ նկատելով. «Ղարաբաղյան հակամարտության պարագայում գործ ունենք միջազգային իրավունքի միաժամանակյա կիրառման երկու դեպքի հետ՝ Ադրբեջանի ներսում հակամարտություն և միջպետական հակամարտություն»[2]:

Վերոգրյալի շրջանակներում՝ ՀՀ-ԵՄ քննվող համաձայնագրում առկա դրույթները մեծ կարևորություն են ներկայացնում, որպեսզի բացառվի ղարաբաղյան հակամարտության ներկայացումը՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտման շրջանակներում, այն համատեքստում որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է բացառապես պետությունների միջև հարաբերությունների հարթությանը և չի կարող վերաբերվել ինքնորոշվող սուբյեկտ-պետություն հարաբերությանը: Ի դեպ, Կոսովոյի հարցում նմանաբնույթ որոշում կայացվել է Արդարադատության միջազգային դատարանի կողմից:

Արդարադատության միջազգային դատարանի՝ Կոսովոյի վերաբերյալ 2010թ. հուլիսի 22-ի՝ եզրակացությունում միանաշանակորեն նշվում է, որ միակողմանի անկախության հռչակումը միջազգային իրավունքում որևէ կերպ արգելված չէ, և որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է միայն միջպետական հարաբերություններին՝ բառացիորեն նշելով. **«տարածքային ամբողջականության իրավունքի կիրառման ոլորտը սահմանափակվում է ճանաճված պետությունների հարաբերությունների ոլորտով»**[3]:

3) Համաձայնագրում տարածքային ամբողջականության, ուժի կամ ուժի սկառնալիքի չկիրառման սկզբունքերի կողքին ամրագրված է նաև ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության իրավունքը, ինչը կրկին ամբողջապես տեղավորվում է Հայաստանի պետական դիրքորոշման շրջանակներում:

4) Համաձայնագրում հստակորեն նշվում է **«ԵԱՀԿ 2008 թվականի նախարարների խորհրդի 16-րդ հանդիպումից ի վեր** ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում արված բոլոր հայտարարությունների» ընդունման կարևորությունը: Այստեղ ուշագրավ է դիտարկել երկու փաստաթուղթ: Առաջին՝ 2009 թվականի հուլիսի 10-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների ղեկավարների կողմից,

---

[1] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան 2012, էջ 140-141:

[2] Նշվ. աշխատանք էջ, 185:

[3] **Քոչարյան Շ.,** «Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը», Երևան 2015թ.:

իտալական Լ՛Աքվիլա քաղաքում ընթացող «G 8»-ի գագաթաժողովի օրերին, տարածվեց ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ համատեղ հայտարարություն[1]: Դրանով, ըստ էության, զաղտնազերծվում են այսպես կոչված բանակցային պրահյան գործընթացի արդյունքում կազմված և 2007 թվականին բանակցող կողմերի ու համանախագահների կողմից իբրև բանակցային գործընթացի հիմք հանդիսացող 3 սկզբունքները և 6 տարրերը: Դա առաջին անգամն էր, որ նման մակարդակով ընգծվում էր Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը և հանրաքվեով ԼՂ վերջնական կարգավիճակի որոշումը: Եվ երկրորդ՝ ԵԱՀԿ 2008 թվականի նախարարների խորհրդի 16-րդ հանդիպման հայտարարությունը որևէ կերպ չէր հակասում ՀՀ քաղաքական առաջնահերթություններին[2]:

Կարևոր է նաև ընդգծել, որ ըստ էության ՀՀ-ԵՄ հարաբերություններում, ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման սկզբունքերի ընկալման կամ մեկնաբանման համար հղում է արվում 2008 թվականից հետո ընկած ժամանակահատվածը՝ ըստ էության բացառելով նախկինում կատարված միակողմանի և հակաական հայտարարությունները: Կարծում ենք այս համատեքստում առաջինը պետք է հանգել ԵԱՀԿ 1996 թվականի դեկտեմբերի Լիսաբոնի գագաթաժողովի հայտարարությանը կից կատարված ԵԱՀԿ նախագահի գրասենյակի հայտարարությանը[3]: Դա իր միակողմանիությամբ եզակի փաստաթուղթ է, որտեղ ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանաձև է առաջարկվում Ղարաբաղի բարձր ինքնավար կարգավիճակը Ադրբեջանի կազմում և այլն: Այս առումով ևս, ՀՀ-ԵՄ համաձայնագրի քաղաքական արժեք խիստ կարևոր է:

ՀՀ-ԵՄ «Ընդլայնված և համապարփակ գործընկերության համաձայնագիրը» ստորագրվեց ԱլԳ Բրյուսելի գագաթաժողովի ընթացքում, որի հայտարարության[4] մեջ թեև ղարաբաղյան հակամարտությանը անդրադարձ որպես այդպիսին չկա, այնուամենայնիվ հայտարարության հակամարտություններին վերաբերող կետում խոսվում է ԵՄ-ի դերի բարձրացումն ու հակամարտությունների կարգավորման գործընթացում աջակցությունը՝ միջազգայնորեն ընդունված բանակցային գործընթացների շրջանակներում:

---

[1] Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, L'AQUILA 10 July 2009, https://www.osce.org/mg/51152

[2] Joint declaration of the Foreign Ministers and Deputy Minister of France, Russia, and the United States on Nagorno-Karabakh, 4 December 2008, https://www.osce.org/mc/35384?download=true

[3] Organization for Security and Co-operation in Europe, Lisbon Document 1996, https://www.osce.org/mc/39539?download=true

[4] Joint Declaration of the Eastern Partnership Summit, Brussels, 24 November 2017, https://www.consilium.europa.eu/media/31758/final-statement-st14821en17.pdf

**Եվրոպական Միության Խորհրդի և ԵՄ հակամարտությանը ներգրավածության հարցը**

Եվրոպական Միության ներկայացուցիչների՝ Ղարաբաղ մուտքի հարցը և ԵՄ կողմից տեղում աջակցության տրամադրումը, այդ թվում քաղաքացիական հասարակության ինստիտուտներին աջակցություն ցուցաբերելը, հումանիտար խնդիրների լուծմանն աջակցելը ՀՀ-ԵՄ հարաբերություններում քննարկման կարևոր հանգամանք է, որի մասին Եվրոպական կողմը Խորհրդարանի մակարդակով սկսել է խոսել 1990-ականների սկզբից: Հայկական կողմի համար ԵՄ ներգրավածության մեծացումն ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացումը Արցախի պարտադրված իզոլացման ճեղքման համար հսկայական նշանակություն կարող է ունենալ:

Ղարաբաղում Եվրոպական Միության ներկայացուցիչների մուտքը խոչընդոտվում է բացառապես Ադրբեջանի կողմից: Նախընթաց ժամանակահատվածում եվրոպական տարբեր մակարդակներում ընդունվել են բազմաթիվ հայտարարություններ, որոնք կոչ են անում կողմերին ապահովել ԵՄ ներկայացուցիչների անարգել մուտքը լեռնային Ղարաբաղ: Այդպիսի փաստաթղթերի շարքին կարելի է դասել օրինակ Ադրբեջանում Եվրոպական հարևանության քաղաքականության առաջընթացի վերաբերյալ 2013 թվականի աշխատանքային փաստաթուղթը[1] և այլն:

Բացառապես Եվրոպական Միություն - Ադրբեջան հարաբերությունների շրջանակներում հրապարակված փաստաթղթերում նման պնդումների արտացոլումը խոսում է հենց այն հանգամանքի մասին, որ Լեռնային ղարաբաղ եվրոպական պաշտոնյաների մուտքի հիմնական խոչընդոտը հենց ադրբեջանական կողմն է:

Եվրոպական Միության Խորհուրդը Եվրոպական Միության ղեկավար հաջորդ մարմինն է, որն ունի նաև ուժեղացված օրենսդիր գործառույթներ: Հիմնականում ԵՄ Խորհուրդը բանակցում և ընդունում է իրավական ակտեր, համադրում է անդամ պետությունների քաղաքականությունները, բարելավում է ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականությունը, Հանձնաժողովին մանդատ է տալիս ԵՄ անունից բանակցություններ վարելու համար, Խորհրդարանի հետ համատեղ ընդունում է ԵՄ բյուջեն[2]:

[1] Implementation of the European Neighbourhood Policy in Azerbaijan Progress in 2012 and recommendations for action, Joint staff working document, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52013SC0088&from=en

[2] The Council of the European Union, https://www.consilium.europa.eu/en/council-eu/

Վերոնշյալի շրջանակում դիտարկենք երկու կարևոր փաստաթուղթ: Առաջին. շատ ուշագրավ է Եվրոպական Խորհրդի 2012 թվականի փետրվարի 27-ի եզրակացությունը[1]:

**«Հարավային Կովկասի վերաբերյալ Խորհրդի եզրակացությունը»** վերնագրված փաստաթղթի վերջին կետով խորհուրդն անդրադառնում է ղարաբաղյան հակամարտությանը: Վերահաստատելով Եվրոպական Միության հանձնառությունը կողմերի միջև վստահության ամրապնդման միջոցառումներին՝ ԵՄ-ն **«ընդգծում է ԵՄ ներկայացուցիչների անարգել մուտքը Լեռնային Ղարաբաղ և հարակից շրջաններ»:**

Արդեն 2019 թվականի մարտի 15-ին Եվրոպական Միության Խորհուրդը հրապարակել է Եվրոպական հանձնաժողովի կողմից իրեն հասցեագրված «Եվրոպական Հարևանության վերանայված քաղաքականության շրջանակներում ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների վերաբերյալ զեկույց» փաստաթուղթը[2]: Ղարաբաղյան հակամարտությանն անդրադարձի հատվածում խոսվում է ինչպես հակամարտության գոտում ԵՄ ներգրավածության մեծացման, կողմերի միջև շփումները խրախուսելու կարևորության մասին, այնպես էլ ընդգծվում է, որ **«Եվրոպական Միությունը շարունակում է կոչ անել ԵՄ ներկայացուցիչների՝ Լեռնային Ղարաբաղ անխափան մուտքի համար՝ ներգրավվելու հակամարտության փոխակերպման գործընթացում՝ որպես աջակցություն և փոխլրացում ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերին»:**

Վերոգրյալի համատեքստում անշուշտ պետք է նկատել երկու հանգամանք՝ առաջին նման հայտարարությունների տեղ գտնելը հիմնականում ԵՄ - Ադրբեջան հարաբերություններին վերաբերող փաստաթղթերում, երկրորդ՝ հայտարարություններում խնդրո առարկայի շուրջ ձևակերպումների փոփոխության տրամաբանությունն է:

Որպես կանոն ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների շրջանակներում հակամարտությանը ԵՄ-ի կողմից այս կամ այն ձևով ներգրավմանը և ԵՄ պաշտոնյաների մուտքի անհրաժեշտությանն անդրադառնալը ակնհայտ ցուցիչ է այն փաստի, որ ադրբեջանական կողմն է հանդիսանում հիշյալ միջոցառումների խոչընդոտը:

Սակայն անկիհայտ է, որ չնայած հայտարարությունների և քաղաքական գնահատականների մակարդակում ԵՄ հանձնառու է հակամար-

---

[1] Council conclusions on the South Caucasus, 3149th FOREIGN AFFAIRS Council meeting Brussels, 27 February 2012, https://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/EN/fo raff/128197.pdf

[2] Report on EU - Azerbaijan relations in the framework of the revised European Neighbourhood Policy, https://eeas.europa.eu/sites/eeas/files/2019_report_on_eu-azerbaijan_relations_ in_the_ framework_of_the_revised_european_neighbourhood_policy_0.pdf

տության շրջանակներում հումանիտար ներգրավածության ունենալու համար, սակայն դրա շուրջ առավել արմատական քայլեր չեն իրականացվում[1]:

Երկրորդ՝ եթե 2013 թվականին օգտագործվում էր «անարգել մուտք» ձևակերպումը, ապա 2019 թվականին օգտագործվում էր «անխափան մուտք» ձևակերպումը, եթե առաջին դեպքում օգտագործվում էր «Լեռնային Ղարաբաղ և հարակից շրջաններ» ձևակերպումը, ապա 2019 թվականին օգտագորցվեց «Լեռնային Ղարաբաղ» ձևակերպումը: Սրանք կարող են ենթադրել Եվրոպական Միության կողմից որոշակի հակադարձում՝ Ադրբեջանի կողմից ԵՄ ներկայացուցիչների մուտքը Արցախ խափանելու համար: Բանն այն է, որ ԵՄ ներկայացուցիչների կամ, որ առավել հավանական է Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցչի մուտքը Արցախ, պետք է համաձայնեցվի նաև Ադրբեջանի հետ: Ընդ որում, հատուկ համաձայնեցման հարց է հանդիսանում այն, թե որ պետության իրավազորության տարածքից պետք է կատարվի ենթադրվող մուտքը:

Համաձայն Եվրոպական Միության արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերի բարձր ներկայացուցչի գրության, որն իբրև պատգամավորական հարցման պատասխան ուղարկվել էր ԵԽ պատգամավորների, ստացվում է, որ Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամերի հարցերով ԵՄ ներկայացուցիչը 2004 թվականին այցելել է Արցախ[2]: Սակայն հաշվի առնելով այդպիսի այցի եզակիությունը, տեղեկատվության խիստ սակավությունը և ԵՄ Խորհրդի և Հանձնաժողովի կողմից այդ հարցով շարունակական կոչերը, ապա պետք է ենթադրել որ այդ այցը չի կարատվել տվյալ պաշտոնյայի մանդատի ամբողջական օգտագործմամբ:

Եվրոպական Խորհուրդը, իբրև Եվրոպական Միության ղեկավար անձանցից բաղկացած մարմին, ղարաբաղյան հակամարտությանը լայն անդրադարձ, որպես այդպիսին չի կատարել:

**Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ԵՄ անդամ պետությունների դիրքորոշումների շուրջ**

Եվրոպական Միության անդամ պետությունների անդամները լիակատար անկախ են իրենց արտաքին քաղաքականության պլանավորման

---

[1] Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում ԵՄ ներգրավածության մասին խոսելիք պետք է նկատի ունենալ հիմնականում հումանիտար և քաղաքացիական հասարակությանն աջակցող ներգրավածությունը, ոչ թե ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցային գործընթացին բովանդակային առնչությունը:

[2] Answer given by Vice-President Mogherini on behalf of the Commission, 29 march 2018 http://www.europarl.europa.eu/doceo/document/E-8-2018-000464-ASW_EN.html.

և իրականացման գործընթացում: Անշուշտ որոշ հարցերի շուրջ ԵՄ-ն ձևավորում է միասնական արտաքին քաղաքականություն, սակայն անդամ պետությունների արտաքին քաղաքականությունը չպետք է հակասի ԵՄ որդեգրած դիրքորոշմանը և հայտնի արժեքային չափորոշիչներին: Այս իրավիճակի գիտավերլուծական ամրության համար անհրաժեշտ է մեկնել Կ. Ուոլցի այն պնդումից, որ պետություններն իրականացնում են կարևորագույն սոցիալական, քաղաքական և տնտեսական գործառույթներ և այդ առումով, ոչ մի կազմակերպություն չի կարող նրանց հետ մրցակցել[1]:

Միջազգային հարաբերություններում բացառիկ նշանակություն ունեն պետությունների ինքնուրույնությունը, ազատությունն ու ճկունությունը՝ անհրաժեշտ և շրջադարձային պահերին միջազգային կազմակերպությունների շրջանակներում ձևավորված մեխանիզմների ու ավանդույթների ծիրում չտեղավորվող արդյունավետ զարգացումների ընտրության հարցում[2]: Հենց այս շրջանակում պետք է պատշաճ զգուշությամբ անդրադառնալ Եվրոպական Միության անդամ պետությունների կողմից իրականացվող արտաքին քաղաքականության և առանձին հարցերում Միության միասնական արտաքին քաղաքականության առանձնահատկություններին:

Ինչ վերաբերում է Ղարաբաղյան հիմնահարցով ԵՄ անդամ պետությունների պաշտոնական դիրքորոշումներին, ապա կարելի է, վերն ասվածի համատեքստում նկատի ունենալ ՀՀ-ԵՄ առանցքային համաձայնագրերը:

1996 թվականին ՀՀ և ԵՄ միջև ստորագրված «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագիրը Ղարաբաղյան հակամարտությանը որևէ անդրադարձ չէր կատարում, հետևաբար այն ստորագրող Եմ անդամ պետությունների վրա պարտավորություն չէր դրվում ղարաբաղյան հիմնահարցում միասնական դիրքորոշում ունենալու համար:

Արդեն 2017 թվականին ստորագրված և դեռևս անդամ պետություններում ազգային ընթացակարգերի համաձայն վավերացման ընթացքում գտնվող ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված համագործակցության» համաձայնագիրը անդամ պետությունների համար առավել հստակ է ամրագրում ղարաբաղյան հակամարտության շուրջ քաղաքական դիրքորոշումը:

Ինչ վերաբերում է Եվրոպական Միության որոշ անդամ պետությունների դիրքորոշումներին, ապա նշենք, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ տասնմեկ պետություններից հինգը՝ Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան, Չեխիան և Շվեդիան Մինսկի խմբի անդամ պետություններ են, իսկ Ֆրան-

[1] **Waltz K.,** Globalization and American power, - The international interest, vol. 59, spring. 2000, p. 48.

[2] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան 2012, էջ 21:

սիան նաև համանախազահ է: Ուստի այսպես թե այնպես պետք է հավատարիմ մնային բանակցային ձևաչափին:

**Լեռնային Ղարաբաղի հակամարտության Խաղաղ կարգավորման եվրոպական համագործակցություն (EPNK)**

Հատկանշական է այն հանգամանքը, որ ղարաբաղյան հակամարտությունը որպես պատային ու անկառավարելի համարող հետազոտողներից ոմանք, օրինակ Բ. Յոզքանը հակամարտության վերջնական լուծման գործուն մեխանիզմ են համարում ժողովուրդների հետ աշխատանքը: Յոզքանը նշում է. «քանի դեռ Ադրբեջանի և Հայաստանի ոչ ժողովրդավարական ռեժիմներին բավարարում է ստատուս քվոն և արտաքին ուժերը հաշվի են առնում նրանց շահերը, «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը մարտահրավեր չի ունենա: Ելքը հնարավոր է միայն իսկապես տուժող կողմին՝ ժողովրդին որոշումների ընդունման և խաղաղության հաստատման գործընթացում ներգրավելու դեպքում»: Այս համատեքստում լիովին բնական է, որ Եվրոպական Միությանը, որը ղարաբաղյան հիմնախնդրի առնչությամբ ակնհայտորեն խուսափում է անհարկի ակտիվությունից և նախաձեռնողականությունից, փորձում է փափուկ ուժի տեսության գործիքակազմերի կիրառմամբ որոշակիորեն ներգրավածություն ունենալ հակամարտության գոտում:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության շրջանակներում Եվրոպական Միության ներգրավվածության աստիճանը, ինչպես վերը փաստվեց, խիստ անբավարար է: Թերևս միակ ձևաչափը, այն էլ անուղղակի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության Խաղաղ կարգավորման եվրոպական համագործակցությունն է (EPNK): 2009 թվականից Եվրոպական Միության կայունության ֆոնդից ֆինանսավորվող այս ծրագիրը իրականացնում են եվրոպական թվով հինգ հասարակական կազմակերպություն-վերլուծական կենտրոններ: Ծրագրի նպատակն է աջակցել ղարաբաղյան հակամարտության խաղաղության կարգավորմանն ուղղված ջանքերին՝ յուրացնելով քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և քաղաքականություն մշակողների միջև երկխոսությունը: Ծրագրի նպատակներից է նաև օժանդակել հակամարտության կարգավորմանը, լարվածության նվազեցմանը և հետհակամարտային վերականգնողական աշխատանքներին:

Ծրագրի երեք հիմնական առաջնահերթություններն են առնչվում են լրատվամիջոցներին, հանրային քաղաքականությանը և հակամարտության ազդեցության խմբերին[1]:

[1] The European Union continues to support civil society peace building efforts over Nagorno-Karabakh, https://europa.eu/rapid/press-release_IP-12-1175_en.htm.

Այս շրջանակում կատարված աշխատանքները, իհարկե չեն ենթադրում Եվրոպական Միության կողմից ուղղակի քաղաքական ներգրավվածություն, ուստի այդ խնդիրը շարունակում է օրակարգային մնալ ՀՀ-ԵՄ հարաբերություններում:

**Ղարաբաղյան հիմնախնդրի մասով ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման հնարավոր հեռանկարներ և եզրակացություններ**

Տեսական առումով, որքան դյուրին է պնդումներ անել ղարաբաղյան հակամարտության էության եվրոպական հավաքական ընկալումների առումով, իբրև ինքնորոշման իրավունքի համար մղվող պայքար, նույնքան խրթին է բնորոշել բանակցային գործընթացի վերաբերյալ եվրոպական քաղաքական մտքի ընկալումը: Արդյո՞ք ԵՄ-ն ղարաբաղյան հակամարտությունը դիտում է իբրև չլուծվող հակամարտություն (intractable conflict), իսկ բանակցային գործընթացը՝ պատային: Թերևս հնարավոր է, որ ղարաբաղյան բանակցային գործընթացի բնորոշման կարիք Եվրոպական Միությունը որպես այդպիսին չունի, քանի որ անմիջականորեն քաղաքական պատասխանատվություն չունի միջնորդական գործընթացի վրա: Ընդ որում, նույնը կարող է վերաբերել միջնորդական առաքելության արդյունավետության գնահատմանը, որտեղ կրկին ԵՄ-ն լռում է՝ համերաշխություն հայտնելով ԵԱՀԿ-ին:

Ամեն դեպքում քննարկվող աշխատանքի համատեքստում, պետք է հաշվի առնել Կոսովոյի հարցով Եվրոպական Միության դիրքորոշումը, երբ փորձ է արվում Կոսովոյի առանձնահատկության ինչ որ հիմնավորում բերել: Դա ԵՄ արտաքին կապերի նախկին հանձնակատար Խավիեր Սոլանայի ձևակերպումն է. «Գոյություն ունի հարավսլավական բռնության և անհամաձայնության արդյունքում տրոհումների պատմական ենթատեքստ (նախապատմություն), ինչպես նաև մինչև 1999թ. տեղի ունեցած զանգվածային բռնություններ և ճնշումներ: Դա եզակի իրավիճակ է նաև ՄԱԿ-ի 1244 բանաձևի հիման վրա Կոսովոյում 1999 թվականից միջազգային վարչակազմի կառավարման առումով»[1]:

Նշենք, որ Կոսովոյի դեպքի բացառիկության մասին, Եվրոպայում և այլուր անկախական շարժումներին նոր լիցք չհաղորդելու համար, խոսել է նաև ՄԱԿ-ը, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպություններ ու պետություններ, սակայն հատկանշական է, որ Արդարադատության միջազգային դատարանը ընդհանրապես չի անդրադարձել և չի նշել Կոսովոյի անկախության իրավաչաթության բացառիկությունը:

---

[1] **Թորոսյան Տ.**, Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան 2012, էջ 267:

Ինչ վերաբերում է ղարաբաղյան հիմնահարցին առնչվող հարցերով ՀՀ-ԵՄ հարաբերությունների օրակարգային հարցերին, ապա այդպիսին կարող են հանդիսանալ ԵՄ ներկայացուցիչների՝ Արցախ մուտք գործելու համար ԵՄ կողմից ավելի սկզբունքային քաղաքականության որդեգրումը: Ներկայում, չնայած Եվրոպական միության, Հայաստանի ու Արցախի հանրապետությունների համաձայնությանը, այդ առաքելությունը խաթարվում է ադրբեջանական կողմի պատճառով՝ ի հակադրումն Եվրոպական Խորհրդարանի առաջարկությունների, Եվրոպական Հանձնաժողովի և Եվրոպական Միության Խորհրդի եզրակացությունների:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է երկկողմ հարաբերություններում շարունակաբար օրակարգում պահել Արցախում քաղաքացիական հասարակության լիակատար ձևավորմանը նպաստելու, երիտասարդության իրացման և կրթության ապահովման և այլ հումանիտար խնդիրներ, որոնք հակամարտության՝ մարդու իրավունքների վերաբերող կողմն են: Կարևոր խնդիր է նաև հասնել ԵՄ ինստիտուտների կամ դրանց կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների ներառմանը Արցախում օրենսդրաիրավական կառուցակարգերն ամրապնդելու համար, ինչի համար լավ հիմք կարող է հանդիսանալ Արցախի Հանրապետության միակողմանի միացումը միջազգային մի շարք կոնվենցիաների և փաստաթղթերի, որոնց թվին են դասվում «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», «Տնտեսական,սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը», «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիան», Ժնևի՝ «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին կոնվենցիան» և այլն:

Այսպիսով, ղարաբաղյան հիմնախնդիրը դիտարկելով ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման համատեքստում, պարզ է դառնում, որ դեռևս նախորդ դարի 80-ական թվականներից Եվրոպական Խորհրդարանը մշտապես ակնդետ ուշադրության կենտրոնում է պահել իրավիճակը և հանդես եկել օբյեկտիվ և փաստարկված դիրքորոշումներով: Այդ դիրքորոշումները հստակորեն վերաբերել են Ադրբեջանի կողմից Ղարաբաղի բնակչության նկատմամբ ագրեսիայի կիրառմանը, խաղաղ քաղաքացիական բնակչության նկատմամբ վայրագություններին, բռնի տեղահանություններին, հումանիտար ճգնաժամերին և այլ վայրագություններին: Եվրոպական Խորհրդարանը քանիցս քաղաքակրթական հակասության մեջ է դիտարկել մի կողմից Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում մյուս կողմից Ադրբեջանում տեղ գտած հետանկախական քաղաքական զարգացումները, իշխանությունների ձևավորումը, ժողովրդավարական կարգերի ամրապնդման հանձնառությունը և այլն:

Եվրոպական Խորհրդարանն ըստ էության նաև ընդունել է Ղարաբաղի ինքնորոշման և անկախության հռչակման փաստի ամբողջական համապատասխանությունը ինչպես միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերին, այնպես էլ ԽՍՀՄ ներքին օրենսդրությանը:

Եվրոպական Միությունը հետխորհրդային տարածքում առկա հակամարտությունների, այդ թվում ղարաբաղյան հակամարտությանը վերաբերում է տարբերակված մոտեցմամբ՝ հաշվի առնելով կոնկրետ հակամարտության ծագումնաբանական առանձնահատկությունները ու դրանով պայմանավորված կառավարման ու կարգավորման գործընթացը: Հիշյալ պնդման համար կարևոր հիմք է հանդիսանում Եվրոպական Միության Խորհրդարանի կողմից 2017 թվականի հուլիսի 5-ին, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի նիստին ընդառաջ, Եվրոպական Միության Խորհրդին ուղղված առաջարկությունները, որտեղ, պարբերություններից մեկում Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի կոնֆլիկտների պարագայում կարևորվում է տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը, իսկ ղարաբաղյան կոնֆլիկտի մասով հղում է արվում տարածքային ամբողջականությանը, ժողովուրդների իրավահավասարությանն ու ինքնորոշման իրավունքի ապահովմանն և ուժի կամ դրա սպառնալիքի կիրառման բացառմանը[1]:

Եվրոպական Միության էներգետիկ հետաքրքրությունը ադրբեջանական գազի ստացման առումով չեն կարող վերաճել քաղաքական այնպիսի գործոնի, որը կարող է ազդեցություն ունենալ ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ Եվրոպական Միության դիրքորոշման վրա:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում մեկնարկած բանակցային գործընթացի ընթացքում ղարաբաղյան հակամարտությանն առնչվող հիմնական փաստաթղթերում ԵՄ դիրքորոշումը ամբողջապես համընկնում է ՀՀ պաշտոնական դիրքորոշմանը, ինչը վերջնականապես ամրագրվեց ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրում»: Հետևապես, չնայած կոնֆլիկտի բնույթին, միջազգային հնչեղությանն ու բազմաշերտությանը՝ ղարաբաղյան հիմնախնդիրը ոչ միայն որևէ բացասական ազդեցություն չի ունեցել ՀՀ-ԵՄ հարաբերությունների դինամիկ զարգացման վրա, այլև՝ պայմանավորված հակամարտության նաև քաղաքակրթական բնույթով, որն արտահայտվում է հակամարտող կողմերի արժեքային ընկալումներով, կարող է հնարավորություն ընձեռնել ՀՀ-ԵՄ արժեքահեն հարաբերությունների հետագա զարգացման համար՝ ետնապատկերում ունենալով մի կողմից 90-ական թվականներին Եվրոպական Խորհրդարանի կողմից

---

[1] Recommendation to the Council on the 72nd Session of the United Nations General Assembly, 5 July 2017, Strasbourg, http://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2017-0304_EN.html.

ստարվող անկախական գործընթացը, մյուս կողմից՝ բանակցային գործընթացի ժամանակ ԵՄ հավասարակիշիռ դիրքորոշումը։

**Геворг Гукасян, "Карабахский конфликт в отношениях Армения-ЕС"** - В статье обсуждается влияние карабахского конфликта на отношения Армения - ЕС, политическое поведение, позиции ЕС и его отдельных институтов по этому вопросу. Поднятые вопросы рассматриваются в рамках вопросов, связанных с геополитикой и региональной энергетической политикой Южного Кавказа.

Был сделан вывод, что с 80-х годов прошлого века Европарламент всегда держал ситуацию в Нагорном Карабахе в центре внимания, выступал с объективными и обоснованными позициями. Эти позиции четко касались агрессии Азербайджана против народа Карабаха, зверств против гражданского населения, принудительных депортаций, гуманитарных кризисов и других злодеяний. Европейский парламент фактически признал полное соответствие факта самоопределения Карабаха и провозглашения независимости как основополагающим документом международного права, так и внутреннему законодательству СССР.

Европейский Союз рассматривает конфликты на постсоветском пространстве, включая карабахский конфликт, с дифференцированным подходом с учетом генеалогических особенностей конкретного конфликта и обусловленного им процесса управления и урегулирования. Карабахский конфликт как таковой не препятствовал развитию отношений Армения-ЕС.

**Gevorg Ghukasyan, "The conflict on Nagorno karabakh in the Armenia-EU relations"** - The article discusses the impact of the conflict on Nagorno Karabakh on the RA-EU relations, the political behavior and positions of the EU and its separate institutions on that issue as well. The raised raised are considered within the framework of geopolitics and regional energy policy in the South Caucasus.

It was concluded that since the 80s of the previous century, the European Parliament has always kept the situation in Nagorno Karabakh in the center of attention, with objective and substantiated positions. These positions clearly referred to Azerbaijan's aggression against the people of Karabakh, atrocities against the civilian population, forced deportations, humanitarian crises and etc.

The European Parliament has, recognized the full compliance of the fact of Karabakh's self-determination and declaration of independence with both the basic documents of international law and the internal legislation of the USSR.

The European Union observes the conflicts in the post-Soviet space with a differentiated approach, including the Karabakh conflict, taking into account

the origin of the concrete conflict and the management or settlement of it. The Karabakh conflict has not any negative effect on the development of EU-Armenia relations.

# ФЕНОМЕН ПОЛИТИЗАЦИИ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ

ИРИНА КАРАМЯН

**Ключевые слова** - информационно-коммуникационные технологии, социальные сети, Интернет.

В современном обществе развитие технологий информационно-коммуникационных технологий приводит к трансформации функционирования общества в целом и общественно - политических процессов в частности. Возникают новые формы коммуникации, которые влияют на восприятие информации, позволяя субъектам коммуникационного воздействия эффективно и в нужном направлении конструировать восприятие обществом политической реальности и формировать новые модели поведения.

Интернет, цифровое пространство - это для всех нас давно альтернативный мир, не менее, а часто и более важный чем реальность. На сегодняшний день представления многих пользователей интернет-пространства о реальном мире носят преимущественно искусственный характер. Мы имеем дело с виртуализацией реальности, внутри которой искусственно формируется отдельная реальность. Как писал в этой связи Ф. Уэбстер, «мы живем не в мире, о котором у нас есть какая-то информация, напротив, мы обитаем в мире, созданном информацией»[1]. Привычный общественный уклад претерпевает значительные трансформации под влиянием внедрения и развития информационно - коммуникационных технологий. Активизация общественно-политических процессов в интернет-пространстве тесно связана с нарастающей виртуализацией публичной политики, выходом на первый план в качестве инструмента политики искусственно создаваемых виртуальных образов, которые становятся одной из основных форм существования любой политической силы в публичном пространстве[2].

Прогресс в сфере технологий цифровой коммуникации обещал рост демократизации, развитие гражданских прав и свобод. По изначальной задумке простой человек стал бы более информированным и свободным в

---

[1] **Уэбстер Ф.** Теории информационного общества. М.: Аспект Пресс, 2004. 400 с.

[2] **Володенков С. В.** Роль информационно-коммуникационных технологий в современной политике // Науч. ежегодник Ин-та философии и права Урал. отд-ния Рос. акад. наук, 2018. Т. 18, вып. 2, с. 69–86.

выборе информации[1]. Однако информации стало больше, чем возможностей по ее потреблению. Как показывает современная практика, коммуникация в современном обществе выступает мощным инструментом идеологического контроля, управления и манипулирования массовым сознанием и, зачастую, обеспечения стабильности, устойчивости и легитимности действующей политической власти. Очевидно, что технологические изменения информационно-коммуникационных технологий в интернете влияют как на общество, его функционирование, так и на всю систему политического управления. Отсюда и появляются новые формы политической коммуникации.

Социальные сети начали завоевывать популярность в интернете во второй половине 1990-х годов с появлением американского портала Classmates.com (русский аналог-"Одноклассники.ру") и блог-сервиса LiveJournal, который позволил пользователям вести онлайн-дневники и комментировать записи друг друга. В 2003-2004 годах были запущены сети LinkedIn (для деловых контактов), MySpace (предоставляет возможность создания сообществ по интересам, персональных профилей, ведение блогов, размещение фото- и видеоконтента, прослушивание аудиотреков популярных исполнителей) и Facebook. В последующие годы были созданы десятки ставших популярными соцсетей, в частности Twitter, "ВКонтакте", YouTube, Instagram[2].

Социальные цети обладают главным преимуществом:если во многомиллионном потоке сообщений вокруг некоторых сообщений собирается критическая масса количественного внимания (цитирования, обсуждения), именно оно за несколько часов перерастает в качественный результат социально-политической жизни, которому невозможно противостоять традиционными административными механизмами[3].

Политические акторы все чаще используют общение в интернете, многие из них размещают свои профили в разных социальных сетях. Продвинутые аккаунты в соцсетях становятся ключевым ресурсом современного политика. И это не случайно, ведь регулярный мониторинг ленты новостей и комментариев, количества лайков или дизлайков, может наглядно показать, какие настроения царят в обществе, какие темы наиболее актуальны, на какие проблемные моменты в обществе обращают особое внимание. Социальные сети становятся способом эффективной коммуни-

---

[1] **Winner, Langdon.** 2003. “The Internet and Dreams of Democratic Renewal.” In The Civic Web: Online Politics and Democratic Values, eds. David Anderson & Michael Cornfield. Lanham, MD: Rowman and Littlefield, 167-183 https://scholar.lib.vt.edu/ejournals/SPT/v9n1/winner.html

[2] Политики в социальных сетях. Досье. https://tass.ru/info/1442493 (дата обращения 27.01.2021).

[3] **Козырева А. А.** Почему социальные сети являются инструментом политической власти? https://www.civisbook.ru/files/File/2015-Kozyreva.pdf

кации большинства политиков со своим электоратом, а зачастую и управления. Считается, что моду на "цифровую дипломатию" ввел в марте 2007 года Барак Обама, когда он, еще будучи сенатором, завел учетную запись в Twitter. Основной трибуной для цифровой дипломатии стал микроблог Твиттер (Twitter)[1]. В оборот вошел термин Twiplomacy[2]. Уже не в новинку «бегущая строка» на таких телеканалах, как BBC, CNN, Al Jazeera, RT и других значимых новостных сетях, начинающаяся или заканчивающаяся словами: «… как стало известно из Твиттера» (а сейчас уже «…со страницы Фейсбук»). Фактически наряду с теле и радиокомпаниями политические акторы превратились в эскпортёров новостей, причём от первого лица и с обратной связью. Эта связь дает возможность узнать свою аудиторию, почувствовать ее пульс, а в результае корректировать политический курс и усилить свои позиции в обществе. С легкой руки президента США Барака Обамы и Хиллари Клинтон на политическом Западе активизировалась социальная сеть Фейсбук (Facebook). Ознаменовался приход государств мира в новую коммуникационную среду. Сегодня расширение политического влияния государств через социальные сети происходит посредством «Твиттера» и «YouTube» до «Фейсбука» и «Телеграма». Значимость «Телеграма» особо возросла после событий в США 6 января 2021 года, когда толпа протестующих, поддерживающих попытки 45-го президента США Дональда Трампа отменить результат президентских выборов 2020 года, «штурмовала» (совершила несанкционированный властями вход) Капитолий США[3]. Видео и фотографии штурма Капитолия были размещены в социальных сетях во время событий репортёрами-участниками, членами Конгресса и их сотрудниками. Многие протестующие также использовали социальные сети, чтобы задокументировать свое проникновение в Капитолий и в офисы различных представителей[4].

---

[1] **Теленьга М. П.** Цифровая дипломатия (digital diplomacy) как дополнительный политический ресурс международных отношений.//Международные Отношения. Номер 1, 2014, стр.11-15.

[2] Twiplomacy - аббревиатура, состоящая из двух слов Twitter и Diplomacy. Явление, обозначающая видение дипломатических дел в Твиттере. Официальный сайт - www.twiplomacy.com Официальный аккаунт в Твиттере - www.twitter.com/twiplomacy (дата обращения 28.01.2021)

[3] **Azi Paybarah,** Brent Lewis. Stunning Images as a Mob Storms the U.S. Capitol (англ.). The New York Times (7 January 2021). Дата обращения: 27 января 2021.

[4] **Gabrielle Chung.** Nancy Pelosi's Office Occupied by Pro-Trump Rioters amid Chaos at U.S. Capitol (англ.). People (6 January 2021). Дата обращения: 27 января 2021.

Марк Цукерберг на 14 дней заблокировал аккаунт действующего Президента США Трампа, до дня инаугурации Байдена включительно[1].

8 января Twitter перманентно (бессрочно) заблокировал аккаунт Дональда Трампа и навсегда закрыл доступ к его учетной записи с 88 миллионами подписчиков. Также Твиттер заблокировал аккаунт штаба Трампа и пообещал блокировать любой используемый Трампом аккаунт сети, в том числе официальный президента США[2]. Аккаунты Трампа также заблокировали Facebook, Instagram, Twitch, Snapchat. Трамп в своем заявлении обвинил руководство Твиттера в ограничении свободы слова, сговоре и координации действий с демократами. Дональд Трамп создал Телеграм канал. За ним последовали лидеры Франции, Турции. 12 января 2021 Павел Дуров в своем Телеграм канале заявил, что за последние 72 часа к Телеграму присоединилось более 25 млн новых пользователей со всего мира. Лидер Telegram заявил, что мессенджер является крупнейшим убежищем для тех, кто ищет коммуникационную платформу, ориентированную на конфиденциальность и безопасность.[3] Фактически мы стали очевидцами проявления политической ангажированности и жесткой цензуры по искоренению инакомыслия со стороны крупнейших соцсетей. Цифровые гиганты способны самостоятельно и независимо от государств осуществлять процессы общественно-политического управления в собственных интересах. Это первая цифровая гражданская война в истории вообще.

Использование социальных сетей доказывает, что главная потребность современного мира - участие каждого в процессе принятия политических решений, при этом особенно важное значение имеет задействованность молодёжных элементов.

Именно на молодежь были ориентированы посты в соцсетях с агитацией в России - принять участие в назначенных на 23 января несанкционированных акциях в поддержку оппозиционера Алексея Навального. Пошла массовая мобилизация в соцсетях на участие в акциях протеста в оффлайн пространстве. Дети, студенты составляют большую часть аудитории того же TikTok. Впоследствии Роскомнадзор распространил сообщение о выявлении информации с призывами к несовершеннолетним участвовать в несанкционированных массовых акциях 23 января в поддержку

---

[1] Trump blocked from Twitter, Facebook, Snapchat after violence on Capitol Hill https://www.cnet.com/news/facebook-reddit-receive-low-marks-for-holocaust-denial-content/ (Дата обращения 28.01.2021)

[2] Twitter навсегда заблокировал аккаунт Дональда Трампа. Коммерсантъ https://www.kommersant.ru/doc/4639344 (Дата обращения 28.01.2021)

[3] В Telegram за 72 часа появились 25 млн новых пользователей.Подробности: https://regnum.ru/news/society/3161188.html (Дата обрашения 20.01.2021)

основателя Фонда борьбы с коррупцией (ФБК; включен Минюстом в реестр НКО-иноагентов) Алексея Навального на таких интернет-площадках, как TikTok, "ВКонтакте", Facebook, Twitter, Instagram и YouTube. Отмечается, что все эти шесть интернет-площадок будут оштрафованы за нарушение закона1. Яркий пример того, как простой пользователь при этом становится объектом политического управления. Насколько может быть сдвинут в ту или иную сторону баланс между правом людей на личное пространство, приватность их собственной жизни и правом на контроль за деятельностью граждан со стороны государства либо иных акторов, обладающих властными ресурсами и правом на легитимное насилие – ответ на этот вопрос во многом будет зависеть от конкретной политической практики в каждом конкретном государстве2.

Во время видео выступления на экономическом форуме Давос-2021 президент РФ В.В.Путин отправил довольно прогрессивный мессидж в сторону мировых кампаний, подняв вопрос о монополизме и конкуренции с государствами цифровых гигантов[3].

Он добавил, что цифровые гиганты подменяют легитимные демократические институты, по сути узурпировав или ограничив "естественное право человеку самому решать, как жить, что выбирать, какую позицию свободно высказывать"[4].

Фактически идет процесс формирования альтернативных политических идей, направленныех на подрыв стабильности действующих политических режимов. Государство, как классический доминирующий субъект политических коммуникаций в собственном информационном пространстве, теряет контроль в цифровом пространстве, ввиду разрушения традиционной монополии на использование каналов массовой коммуникации[5].

---

[1] Соцсети удалили до 50% сообщений с призывами к участию в незаконных акциях. https://rg.ru/2021/01/22/socseti-udalili-do-50-soobshchenij-s-prizyvami-k-uchastiiu-v-nezakonnyh-akciiah.html (Дата обрашения 28.01.2021).

[2] **Володенков С. В.** Digital-технологии в системе традиционных институтов власти: политический потенциал и современные вызовы // Вестник Московского государственного областного университета (электронный журнал). 2018. № 2. URL: www. evestnik-mgou.ru

[3] Выступление Владимира Путина на форуме в Давосе. Полный текст// https://www.vesti.ru/article/2515983 (дата обращения 28.01.2021)

[4] Путин заявил, что цифровые гиганты уже конкурируют с государством.// https://rg.ru/2021/01/27/putin-zaiavil-chto-cifrovye-giganty-uzhe-konkuriruiut-s-gosudarstvom.html (дата обращения 28.01.2021)

[5] **Володенков С. В.** Технологии интернет-коммуникации как инструмент дестабилизации национальных политических режимов// Проблема устойчивости политических систем современного мира: Материалы Международной научной конференции.2018, Изд-во Московского университета Москва, стр.221-233.

В этом контексте примечательно заявление МИД России о деятельности американских интернет-монополистов, в котором российская сторона предупредила об ответных шагах против масштабного распространения «фейков» о России американскими цифровыми платформами. В частности, «…допустимость произвольного и нетранспарентного цензурирования цифровыми платформами медиаконтента в отсутствие соответствующего решения суда ставит под вопрос предназначение государства как гаранта выполнения международных обязательств по обеспечению свободы выражения мнений теми субъектами, которые находятся под его юрисдикцией»[1].

Таким образом, мы столкнулись с новой реальностью социальных сетей, реальность лайков, которая в свою очередь порождает новою действительность, в которой всем нам предстоит жить, в совремемнном мире виртуальности. Средства массовой коммуникации могут выступать инструментом реального влияния на политическое пространство. Встыает серьезная задача управлять этой новой реальностью. Возникает необходимость создавать новые механизмы и инструменты управления сложившейся реальностью.

Политизация выражается активным «захватом» социума: радикализацией политической повестки, чрезмерной (порой искусственно создаваемой) активизацией политического участия, приданием политического звучания несколько важным вопросам общественной жизни[2]. Согласимся с мнением авторов исследования политизированных социальных социумов, что уход политического дискурса в социальные сети подразумевает не только «бегство абсентеистов от реальности», но и конструирование разнообразных сетевых политических идентичностей и субкультур с собственными ценностями и лидерами мнений. Проблема, на их взгляд, в том, что участники сетевых обществ конструируют смысловые характеристики реальных политических процессов, ситуаций и явлений, отличные от их объективного содержания. Происходит «перезагрузка» интерпретации политической реальности[3].

Facebook - самая популярная социальная сеть во всем мире с более чем 2,7 миллиардами активных пользователей в месяц. По данным на октябрь 2020 года, 98,3% активных пользователей заходили в свою учетную

---

[1] Заявление МИД России о деятельности американских интернет-монополистов// https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4543778 (дата обрашения 27.01.2021)

[2] **Зеленко Б. И.** Политизация как форма экспансии политического в его динамике // Социально-гуманитарные знания. 2018. № 3. С. 237-244. ISSN 0869-8120 РИНЦ: https://elibrary.ru/item.asp?id=35104699.

[3] **Федоренко С. Н., Лымарь Е. М., Федорченко Л. В.** Итоги глобального исследования политизации социальных сетей // Стратегическая стабильность. 2016, № 4(77), с. 69-73.

запись Facebook с мобильных устройств. Фактически, почти 81% аудитории Facebook во всем мире получают доступ к платформе только через мобильный телефон[1]. В Армении в последние годы Facebook пользуется наибольшей популярностью среди остальных соцсетей.[2] Согласно статистическим данным с сентября 2018[3] года по 1 января 2021 года[4] количество активных пользователей в Армении возросло на 550000, большая часть которых женского пола. По данным социальных опросов, в Армении социальные сети, в частности Facebook, являются главным источником информации.[5] Как отмечает Freedom House в своем отчете о свободе интернета 2020 года, с 2018 года отмечен прирост и активность армянских пользователей интернет пространства.[6] За этот период премьер-министр РА Пашинян вошел в Топ 10 политических лидеров с самой активной страницей на Facebook.[7] Сам премьер-министр неоднократно заявлял, что именно благодаря социальным сетям и активной вовлеченности молодежи был обеспечен успех массовых протестов весной 2018 года в Армении, которые привели его к власти[8]. Вместе с этим одновременно отмечается высокий уровень политизации социальных сетей в армянском обществе:раскол и поляризация общества посредством распространения дезинформации, обостре-

---

[1] Countries with the most Facebook users 2021 https://www.statista.com/statistics/268136/top-15-countries-based-on-number-of-facebook-users/.

[2] Медиаэксперт назвал наиболее популярные у армянских пользователей соцсети https://newsarmenia.am/news/society/mediaekspert-nazval-naibolee-populyarnye-u-armyanskik h-polzovateley-sotsseti-/?__cf_chl_jschl_tk__=0fe2ca300ca19e3ce07a0dbcfdcfff7408488107-1612550014-0-AfF2tJbzGs9jPAY3KPz_PL8aL_W5KqdFIMcjSbamW41O7YSF8_XRXeYhzaoq_OLLDErtdJHZArQzzUvNTr6b3qYveP0qGjPI3s50pGtRPatX4ywlu69Y-5bjRN501lvP85In8MGpPYuFkz3YvAJi4SvQaZmtqDjVHxMxQqOkgmHQc6rW4WuqHwm8IHAyoFSSCCf_LHRGuBjDDnBsS9E3oOLJrrB_eVsNSwC6w2veSymzKwcegX6csIxZWJzCk9ECHpDWHxKZol2jEb6hk-d6Ksz29bAtpeKuy_dc2GsGyKiM2BISGRPdKItKnX0tNCxWfrEAvrg0mvX4md6fRuK9YwzJ-lqTuo91vwuMLDeicUS101mAUr_0XGpM34ye54aRmtrUN7-9UBU1Panfi_bU8ZwfBFsevRistK6CoM_xfPil (дата обрашения 29.01.2021)

[3] Facebook users in Armenia https://napoleoncat.com/stats/facebook-users-in-armenia/2018/09

[4] Facebook users in Armenia https://napoleoncat.com/stats/facebook-users-in-armenia/2021/01

[5] Телевидение, соцсети или интернет. Откуда жители Армении предпочитают получать информацию – опрос. https://newsarmenia.am/news/society/televidenie-sotsseti-ili-internet-otkuda-zhiteli-armenii-predpochitayut-poluchat-informatsiyu-opros/ (дата обрашения 29.01. 2021)

[6] FREEDOM ON THE NET 2020 https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2020 (дата обрашения 01.02.2021)

[7] World Leaders with the Most Interactions https://twiplomacy.com/wp-content/uploads/2019/04/World-Leaders-on-Facebook-Study-2019.pdf (дата обрашения 01.02.2021)

[8] Social Media Key To Armenian Revolution, Says Pashinian https://www.azatutyun.am/a/29744146.html

ние ситуации по отдельно взятым вопросам. Дискурс Фейсбука[1] в армянском сегменте активно несет в себе отчетливую политизацию, которая генерируется, провоцируется и поддерживается сверху[2]. Особенно остро стал вопрос в военные дни, в результате чего профессиональные круги потребовали комплексного решения данной проблемы на государственном уровне.[3]

В сравнении, по последним данным в январе 2021 года в Российской Федерации было зафиксировано 60 150 000 пользователей Facebook, что составило 41,9% от всего населения. Большинство из них составляли женщины - 58,2%. Самой большой группой пользователей (20 000 000) стали люди в возрасте от 25 до 34 лет[4]. В российском сегменте также отчетливо прослеживается политизированный дискурс социальных сетей[5]. В одном случае это проявляется в качестве ответной реакции общества или отдельный его сегментов на решения власти. В другом, это конкретные действия по упрочнению действующих политических позиций и легитимации власти.

Социальные сети стремительно политизируются, вовлекая в виртуальную среду все большее количество простых людей. Социальные сети используются для мобилизации избирателей, помогают координировать неполитические и политические протесты, распространяют фейковые новости, которые зачастую поглощают правдивые источники информации.

Тем не менее, политическая роль Интернета и социальных сетей еще полностью не изучена. Основываясь на большие наборы данных о сообщениях в социальных сетях научному сообществу и частным исследователям необходимо изучить конкретные механизмы распространения (неверной) информации и координации в социальных сетях и лучше понять роль структуры социальных сетей в контексте реформирования управления политическими процессами.

**Իրինա Քարամյան, Սոցիալական ցանցերի քաղաքականացման երևույթը. համեմատական վերլուծություն** - Ժամանակակից հասարա-

[1] **Корниенко, А. В.** Дискурс «Фейсбука» в непрямом диалоге с властью / А. В. Корниенко // Политическая лингвистика. - 2019. - № 5 (77). - С. 46-56. - DOI 10.26170/pl19-05-04.

[2] Внутренняя политика Армении в 2019 году: основные тенденции. https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/41186 (дата обрашения 12.02.2021)

[3] В Армении на государственном уровне должен быть создан уполномоченный орган по работе с соцсетями https://arminfo.info/full_news.php?id=48416&lang=2 (дата обрашения 29.01. 2021).

[4] Facebook users in Russian Federation. https://napoleoncat.com/stats/facebook-users-in-russian_federation/2021/01

[5] Политизация современного российского общества и патриотизм граждан: контент-анализ социальных сетей. //Вестник Омского Университета. Серия: Исторические Науки Омский государственный университет им. Ф.М. Достоевского (Омск) 1 (9) 2016, стр.115-120.

կությունում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցնում է հասարակության և, մասնավորապես, հասարակական-քաղաքական գործընթացների գործունեության վերափոխմանը: Ի հայտ են գալիս հաղորդակցման նոր ձևեր, որոնք ազդում են տեղեկատվության ընկալման վրա, ինչը հնարավորություն է տալիս հաղորդակցության ազդեցության սուբյեկտներին արդյունավետ և ճիշտ ուղղությամբ կառուցել հասարակության կողմից քաղաքական իրականության ընկալումը և ձևավորել վարքի նոր մոդելներ:

**Irina Karamyan, The phenomenon of politicization social networks: a comparative analysis** - In modern society, the development of information and communication technologies leads to a transformation of the functioning of society in general and socio-political processes in particular. New forms of communication are emerging that affect the perception of information, allowing the subjects of communication influence effectively and in the right direction to construct the perception of political reality by society and form new models of behavior.

# ԵՐԵՔ ՆԱԽԱԳԱՀ՝ ԵՐԵՔ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿՈՒՀԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**Բանալի բառեր -** մշակութային քաղաքականություն, պետական-բյուրոկրատական մոդել, լիբերալ-ազատական մոդել, անցումային մշակութային քաղաքականություն, քաղաքական լիդերի տեսակներ, մշակութային կապիտալ, հետխորհրդային փոխակերպումներ։

Հայաստանի անկախացումից մինչև «Թավշյա» հեղափոխությունը (2018 թվական) ՀՀ պետական մշակութային քաղաքականության բնույթը հասկանալու համար կարևոր է հետևյալ երկու ասպեկտների դիտարկումը՝ ա. քաղաքական առաջնորդի դերակատարությունը և բ. մտավորականների և իշխող քաղաքական վերնախավի միջև եղած փոխհարաբերությունների բնույթը[1]։ Վերոնշյալի հիման վրա մեր կողմից առանձնացվել է ՀՀ մշակութային քաղաքականության հետխորհրդային զարգացումների երեք փուլ։ Դրանք են՝

1. 1991-1998 թվականներ, անցումային շրջանի մշակութային քաղաքականություն, լիբերալ-ազատական մոդելի ձևավորման փորձեր։

2.. 1998-2008 թվականներ, մշակութային քաղաքականության կայունացման շրջան, բյուրոկրատական համակարգի վերականգնման փորձեր։

3. 2008-2018 թվականներ, մշակութային քաղաքականության խառը մոդելի ձևավորում, պետական բյուրոկրատական և լիբերալ-ազատական մոդելների համադրում, արևմտյան փորձի տեղայնացում։

## Առաջին փուլ. 1991-1998 թվականներ, անցումային շրջանի մշակութային քաղաքականություն, լիբերալ-ազատական մոդելի ձևավորման փորձեր

Հայաստանի երրորդ հանրապետությունը ձևավորվեց 1991 թվականին՝ հիմքում ունենալով Հայաստանի առաջին երկու հանրապետությունների (Հայաստանի առաջին հանրապետություն՝ 1918-1920 թվականներ և Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետություն՝ 1920-1991 թվականներ) կուտակած փորձը, մշակույթի ոլորտի ձեռքբերումները և բացթողումները։ Նորանկախ Հայաստանում առաջին մի քանի տարիների ընթացքում կիրառվում էին Խորհրդային Հայաստանի օրենքներն ու սահմանադրական դրույթները։ Հին օրենքների կիրառությունը և հասա-

[1] **Bennett T.,** Intellectuals, Culture, Policy: The Technical, the Practical and the Critical, Pavis Papers in Social and Cultural Research (Milton Keynes: Faculty of Social Sciences, The Open University), no. 2, 2000.

ռակարգային փոփոխությունները, քաղաքական նոր գաղափարախոսությունը, ամբողջատիրական համակարգից անցումը դեմոկրատական համակարգի, ազգային գաղափարախոսության բացակայությունը ստեղծեցին հակասություններ, որոնց լուծման համար անհարժեշտ էր ձևավորել նոր սահմանադրություն և պետական համակարգ: Անկախության առաջին տասնամյակում նախկին և նոր համակարգերի հակասությունները և իրարամերժությունն ակնհայտ էր: Խորհրդային կառույցներն իներցիայի ուժով դեռ շարունակում էին գործել, պետական համակարգում, թեև կատարվել էին փոփոխություններ, սակայն գործնական դաշտում խորհրդային լծակները և մեխանիզմները շարունակում էին մնալ դոմինանտ:

Նորանկախ Հայաստանում քաղաքական լիդերը՝ ի դեմս Լևոն Տեր--Պետրոսյանի, ով իր մեջ միավորում էր արդեն կայացած գիտնականին և քաղաքական գործչին[1], սկզբից ևեթ որդեգրեց մշակութային քաղաքականության լիբերալ-ազատական մոդելը[2]՝ փորձելով խարխլել խորհրդային շրջանում հաստատված և արմատացած սոցիալիստական մշակութային քաղաքականության ավանդույթը: Իր ելույթներից մեկում[3], որտեղ Լևոն Տեր-Պետրոսյանը խոսում է «Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացման անհրաժեշտության մասին» նշում է. «Հայաստանը պետք է դառնա Խորհրդային Միության առաջին հանրապետությունը, որտեղ պետք է հաստատվի խոսքի, մամուլի, խղճի լիակատար ազատություն»[4]: Դեմոկրատական և ազգային արժեքների համադ-

[1] Հատկանշական է, որ Լևոն Տեր-Պետրսյանի կայացումը թե որպես գիտնական, թե որպես քաղաքականության մեջ նոր քայլեր կատարող, տեղի է ունեցել խորհրդային 1960-70-ական թվականներին: Նա ազգային զարթոնքի սերունդն է, առաջին քաղաքական ակտիվությունը ցուցաբերել է 1965 թվականին Հայոց Ցեղասպանությանը վերաբերող ցույցերի ժամանակ՝ լինելով դեռևս համալսարանական ուսանող և համալսարանական ուսանողների կազմակերպիչ: 1960-ականներին սկսված «Ազգային զարթոնքը» և ազգային ալիքը ձևավորեց այն սերունդը, որը պետք է 1990-ականներին փորձեր խորհրդային սկզբունքները փոխել, կոտրել, նոր արժեքներ ձևավորել:

[2] Լիբերալ-ազատական մոդելի բնորոշ գծերն են ապակենտրոնացված քաղաքականությունը, մշակույթի դեմոկրատացումը, շուկայական հարաբերությունների զարգացումը և դրանում մշակույթի իրացման նոր հնարավորությունների ձևավորումը, մշակույթի տնտեսականացումը և այլն, առավել մանրամասն տե՛ս՝ Драгичевич-Шешич М., Культурная политика в переходном обществе: фрагменты политологического и культурологического анализа. // Панорама культурной жизни стран СНГ и Балтии. М., Издательство РГБ, 1999, с. 26-31.

[3] *Ելույթ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում 1989թ. դեկտեմբերի 4-ին. այս վերնագրով տարածվել է որպես թռուցիկ, հետագայում հրատարակվել է՝ Դավթյան Վ., Առասպելի և իրականի սահմանագծին, Լևոն Տեր-Պետրոսյան. քաղաքացին և քաղաքագետը, Եր. 1996:*

[4] *Դավթյան Վ., Առասպելի և իրականի սահմանագծին, Լևոն Տեր-Պետրոսյան. Քաղաքացին և քաղաքագետը, Եր. 1996, էջ 102–106:*

րումը, մշակութային ստեղծարար ազատությունը սահմանվեց որպես նորանկախ Հայաստանի առաջնահերթություն: «Ազատության» կոնցեպտի մասին իր պատկերացումները Լևոն Տեր-Պետրոսյանը ձևավորել էր դեռևս խորհրդային ազգային զարթոնքի տարիներին:

Նորանկախ Հայաստանի մշակութային քաղաքականությունը խարսխված էր 1960-ականների խրուշչովյան ձնհալի ազատականացման գաղափարների վրա: Դա արտահայտվում է Լ. Տեր-Պետրոսյանի մի շարք զեկույցներում, ելույթներում: Օրինակ, այն հարցին, թե որ սկզբունքներն են գերակշռում պետական քաղաքականության մեջ՝ ազգայի՞ն, թե՞ համամարդկային, Լևոն Տեր Պտրոսյանը պատասխանում է. «Հայոց համազգային շարժումն (ՀՀՇ) իր էությամբ ազգային-ժողովրդավարական է: Եվ այդ սկզբունքը մեզ համար անբաժանելի է, քանի որ ազգայինն առանց ժողովրդավարության տանում է ազգայնամոլության, իսկ մերկ ժողովրդավարությունը՝ աշխարհաքաղաքացիության (կոսմոպոլիտիզմի): Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը մեզ համար ընդունելի չեն: Մեր նպատակը իրավական պետության և ժողովրդավարական հասարակության ստեղծումն է»[1]: Խոսելով ժողովրդավարական հասարակության մասին՝ Լևոն Տեր-Պետրոսյանը առաջ է քաշում իրավական պետության կառուցման անհրաժեշտության գաղափարը: Մենք հակված ենք համարել, որ Լ. Տեր-Պետրոսյանը վեբերյան խարիզմատիկ լիդերի հատկանիշների կրողն էր, ով 1990-ականների կեսերից փորձում էր ռացիոնալ հիմքեր ստեղծել պետական կառավարման համար՝ ի դեմս կառուցվածքային փոփոխությունների և օրենսդրական դաշտի կարգավորումների:

1995-1998 թվականների ընթացքում նախարարության հիմնական խնդիրները սահմանվել են հետևյալ կերպ[2]՝

1. Մշակույթի, մշակութային արժեքների և հուշարձանների պահպանության, արվեստի, սպորտի և երիտասարդության ոլորտներում ՀՀ միասնական քաղաքականության իրականացումը և դրա կենսագործման նկատմամբ վերհսկողությունը:

2. Հայ երաժշտական, թատերական արվեստի ոլորտների գործունեությունը բարելավող միջոցառումների մշակումը:

3. Համակարգի ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեության համար տեղեկատվական և իրահանգչական նյութերի ապահովումը:

---

[1] «Հայաստանի Հանրապետություն», 6 ապրիլի, 1991 թ. թարգմանություն ռուսերենից: «Արգումենտի ի Ֆակտի»("Аргументы и Факты"), հ. 14, 1991 թ.: Հարցազրույցը՝ Վ. Սավիչևի: Հրատարակված՝ «Լևոն Տեր-Պետրոսյան. «Քաղաքական գործիչ չեն ծնվում» վերնագրով:
[2] ՀԱԱ, ֆ. 80. ց. 23:

4. Իրականացնում է պետական թանգարանների և գրադարանների կառավարումը, կազմակերպում է պատմամշակութային արժեքների պահպանումը, վերականգնումը և օգտագործումը

Սույն սկզբունքները, որոնք սահմանվել էին մշակույթի նախարարության կողմից՝ ցուցում են, որ անկախության առաջին տարիներին մշակութային քաղաքականությունը միտված է եղել նվազեցնելու պետության միջամտությունը, ինչը դրսևորվում էր հետևյալում:

Ա. Երկրի իշխանությունների կողմից որդեգրված լիբերալ-ազատական քաղաքականությունը, որը տարածվում էր նաև մշակույթի ոլորտի վրա:

Բ. Քաղաքական լիդերի՝ մշակութային և սիմվոլիկ կապիտալը: Լևոն Տեր-Պետրոսյանը լինելով գիտնական, բանասեր, և պատմաբան, քաջածանոթ լինելով հայ ժողովրդի պատմության կարևոր իրադարձություններին՝ իշխանության եկավ արդեն իսկ ձևավորված քաղաքական և իրավական պետության մասին պատկերացումներով, որոնք իր իշխանության տարիներին փորձում էր իրականություն դարձնել: Ըստ նրա՝ Հայաստանի նորանկախ պետությունը կարող էր սոցիալ-տնտեսական զարգացում ապրել միայն ղարաբաղյան հարցի լուծումից հետո, որովհետև, ըստ նրա, շրջափակված լինելը խիստ խանգարում էր Հայաստանի առաջընթացին: Քննելով Լ. Տեր - Պետրոսյանի ելույթները, զեկույցները, հարցազրույցները, նրա հրատարակած գրքերը, կարող ենք եզրակացնել, որ նա իր սեփական պատկերացումները մշակույթի վերաբերյալ պրոյեկտում էր մշակույթի կառավարման ոլորտի վրա: Նա գտնում էր, որ մշակույթը ինքնաբավ ոլորտ է, և պետությունը պետք է հնարավորինս նվազագույն միջամտություն ցուցաբերի մշակույթի կառավարման մեջ: 2005 թվականին հրատարակած «Խաչակիրները և հայերը»[1] գրքի առաջին հատորում նա հստակ արտահայտում է իր դիրքորոշումը մշակույթի վերաբերյալ. նա նշում է. «չձանրանալ Կիլիկայի բարձրակարգ մշակույթի վրա, ինչը հանրածանոթ իրողություն է» (ընդգծումը Վարդան Ազատյանի)[2]: Ըստ նրա՝ մշակույթը համարվում է ինքնին ակնհայտ, անթաքույց մի երևույթ, ինչի մասին պետք չի խոսել կամ ցույց տալ, այն քննության նյութ չէ: Լինելով մշակույթի կրող, մշակութային և գիտական գործիչ՝ ՀՀ առաջին նախագահը կարծեք պետական քաղաքականության մեջ անտեսում է մշակութային քաղաքականություն մշակելու և իրականացնելու անհրաժեշտությունը՝ թողնելով այն ինքնահոսի: Միգուցե դա է պատճառը, որ նրա նախընտրական ծրագրում բացակայում էր մշակույթ բառը: Նա չի օգտագոր-

---

[1] **Տեր-Պետրոսյան Լ.,** Խաչակիրները և հայերը, հ. 1,, Երևան, 2005, էջ 15:

[2] **Ազատյան Վ.,** Հայ քաղաքական ուտոպիաները, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ // https://www.youtube.com/watch?v=Hq_S267pC90

ծում մշակույթ, մշակութային քաղաքականություն եզրերը նաև Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնամուտի ելույթի ժամանակ ՀՀ Գերագույն խորհրդի հատուկ նիստում[1], որտեղ ներկայացնում է պետական քաղաքականության ուղղությունները և պետական առաջնահերթությունները: «…Մենք ի վիճակի ենք ազդելու իրադարձությունների զարգացման վրա և հանրապետության վերափոխումը տանելու մեր ցանկացած ուղղությամբ: Իսկ այդ ուղղությունը միակն է՝ դեպի անկախ, իրավական պետություն, դեպի բազմակուսակցական, ժողովրդավարական հասարակություն, դեպի ազատ շուկայական տնտեսություն: Այլընտրանք չկա, այլընտրանքը հավասարազոր է կործանման և նորանոր արհավիրքների»[2]: Այնուհետև շարունակում է իր ելույթը՝ խոսելով պետական շինարարության և ներքին քաղաքականության, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականության բնագավառներում իրավիճակի և հետագա զարգացման քայլերի մասին: Երկար ելույթում ոչ մի խոսք չկա մշակույթի, մշակութային գործընթացների կամ մշակութային ռազմավարության մասին, ինչը թույլ է տալիս հիմնավորել մեր այն պնդումը, որ Հայաստանի նորընտիր իշխանությունները որդեգրել էին մշակութային քաղաքականության լիբերալ-ազատական մոդելը:

Գ. ԶԼՄ-ների ընձեռված ազատությունը: Ուշ խորհրդային շրջանում մեդիայի հանդեպ ձևավորված թերահավատ վերաբերմունքը շարունակվեց նաև Հայաստանի անկախացումից հետո: Մարդիկ չէին վստահում հեռուստատեսային լրատվությանը, հետևաբար 1990-ական թվականներին մեդիան որպես քաղաքական գործիք սպառված էր:

4. Մշակութային քաղաքականության ապակենտրոնացումը: ՀՀ անկախացումից հետո սկսված գործընթացները (համատարած սեփականաշնորհումը, մասնավոր սեփականության ձևավորումը, լիբերալ-ազատական մոդելի ձևավորումը և կիրառումը) հիմք հանդիսացան մշակութային քաղաքականության ապակենտրոնացման համար: Մշակութային քաղաքականության ապակենտրոնացումը ենթադրում է մշակութային ինստիտուտների, մշակույթի կառավարման համակարգի, որոշումներ ընդունելու իրավասության ապակենտրոնացում և մշակութային գործընթացների, մշակութային ծրագրերի և գործունեության ապակենտրոնացում[3]: Մշակութային քաղաքականության ապակենտրոնացման առաջին փուլը Հայաստանում սկիզբ առավ տեղական ինքնակառավարման հա-

[1] **Տեր-Պետրոսյան Լ.,** Ես հավատում եմ մեր ժողովրդի իմաստությանն ու ստեղծարար ոգուն, Հայաստանի Հանրապետություն, 12 նոյեմբերի, 1991 թ.:

[2] Նույն տեղում:

[3] **Kawashima N.,** Planning for equality? Decentralisaztion in Cultural Policy, University of Warwick, edited by Olover Bennet and Jeremy Ahearne, 2004, p. 11-13.

մակարգի ներդրմամբ՝ անկախության առաջին տարիներին: 1996 թվականին ընդունվեց տեղական ինքնակառավարման մասին ՀՀ առաջին օրենքը[1]: Սույն օրենքով սահմանվում էր տեղական ինքնակառավարման հասկացությունը, սկզբունքները, մարմինները, նրանց լիազորությունները, կարգավորում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները[2]: Օրենքի 34-րդ հոդվածը սահմանում էր համայնքի ղեկավարի գործունեությունը կրթության և մշակույթի բնագավառում:

«...1. կազմակերպում է համայնքային ենթակայության մասնագիտացված դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, գրադարանների, կրթական և մշակութային այլ ձեռնարկությունների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց կառուցման, շահագործման և նորոգման աշխատանքները:

Սույն բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է պետության կողմից պատվիրակված հետևյալ լիազորությունները՝

• կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ.

• աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը»[3]:

Համաձայն այս օրենքի՝ ապակենտրոնացվում է մշակույթի նախարարության գործունեությունը՝ մշակութային քաղաքականության մեջ ներգրավելով համայնքները: Այսուհետ համայնքն է դառնում տարածքային (ռեգիոնալ) մշակութային քաղաքականություն մշակողը և իրականացնողը, սակայն պետք է նկատի ունենալ, որ ռեգիոնալ մշակութային քաղաքականության նպատակները և խնդիրները պետք է չհակասեին ՀՀ մշակութային քաղաքականության պետական հայեցակարգին: Սույն օրենքով համայնքի սեփականությունն են դառնում մշակույթի տները, գրադարանները և այն բոլոր մշակութային կառույցները, հուշարձանները, որոնք գտնվում էին տվյալ համայնքի տարածքում[4]: Սա արվեց առանց ռեսուրսների, կոնկրետ քայլերի ու ծրագրերի ներգրավման, ինչը նշանակում էր ուղղակի անտերության մատնել: Սա է պատճառը, որ բազմաթիվ համայնքներ պարզապես չկարողանալով թե նյութապես, թե կադրային ռեսուրսների բացակայության պատճառով, ապահովել այդ կառույցների գործունեությունը, ստիպված եղան վաճառել կամ անգործության մատնել

[1] ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» // https://www.arlis.am/documentview.aspx?docid=43416, 1996:

[2] Նույն տեղում:

[3] Հոդված 34, ՀՀ օրենքը Տեղական ինքնակառավարման մասին // https://www.arlis.am/documentview.aspx?docid=43416, 1996:

[4] Հոդված 39. ՀՀ օրենքը Տեղական ինքնակառավարման մասին // https://www.arlis.am/documentview.aspx?docid=43416, 1996:

դրանց: Հատկապես մշակույթի տները, գյուղական ակումբները, որոնք ժամանակին համայնքի մշակութային կենտրոնն էին և ապահովում էին մշակութային ակտիվ գործունեությունը գյուղերում և շրջաններում, այժմ մատնվեցին անգործության: Հատկապես 1990-ական թվականներին այս գործընթացները ակնհայտ էին, չկար նախկին վերահսկողությունը կենտրոնից, չկային նախկին ռեսուրսները: Իրավիճակը քիչ թե շատ փոխվեց միայն 2000-ական թվականներին, որի պատճառները և գործընթացը ներկայացված է հաջորդիվ:

Մշակութային քաղաքականության առաջին փուլը կարելի է բնորոշել հետևյալ կետերով՝

1. Մշակույթի ընկալումը, որը ձևավորվել էր խորհրդային տարիներին և ժառանգվել էր Հայաստանի երրորդ հանրապետության կողմից, այդպես էլ չփոխվեց: Մշակույթը շարունակում էր ընկալվել որպես մի ոլորտ, որը պետության անմիջական խնամքի տակ պետք է գտնվի, որ պետությունն է միակ պատասխանատուն մշակույթի պահպանման և զարգացման համար: Որքան էլ, որ օրենքի շրջանակներում մշակույթի զարգացումը սահմանվում էր որպես համայնքի խնդիր, միևնույն է համայնքային հոգածության և պահպանման գիտակցությունը չձևավորվեց:

2. Մշակութային գործիչների պատկերացումները մշակույթ-պետություն փոխհարաբերությունների բնույթի մասին, շուկայական տնտեսությանը պատրաստ չլինելու, պետական ֆինանսավորումը որպես միակ աղբյուր դիտարկելու ընկալումը մնաց կայուն:

3. Մշակույթի սեգմենտային բնույթը, որը կրկին խորհրդային ժառանգության արդյունք էր և իրապես վերաձևակերպվելու և վերաիմաստավորվելու լուրջ խնդրի առաջ էր կանգնած: Օրինակ, ընդհուպ վերջերս, մինչև Մշակույթի նախարարության և Կրթության, Գիտության նախարարության միավորումը, Մշակույթի նախարարության պաշտոնական կայքում մշակույթը ներկայացված էր որպես արվեստի ճյուղերի համալիր՝ թանգարաններ, գրադարաններ, կերպարվեստ, երաժշտություն և այլն:

4. Բացակայում էր մշակութային քաղաքականության հայեցակարգը, չկար ազգային-պետական գաղափարախոսություն, ինչը թույլ կտար համապատասխան այդ գաղափարախոսության և տեսլականի մշակել քաղաքականություն՝ հստակ ուղղություններով, թեկուզև այն միտված լիներ մշակույթի ազատականացմանը, ժողովրդավարացմանը, մշակույթի արժեքային փոխակերպումներին: Լևոն Տեր-Պետրոսյանի իշխանության տարիներին մշակութային քաղաքականությունը պարզապես շարունակում էր իներցիայի ուժով միայն ավանդական մշակութային ինստիտուտների պահպանումը, ստեղծված սուղ պայմաններում դրանց գոյատևումը:

Հետևաբար խոսել մշակութային քաղաքականության կոնցեպտուալ փոփոխությունների մասին բավականին խնդրահարույց է:

**Երկրորդ փուլ. 1998-2008 թվականներ, մշակութային քաղաքականության կայունացման շրջան, բյուրոկրատական համակարգի վերականգնման փորձեր**

Հայաստանի հանրապետության մշակութային քաղաքականության երկրորդ փուլն ընդգրկում է 1998-2008 թվականները: 1998 թվականին ձևավորվում է նոր իշխանություն՝ երկրի նախագահ՝ Ռ. Քոչարյանի գլխավորությամբ: Մշակութային քաղաքականության ոլորտում Լ. Տեր Պետրոսյանի ազատականացման քաղաքականության փոխարեն սկսվում է հիերարխիկ պետական-բյուրոկրատական մոդելի[1] ձևավորումը, որտեղ պետական և հասարակական բոլոր ոլորտները, այդ թվում նաև մշակույթը, գտնվում են շղթայական կապի մեջ և փոխազդում են միմյանց վրա: Մշակույթը և նրա ուղղությունները անցնում են պետական վերահսկողության տակ: Վերնշյալի վառ ապացույցն այն է, որ բոլոր ոլորտների ղեկավար անձինք նշանակվում են իշխող կուսակցությունից: Մշակույթի ոլորտը զրկվում է ազատ որոշումներ ընդունելու հնարավորությունից: Քաղաքական էլիտայի նոր ներկայացուցիչները՝ ի դեմս Ռ. Քոչարյանի, փորձում են շահարկել մշակույթը՝ լեգիտիմացնելու իրենց քաղաքական որշումները և հրամանները:

Մշակութային քաղաքականության պետական-բյուրոկրատական մոդելի վերահաստատումը, ամբողջատիրական համակարգի վերականգնման փորձերը ամբողջովին փոխեցին 1991-1998 թվականների ՀՀ պետական մշակութային քաղաքականության հունը՝ մշակելով նոր քաղաքականություն, որը միտված էր վերականգնել խորհրդային ժամանակների հատկապես ստալինյան շրջանին բնորոշ մշակույթը վերահսկող մեխանիզմները և գործիքները:

Մշակութային գործիչների պետական հովանավորչությունը ապահովում էր փոխադարձ լոյալությունը քաղաքական և մշակութային էլիտաների միջև: Այսպես օրինակ՝ համերգների, տեսահոլովակների, նկարների և մշակութային արտադրանքի իրացման դիմաց, մշակութային գործիչները ակտիվորեն մասնակցում էին իշխանությունների քարոզարշավներին, քաղաքական հնազանդություն էին ցուցաբերում և պատրաստա-

[1] Մշակութային քաղաքականության պետական-բյուրոկրատական մոդելի բնորոշիչ հատկանիշներն են կենտրոնցվածությունը, պետական անմիջական վերահսկողությունը և ֆինանսավորումը, մշակույթի ավանդական ինստիտուտների գերակայությունը և այլն, առավել մանրամասն տես՝ Матвеенко В., Модели государственной культурнойполитики в современном мире, Вопросы Культурологии, М., 2009, стр. 52-55.

կամ էին իրենց աջակցությունը արտահայտել քաղաքական ցանկացած ո-րոշման համար։

Հետաքրքրական է այն, որ այս լոյալությունը պահպանվեց իշխա-նությունների փոխվելուց հետո ևս։ Դա արտահայտվեց 2019 թվականի դեկտեմբերին մշակութային գործիչների կազմակերպած ստորագրահա-վաքով, որտեղ նրանք դիմում էին ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի խափանման միջոցը փոխելու կոչով։ Լրատվական կայքերը (գրեթե բոլոր կայքերը անդրադարձան՝ անկախ դրմադիր կամ ընդդիմադիր կողմ լինե-լուց) ակտիվորեն սկսեցին շրջանառել և տարածել այդ բաց նամակը, որը ստորագրել էին շուրջ 60 մշակութային գործիչ[1]։ Ի պատասխան այս նա-մակին Ռ. Քոչարյանը շնորհակալական ուղերձ հղեց մշակութային գոր-ծիչներին, ովքեր ստորագրել էին վերոնշյալ նամակի մեջ՝ մասնավորա-պես նշելով՝ «Տաղանդավոր, հայտնի և հեղինակավոր մարդկանց այսպի-սի խմբի ուշադրությունը և հոգածությունը պատիվ կբերի ցանկացած քա-ղաքական և պետական գործչի։ Ձեզանից շատերին ճանաչում եմ ան-ձամբ, մյուսների հետ ակնկալում եմ ծանոթանալ առաջին իսկ հնարավո-րության դեպքում»[2]։ Երկուստեք փոխշահավետ համագործակցությունը, որը ենթադրում էր մշակույթի գործիչների գործունեության հովանավոր-չություն իշխանությունների կողմից և մշակույթի գործիչների քաղաքա-կան լոյալություն, քաղաքական հպատակություն իշխանությունների գործունեությանը, մշակույթի օգտագործումը քաղաքական շահերից ել-նելով կազմում է ամբողջատիրական համակարգի հիմքը։ Ահա, թե ինչու մենք ենթադրում ենք, որ Ռ. Քոչարյանի իշխանությունը փորձում էր վե-րականգնել ամբողջատիրական համակարգը՝ ինչը արտահայտվում էր նաև ռուսահպատակ գործունեությամբ։

Մշակույթի կառավարման կառուցվածքային փոփոխություններն արտահայտում էին նոր իշխանությունների ամբողջատիրական համա-կարգի ստեղծման ձգտումը։ Համաձայն 2000 թվականի հաստիքային ցու-ցակի մշակույթի նախարարությունը ենթարկվել էր մի շարք կառուցված-քային փոփոխությունների, որոնց մեջ ամենաէականը կարծում ենք «Տա-րածքային քաղաքականության և ծրագրավորման» և «Կրթության և գի-տության քաղաքականության» վարչությունների ստեղծումն էր[3]։ Կարևոր է ընդգծել, որ 2003 թվականին մշակույթի նախարարությունում գործել է «Մշակութային քաղաքականության» վարչությունը, և «Պետական ծրագ-

[1] **Մայիլյան Ն.**, Մշակույթի շուրջ 60 գործիչներ հայտարարություն են տարածել՝ կոչ անելով ազատել Ռոբերտ Քոչարյանին, https://hy.armradio.am, 19,12,2019, 12:01։

[2] Ռոբերտ Քոչարյանի ուղերձը մշակույթի գործիչներին // https://www.robertkocharyan.am/news/rhobert-k-och-aryani-owgherdze-mshakowyt-i-gortsich-nerin, 24.12.2019։

[3] Նույն տեղում։

րերի, մշակութային համագործակցության, կրթության և գիտության» բաժինը[1]: Կառուցվածքային փոփոխությունները կապված են նաև օրենսդրական դաշտի և մշակութային քաղաքականության մյուս գործիքների մշակման գործընթացի հետ:

ՀՀ մշակութային քաղաքականության երկրորդ փուլը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով.

- Երկրի քաղաքական և տնտեսական հարաբերական կայունացում, ֆինանսական ներդրումներ, մշակութային քաղաքականության ֆինանսավորման նոր աղբյուրների ներգրավվում՝ մասնավորապես նվիրատվությունների, հանգանակությունների միջոցով[2]: Մշակույթի ոլորտը, ի թիվս այլ ոլորտների, սկսում է կայունանալ, հստակ ուրվածգվում են մշակութային քաղաքականության հիմնաձևերը: Կարգավորվում է մշակույթի օրենսդրական դաշտը: Մշակույթի ոլորտի ֆինանսավորումը, բացի պետական բյուջեի տարեկան հատկացումներից, սկսում է կատարվել նաև նվիրատվությունների և դոտացիաների, տարբեր հիմնադրամների աջակցության միջոցով: Օրինակ, այդ հիմնադրամներից հատկանշական է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամը, որը ստեղծվեց 2004 թվականին[3]: Հիմնադրամի կանոնադրության մեջ սահմանվում է գործունեության նպատակը, որն է՝ մշակույթի պահպանման տարածման ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը և մշակույթի գործիչների սոցիալական պաշտպանության իրականացումը[4]: «Մեկ ազգ, մեկ մշակույթի» հիմնադրամի գործադիր տնօրեն է նշանակվում Թամարա Պողոսյանը[5]: Զարկ տրվեց փառատոնային մշակույթի զարգացմանը: «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համանուն փառատոնը սկսեց անցկացվել 2004 թվականից: Փառատոնի կազմակերպիչներն էին ՀՀ մշակույթի և երիտասարդության նախարարությունը, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամը՝ ՀՀ Արտաքին գործերի նախարարության Սփյուռքի հետ կապերի գոր-

---

[1] ՀԱԱ, ֆ. 80, ց. 31:

[2] Գիտական գրականության մեջ ընդունված է համարել, որ դոտացիաներով սնվող մշակութային քաղաքականությունը հիմնականում պետական-բյուրոկրատական մոդելին է հարում՝ ի տարբերություն ներդրումային (ինվեստիցիոն) քաղաքականությանը, որը բնորոշ է մշակութային քաղաքականության շուկայական մոդելին (Ա. Վիզանդ):

[3] ՀՀ կառավարության որոշում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ հիմնադրելու մասին, մայիսի 3, 2004 // http://www.irtek.am/views/act.aspx?aid=24971

[4] ՀՀ կառավարության որոշում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ հիմնադրելու մասին, մայիսի 3, 2004 // http://www.irtek.am/views/act.aspx?aid=24971

[5] ՀՀ կառավարության որոշում Թ. Պողոսյանին «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն նշանակելու մասին, մայիսի 17, 2004 // https://www.irtek.am/views/act.aspx?aid=25382

ծակալության, Ռոբերտ Քոչարյանի աշխատակազմի աջակցությամբ[1]: Փառատոնային մշակույթի զարգացումը հիմք դարձավ զբոսաշրջության զարգացման, մշակութային արժեքների տարածման և հանրահռչակման համար:

Մշակութային քաղաքականության վրա մեծապես ազդեց «Լինսի» հիմնադրամի հիմնումը Հայաստանում՝ բարերար Քըրք Քըրքորյանի նախաձեռնությամբ: «Լինսի» հիմնադրամի հատկացրած գումարների մեծ մասը թեև ուղղվեց ճանապարհաշինարարությանը, բայց պետք է նշել, որ ձևավորվեց «Մշակույթ» ծրագիրը, որը 2001-2003 թվականների ընթացքում 18 մլն դոլար ներդրեց մշակութային կառույցների վերանորոգման աշխատանքների մեջ: Այս հիմնդրամի ջանքերով վերանորոգվեցին 34 մշակութային ինստիտուտ՝ 13 թատրոն և համերգասրահ, 7 թանգարան ցուցասրահ, 9 տուն-թանգարան, 4 պատմամշակութային համալիր և Ծաղկաձորի մարզական ճամբարը: Այս վերանորոգումները Խորհրդային Միության փլուզումից հետո մշակութային հաստատությունների առաջին լայնածավալ վերականգնումներն էին: «Լինսի» հիմնադրամը դադարեց Հայաստանում գործել 2011 թվականից:

Բարեգործական հիմնադրամների բացումը Հայաստանում դարձավ օրինաչափ նաև տեղական մեծահարուստների համար, ովքեր փորձում էին բարեգործությամբ քողարկել և լեգիտիմացնել իրենց քաղաքական և սոցիալական կապիտալը: Դա հատկապես ընդգրկեց 2000-2003 թվականները. մի ժամանակահատված, երբ համաձայն քաղաքագետ Մ. Սարգսյանի՝ ձևավորվեց քաղաքական օլիգարխիան և ավարտվեց ավտորիտարիզմը[2]: Ռ. Քոչարյանի գլխավորությամբ ձևավորվեց քաղաքական նոր մշակույթ, որը ենթադրում էր նոր տիպի մշակութային քաղաքականություն: Օլիգարխիայի քաղաքականացումը լեգիտիմացնելու համար սկսեցին ձևավորվել տարբեր հիմնադրամներ և մշակութային գործունեություն ծավալել, հովանավորել մշակութային գործիչներին, մշակութային զանազան կազմակերպություններ և միություններ: Այսպես 2003 թվականից գրանցվեց «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամը, որը «Հեռանկար» նախագծի շրջանակներում իրականացրել է բազմաթիվ մշակութային ծրագրեր, համագործակցել է թանգարանների, օպերային ներկայացումներ է հովանավորել և սոցիալական օգնություն ցույց տվել մշա-

[1] «Մեկ ազգ, մեկ մշակույթ»-ը կվերածվի համազգայինի, հունիսի 7, 2006, 16:59 // https://a1plus.am/hy/article/14537

[2] Սարգսյան Մ., Հայաստան 200-2003. ավտորիտարիզմի ավարտը և պետության օլիգարխիզացումը // 01.02.2020 / http://boon.am/armenia2000-2003/

կութային գործիչներին[1]։ Բարեգործական հիմնադրամների թիվը Հայաստանում սկսեց աճել 2000-ական թվականներց։ Նրանց գործունեությունը ուղղված էր հասարակական տարբեր ոլորտների, այդ թվում նաև մշակույթի զարգացմանը և պահպանմանը, մշակութային գործիչների տնտեսական-սոցիալական աջակցությանը, փառատոների, միջոցառումների կազմակերպմանը, անհատական կրթաթոշակների սահմանմանը։ Նրանք Մշակութային պետական քաղաքականության յուրահատուկ գործիք դարձան և քաղաքական, տնտեսական ու սիմվոլիկ կապիտալների փոխակերպման միջոց։

**- Մշակութային քաղաքականության ապակենտրոնացում**։ Մշակութային քաղաքականության ապակենտրոնացումը շարունակվեց նաև այս փուլում։ Այն համադրվեց տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հետ։ Հայաստանն անդամագրվեց Եվրոպական խորհրդին և բազմաթիվ համաձայնագրերից ու կոնվենցիաներից բացի՝ ստորագրեց նաև «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան»[2]։ Ստորագրելով սույն խարտիան ՀՀ պարտավորվեց ձևավորել եվրոպական չափանիշներին համապատասխան տեղական ինքնակառավարման իրավական կարգավորման համակարգ։ Դա հիմք հանդիսացավ 2002 թվականին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքի ընդունման համար, որը միտված էր տեղական ինքնակառավարման համակարգի անկախության և ինքնուրույնության մեծացմանը, ֆինանսական և վարչական կարողությունների ընդլայնմանը, համայնքային մակարդակում ժողովրդավարության զարգացմանը[3]։

- **Մշակույթի «կուսակցականացում»:** Մի կողմից նկատվում է մշակութային քաղաքականության ապակենտրոնացում, միջազգային հարաբերությունների, միջմշակութային հաղորդակցության ակտիվացում, բազմաթիվ կոնվենցիաների և հռչակագրերի վավերացում, մշակույթի դեմոկրատացման փորձեր, մյուս կողմից՝ ընթանում է մշակույթի կուսակցականացում և քաղաքականացում, ինչը արտահայտվում է մշակույթի պատասխանատուների իշխանական թևին ներկայացնելու հանգամանքով, վերականգնվում է «պետական պատվերի» մեխանիզմը, մշակութային գործունեությունը թելադրվում է «վերևից»։

---

[1] Գագիկ Ծառուկյան բարեգործական հիմնադրամ, Մշակույթ // http://tsarukyanfound.am/arm/projects/culture/

[2] Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա // https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20822, 1985։

[3] ՀՀ օրենքը Տեղական ինքնակառավարման մասին// http://www.irtek.am/views/act.aspx?aid=150060, 2002։

**Երրորդ փուլ. 2008-2018 թվականներ, մշակութային քաղաքականության խառը մոդելի ձևավորում, պետական բյուրոկրատական և լիբերալ-ազատական մոդելների համադրում, արևմտյան փորձի տեղայնացում**

Հայաստանի հանրապետության մշակութային քաղաքականության երրորդ շրջանն ընդգրկում է 2008-2018 թվականները: Մշակութային քաղաքականության այս փուլը բնորոշվում է պետական և շուկայական մոդելների բնորոշ գծերի առկայությամբ, մշակույթի տնտեսականացման պրակտիկաներով և մշակութային քաղաքականության նոր հարթակների ձևավորմամբ:

- 2008 թվականին իշխանության է գալիս Սերժ Սարգսյանը: Ս. Սարգսյանի 2008 թվականի նախընտրական ծրագրում մշակութային քաղաքականության մասին ոչինչ չկա, ավելին մշակույթի զարգացումը դիտվում է միայն արտաքին քաղաքականության զարգացման, հայրենիք-սփյուռք համագործակցության շրջանակներում: Նախընտրական ծրագրում նշվում է. «Մշակութային մակարդակի բարձրացումը՝ ազգային մշակութային հիմքերի պարտադիր պահպանմամբ, մեր քաղաքացիների աշխարհայացքի ընդլայնումը նոր հասարակության կառուցման կարևոր պայման է: Մշակույթը կամրապնդի հայերի կապն ամբողջ աշխարհում, դրանով իսկ հստակեցնելով մեր ուրույն տեղը քաղաքակրթությունների երկխոսությունում»[1]: 2008-2013 թվականներին մշակութային քաղաքականության մեջ նկատվում է մասնավոր սեկտորի ներգրավածությունը մշակութային քաղաքականության մշակման և իրականացման մեջ: Պետական և մասանվոր սեկտորները ի հավասար մասնակցում են մշակութային քաղաքականության մեջ՝ երբեմն նույնիսկ գործունեությունը հակասում է կամ համաձայնեցված չէ միմյանց հետ: Ս. Սարգսյանի 2013 թվականի նախընտրական ծրագրում արդեն տեսնում ենք որոշակի հայեցակարգային մոտեցում մշակույթի և մշակութային քաղաքականության ուղղությամբ: «Ստեղծելու ենք նպաստավոր պայմաններ հայ հոգևոր, պատմական ու մշակութային ժառանգության պահպանման, ազգային արժեքների և ավանդույթների զարգացման համար: Երաժշտության, ֆիլմերի, հեռուստահաղորդումների, գրահրատարակչության ասպարեզում պետական պատվերի տեղադրման միջոցով նպաստելու ենք ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Ծրագրում ենք ազգային երգ ու պարի դասավանդում դպրոցներում, ինչպես նաև ազգային մշակույթի տարրերի ավելացում կրթական ծրագ-

---

[1] Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիրը // https://cdn.3rd.am/2008.pdf, 16.06.2019, 16:40:

րերում[1]»: Նախընտրական ծրագրում նշմարված են այն ուղիները, որոնց ուղղությամբ պետք է ծավալվեր պետական մշակութային քաղաքականությունը: Դրանք են՝ ազգային երգ ու պարի ուսուցում, մշակութային կրթություն դպրոցներում, համագործակցություն Հայ առաքելական եկեղեցու հետ, մշակույթի մատչելիության և հասանելիության ապահովում[2]: Մշակութային քաղաքականության հայեցակարգի բացակայությունը պատճառ հանդիսացավ ոլորտում նոր անհմատորների ի հայտ գալու համար: Հատկապես նշանակալի է քաղաքացիական նախաձեռնությունների դերակատարությունը:

Մշակութային քաղաքականության ենթակառուցվածքային փոփոխությունները տեղի ունեցան ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 5-ի որոշման համաձայն[3]:

- Մշակութային ժառանգության և մշակութային արժեքների վարչությունը վերանվանվում է մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչություն:
- Ժամանակակից արվեստի և ժողովրդական արհեստների վարչությունը վերանվանվում է ժամանակակից արվեստի վարչություն:
- Մշակութային ծրագրերի կառավարման և մոնիթորինգի վարչությունը վերանվանվում է մշակութային ծրագրերի և մոնիթորինգի վարչություն:
- Միջազգային համագործակցության և սփյուռքի վարչությունը վերանվանվում է արտաքին կապերի վարչություն:
- Իրավաբանական և վերահսկողության վարչությունը բաժանման ձևով վերակազմակերպվում է՝ ստեղծելով նոր իրավաբանական վարչություն և ներքին աուդիտի բաժին:
- Ֆինանսական վարչությունը վերանվանվում է ֆինանսատնտեսագիտական վարչություն:
- Լուծարվում է հրատարակչական գործի գործակալությունը:

Մշակույթի նախարարության վերոնշյալ կառուցվածքային փոփոխությունների մանրամասն ներկայացումը մեզ համար հիմք է եզրակացնելու, որ Խորհրդային միության փլուզումից և Հայաստանի անկախացումից ի վեր պետական կառավարական մոդելը մշակույթի ոլորտում որևէ էական փոփոխություն չի կրել: Մշակույթի «սեգմենտային» ընկալումը, որը ձևավորվել էր խորհրդային իշխանությունների կողմից հասարակության զարգացումը և վերահսկողությունը նախագծված ուղու վրա պա-

---

[1] Ս. Սարգսյանի նախընտրական ծրագիր, 2013 // http://hhk.am/u_files/file/election-programm-FINAL2013%20(1).pdf , 16.04.2019:

[2] Նույն տեղում:

[3] ՀԱԱ, ֆ. 80, ց.48, գ.21, թթ. 1-3:

հելու, այլախոհությունը բացառելու և մասսաներին հեշտ կառավարելի դարձնելու համար, հասարակարգային փոփոխությունից հետո մնաց նույնը, ինչը խանգարեց հետագա կոնստրուկտիվ բարեփոխումներ իրականացնելուն: Այսօր նույնպես մշակույթի նախարարության պաշտոնական կայքէջում մշակույթ հատվածը ներկայանում է կոնկրետ ոլորտների տեսքով. կերպարվեստ, թատերարվեստ, կինոարվեստ, երաժշտարվեստ, հրատարակչական գործ, տառարվեստ, պարարվեստ[1]: Մշակույթի դեմոկրատացումը նոր համակարգերում, որը ենթադրում էր նախ՝ մշակույթի նոր հանրային ընկալման, մշակույթի շուկայական ոլորտի ձևավորում, նոր կազմակերպչական մեթոդների մշակում, ՀՀ անկախության առաջին տասնամյակում, տեղի չունեցավ: Շարունակեցին գործել խորհրդային մեխանիզմներն ու ձևավորված ընկալումները:

**Եզրակացություն**

Մշակութային քաղաքականության ձևավորումը և զարգացումը Հայաստանի երրորդ հանրապետությունում անկախացումից մինչև «Թավշյա» հեղափոխությունը կարելի է դիտարկել երեք հիմնական փուլերով[2]:

***Առաջին փուլ.*** Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության շրջանում (1991-1998 թվականներ) որդեգրված պետական քաղաքականությունը նվազագույն միջամտություն էր ցուցաբերում մշակույթի ոլորտի, մշակութային գործընթացների մեջ, որի հետևանքով մշակութային ինստիտուտների, այդ թվում նաև ստեղծագործական միությունների «ապապետականացման» գործընթաց էր սկսվել: Այստեղ կարևոր է նաև նշել նախագահի՝ որպես երկրի առաջնորդի և մշակութային քաղաքականության թելադրողի անձնական մշակութային կապիտալը և դրա ունեցած ազդեցությունը նրա որոշումների կայացման մեջ: Լևոն Տեր-Պետրոսյանի որդեգրած մշակութային քաղաքականության զարգացման տեսլականը հենվում էր լիբերալ-ազատական մոդելի վրա, ըստ որի անհրաժեշտ էր մշակույթի ոլորտի ազատականացում, մրցակցային շուկայի ձևավորում և ինքնաֆինանսավորման մեխանիզմների մշակում: Հետևաբար 1990-ական թվականներին մշակութային հաստատությունների «ապապետականացմանը» զուգահեռ ընթանում էր մշակութային մասնավոր կառույցների ձևավորումը:

***Երկրորդ փուլ.*** 1998 թվականից իշխանության եկած Ռոբերտ Քոչարյանը մշակութային քաղաքականության մեջ փորձեց վերականգնել նախկին խորհրդային ամբողջատիրական համակարգին բնորոշ գծերը,

---

[1] ՀՀ Մշակույթի նախարարության պաշտոնական կայքէջ // http://mincult.am/culture.html

[2] Այսօր արդեն կարելի է խոսել ՀՀ մշակութային քաղաքականության չորրորդ փուլի մասին, որն սկսվում է «Թավշյա հեղափոխությունից»՝ 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներից, որը հետազոտության այլ թեմա է:

ինչպես օրինակ մշակույթի պետական ֆինանսավորումը, հոգածությունը որպես պետության պարտականություն և մշակույթի գործիչների լոյալությունը իշխանությունների հանդեպ: Ռ. Քոչարյանի վարած քաղաքականությունը մշակույթի ոլորտում մոտ էր պետական-բյուրոկրատական մոդելին, որտեղ մշակույթը փորձում է իր բոլոր ռեսուրսներով ծառայել իշխանություններին՝ փոխարենը ստանալով հոգածություն և համեմատաբար կայուն զարգացման տեսլական: Պատահական չէ, որ մշակույթի ոլորտի օրենսդրական կարգավորումները սկսվեցին 2000-ական թվականներից: 2003 թվականին մշակվեց ստեղծագործական միությունների և ստեղծագործական աշխատողների մասին հատուկ օրենք[1]: Այս փուլում ստեղծագործական միությունների որոշ առումով վերականգնեցին իրենց նախկին նշանակությունը հասարակական գործընթացների մեջ, սկսեցին զանազան պարգևատրումներ և ֆինասական աջակցություն ստանալ պետության կողմից:

***Երրորդ փուլ.*** ՀՀ երրորդ նախագահի իշխանության տարիներին փորձ արվեց մշակութային քաղաքականության լիբերալ-ազատական և պետական բյուրոկտարական մոդելները համադրել, որի արդյունքում մշակութային քաղաքականությունն իր հիմնական դրսևորումներով մնաց պետական, բայց մասնավոր ոլորտի ակտիվ մասնակցության ներառմամբ:

**Айкуи Мурадян, Три президента – три культурной политики** - В статье представлены попытки сформулирования новой концепции культурной политики, модели, их изменения, выбор инструментов и механизмов, изменения в восприятии культуры от независимости Армении до «Бархатной» революции (2018). Чтобы понять природу государственной культурной политики Республики Армения, мы рассмотрели следующие два аспекта: роль политического лидера и характер отношений между интеллигенцией и правящей политической элитой. Исходя из вышеизложенного, можно выделить три этапа развития культурной политики в постсоветской Армении: 1. Культурная политика переходного периода, попытки формирования либеральной модели (1991–1998). 2. Период стабилизации культурной политики, попытки восстановить бюрократическую систему (1998-2008). 3. Разработка смешанной модели культурной политики, сочетание разных моделей культурной политики, локализация западного опыта (2008-2018).

[1] *ՀՀ* օրենքը ստեղծագործական աշխատողների և ստեղծագործական միությունների մասին, http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=1334&Reading=0&lang=arm&enc=utf8

**Haykuhi Muradyan, Three presidents: there cultural policies -** The article presents attempts to formulate a new concept of cultural policy, models, their changes, the choice of tools and mechanisms, changes in the perception of culture from the independence of Armenia to the "Velvet" revolution (2018). In order to understand the nature of the state cultural policy of the Republic of Armenia, we examined the following two aspects: the role of the political leader and the nature of relations between the intelligentsia and the ruling political elite. Based on the foregoing, three stages of the development of cultural policy in post-Soviet Armenia can be distinguished: 1. Cultural policy of the transition period, attempts to form a liberal model (1991-1998). 2. Period of stabilization of cultural policy.

# ПЕРСПЕКТИВЫ СОТРУДНИЧЕСТВА АРМЯНСКОГО И ГРЕЧЕСКОГО ЛОББИ В США

МАРТУН АЗАТЯН

Трагические события конца 2020 года продемонстрировали, что Армения и армянство в целом нуждаются в союзниках и партнерах не только на Южном Кавказе, но и в глобальном мире. Военно-техническое, информационное и дипломатическое поражения показали неэффективность проводимой политики и, как следствие, необходимость выработки новой стратегии в указанных областях во избежание повторения аналогичного сценария в будущем.

44-дневная война, а также предшествующие и последующие события в сфере мировой политики и международных отношений стали очередным подтверждением существования мощного турецко-азербайджанского союза не только на уровне государств, но и в рамках диаспоральных институтов. Более того, турецкое и азербайджанское лобби упоминаются вместе в ходе констатации не только их достижений, но и поражений.

Естественно, с потенциальным союзником или партнером необходимо иметь общие интересы в сфере безопасности и экономики. На наш взгляд, такими союзниками, в первую очередь, могут стать Греция и греческая диаспора. В данной статье мы покажем, что у армян и греков есть общие цели и интересы, что армяно-греческое лоббистское сотрудничество уже имело существенные результаты и что углубленная кооперация во многих сферах будет выгодным для обеих сторон.

Образование греческой общины в США, увеличение ее численности, создание различных диаспоральных институтов, в их числе, лоббистских организаций, имели определенные причины, в которых можно проследить параллели с аналогичными процессами в жизни армянской диаспоры в США.

Этнические греки стали переселяться на территорию современных США еще задолго до образования этого государства. Дон Теодоро Греко, испанский мореплаватель греческого происхождения, достиг побережья Флориды в 1528 году. В честь него в городе Тампа (штат Флорида) поставлен памятник. Об официальных зарегистрированных лицах греческого происхождения упоминается в документах второй половины 18 века. Первые упоминания об армянах, переселившихся в Новый свет, относится к началу 17 века. Среди них, Мартин Армянин из Новой Джуги, приглашенный в британскую колонию Джеймстаун (ныне – Вирджиния), а также армянские семьи, поселившиеся в Массачусетсе. Районы, куда переселились

первые армяне и греки, в некоторой степени остались актуальными для эмигрантов нового времени. На сегодняшний день городом с наибольшим числом греческого населения является Тарпон-Спрингс (Флорида). Города Бостон и Вустер (Массачусетс) на протяжении долгого времени оставались важнейшими культурными, религиозными и промышленными центрами для представителей армянских общин.

Волны греческой эмиграции на территорию США, которые привели к увеличению численности представителей общины, были вызваны событиями, имевшими место на Балканах и в Малой Азии. Среди этих событий стоит отметить Греческую войну за независимость, во время которой была осуществлена Хиосская резня, организованная по приказу турецкого паши в 1822 году. Геноцидальная политика турецкого руководства продолжалась в течение всего 19-ого и начала 20-ого веков, достигнув своего апогея в 1914-23 годах. В результате этнических чисток греков на их исторической родине и во всей Анатолии (геноцид понтийских греков) было убито, по разным данным, до 1,2 млн. представителей греческой нации. Поражение греков в Греко-турецкой войне (1919-22) и последующий греко-турецкий обмен населением (1923) стали причиной очередной волны миграции в США. Эмиграционные потоки, начавшиеся в середине 20-ого века, были уже вызваны экономическими факторами в лице разрухи и кризиса после Второй мировой войны, а переселение начала 21-ого века – с финансовым кризисом в Греции 2010 года. В итоге, на сегодняшний день в США проживает самая крупная греческая община. Их численность, по разным данным, составляет около 3 млн. этнических греков[1].

Среди факторов, ставших причинами армянских эмиграционных волн, можно выявить аналогичность с греческой эмиграцией в контексте как хронологии, так и характера событий. Крупные волны переселения этнических армян на территорию США стали результатом гамидовской резни (1894-96), погромов в Киликии (1909), Балканских войн (1912-13), Первой мировой войны (1914-18) и ее последствий, армяно-турецкой войны 1920 года и геноцидальной политики Османской империи и Турции до 1923 года. В последующие десятилетия причинами эмиграций армян в США явились сталинские репрессии,  экономические последствия Второй мировой войны и нестабильность в арабских странах, а также тяжелое финансовое положение Армении, начавшееся с 90-ых годов. В итоге, численность армянской общи-

[1] U.S. Relations With Greece [Электронный ресурс]: https://www.state.gov/u-s-relations-with-greece/

ны США, по данным Офиса главного уполномоченного по делам диаспоры РА, составляет 1,6 млн. и продолжает увеличиваться[1].

Старейшей и наиболее крупной общественной организацией греческой общины США является AHEPA (American Hellenic Educational Progressive Association – Американо-греческий прогрессивный просветительский союз), который, наряду с активной деятельностью в различных сферах общественной жизни, занимает также лоббизмом интересов греческой нации. AHEPA была основана в 1922 году в ответ на деятельность Ку-клукс-клана и для оказания поддержки греческим иммигрантам. Организация позиционирует себя как последователя тайного общества "Филики Этерия" и в качестве основных целей декларирует продвижение эллинизма и его идеалов посредством организации семинаров и конференций, а также отстаивание интересов Греции и Кипра[2]. AHEPA сотрудничает с еврейской организаций Бней-Брит и общественной организацией черного населения NAACP. Союз имеет филиалы в различных штатах, в Канаде, Греции и на Кипре.

Однако структурой, с которой чаще всего ассоциируется греческое лобби, выступает Американо-греческий институт (AHI – American Hellenic Institute). Он был основан в 1974 году в ответ на военное вторжение Турции на Кипр. В состав лоббируемых вопросов организации входят проблемы оккупации северной части Кипра, провокации Турции в Эгейском море, признания геноцида понтийских греков, защиты греческих православных центров в Турции, включения Греции в Программу безвизового въезда (VWP) и т.д.[3]. AHI сотрудничает с AHEPA, AHC и другими греческими структурами, а также с Армянским национальным комитетом Америки (ANCA).

Среди греческих диаспоральных институтов следует отметить также Совет Греков Зарубежья (World Council of Hellenes Abroad), более известный под греческой аббревиатурой SAE. Совет был основан в 1995 году указом президента Греческой республики с целью объединения этнических греков всего мира, создания всемирной сети Эллинизма и реализации программ в интересах омогении (идеи возвращения греков на родину).

Для сравнения, Американский комитет в поддержку независимости Армении, на основе которого в итоге образовался Армянский национальный комитет Америки (1941 год), был основан в 1915 году. В состав высшего совета Комитета, среди прочих, вошел госсекретарь США Роберт Лансинг, благодаря усилиям которого в 1916 году Конгресс США принял "Акт

---

[1] СОЕДИНЁННЫЕ ШТАТЫ АМЕРИКИ [Электронный ресурс]: http://diaspora.gov.am/ru/pages/3/usa.

[2] Order Of Ahepa [Электронный ресурс]: https://ahepa.org/

[3] American Hellenic Institute [Электронный ресурс]: https://www.ahiworld.org/

Ближневосточной помощи". Данный документ предполагал оказание гуманитарной помощи христианским народам Османской империи, содействие в эмиграции в США армянам, грекам, евреям и ассирийцам, а также оказание поддержки армянам и грекам в создании независимых государств[1]. Затем, в 1972 году, в период окончательной институционализации лоббизма (60-70-ые годы) и возникновения открытых лоббистских фирм, была создана вторая армянская организация для защиты интересов армянства на территории США – Армянская Ассамблея Америки (ААА). В тот же период времени был основан Американо-греческий институт.

Армянская и греческая общины США имеют хоть и не регулярную, но все же временами эффективную историю взаимоотношений. Исследователь Ваграм Оввян, анализируя проблему отношений армянской и греческой общин, выделяет 3 модели сотрудничества между ними: ассиметричную, симметричную и синтезированную[2]. В первом случае речь идет о взаимоотношении, с одной стороны, организации, с другой – индивида. В качестве примера ассиметричной модели сотрудничества автор приводит включение конгрессмена Гаса Билиракиса в состав Армянского кокуса. Последний осуществлял проармянскую деятельность по вопросам увеличения финансовой помощи Армении и Арцаху, осуждения Геноцида армян, возвращения конфискованного со стороны турецкого руководства имущества армянской церкви и т.д. Симметричная модель сотрудничества, следовательно, предполагает взаимоотношения либо между организациями, либо между индивидами. Приведенные автором примеры касаются совместных мероприятий в день памяти жертв Геноцида, поддержки проармянских и прогреческих кандидатов на выборах, содействия принятию выгодных законопроектов и т.д. Синтезированная модель объединяет две предыдущие модели и, согласно автору, проявляется, в основном, в информационно-пропагандистской сфере.

Что касается конкретных эпизодов сотрудничества армянской и греческой общины, то наиболее значительные из них являются образцами симметричной модели. Среди примеров следует отметить президентские выборы в США 1988 года, основными кандидатами на которых были республиканец Джордж Буш-старший и демократ Майкл Дукакис. Армянская община выразила свою поддержку Дукакису по нескольким причинам: яв-

---

[1] Woodrow Wilson and Armenian Genocide [Electronic resource] // United States Presidents Statements, April 20, 1990 // Armenian National Institute. Electron. data. Washington, DC. [Электронный ресурс]: http://www.armenian-genocide.org/wilson.html

[2] ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ [Электронный ресурс}: http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15882

ляясь греком по национальности, Дукакис заявлял о необходимости прекращения оккупации Северного Кипра со стороны Турции и, в целом, был против проводимой политики данной страны; будучи губернатором Массачусетса в 70-ые годы, Дукакис имел контакты с армянским лобби и выражал готовность положить конец отрицанию Геноцида[1].

Поскольку сотрудничество не было регулярным, то следующий пример относится уже к недавнему периоду времени. Так, 31 декабря 2012 года президент ANCA Хачикян и президент Американо-греческого прогрессивного просветительского союза Грассманидис выступили с призывом к Обаме обозначить четкую позицию по вопросам геноцида армян и греков, турецкой оккупации Северного Кипра и предоставления финансовой помощи НКР.

В 2013 году Обама инициировал включение Турции в “Трансатлантический проект” США-ЕС. В ответ на подготовку этого решения Хачикян и президент Американского Института Эллинистики Ларигакис написали письма заместителю торгового представителя США Марантису и конгрессменам обратить внимание на продолжающуюся блокировку Армении и оккупацию части острова Кипр со стороны Турции[2]. В итоге сенатор-демократ Рид не стал выносить данную резолюцию на обсуждение.

В целом, деятельность этнического лобби является отражением проводимой политики родной страны; декларируемые цели также продиктованы интересами отечества. Следовательно, возможное сотрудничество армянской и греческой диаспоры отчасти находится в зависимости от отношений между Арменией и Грецией. К тому же, в данном контексте необходимо учитывать роль Арцаха и Кипра в качестве ближайших для двух стран субъектов международной политики.

Двухсторонние отношения между Республикой Арменией и Республикой Грецией были установлены в 1992 году. С того же года по сегодняшнее время отмечено большое количество взаимных визитов высокопоставленных лиц двух государств, подписаны договоры и соглашения о сотрудничестве в важнейших областях (дипломатической, туристической, технологической, промышленной и т.д.). В 2018 году был осуществлен импорт на общую сумму 64 млн. долларов; экспорт составил 271 тысячу долларов. Аналогичные показатели для 2019 года – 17 млн. и 442 тысячи соответственно. Армения импортирует из Греции горючие материалы, нефть и

---

[1] **Барсегов Ю. Г.** (сост.) Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. Том 1 М.: Гардарики, 2002. № 1359

[2] ARMENIAN AND GREEK AMERICANS CHALLENGE U.S.-TURKEY FREE TRADE DEAL. [Электронный ресурс]: https://anca.org/press-release/armenian-and-greek-americans-challenge-u-s-turkey-free-trade-deal/

нефтепродукты, электрическое оборудование, алюминий, фрукты, орехи и т.д. Основными экспортными товарами являются электрические оборудования, алюминиевые изделия, продукты питания[1]. Согласно официальному сайту Офиса главного уполномоченного по правам Диаспоры РА, на сегодняшний день в Греции проживает около 30 тысяч этнических армян[2]. Количество этнических греков на территории Армении и Арцаха, по разным данным, составляет около тысячи человек.

В течение 2019 года дважды состоялись встречи в трехстороннем формате с участием министров иностранных дел Армении, Греции и Кипра. Первый саммит был проведен в столице Кипра Никосии, вторая встреча – в Нью-Йорке. В ходе данных мероприятий обсуждались вопросы укрепления мира, стабильности и процветания между тремя странами посредством политического диалога и сотрудничества. Очередная встреча, намеченная на апрель 2020 года, была отменена по причине пандемии коронавируса.

На сегодняшний день Армения и Греция находятся в противоположных военно-политических и экономических блоках. Армения является членом ОДКБ и ЕАЭС, Греция – членом НАТО и ЕС. На фоне геополитического напряжения между западными странами с одной стороны, и РФ с Ираном и Турцией с другой, усиление двухстороннего сотрудничества между двумя государствами сталкивается с объективными препятствиями. С учетом этих факторов, укрепление взаимоотношений должно осуществляться по инициативе армянской и греческой диаспор и диаспоральных институтов в Соединенных Штатах. Существенное количество этнических армян и греков на территории США и их вовлеченность в жизнь диаспоры дает возможность активизации межэтнических контактов, в первую очередь, посредством культурных мероприятий, конференций и круглых столов. Поскольку геноцид понтийских греков уже признан Арменией, а армянский геноцид признан и даже криминализирован Грецией и Кипром, основными темами обсуждений должны стать межкультурные, политические и экономические вопросы. Общая история, берущая начало с эпохи Эллинизма, продолжающаяся византийским периодом и заканчивающаяся господством Османской империи, дает возможность организации научно-исследовательских мероприятий и туристических потоков в Грецию, в Армению и на Кипр. Данная тенденция будет способствовать росту туризма непосредственно между Арменией, Грецией и Кипром. Более того, эконо-

---

[1] Երկկողմ հարաբերություններ. Հունաստան [Электронный ресурс]: https://www.mfa.am/hy/bilateral-relations/gr

[2] ОФИС ГЛАВНОГО УПОЛНОМОЧЕННОГО ПО ДЕЛАМ ДИАСПОРЫ РА: ГРЕЦИЯ [Электронный ресурс]: http://diaspora.gov.am/ru/pages/64/greece

мическая мощь армянской и греческой общин в США может стать фактором для увеличения числа инвестиций в различные отрасли экономики Армении и Греции. В данном случае нахождение в разных экономических союзах станет преимуществом для инвесторов в лице доступа к рынкам, с одной стороны, ЕАЭС и Ирана, с другой – Европейского Союза. Углубленное изучение экономических потребностей Греции позволит экспертам выработать рекомендации для армянских предпринимателей с целью увеличения доли импортируемых армянских товаров на греческих рынках.

К тому же, активизация углубленного сотрудничества армянских и греческих лоббистских организаций в США позволит эффективнее использовать лоббистские методы для продвижения выгодных законопроектов и поддержки нужных кандидатов как на муниципальном, так и на федеральном уровнях.

**Մարտուն Ազատյան, Հայկական եւ հունական լոբբիի համագործակցության հեռանկարները ԱՄՆ - ում** - Սույն հոդվածում քննարկվում են ԱՄՆ-ում հայ և հույն համայնքների միջև համագործակցության ակտիվացման հնարավոր ուղիները: Խնդիրն արդիական է, քանի որ Հայաստանը և ընդհանուր առմամբ հայությունը կարիք ունեն նոր դաշնակիցների թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական ոլորտներում: Հոդվածում վերլուծվում են հայկական և հունական համայնքների ընդհանուր հատկանիշները, ներկայացվում են երկու ժողովուրդների լոբբիստական կազմակերպությունների համագործակցության օրինակները, ինչպես նաև ի հայտ են բերվում ընդհանուր շահերը տարբեր ոլորտներում: Հոդվածի վերջում հեղինակի կողմից մշակված են առաջարկություններ ԱՄՆ-ում հայկական սփյուռքի ինստիտուտներին, որոնք թույլ են տալիս շփման եզրեր գտնել հունական հասարակական եւ լոբբիստական կառույցների հետ՝ երկկողմ համագործակցությունը սկզբունքորեն նոր մակարդակի դուրս բերելու համար:

**Martun Azatyan, Prospects for cooperation between the Armenian and Greek lobbies in the United States** - This article discusses possible ways to enhance cooperation between the Armenian and Greek communities in the United States. The problem is urgent, since Armenia and the Armenian people in general need new allies in the political and economic spheres. The paper analyzes the common features of the Armenian and Greek Diasporas, presents examples of cooperation between lobbying organizations of the two communities, and identifies common interests in various industries. At the end of the article, the author makes recommendations to Armenian Diaspora institutions in the United States, which allow them to find common ground with Greek public and lobbying structures to bring bilateral cooperation to a fundamentally new level.

# ՎԵՐԱԲԱՇԽԻՉ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՏՆՏԵՍԱՊԵՍ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՆԵՐՈՒՄ

ՆԱՐԻՆԵ ԱՄՐՅԱՆ

**Բանալի բառեր** - վերաբաշխիչ քաղաքականություն, վերաբաշխիչ մեխանիզմ, վերաբաշխման սուբյեկտ, սոցիալական պրակտիկա, աղքատություն, եկամուտների անհավասարություն, հարկեր, տրանսֆերտներ, սոցիալական ծախքեր:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում վերաբաշխման գործընթացի հետ սերտորեն կապված հիմնախնդիրներից թերևս ամենաառանցքայինը՝ եկամուտների անհավասարությունը, մեծ աճ արձանագրեց աշխարհի մի շարք առաջատար եվրոպական երկրներում: Ուշագրավ է, որ այս միտումներից անմասն չմնացին նաև ՏՀԶԿ անդամ-պետությունները,[1] նույնիսկ եկամուտների բաշխվածության իմաստով հարաբերականորեն համահարթ համարվող Հյուսիսային Եվրոպան. ավելին, նշյալ տարածքում խնդիրն առավել վառ արտահայտվեց 2000-ական թթ. սկզբին, և դա մեծապես պայմանավորված էր ավելի վաղ՝ 1980-ական թթ. վերջին, շուկայական եկամտի (աշխատավարձ, շահութաբաժիններ, տոկոսային եկամուտներ) բաշխման անհավասարությամբ:[2]

---

[1]**Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը** *(այսուհետ՝ ՏՀԶԿ, OECD (Organization for Ecominic Cooperation and Development))* տնտեսապես զարգացած երկրների միջազգային միջկառավարական կազմակերպություն է: Հիմնադրվել է 1948թ.՝ որպես Եվրոպական տնտեսական զարգացման կազմակերպություն (Organization for European Economic Co-operation, OEEC) և նպատակ ուներ վերակառուցել Եվրոպան Երկրորդ աշխարհամարտից հետո՝ «Մարշալի պլան»-ի շրջանակներում: Այժմ ՏՀԶԿ անդամ են հանդիսանում 37 պետություն՝ զարգացած տնտեսությամբ և ժողովրդավարական ինստիտուտներով:Այն եզակի ֆորում է, որտեղ անդամ-պետությունների կառավարությունները հավաքվում են՝ քննարկելու գլոբալիզացիայի հետևանքով առաջացած տնտեսական, սոցիալական և բնապահպանական հիմնախնդիրները: Այն նաև նպաստում է այնպիսի հիմնախնդիրներին արագ արձագանքմանը, ինչպիսիք են գիտելիքահեն տնտեսությունը, տեղեկատվական անվտանգությունը և ծերացող բնակչության պրոբլեմները: Բացի այդ, ՏՀԶԿ-ն ակտիվ գործընկերային հարաբերությունների մեջ է 70 երկրների հետ, որոնցից 24-ը դիտորդի կարգավիճակով պարբերաբար մասնակցում են ՏՀԶԿ հանձնաժողովների աշխատանքներին: Ընդհանուր առմամբ, ՏՀԶԿ անդամ-պետություններին է բաժին ընկնում երկրագնդի բնակչության 17,7 և համաշխարհային ՀՆԱ-ի շուրջ 60 % -ը:

[2] **Causa O., Browne J., Vindics A.,** Income Redistribution Across OECD Countries: Main findings and Policy Implications, OECD Economic Policy Paper, ISNN:2226583X, September 2018, No.23, pp.5-7

Առհասարակ, տնտեսական ռեսուրսների բաշխման և վերաբաշխման գործընթացում լիակատար հավասարության ապահովումը մի կողմից, անցանկալի է, իսկ մյուս կողմից՝ ոչ իրագործելի: Այս իմաստով կարելի է առանձնացնել մի շարք պատճառներ՝ կապված ՏՀԶԿ անդամ-պետություններում եկամուտների անհավասարության ուսումնասիրման կարևորության հիմնավորման հետ.[1]

• Նախևառաջ, ոչ մի հանրույթ չի կարող «անտարբեր մնալ» շուկայական տնտեսության վերաբաշխիչ արդյունքների նկատմամբ, և այս իմաստով տնային տնտեսությունների եկամուտների տարբերություններն պետության կողմից իրականացված վերաբաշխման ամենատեսանելի արդյունքն են: Անշուշտ, հասարակությունը և քաղաքականության մշակմամբ զբաղվողները տարակարծիք կարող են լինել այն հարցի շուրջ, թե որքանով է պետք կենտրոնանալ վերաբաշխման պայմանների տարբերությունների վրա, այն է՝ արդյո՞ք պետք է ուշադրության առանցքում պահել «միջին ընտրողին»,[2] թե՞ ուսումնասիրել հարուստների և աղքատների ստացած եկամուտների միջև կտրուկ տարբերությունները:

• Երկրորդ, ՏՀԶԿ անդամ-պետությունների մեծ մասում հանրույթներն իսկապես մտահոգ են եկամուտների վերաբաշխման հիմնահարցի ուղղությամբ և ավելին, կարող են ձևավորել սեփական դատողությունների որոշակի համակազմ՝ կապված վերաբաշխիչ քաղաքականության իրագործման ձևի հետ, չնայած նրան, որ երբեմն անհավասարության մասին պատկերացումները կարող են լինել ոչ արդարացված և պայմանավորված լինել աղքատության ռիսկի կտրուկ աճով:

• Երրորդ, անգամ այն դեպքերում, երբ հանրույթները նվազեցնում են անհավասարության դերակատարությունը՝ այլ սոցիալական նպատակների համեմատությամբ, այնուամենայնիվ, եկամուտների անհավասար բաշխվածության կրճատումը կարող է նպաստել հասարակական

---

[1] Growing unequal? Income Distribution and Poverty in OECD countries, OECD 2008, pp. 283-284, https://www.mzv.sk/documents/10182/3990329/Growing+Unequal.pdf/6b5e3092-a9bb-47ca-9e28-d9a616ad1aff

[2] **Միջին ընտրողի թեորեմի** *(«Median voter theorem»)* համաձայն, «քվեարկության համակարգը՝ մեծամասնական սկզբունքի համաձայն, կընտրի այն արդյունքը, որը առավել նախընտրելի է միջին ընտրողի համար»: Սա կապված է հանրային ընտրության տեսության և վիճակագրական քաղաքական գիտության հետ: Միջին ընտրողի թեորեմը հիմնված է երկու հիմնական ենթադրությունների վրա. առաջին՝ ընտրողները իրենց առաջարկված քաղաքական այլընտրանքները կարող են տեղավորել միաչափ քաղաքական սպեկտրում: Երկրորդ՝ թեորեմը ենթադրում է, որ ընտրողների նախընտրությունները միակողմանի են, ինչը նշանակում է, որ վերջիններս ունեն մեկ գերակա այլընտրանք: Սա նաև նշանակում է, որ ընտրողները միշտ ունեն խթան՝ քվեարկելու սեփական իրական գերակայությունների օգտին: Վերջապես, միջին ընտրողի թեորեմն առավել լավ կիրառելի է մեծամասնական ընտրական համակարգի պայմաններում:

այլ նպատակների իրագործմանը: Եկամուտների անհավասար բաշխվածության հետևանքները տարբեր են՝ սկսած հարուստների քաղաքական կշռի և ազդեցության աճից մինչև կրթական և առողջապահական համակարգերի զարգացվածության մակարդակների տարբերությունները, ինչպես նաև ընդհանուր մարտահրավերներին հավաքական կերպով դիմագրավելու գործնական անհնարինությունը:

• Սակայն հիմնական վտանգն այն է, որ եկամուտների ոչ համաչափ բաշխվածության խորացումը և որպես հետևանք՝ սոցիալ-տնտեսական անհավասարության շարունակական աճը կարող են հանգեցնել պետության կողմից այնպիսի քաղաքական կուրսի ընդունմանը, որը նպատակահարմար չէ համապատասխան տնտեսական ցուցանիշների ապահովման տեսանկյունից: Այս վտանգի վրա ուշադրության սևեռումը կարևորվում է նրանով, որ ընթացիկ քննարկումներում էլ առավել շատ է շեշտադրվում գլոբալիզացիայի՝ որպես անհավասարության խորացման գործոնի, դերակատարությունը: Այսինքն, ՏՀԶԿ անդամ-պետություններում եկամուտների բաշխվածության մեջ բևեռացվածության խորացումը տեղի է ունենում այնտեղ, որտեղ լայնորեն տարածում են գտնում գլոբալիզացիայի «առավելությունները» (աշխատատեղերի փոփոխություն և փոխատեղում, վարձատրության կորուստ, եկամուտների պաշտպանվածության հետ կապված խնդիրներ և այլն): Այս անհամաչափությունը չչեզոքացնելու կամ նվազագույնի չհասցնելու դեպքում կարող են ի հայտ գալ այլ, տնտեսապես անցանկալի, ոչ նպատակահարմար ռիսկեր (արգելքներ՝ կապված առևտրի, ներդրումների, ներգաղթի հետ և այլն):

Եթե խորամուխ լինենք ՏՀԶԿ անդամ-պետություններում վերաբաշխիչ քաղաքականության իրականացման առանձնահատկությունների վերհանման և ուսումնասիրության մեջ, ապա պետք է նշենք, որ տարեկան վերջիններս ծախսում են իրենց ՀՆԱ-ի ավելի քան 20%-ը սոցիալական քաղաքականության իրականացման համար՝ ներառյալ հանրային առողջապահությունը, պետական կենսաթոշակային համակարգը, նպաստները, բնակարանային և կոմունալ ծառայությունները և այլն: [1]

Հատկանշական է, որ եկամուտների բաշխվածության փոփոխությունները տեղի են ունեցել եկամուտների ընդհանուր ծավալների աճի համատեքստում, չնայած նրան, որ ՏՀԶԿ անդամ տարբեր երկրների ցուցանիշներ զգալիորեն տարբերվում էին միմյանցից.[2]

---

[1] The OECD Risks That Matter Survey 2018, Main Findings from the 2018 OECD Risks that Matter Survey, OECD, 2019, p.5, http://www.oecd.org/els/soc/Risks-That-Matter-2018-Main-Findings. pdf

[2]Growing unequal? Income Distribution and Poverty in OECD countries, OECD 2008, p.286, https://www.mzv.sk/documents/10182/3990329/Growing+Unequal.pdf/6b5e3092-a9bb-47ca-9e28-d9a616ad1aff .

**Աղյուսակ 1.** Եկամուտների վերաբաշխման ընդհանուր միտումները տիզկ անդամ-պետություններում 1980-2000 թթ.

| | *1980-1990 թթ.* | *1990-2000 թթ.* | *1980-2000 թթ.* |
|---|---|---|---|
| *Նշանակալի աճ* | Չեխիա, Իտալիա, Մեքսիկա, Նոր Զելանդիա, Պորտուգալա, Թուրքիա, Մեծ Բրիտանիա | Կանադա, Ֆինլանդիա, Գերմանիա | Ֆինլանդիա, Նոր Զելանդիա |
| *Աննշան աճ* | Բելգիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Հունգարիա, Ճապոնիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, ԱՄՆ | Ավստրիա, Դանիա, Ճապոնիա, Նորվեգիա, Շվեդիա, ԱՄՆ | Կանադա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Նորվեգիա, Պորտուգալիա, Շվեդիա, ԱՄՆ |
| *Ոչ մի փոփոխություն* | Ավստրիա, Կանադա, Դանիա, Հունաստան, Իռլանդիա | Հունաստան, Իռլանդիա, Նիդեռլանդներ, Մեծ Բրիտանիա | Ավստրիա, Բելգիա, Չեխիա, Դանիա, Ֆրանսիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Լյուքսեմբուրգ, Մեքսիկա, Նիդեռլանդներ, Իսպանիա, Թուրքիա, Մեծ Բրիտանիա |
| *Աննշան նվազում* | - | | Ֆրանսիա, Իռլանդիա, Իսպանիա |
| *Նշանակալի նվազում* | Ֆրանսիա, Իսպանիա | Մեքսիա, Թուրքիա | - |

Ավելի ուշ՝ սկսած 1990-ական թթ.կեսերից, ՏՀԶԿ անդամ-երկրներում վերաբաշխման ծավալները կտրուկ ընդլայնվել էին. ընդ որում, եկամուտների անհավասարությունը մատնանշող Ջինիի գործակիցը աճել էր 7%-ով: Սակայն վերաբաշխման ծավալների ընդլայնումը հավասարապես չէր վերաբերում ՏՀԶԿ անդամ բոլոր երկրներին, ինչի մասին են վկայում, օրինակ, Ֆրանսիայում նշյալ ցուցանիշում տեղի ունեցած աննշան փոփոխությունները, ինչպես նաև հարաբերական կայունությունը ՏՀԶԿ անդամ 14 երկրներում: Սկսած 2000 թ. եկամուտների անհավասար

բաշխվածության միտումները նշանակալիորեն աճեցին ՏՀԶԿ անդամ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Կանադան, Գերմանիան, Նորվեգիան և ԱՄՆ-ը, մինչդեռ, օրինակ, Մեծ Բրիտանիայում, Մեքսիկայում, Հունաստանում և Ավստրալիայում արձանագրվել էր եկամուտների վերաբաշխման ծավալների անկում:[1]

Սակայն ուշագրավ է այն փաստը, որ վերաբաշխիչ քաղաքականության մեջ նվազել էր հարկերի և տրանսֆերտների՝ որպես վերաբաշխման մեխանիզմների, տեսակարար կշիռը, այսինքն, արձանագրվել էր հարկման մեխանիզմների միջոցով իրականացվող վերաբաշխումների ծավալների կտրուկ անկում:[2] Մյուս կողմից, տրանսֆերտների նվազեցմամբ բնութագրվող վերաբաշխման գործընթացների դանդաղեցումն ինչ-որ առումով հետևանք էր սոցիալական ապահովության նպաստների ծավալի կտրուկ կրճատման, որոնք ՏՀԶԿ որոշ երկրներում փոխհատուցվում էին պրոգրեսիվ (այսինքն, սոցիալական կարիքավորության մակարդակի ստուգմամբ իրականացվող) սոցիալական օժանդակությամբ:[3]

Այս հանգամանքը, մի կողմից, քաղաքական մտահոգությունների, իսկ մյուս կողմից, վիճահարկման և քննարկումների առարկա դարձրեց այս հարցադրումը, թե պետությունները ինչ մեխանիզմներ պետք է կիրառեն եկամուտների վերաբաշխման գործընթացն ակտիվացնելու համար: Այս հարցին միանշանակ բարդ է պատասխանել. նախևառաջ, անհրաժեշտ է գիտակցել, որ անհավասարության խնդիրը սոսկ հարուստների և աղքատների հակադրություն չէ. այստեղ կարևոր են նաև այնպիսի շարժիչ ուժեր, ինչպիսիք են կրթությունը, առողջապահական և սոցիալական պաշտպանության համակարգերը, կյանքի որակը և այլն, և այս գործոնների կարևորության ընկալումը վճռորոշ նշանակություն ունի պետության կողմից պատշաճ արձագանքի համար, որն, առաջին հերթին, ուղղված կլինի խորացող սոցիալ-տնտեսական անհավասարությունը կանխելու համար վերաբաշխիչ քաղաքականության մշակմանը և իրականացմանը:

Ըստ այդմ, գոյություն ունեն մի շարք պատճառներ, որոնք ստիպում են նշյալ կազմակերպության անդամ հանդիսացող պետություններին իրականացնել վերաբաշխում. էթիկական՝ սոցիալական արդարության ձգտումը, քաղաքական՝ հանրային վստահության նվաճումը կամ տնտեսական՝ տնտեսական աճին նպաստելուն գործակցումը: Իրավիճակն էլ

[1]Growing unequal? Income Distribution and Poverty in OECD countries, OECD 2008, p.285, https://www.mzv.sk/documents/10182/3990329/Growing+Unequal.pdf/6b5e3092-a9bb-47ca-9e28-d9a616ad1aff.

[2] Նույն տեղում, էջ 8-9:

[3] **Caminada K., Goudswaard K., Wang C.,** Income Inequality and Fiscal Redistribution in 31 Countries after the Crisis, Comparative Economic Studies, November 2018, p.2

ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ վերաբաշխումը՝ որպես երևույթ, քաղաքական հիմնախնդիր է, քանի որ կապված է ժողովրդավարական-քաղաքական համակարգի բնույթի, ներհամակարգային փոխհարաբերությունների հետ, սակայն, միաժամանակ, այն նաև պետք է հանդիսանա պետության տնտեսական և սոցիալական քաղաքականությունների անքակտելի բաղադրատարրը:[1]

Առհասարակ, վերաբաշխման մասին խոսելիս անհրաժեշտ է առանձնացնել երեք առանցքային հարցադրում.[2]

*1. Վերաբաշխման՝ որպես գործընթացի, կարգավիճակը և արժեքը. Ի՞նչ է իրենից ենթադրում վերաբաշխումը, արդյո՞ք ունի միասնական և կապակցված իմաստ: Արդյո՞ք անհրաժեշտ է դիտարկել վերաբաշխման գործընթացի միայն նկարագրական ասպեկտը, որպեսզի հնարավոր լինի կառավարության գործողությունները դիտարկել որպես վերաբաշխիչ քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ առանց դրանք գնահատելու, թե՞ պետք է հաշվի առնել նաև վերաբաշխման գործընթացի բովանդակությունը՝ ի դեմս վերաբաշխման մեխանիզմների և դրանց գործարկման յուրահատկությունների:*

2. *Սոցիալական պրակտիկաների ո՞ր տիպին է պատկանում վերաբաշխումը,* և արդյո՞ք այդ գործընթացն օգտակար հենք է հանդիսանում ինստիտուցիոնալ մեխանիզմների ընկալման և գնահատման համար:

3. *Վերաբաշխման՝ որպես գործընթացի, բարոյական ասպեկտը.* կարելի է՞ արդյոք արդարացնել այն սոցիալական պրակտիկաները, որոնք, որպես կանոն, ներառում են վերաբաշխիչ տարրեր: Ինչ համատեքստում և ինչ նպատակներով է ընդունելի այդ պրակտիկայի կիրառումը, և արդյոք նշանակություն ունի այն փաստը, որ այս կամ այն սոցիալական պրակտիկան ենթադրում է վերաբաշխման իրականացում՝ առանց հստակ բարոյական հիմքի առկայության:

Իսկ վերաբաշխման գործընթացի առանցքային տարրերը որոշելիս պետք է քննարկել հետևյալ դրույթները.[3]

- Ո՞ր սուբյեկտների միջև է տեղի ունեցել վերաբաշխումը,
- Ինչպիսի՞ բարիքներ են վերաբաշխվել,
- Ո՞ր սոցիալական մեխանիզմն է ընկած եղել վերաբաշխման հիմքում:

---

[1] **Prasad N.,** Policies for Redistribution: the use of taxes and social transfers, ILO International Institute for Labour Studies, ISBN Print: 978-92-9014-887-6 Web/pdf: 978-92-9014-884-5, 2008, p.12

[2] **Alesina A.F., Giuliano P.,** Preferences for redistribution. Handbook of Social Economics, eds Bisin A, Benhabib J (North Holland, San Diego), 2009, pp. 93–102.

[3] International Social Survey Programme (2009) ISSP 2009 Social Inequality IV. Available at www.gesis.org/issp/modules/issp-modules-by-topic/social-inequality/2009/. մուտքի ամսաթիվ՝ 20.08.2020

Ելնելով վերոնշյալ հարցադրումներից՝ Մ. Սահլինսը պնդում է, որ վերաբաշխման գործընթացը կարող է բնութագրվել հետևյալ պարամետրերով.[1]

• Վերաբաշխման սուբյեկտ՝ առանձին անհատներ կամ խմբեր, ում ապրանքային պաշարների ծավալը փոփոխվում է վերաբաշխման հետևանքով,

• Սեփականություն և եկամուտ (նաև՝ազատություններ և հնարավորություններ ), որոնք բաշխվում են վերոնշյալ մեխանիզմի օգնությամբ,

• Սոցիալական մեխանիզմ՝ հարկային օրենսդրության, դրամավարկային քաղաքականության փոփոխում և այլն:

Չնայած նրան, որ ՏՀԶԿ անդամ-պետությունների կառավարությունները տարբեր լծակների միջոցով իրապես ազդում են ռեսուրսների վերաբաշխման վրա, արդեն վաղուց է, ինչ քննարկվում է այն հարցը, թե արդյոք կառավարությունները պետք է ձգտեն իրականացնելու իրենց վերաբաշխիչ գործառույթները և եթե այո, ապա ինչ չափով. սա նորմատիվային հարցադրում է, և նրա պատասխանը կախված կլինի եկամուտների վերաբաշխման մասին ընթացիկ պատկերացումներից: Ինքնին «եկամուտների վերաբաշխում» հասկացությունը վիճակագրական, դինամիկ հասկացություն է և սերտորեն կապված է այնպիսի ինստիտուտների հետ, ինչպիսիք են խնայողությունները, ներդրումները և հարկային համակարգը:

Հարկ է նշել, որ եկամուտների վերաբաշխման հիմնախնդիրը քաղտնտեսության առանցքային պրոբլեմատիկաներից է. մասնավորապես, խնդրահարույց է այն հանգամանքը, թե ինչպես՝ ինչ գործիքների և մեխանիզմների կիրառմամբ կառավարությունը պետք է վերաբաշխի հասարակության ներսում եղած ռեսուրսները: Այսպես, ՏՀԶԿ անդամ-պետություններում վերաբաշխումը՝ որպես գործընթաց, իրականացվում է հետևյալ երեք մեխանիզմների միջոցով.

1. Սոցիալական տրանսֆերտներ
2. Սոցիալական ծախսեր/արտոնություններ
3. Հարկում:

Քննարկենք դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին.

***Սոցիալական տրանսֆերտներ.*** Հարկ է նշել, որ եվրոպական երկրների մեծ մասում, հատկապես ՏՀԶԿ անդամ-պետություններում, հարկերը և տրանսֆերտները սոցիալ-տնտեսական անհավասարության մեղմման և վերջինիս աճի զսպման քաղաքական ռազմավարության անքակտելի տարրն են. ավելին, վերջիններս համեմատաբար առավել մեծ տեսակարար կշիռ ունեն նշյալ երկրների պետական բյուջեների կազմում, ինչից հետևում է, որ Եվրոպայում տնտեսությանը ցուցաբերվող պետա-

[1] **Sahlins, Marshall,** Stone Age Economics. New York: Aldine de Gruyter, 1972, p. 209.

կան միջամտության մեծ ծավալներ գործի են դրվում ռեսուրսների վերաբաշխման առավել բարձր մակարդակ ապահովելու համար։[1] Այսինքն, կարող ենք պնդել, որ հարկերը և տրանսֆերտները հասարակության եկամուտների վերաբաշխման ամենաուղղակի և հզոր գործիքներն են։

Վերաբաշխումը կարող է տեղի ունենալ սոցիալական տրանսֆերտների, այդ թվում նաև սոցիալական նպաստների և սոցիալական ապահովագրության ծրագրերի միջոցով։ Նշվածներից առաջինը հիմնականում իրականացվում է բնակչության կարիքավոր հատվածի սոցիալական վիճակի բարելավման նպատակով, այդ իսկ պատճառով կարելի է ակնկալել վերաբաշխիչ մեծ էֆեկտ։ Սակայն զարգացող երկրներում սոցիալական ապահովագրության ծրագրերը (կենսաթոշակային, գործազրկության ապահովագրություն) ավելի շատ ռեգրեսիվ բնույթի են, և այս միտումը խորանում է՝ պայմանավորված նրանով, որ այսպիսի ծրագրերը, որպես կանոն, հակված են բացառելու ոչ ֆորմալ տնտեսության մեջ զբաղվածներին, ովքեր անհամաչափ ձևով որոշակի տեսակարար կշիռ ունեն բնակչության ոչ ապահոված հատվածի կազմում։

***Սոցիալական ծախսեր/արտոնություններ.*** Սոցիալական ծախսերը ենթադրում են ներդրում հանրային ծառայությունների այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են, օրինակ, կրթությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը. այս ամենը կրում է զգալի վերաբաշխիչ էֆեկտ, ընդ որում, եթե հարկերը և սոցիալական տրանսֆերտները անմիջականորեն են ազդում եկամուտների վերաբաշխման վրա, ապա պետության կողմից հանրային ծառայությունների մատուցումը ունի ավելի երկարաժամկետ ազդեցության միտում։ Կրթության և առողջապահության ոլորտում, ինչպես նաև ներդրումներն այնպիսի ենթակառուցվածքներում, ինչպիքին են աղբահանությունը, ջրամատակարարումը, կարող են նպաստել խորը, արմատավորված անհավասարության մեղմմանը՝ լրացուցիչ հնարավորությունների ստեղծման միջոցով։

***Հարկում.*** Հայտնի է, որ ժամանակակից խառը տնտեսության պայմաններում վերաբաշխման հիմնական ձևն իրականացվում է հարկման միջոցով։ Ռ.Մասգրեյվը հարկումը ներկայացրել է որպես «խաղ ըստ տարբեր դերերի՝ կայունացում, բաշխում և վերաբաշխում»։[2] Կայունացումը, ըստ էության, վերաբերում է պետության կառավարության այն դերին, որի հիմնական նպատակը տնտեսական ակտիվության և սպառման ներդաշնակեցումն է։ Բաշխումը վերաբերում է հանրային բարիքների մատուցմանը, իսկ վերաբաշխումը՝ սոցիալական արդարության ապահով-

[1]**Adsera, A., C. Boix, and M. Payne**, "Are You Being Served? Political Accountability and the Quality of Government," *Journal of Law, Economics, and Organization* 19,2003, pp. 445–490.

[2] **Musgrave, R. A.,** The theory of public finance, 1959, (McGraw-Hill, New York).

ման նպատակով անհավասարության մեղմանն ուղղված միջոցառումների իրականացմանը, մասնավորապես, ռեսուրսներն ավելի հարուստներից դեպի աղքատներ ուղղելուն:

Առաջատար եվրոպական երկրներում, այդ թվում նաև ՏՀԶԿ անդամ-պետություններում, հարկման փիլիսոփայությունը ժամանակի ընթացքում փոփոխությունների է ենթարկվել: Այսպես, 1950-1960-ական թթ. նշյալ պետություններում կառավարության զարգացնող և բաշխիչ դերը լայնորեն ընդունված էր, իսկ պետության հարկաբյուջետային քաղաքականությունը համարվում էր բացառապես նրա ներքին գործառույթը: Առկա էր պնդում, որ լավագույն հարկային համակարգը պրոգրեսիվ եկամտահարկով և բարձր շահութահարկով համակարգն է: Չնայած այլ հարկատեսակներ ևս առկա էին, սակայն վերջիններս երկարաժամկետ հեռանկարում փոխարինվեցին եկամտահարկով: Սկսած 1970-ական թթ. բարձր հարկերը սկսեցին ընկալվել որպես տնտեսական ակտիվությանը խոչընդոտող գործոն:

Հատկանշական է, որ հարկման տարբեր մեխանիզմներ կարող են կիրառվել տարբեր նպատակներով՝ պետբյուջեի եկամտային մասի ավելացման, գործունեության որոշակի ձևերի խթանման, շուկայի ձախողումների հետևանքների չեզոքացման և այլ նպատակներով: Սակայն մեր կողմից հարկերը դիտարկվելու են անհավասարության մեղմացման գործիքի տեսանկյունից: Հետևաբար, կարող ենք փաստել, որ պետության հարկային համակարգը կարող է արտահայտել նաև նրա գաղափարական-քաղաքական գերակայությունները: Տարբեր հարկատեսակներ տարբեր ազդեցություն են ունենում բաշխման գործընթացի վրա: Այսպես, օրինակ, ֆիզիկական անձանց եկամտահարկը և գույքահարկը պրոգրեսիվ են, կորպորատիվ հարկերը (շահութահարկ)՝ U- ձև, այսինքն, ռեգրեսիվ փոքր և խոշոր և պրոգրեսիվ՝ միջին ընկերությունների համար, իսկ անուղղակի հարկերը՝ ռեգրեսիվ: Սակայն, ընդհանուր առմամբ, պետության հարկային համակարգի բնույթը հաշվի են առնվում բոլոր հարկատեսակները:

ՏՀԶԿ անդամ-պետություններում բնակչության եկամուտների անհավասար, ոչ համաչափ բաշխվածության առկա պատկերը, մասնավորապես, երկրների միջև եղած տարբերությունները հետևանք են մի շարք գործոնների փոխազդեցության, որոնցից հատկապես հարկ է առանձնացնել երեք առանցքայինները.[1]

1. **Ժողովրդագրական գործոն.** Զարգացած եվրոպական երկրների ժողովրդագրական համակարգերում տեղի ունեցած փոփոխությունները,

---

[1]Growing unequal? Income Distribution and Poverty in OECD countries, OECD 2008, p.289, https://www.mzv.sk/documents/10182/3990329/Growing+Unequal.pdf/6b5e3092-a9bb-47ca-9e28-d9a616ad1aff

առաջին հերթին, անդրադարձել են տնային տնտեսությունների նոր կենսապայմանների ձևավորման վրա: Մասնավորապես, նվազել է վերջիններիս միջին ծավալը, ինչը, ըստ մասշտաբի էֆեկտի, ենթադրում է տնտեսման հնարավորության կորուստ, ինչը, իր հերթին, նշանակում է, որ տնային տնտեսության նույն կենսամակարդակնմ ապահովելու համար անհրաժեշտ կլինեն ավելի շատ ռեսուրսներ (եկամուտ): Ամենաընդհանրական միտումը բնակչության շրջանում միջինից ցածր եկամուտ ունեցող (միայնակ ծնողներ, ծերեր) տնտեսությունների տեսակարար կշռի աճն է:

**Աղյուսակ 2.** Ժողովրդագրական փոփոխությունների ազդեցությունը եկամուտների բաշխվածության միտումների վրա

| *Ժողովրդագրական փոփոխություններ* | *Փոփոխություններ բնակչության կազմում ըստ տարիքի և տնային տնտեսությունների տիպի* |
|---|---|
| *Անհավասարության նշանակալի աճ* | Ավստրիալիա, Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Նիդեռլանդներ, Մեծ Բրիտանիա |
| *Անհավասարության աննշան աճ* | Բելգիա, Ֆինլանդիա, Լյուքսեմբուրգ, Նորվեգիա, Իսպանիա, ԱՄՆ |
| *Ոչ մի փոփոխություն* | - |
| *Անհավասարության աննշան նվազում* | Ավստրիա, Դանիա, Իտալիա, Շվեդիա |
| *Անհավասարության նշանակալի նվազում* | Մեքսիկա |

2. **Փոփոխություններ աշխատանքի շուկայի կառուցվածքում.** Առհասարակ, աշխատանքի շուկան վճռորոշ ազդեցություն ունի եկամուտների վերաբաշխման տեսանկյունից: Չնայած նրան, որ շատ հետազոտողներ այս գործոնն ուսումնասիրելիս ավելի շատ կենտրոնանում են լրիվ դրույքով աշխատողների, ինչպես նաև գլոբալիզացիայի, տեխնոլոգիաների և աշխատաշուկայի կոնկրետ ինստիտուտների ուսումնասիրության վրա, այնուամենայնիվ, աշխատանքի վարձատրության տարբերությունները աշխատանքի շուկայի կառուցվածքի փոփոխության լոկ մեկ դրսևորում է: Լրիվ դրույքով աշխատողների վարձատրության մեջ կտրուկ փոփոխություններ տեղի էին ունեցել դեռևս 1990-ական թթ.: Մյուս կողմից, ոչ լրիվ, ինչպես նաև ժամանակավոր զբաղվածության հնարավորության ի հայտ գալը նպաստեցին եկամուտների անհավասար բաշխվածության խորացմանը՝ ձևավորելով հետևյալ պատկերը.[1]

[1] Նույն տեղում, էջ 290:

**Աղյուսակ 3.** Աշխատանքի շուկայի կառուցվածքի փոփոխության ազդեցությունը եկամուտների բաշխվածության միտումների վրա

| | *Եկամուտների ընդհանուր բաշխվածությունն ըստ աշխատանքի շուկայի կառուցվածքի փոփոխության* |
|---|---|
| *Անհավասարության նշանակալի աճ* | Ավստրիալիա, Չեխիա, Գերմանիա, Հունգարիա, Իռլանդիա, Կորեա, Լեհաստան, Շվեյցարիա |
| *Անհավասարության աննշան աճ* | Նիդեռլանդներ, Նոր Զելանդիա, Շվեդիա, Մեծ Բ-րիտանիա, ԱՄՆ |
| *Ոչ մի փոփոխություն* | - |
| *Անհավասարության նվազում* | Կանադա, Ֆինլանդիա, Ֆրանսիա |

3.**Պետական հարկային և տրանսֆերտային քաղաքականությունը.** Վերաբաշխման գործընթացների ծավալների սահմանումը սոսկ քաղաքականության ձևավորման (policy design) հետևանք չէ. այստեղ կարևոր են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են հարկային պարտավորությունների կատարման աստիճանը և փոխանցվող տրանսֆերտների ծավալը:

ՏՀԶԿ անդամ-պետությունների՝ եկամուտների վերաբաշխման ձևերի միջև առկա տարբերությունները մասամբ արտացոլում են այն, թե ինչպես են պետությունների կառավարությունները բաշխում հավաքագրված հարկերը, տրանսֆերտները և սոցիալական արտոնությունները: Իրականացված վերլուծության արդյունքները փաստում են, որ սոցիալ-տնտեսական անհավասարության նվազեցմանն ուղղված վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետությունն առավել մեծ է Հյուսիսային Եվրոպայի երկրներում, և պակաս արդյունավետ, օրինակ, ԱՄՆ-ում և Կորեայում: Բացի այդ, հասարակության եկամուտների վերաբաշխման մաշտաբների տարբերությունները վկայում են սոցիալական ծախքերի տարբեր չափերի և կառուցվածքի մասին, ընդ որում, աշխատունակ բնակչության վրա կատարվող ծախքերն ավելի են մեղմում աղքատության ցուցանիշները, քան այն պարագայում, երբ այդ նույն ծախքերն ուղղվում են կենսաթոշակային տարիքի անձանց սոցիալական ապահովության համակարգ:

Ներկայումս ՏՀԶԿ անդամ-պետությունների մեծ մասը եկամտահարկը և տրանսֆերտներն օգտագործում է՝ խորացող սոցիալ-տնտեսական անհավասարության տեմպերը զսպելու համար: Միջինում, ըստ ՏՀԶԿ երկրների, վերաբաշխումը նվազեցնում է աշխատունակ բնակչության շրջանում շուկայական եկամուտների անհավասարությունը շուրջ 27 %-ով: Ընդ որում, ՏՀԶԿ-երկրները տարբերվում են եկամուտների վերաբաշխման մակարդակներով. այսպես, օրինակ, հարկերի և տրանսֆերտ-

ների՝ որպես վերաբաշխիչ քաղաքականության ակտիվ մեխանիզմների, միջոցով տեղի է ունենում շուրջ 40 %-ով եկամուտների անհավասարության մակարդակի կրճատում ՏՀԶԿ անդամ այնպիսի պետություններում, ինչպիսիք են Բելգիան և Ֆինլանդիան: Մինչդեռ վերաբաշխման ցուցանիշը կազմում է 5%՝ Չիլիում, 8%՝ Կորեայում, և 16-19 %-ի միջակայքում՝ Շվեյցարիայում, Ճապոնիայում և ԱՄՆ-ում:[1]

Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ ՏՀԶԿ անդամ-պետությունները իրականացնում են եկամուտների վերաբաշխում տարբեր միջոցներով, օրինակ, որոշ պետություններ տրամադրում են ունիվերսալ արտոնություններ, տրանսֆերտներ, մյուսները՝ առաջ քաշում և իրագործում նպատակային սոցիալական ծրագրեր, երրորդ խումբ երկրները՝ հարկային դրույքաչափի իջեցումներ կատարում ցածր եկամտաբերությամբ ընտանիքներին [2]:

**Աղյուսակ 4.** Պետության հարկային և տրանսֆերտային քաղաքականության ազդեցությունը եկամուտների բաշխվածության միտումների վրա

| | *Անհավասարության նվազեցում հարկերի և տրանսֆերտների միջոցով* | *Անհավասարության նվազեցում միայն հարկերի միջոցով* | *Անհավասարության նվազեցում միայն տրանսֆերտների միջոցով* |
|---|---|---|---|
| *Անհավասարության նշանակալի աճ* | Չեխիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա | Դանիա, Գերմանիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Մեծ Բրիտանիա | Չեխիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա |
| *Ոչ մի փոփոխություն* | Ավստրալիա, Կանադա, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա | Ավստրալիա, Կանադա, Չեխիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Իռլանդիա, Նոր Զելանդիա | Ավստրալիա, Նորվեգիա |
| *Անհավասարության նվա-* | Դանիա, Ֆինլանդիա, Իռ- | Ճապոնիա, Նորվեգիա, Շվեդիա, | Կանադա, Դանիա, Ֆինլանդիա, |

[1] **Thévenot C.**, Inequality in OECD countries, OECD, Paris, France< Scandinavian Journal of Public Health, 2017; 45(Suppl 18), pp.9-16, https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/1403494817713108

[2] Growing unequal? Income Distribution and Poverty in OECD countries, OECD 2008, p.291, https://www.mzv.sk/documents/10182/3990329/Growing+Unequal.pdf/6b5e3092-a9bb-47ca-9e28-d9a616ad1aff

| | | | |
|---|---|---|---|
| *զում* | լանդիա, Նի-դեռլանդներ, Նորվեգիա, Նոր Զելան-դիա, Շվեդիա, ԱՄՆ | ԱՄՆ | Իռլանդիա, Նոր Զելանդիա, Շվե-դիա, Նիդեռլանդ-ներ, Մեծ Բրիտա-նիա, ԱՄՆ |

Այսպիսով, եկամուտների անհավասար բաշխվածության վրա ներգործող քննարկված գործոններից յուրաքանչյուրը՝ ժողովրդագրական, աշխատանքի շուկայի կառուցվածքի փոփոխությունները, պետության կողմից իրականացվող վերաբաշխումը ունի վճռորոշ ազդեցություն, և ավելին, ՏՀԶԿ անդամ յուրաքանչյուր պետության համար առավել ազդեցիկ է այս կամ այն գործոնը: Սա նշանակում է, որ չկա մեկ միասնական, ունիվերսալ «սցենար», որն ընդհանրական կլինի բոլորի համար:

Սա նշանակում է, որ ազատ, ինքնակարգավորվող շուկայական համակարգը հնարավորություն է տալիս տարբեր երկրների կառավարություններին՝ ձևավորելու և գործարկելու վերաբաշխման սեփական գործառույթները և մեխանիզմները: Սակայն հայտնի է, որ վերաբաշխիչ քաղաքականությունն իրականացվում է աղքատության նվազեցմանն ուղղված պետական ծրագրերի, ինչպես նաև տնտեսական կարգավորման միջոցով: Նման ծրագրերը, մի կողմից, հանգեցնելով անհավասարության մեղմացման, կարող են մեծ հարված հասցնել պետության տնտեսական աճի տեմպերին, քանի որ կապված են այնպիսի բացասական երևույթների հետ, ինչպիսիք են պետական ծախսերի ավելացումը, խնայողությունների ծավալի նվազեցումը, հարկային բեռի աճը, ենթակառուցվածքների զարգացմանն ուղղվող պետական ներդրումների ծավալի կրճատումը և այլն: Այսպես, օրինակ, առաջատար եվրոպական երկրներում, այդ թվում նաև ՏՀԶԿ անդամ-պետություններում, նվազագույն ընդունելի կենսամակարդակի սահմանումն ավելի բարձր է, քան ԱՄՆ-ում, որն արտացոլվում է պետական ծախսերի ավելի մեծ տեսակարար կշռով: Շատ երկրներում աղքատության սահմանումը և դրա մակարդակը «բացարձակ» լինելուց անցում է կատարել (որոշվում է սննդի, հագուստի և ապաստանի նվազագույն պահանջով) դեպի ավելի հարաբերական հայեցակարգ, ինչը թույլ է տալիս աղքատներին մասնակցել կենսամակարդակի իրական բարձրացմանը:

Սակայն տարբեր հեղինակների կողմից իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ ՏՀԶԿ անդամ-պետությունների կառավարությունների քաղաքականության մեջ իրականացված փոփոխությունները նշանակալի ներդրում են ունեցել վերաբաշխման գործընթացի մեջ: Մասնավորապես, վերաբաշխիչ քաղաքականության մեջ համապա-

տասխան փոփոխությունները ներառել են այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են ցածր եկամտաբերությամբ տնտեսություններին օժանդակության ցուցաբերումը և կապիտալից եկող բարձր եկամուտների դեպքում՝ հարկային բեռի թեթևացումը, քանի որ գլոբալիզացիան ստիպել էր կազմակերպության անդամ-պետություններին զերծ մնալ բարձր մոբիլությամբ հարկային բազաներից:

Գործնականում այն ամենը, ինչ անում է կառավարությունը, որոշակի ազդեցություն է ունենում հասարակության տարբեր մակարդակներում եկամտի կամ հարստության բաշխման և վերաբաշխման վրա: Սակայն կառավարության կողմից վերաբաշխիչ գործառույթների իրականացումը և պետական բյուջեի վերաբաշխման հետևանքները կարող են տարբեր կերպ արտահայտվել. այսպես, օրինակ, բուժհաստատություններում կատարելագործումների շարքի իրականացումն օգուտ է բերում հիվանդներին, ծերերին և երեխաներ ունեցողներին: Գարեջրի և ծխախոտի նկատմամբ հարկերի ավելացումն ազդում է աղքատների սոցիալական վիճակի վրա, միաժամանակ՝ կապիտալի վրա հարկերի ավելացումն ազդում է հարուստների վրա անգամ պետության կառավարության կարգավորիչ և նորմաստեղծ գործունեությունը շահեկան է բնակչության մի հատվածի համար, այսինքն, հանրային բարիքների բաշխումը տեղի է ունենում ոչ համաչափ ձևով:

Կարելի է գալ ընդհանրական եզրահանգման, որ սովորաբար վերաբաշխման հետևանքները բացահայտ են, սակայն երբեմն դրանք մնում են չբացահայտված, անբկանխատեսելի և ոչ այնքան հասկանալի: Այնուամենայնիվ, տնտեսագետները բերում են վերաբաշխման ոչ թե անուղղակի, այլ բացահայտ գործիքների օգտին մի շարք փաստարկներ: Հիմնական փաստարկը կայանում է նրանում, որ վերջիններս կապահովեն հասարակության ներսում տիրող բացասական երևույթների չեզոքացման առավել արդյունավետ միջոցների գործարկում: Վերաբաշխման ուղղակի գործիքների օգտին երկրորդ փաստարկն այն է, որ դրա միջոցով աճում է բնակչության սոցիալական բարեկեցության մակարդակը: Նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ բոլորն ունեն ընդունելի նվազագույն կենսամակարդակից բարձր մակարդակ, առկա են հիմքեր՝ ռեսուրսներն ավելի հարուստներից դեպի աղքատների վերաբաշխելու համար:

Վերաբաշխման օգտին մյուս փաստարկները ծագում են այնտեղ, որտեղ շուկան թույլ չի տալիս մարդկանց վերաբաշխումներ իրականացնել իրենց կյանքի տարբեր ժամանակաշրջաններում. դասական օրինակ է այն, որ մարդիկ իրենց ծախսերի առավելագույն մակարդակին են հասնում երեխաների ծննդյան և խնամքի ժամանակաշրջանում (ժամանակավոր անաշխատունակություն)՝ նվազագույն եկամտաբերության պայմաններում: Այն

ընտանիքները, որոնք հասանելիություն չունեն շուկաներին, կիրառում են երեխաների դաստիարակման համար ռեսուրսների վերաբաշխման փաստարկը: Մյուս փաստարկը պնդում է, որ նոր սերունդը, երեխաները, ընդհանուր առմամբ, օգուտ են բերում հասարակությանը, ուստի ծնողները պետք է պարգևատրվեն ՝ նման «հանրային բարիք» ստեղծելու համար: Անշուշտ, այս փաստարկը որևէ արժեքային ուժ չի ունենա գերբնակեցվածության հետ կապված խնդիրներ ունեցող պետություններում:[1]

Միաժամանակ, ՏՀԶԿ անդամ-պետությունների կառավարությունների քաղաքականությունների մեջ ոչ բոլոր փոփոխություններն են հանգեցրել վերաբաշխման ծավալների կտրուկ փոփոխության: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ եկամուտների անհավասարությունն աճում էր ինչպես հարկերի և տրանսֆերտների վճարումից առաջ, այնպես էլ հետո, աշխատատեղերի ստեղծման խթանումը և պետության կողմից «աշխատիր-վարձատրվիր» սկզբունքով զբաղվածության քաղաքականության իրագործումն անբավարար էին անհավասարության մեղմման համար: Այսինքն, վերաբաշխիչ քաղաքականության մեջ փոփոխությունները պետք է արվեն՝ այդ քաղաքականության իրագործման փոփոխվող միջավայրը հաշվի առնելով: Ավելին, այս բնագավառում տեղի ունեցող բարեփոխումները պետք է ձգտեն ընդլայնել ցածր եկամուտներ ունեցողների սոցիալական օժանդակության ծավալները:

Առավել լայն իմաստով՝ անհավասարության կամ առնվազն սոցիալական բևեռացվածության դեմ պայքարը պահանջում է ռազմավարական մոտեցում՝ այսինքն, ծրագրային փաթեթների մշակում, որոնց հիմնական նպատակը կլինի հասարակության բոլոր խմբերի համար առկա հնարավորությունների, առաջին հերթին, որակյալ կրթական և առողջապահական համակարգերի նկատմամբ հավասար հասանելիության ապահովումը: Այս ամենը պահանջում է նաև այնպիսի քաղաքականության իրագործում, որը կնվազեցնի անհավասարության չափը նաև հարկերի և տրանսֆերտների վճարումից հետո, օրինակ, պրոգրեսիվ հարկային համակարգ, տրանսֆերտների ուղղում դեպի ցածր եկամուտներ ունեցող խմբեր և տնտեսություններ այլն:

**Нарине Асрян, Текущие тенденции в политике перераспределения в экономически развитых странах -** Современные социально-экономические системы развитых европейских стран характеризуются социальной поляризацией и неравномерным распределением доходов населения. Более

[1] **Lerman R.,** "U.S. Income Inequality Trends and Recent Immigration," American Economic Review 89, no. 2 (1999), pp. 23–38, https://www.britannica.com/topic/government-economic-policy/The-distributive-function

того, эта тенденция стала более выраженной в конце 1980-х годов, в основном из-за непропорционального распределения рыночных доходов. Примечательно, что государства-члены ОЭСР не остались в стороне от этого явления, несмотря на то, что у них имеются относительно развитые, сложные комплексные системы социальной защиты.

В статье подробно рассматриваются механизмы перераспределения, используемые странами-участниками ОЭСР (денежные переводы, социальные расходы, налогообложение), а также факторы (демографические, структура рынка труда, государственная налоговая и трансфертная политика), которые повлияли на формировании картины неравномерного распределения доходов населения стран ОЭСР. На основании проведенного анализа мы пришли к выводу, что борьба с неравенством или хотя бы социальной поляризацией требует стратегического подхода, то есть изменения в перераспределительной политике должны производиться с учетом меняющейся среды реализации этой политики.

**Narine Asryan, Current Trends in Redistributive Policy in economically developed Countries** - The current socio-economic systems of developed European countries are characterized by social polarization and unequal distribution of public incomes. Moreover, this tendency became more pronounced in the late 1980s, mainly due to the disproportionate distribution of market income. It is noteworthy that the OECD member states were not left out of this phenomenon, despite the fact that they have relatively developed, complex, comprehensive social protection systems.

The article discusses in detail the redistributive mechanisms used by OECD member states (remittances, social spending, taxation), as well as the factors (demographic, labor market structure, state tax-transfer policy) that have influenced the OECD to grow. The current picture of unequal, unequal distribution of public incomes. Based on the analysis, we came to the conclusion that the fight against inequality or at least social polarization requires a strategic approach, that is, changes in redistributive policy must be made taking into account the changing environment of implementation of that policy.

# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**Բանալի բառեր** - սոցիալ-տնտեսական անհավասարություն, անհավասարության պատճառներ, բնակչության եկամուտների բաշխում, արհմիություններ:

Սոցիալ-տնտեսական անհավասարության խնդիրը կարող է ընկալվել բավականին լայն՝ բնակչության շերտերի միջև հանրային աշխատանքի արդյունքների բաժանումից մինչև իրական կյանքում շոշափելի անհավասարություն: Այս երևույթի բուն պատճառը հեղինակների կարծիքով համարվում է բնակչության եկամուտների բաշխման անհավասարությունը:

ՀՀ-ում եկամտի բաշխման բարձր անհավասարությունը ի սկզբանե կապված է շուկայական տնտեսությանն կտրուկ անցման և կապիտալի նախնական կուտակման ժամանակաշրջանի հետ՝ իրական արհմիությունների բացակայության և սոցիալական ոլորտում բյուջետային քաղաքականության թուլության ֆոնին: Ուստի, նման մակարդակն ամրապնդվեց և միանգամայն բնական դարձավ հայկական տնտեսական համակարգի համար:

Վերջին տասնամյակներում առկա և ժամանակակից տնտեսական համակարգում սոցիալ-տնտեսական անհավասարության խնդիրն ավելի ու ավելի մեծ տեղ է զբաղեցնում գիտական հետազոտությունների համաշխարհային պրակտիկայում: 2019թ.-ին Ալֆրեդ Նոբելի հիշատակի մրցանակի կոմիտեի վերջին որոշումը կարող է դրան հաստատող փաստ դառնալ: Սակայն ՀՀ-ի տնտեսական գիտության մեջ այդ հարցը, որն առավել սուր է մեր երկրի համար, հազիվ թե լայնորեն քննարկվի:

Սոցիալ-տնտեսական անհավասարությունն այսօր թե՛ տնտեսագիտության, թե՛ տնտեսական քաղաքականության ամենահրատապ խնդիրներից է: Դեռ Ժ.-Ժ. Ռուսոն գրել է, որ ֆիզիկական անհավասարությունը «հաստատվում է բնության կողմից և բաղկացած է տարիքային, առողջության, մարմնի ուժի և մտավոր կամ մտավոր հատկությունների տարբերությունից»: Եվ անհնար է վերացնել այս անհավասարությունը, այստեղ որևէ հարց չկա: Կամ, ինչպես հետագայում գրել է Ռուսոն, «այն չի

հայտնվում խելացի և ազատ մարդկանց առջև, ովքեր փնտրում են ճշմարտությունը»[1]: Լ. Թյուրոուի կարծիքով մեծ կապ գոյություն ունի շուկայական ժողովրդավարության և տնտեսական անհավասարության միջև: Այսպիսով, Լ. Թյուրոուն գրում է. «Պատմությունը ցույց է տալիս, որ քանի որ շուկայական տնտեսությունը ժողովրդավարության հետ համատեղ չի զարգացրել տնտեսական հավասարությունը, ուստի բոլոր ժողովրդավարական երկրները ստիպված են եղել «միջամտել» շուկայի գործերին մի շարք ծրագրերով՝ ուղղված հավասարության խթանմանը և անհավասարության աճը կանխելուն»[2]:

Տնտեսական անհավասարությունն այսօր թե՛ տնտեսական գիտության, թե՛ տնտեսական քաղաքականության ամենաhրատապ խնդիրներից է: Տնտեսագիտության ոլորտում նոբելյան դափնեկիր Ժոզեֆ Ստիգլիցը իր վերջին գրքում գրում է. «Անհավասարությունը հասել է այն փուլին, երբ այն դադարել է արդյունավետ լինել, բայց վերածվել է զարգացման լուրջ խոչընդոտի»[3]: Թ. Պիկետտին իր «Կապիտալը XXI դարում» գրքում անհավասարությունն անվանել է կապիտալիզմի հիմնարար հակասություն՝ բնութագրելով այսպես. «Անհավասարությունը նշանակում է, որ անցյալում կուտակված գույքի վերակապիտալիզացիան ավելի արագ է ընթանում, քան արտադրությունն ու աշխատավարձերը աճում են: Այս անհավասարությունն արտացոլում է հիմնարար տրամաբանական հակասությունը»[4]:

Պիկետտին, ուսումնասիրելով Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի պատմական օրինակը, ասում է, որ անհավասարության անկումն ու դրան հաջորդող աճը պայմանավորված են, համապատասխանաբար, ազգային եկամտի մեջ կապիտալի եկամտի մասնաբաժնի անկմամբ և ավելացմամբ: Նշենք, որ վիճակագրական նյութը, որը բերում է Պիկետտին, լիովին համապատասխանում է ավելացված արժեքի տեսության և Կ. Մարքսի եզրակացությունների հետ: Իսկապես, վերլուծելով կապիտալիզմը 19-րդ դարում, Մարքսը եզրակացրեց, որ այն անհավասարությունը, որը նա տեսել էր, պայմանավորված էր բուրժուազիայի կողմից հավելյալ արժեքի կորզմամբ: Այն գործընթացում ազգային եկամտի մեջ կապիտալ եկամուտների մասնաբաժինը նվազզում է, իսկ աշխատավարձի մասնաբաժինը աճում, կապված է ձեռնարկատերերի վրա արևմտյան կապիտալիզմի երկրներում արհմիությունների ուժեղ ճնշման և աշխատանքի ար-

[1] **Руссо Ж. Ж.**, “Трактаты” // Москва: Наука, 1969, с. 45.

[2] **Туроу Л.** “Будущее капитализма” // Как сегодняшние экономические силы формируют завтрашний мир, Новосибирск: Сибирский хронограф, 1999, с. 291.

[3] **Стиглиц Дж.** “Цена неравенства”. Чем расслоение общества грозит нашему будущему // Москва: Эксмо, 2015, с. 13.

[4] **Пикетти Т.**, “Капитал в XXI веке” // Москва: Ад Маргинем Пресс, 2015, с. 585.

տաղրողականության արագ աճի դարաշրջանի հետ: Սակայն 20-րդ դարի 80-ականներից պետական ծրագրերի և հարկման ոլորտում արիմիություններ և սոցիալական քաղաքականության դերը նվազել է, և իրավիճակը սկսել է հակառակ ուղղությամբ զարգանալ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կապիտալիստական համակարգում բնակչության շերտերի միջև ազգային եկամտի բաշխման բարձր անհավասարության վիճակը բնական է, պայմանով, որ եկամուտների բաշխման վրա ակտիվ պետական կամ սոցիալական ազդեցություն չլինի:

Ամերիկացի հայտնի փիլիսոփա Ջոն Ռոլզի կարծիքով, սոցիալական և տնտեսական անհավասարությունը, օրինակ՝ հարստության և իշխանության մեջ, կարող է արդար ճանաչվել միայն այն դեպքում, եթե այն կապված է հասարակության բոլոր մյուս անդամների, ներառյալ, առաջին հերթին, առավել քիչ հաջողության հասնելու հետ: Ջ. Ռոլզը վստահ է, որ քչերի վաստակած բարձր բարեկեցության մեջ ոչ մի անարդարություն չկա, պայմանով, որ պակաս հաջողակ մարդիկ դրանով բարելավում են իրենց վիճակը: Ջ. Ռոլզի ուսումնասիրության կարևոր եզրակացությունը կայանում է նրանում, որ կենսամակարդակի բոլոր մատչելի բաշխումներից ամենաարդարն այն է, որ հասարակության ամենաանբարենպաստ անդամի բարեկեցությունն առավելագույնի հասցնի[1]:

Երկրի բնակչության եկամուտների խնդիրներից մեկը դրանց արդարացի սահմանման դժվարություններն են: Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը տեղեկատվության հիմնական աղբյուրներից մեկն է, որը բնութագրում է դրամական եկամուտների, ծախսերի և բնակչության խնայողությունների ծավալն ու կառուցվածքը: Այն արտացոլում է համախառն եկամտի մի մասը, որը գոյություն ունի դրամական ձևով: Հաշվեկշիռը սոցիալ-տնտեսական վերլուծության գործիքներից մեկն է, որը բնութագրում է բնակչության կենսամակարդակը: Այն հնարավորություն է տալիս վերլուծել խմբի եկամուտների և ծախսերի ցուցանիշները՝ ըստ միջոցների ստացման աղբյուրների և դրանց ծախսման ուղղությունների[2]: Այն արտացոլում է դրամական եկամուտները և դրանց օգտագործումը պաշտոնապես գրանցված (հաշվառման) տարբերակում:

ՀՀ-ում եկամուտների բաշխման բարձր անհավասարությունը ի սկզբանե կապված է շուկայական տնտեսավարմանը կտրուկ անցման և կապիտալի նախնական կուտակման ժամանակաշրջանի հետ, երբ սկսվեց պետական սեփականության մասնավորեցումը, ԽՍՀՄ-ում իրական արիմիությունների բացակայության և սոցիալական ոլորտում բյու-

---

[1] **Ролз Дж.**, "Теория справедливости" //Москва: ЛКИ, 2010.- с. 22.

[2] **Жеребин В. М., Романов А. Н.** "Уровень жизни населения" //Москва: ЮНИТИ-ДАНА, 2002. – с. 45.

ջետային քաղաքականության թուլության ֆոնին: Այդ պատճառով էլ այդ մակարդակը արձանագրվել է և նույնպես բնական է դարձել մեր տնտեսական համակարգի համար:

Հաջորդը, պետք է հաշվի առնել բնակչության իրական տնօրինելի եկամուտների դինամիկան: Ընդհանուր առմամբ 2001-2019թթ.-ներին բնակչության իրական տնօրինելի եկամուտները աճելեն 5 անգամ, բայց իրականում գնաճով պայմանավորված այնքան էլ դրական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Ամենայն հավանականությամբ, ճիշտ կլիներ կարծել, որ բնակչության իրական տնօրինվող եկամուտները երկու պատճառով են ընկնում. նախ, անհրաժեշտ է հաշվի առնել կուտակված գնաճը և սպառողական գների ինդեքսի փոփոխությունները, և երկրորդ, պարտադիր վճարների, ինչպես նաև վարկերի վճարումների ավելացումը:

Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է քանակական գնահատական տալ Հայաստանի Հանրապետությունում բնակչության եկամուտների վիճակին: Բնակչության դրամական եկամուտների բաշխման տվյալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Ինչպես տեսնում ենք, բնակչության երրորդ և չորրորդ խմբերին, որոնք, ըստ էության, պետք է կազմեին միջին դասը, բաժին է ընկնում եկամուտների ընդամենը 38-40%-ը, ինչը շատ քիչ է, իսկ առաջին երկու խմբերին բաժին է ընկնում ընդամենը 16-20%-ը (տե՛ս աղյուսակ 1):

**Աղյուսակ 1.** Բնակչության դրամական եկամուտներն ըստ քվինտիլային խմբերի[1]

| | Դրամական եկամուտներ | Այդ թվում՝ բնակչության 20 տոկոս խմբերի համար,% | | | | | Ջինի ինդեքս |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առաջին (նվազագույնեկամ ուտներով) | Երկրորդ | Երրորդ | Չորրորդ | Հինգերորդ (առավելագույն եկամուտներով) | |
| **2001 - 2004** | 100 | 6 | 12 | 18 | 22 | 42 | 0,487 |
| **2005** | 100 | 7 | 13 | 17 | 23 | 40 | 0.374 |

[1]Աղբյուրը՝ https://www.armstat.am/am/?nid=586:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **-<br>2009** | | | | | | | |
| **2010<br>-<br>2014** | 100 | 7 | 13 | 17 | 23 | 40 | 0,370 |
| **2015<br>-<br>2019** | 100 | 5 | 11 | 16 | 22 | 46 | 0,369 |

Նախ, անհավասարության բարձր մակարդակն է այսպես ազդում է տնտեսական աճի տեմպերի վրա, ինչը կարելի է բացատրել տրամաբանության և ողջախոհության փաստարկներով: Նախ, նշենք, որ այն ազդեցություն է ունենում նաև սպառողական պահանջարկի վրա: Հաշվի առնելով այ նհանգամանքը, որ առաջին չորս 20-տոկոսանոց խմբերին բաժին է ընկնում ազգային եկամտի միայն 54%-ը, բնակչության զգալի մասը չի կարող ներկայացնել ապրանքների և ծառայությունների զգալի պահանջարկ, ինչը խոչընդոտ է դառնում սպառողական պահանջարկի աճի համար, որը հիմնականում երկրի ՀՆԱ-ի չափի հիմնական գործոնն է:

2019թ.-ին աղքատության մակարդակը Հայաստանում գնահատվել է 26.4%: Այս մասին տեղեկանում ենք Վիճակագրական կոմիտեի (ՀՀՎԿ) հրապարակած« Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցից: Ինչպես պարզաբանված է զեկույցում, 2019թ.-ի աղքատության մակարդակը համադրելի չէ 2018թ.-ին արձանագրված 23.5% աղքատության ցուցանիշին՝ պայմանավորված ազգաբնակչության սպառման և աղքատության չափման մեթոդաբանության փոփոխությամբ Աղքատությունը Հայաստանումգնահատվում է 1996թ. սկսած: 2019թ.-ից օգտագործվում է Համաշխարհային բանկի վերանայված՝ չորրորդ մեթոդաբանությունը, այնէ՝ աղքատության գնահատումն ըստ չորս շեմերի: Ընդ որում, հստակ փոխկապվածություն չի նկատվում երկրի տնտըեսական աճի և ազգաբնակչության աղքատության մակարդակի փոփոխությունների միջև (տես գծապատկեր 1):

**Գծապատկեր 1**. ՀՀ ազգաբնակչության աղքատության մակարդակը և տնտեսական աճը 2008-2019թթ.-երի ընթացքում (%)[1]




Տնտեսական աճի հետ սերտորեն կապված և դրա վրա ազդող կարևորագույն տնտեսական բնութագրերից են անհավասարությունը կամ ազգային եկամտի կամ ազգային հարստության բաշխման անհավասարությունը: Անհավասարությունը կարող է սահմանվել նաև ավելի նեղ, որպես աշխատավարձի, մարդկային կամ ֆիզիկական կապիտալի, բնական ռեսուրսների անհավասարություն: Տնտեսական աճի և բաշխման անհավասարության միջև հարաբերությունների խնդրի բարդությունը կայանում է ինչպես դրանց միջև հարաբերությունների աստիճանի և բընույթի էմպիրիկ գնահատումների անորոշության մեջ, այնպես էլ դրանց փոխադարձ ազդեցության մեջ: Ոչ միայն անհավասար բաշխումն ազդում է տնտեսական աճի վրա, այլև ազգային արտադրանքի բաշխման վիճակը փոխվում է տնտեսական զարգացման հետզուզընթաց[2]:

Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմեր՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ, ներառյալ ձայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը: Այն ցուցանիշները, որոնք ներկայացված են հոդվածում, ցույց են տալիս բնակչության նյութական աղքատությունը: Իսկ ոչ նյութական աղքա-

---

1 Աղբյուրը՝ https://www.armstat.am/am/?nid=586:

2 **Шараев, Ю. В.,** “Теория экономического роста” // Ю.В. Шараев; Гос. унт – Высшая школа экономики. Москва: Изд. дом ГУ ВШЭ, 2006. с. 169.

տության բնորոշիչներն են՝ վատ առողջությունը, կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, անպաշտպանվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը և այլն:

Բնակչության խնայողությունների ձևավորման խնդիրը նույնպես առկա է: Ելնելով վիճակագրական տվյալներից՝ կարելի է եզրակացնել, որ միայն մի փոքր մասն է Հայաստանի բնակչության կարող է առաջացնել բավարար քանակությամբ խնայողությունների ներդրումներ սեփական տնտեսության մեջ: Այնուհետև կա պարադոքսալ իրավիճակ մակրոտնտեսական վերլուծության մեջ: Քեյնսը, օգտվելով իր տեսությունից, ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ արդյունաբերական երկրներում տնտեսելու ցանկությունը միշտ գերազանցում է ներդրումներ կատարելու ցանկությունը, ինչը պարբերաբար բերում է ներդրումների նկատմամբ խնայողությունների ավելացման: Հայկական օրինակը փոքրինչ«յուրահատուկ» է դառնում այն իմաստով, որ բնակչության մոտ արմատացած եկամուտների բաշխման արդյունքում, ընդհակառակը, ներդրումների համար միջոցներ չեն բավականացնում, ինչի պատճառով առաջանում է համապատասխան պահանջարկի դեֆիցիտ, որը պետությունը փորձում է լրացնել օտարերկրյա կապիտալի ներգրավման հաշվին:

Այսպիսով, այստեղ կարելի է ասել, որ Հայաստանում եկամուտների ներկայիս չափազանց անհավասար բաշխումը հանգեցնում է տնտեսական աճի որոշակի սահմանափակումների: Անհավասարության նման բարձր մակարդակն ազդում է հասարակության զարգացման կայունության վրա, քանի որ էկզոգեն տնտեսական ցնցումների պայմաններում հանգեցնում է սոցիալական կատակլիզմների և ներքին իրավիճակի ապակայունացման: Այս երևույթը հիմնականում կարտացոլվի ոչ տնտեսական հարթությունում, այն է՝ սոցիալական և քաղաքական ոլորտներում, սակայն դրանց վատթարացումն ուղղակիորեն կազդի երկրի ներդրումային գրավչության վրա՝ դեպի իջեցում, ինչը տնտեսական գործոն է: Այսպիսով, անհավասարության կատեգորիան մեծ մասամբ արժեքային կատեգորիա է՝ սերտորեն կապված արդարադատության հայեցակարգի հետ: Հասարակության մեջ գերիշխող հասկացությունները որոշում են եկամտի բաշխման անհավասարության մակարդակը, որը հասարակությունը ճանաչում է որպես նորմ: Այս նորմից շեղումը բացասաբար է ազդում տնտեսական զարգացման վրա: Անհավասարության օպտիմալ չափիչ գտնելու այս եղանակը կարելի է անվանել սոցիալական: Վերջին գիտական հրապարակումները ցույց են տալիս, որ «այն երկրներում, որտեղ ավելի շատ հավասարություն կա, ավելի շատ երեխաներ են ծնվում, և մարդիկ, ընդհանուր առմամբ, ավելի առողջ և երջանիկ են: Հավասարութ-

յունը շահաբաժին է վճարում մարդու կյանքի բոլոր փուլերում՝ մանկությունից մինչ ծերություն»[1]: Ներկայումս, շատ դեպքերում, բարեկեցության մակարդակների անհավասարությունը դիտվում է որպես սոցիալ-տնտեսական տարբերակում, և դրա հիմնական պատճառը բնակչության եկամուտների տարբերակումն է (անհավասարություն): Եկամտի անհավասարությունը շուկայական տնտեսության հիմքն է, դրա արդյունավետ գործունեության նախապայմանը, մարդկային բնույթին բնորոշ ուժեղագույն շարժիչ ուժը[2]: Ի՞նչ միջոցներ կարող է ձեռնարկել հասարակությունը հավասարեցնելու եկամուտների բաշխումը և նվազեցնելու անհավասարությունը: Այստեղ անհրաժեշտ է կրկին անդրադառնալ համընդհանուր բարեկեցության պետության փորձին, որը կարող էր օպտիմալ հարաբերակցություն գտնել պետական հատվածի զարգացման համար միջոցների օգտագործման և շուկայական տնտեսության արդյունավետ աճի համար: Առաջին հերթին, պետության բարեկեցության հիմքը առաջադեմ հարկային համակարգի ներդրումն է, որը ազդեցություն կարող է ունենալ վերը նշված փոփոխությունների անհավասարության հետ: Հենց այն թույլ է տալիս վերաբաշխել միջոցները չափազանց հարուստ և ավելի քիչ ապահովված շերտերի միջև մասնագիտացված հիմնադրամների միջոցով: Բացի այդ, պետության համընդհանուր բարեկեցությունը ապահովվում է որոշակի ծրագրերի իրականացմամբ, որոնք ուղղված են բնակչության եկամուտների մակարդակի հավասարեցմանը, աղքատության դեմ պայքարին և աղքատներին աջակցելուն: Միևնույն ժամանակ, սոցիալական աջակցության և կարիքավորներին օգնության պետական ծրագրերը նպաստում են կյանքի նկատմամբ պասիվ վերաբերմունքի և մակաբուծության[3]:

Ներկայումս Հայաստանի կառավարությունը աղքատության հաղթահարման համար առաջնորդվում է «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով»: Ըստ այդ ծրագրի, նախատեսվում է աղքատության մակարդակը 2017թ. հասցնել 24%-ի, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը 2.4%-ի: Ծայրահեղ աղքատության մակարդակը, ըստ 2015թ. վիճակագրական տվյալների, արդեն իսկ 2% է, իսկ ինչ վերաբերում է աղքատության մակարդակին, ապա 2016թ. տվյալներով՝

---

[1] **Дорлинг Д.,**“Равенство” // Москва: Терра: Книжный Клуб Книговек, 2014, с. 11.

[2] **Костылева, Л. В.** “Социально-экономическое неравенство населения региона” // Л.В. Костылева, К.А. Гулин, Р.В. Дубиничев., Вологда: Институт социально-экономического развития территорий РАН, 2009, с. 9.

[3] **Кондауров В. И.** , Страданченков А. С. “Социология”: Общий курс: Учебник // Кондауров В. И. ИНФРА-М, 2013, с. 101.

աղքատության մակարդակը 29.4% է, և դժվար է ակնկալել, որ 2017թ. աղքատության ցուցանիշը կնվազի մինչև 24%:

Չնայած 2017թ. տնտեսական աճը կազմել է 7.7%, սակայն որակական առումով, ըստ տնտեսագետների և պաշտոնյաների, այն չի կարող զգալիորեն ազդել աղքատության մակարդակի նվազման վրա:

2020թ.-ի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները՝ համավարակ և 44-օրյա պատերազմ, իրենց հետքը կթողնեն ՀՀ տնտեսության և աղքատության մակարդակի բարելավման նպատակով իրականացվող ռազմավարական ծրագրի վրա: ՀՀ տնտեսությունը առավել շատ ժամանակ անհրաժեշտ կլինի ներկայիս տնտեսական վիճակի հաղթահարման համար: Ներկայումս այս գործոնների արդյունքում կարող է որոշակի ծավալներով արտագաղթի ծավալները մեծանալ, բայց դա չի նշանակում, որ պետության աղքատության մակարդակը դրանով պայմանավորված կարող է նվազել, դա ընդամենը կլինի քանակական ազդեցություն: Սա ավելի կարող է խորացնել ՀՀ-ում տնտեսական ճգնաժամը:

Մեր կարծիքով, միայն նյութական աջակցության միջոցով աղքատություն հաղթահարելն անհնար է, պետք է ուշադրություն դարձնել նաև հասարակությունում մարդկանց ներառվելուն, ծառայությունների մատչելիությանը, աշխատատեղերի ստեղծմանը, աշխատաշուկայում մարդկանց մրցունակության ապահովմանը: Հակառակ դեպքում, եթե աղքատությունը շատ արագ չի հաղթահարվում, ձևավորվում է աղքատության մշակույթ, երբ երկարատև աղքատության մեջ գտնվող մարդիկ դուրս են մղվում հասարակական ակտիվ կյանքից:

Յանկացած դեպքում, թե ինչպես կզարգանան դեպքերը, կամ որ սցենարով մենք ստիպված կլինենք առաջ շարժվել, պետք է կառավարությունը իր 17 աջակցման ծրագրերի տեսակների ցանցում շեշտը դնել ներքին ռեսուրսների օգտագործման վրա՝ հաշվի առնելով՝

- գյուղատնտեսության մեծ պոտենցիալը հատկապես էկոլոգիական և մաքուր սննդի ուղղություններով՝ սպասարկման և ծառայությունների ոլորտի աշխատակիցներին ներգրավելով,
- վերամշակող արդյունաբերության հնարավորությունները բոլոր հնարավոր ճյուղերում՝ մարզերում գործող հանրային սննդի և այլ սպասարկման ոլորտի ներկայացուցիչներին մասնակից դարձնելով,
- շինարարական աշխատանքների վերագործարկումը՝ արտագնա աշխատանքի չմեկնած մարդկային ռեսուրսի շահադրդման միջոցով,
- արհեստների և արհեստագործական բնույթի աշխատանքի ջատագովումը՝ երիտասարդ գործազուրկների շրջանում

• բարձր տեխնոլոգիաների ինժեներիայի խթանումը, մասնավորապես առողջապահության բնագավառում՝ ներգրավելով սկսնակ ընկերություններին:

Այս գործընթացների իրականացումը կարող է թույլ տալ, որպեսզի ՀՀ-ում չվերարտադրվի աղքատությունը:

**Нонна Хачатрян, Геворг Мартиросян, Актуальные проблемы неравенства в распределении доходов в Армении** - В статье рассматриваются сущность и причины сложившейся социально-экономической неравномерности распределения доходов в Армении. Проблема социально-экономического неравенства может восприниматься достаточно широко, от распределения результатов общественной работы между слоями населения до ощутимого неравенства в реальной жизни. По мнению авторов, основная причина этого явления - неравенство в распределении доходов населения. Высокая неравномерность распределения доходов в Республике Армения изначально связана с резким установлением рыночной экономики, периодом предварительного накопления капитала, отсутствием реальных профсоюзов и слабостью бюджетной политики в социальной сфере. Таким образом, такой уровень был усилен и стал вполне естественным для экономической системы Армении.

**Nonna Khachatryan, Gevorg Martirosyan, Current issues of income distribution inequality in Armenia** - The article discusses the essence and causes of the current socio-economic inequality of income distribution in Armenia. The problem of socio-economic inequality can be perceived quite widely, from the distribution of the results of public work among the layers of the population to tangible inequality in real life. According to the authors, the main reason for this phenomenon is the inequality in the distribution of income of the population.

The high inequality of income distribution in the Republic of Armenia is initially connected with the piercingly establishment of free market economy, the period of pre-accumulation of capital, the absence of real unions, and the weakness of the budget policy in the social sphere. Therefore, such a level was strengthened and became quite natural for the Armenian economic system.

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ


## ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ, ՎԻԳԵՆ ԲՈԴՈՅԱՆ



**Բանալի բառեր** - արտաքին առևտուր, կապիտալի տոքսիկ ներդրումներ, տնտեսական անվտանգություն, տնտեսական դիվանագիտություն:


Տնտեսական դիվանագիտությունը համամետաբար նոր ոլորտ է գիտական շրջանակներում: Այն ձևավորվում է միջազգային տնտեսական հարաբերությունների և դիվանագիտական գործառույթների հատույցում, նպատակ ունենալով շրջանցելու ուժային և ռազմական ճնշումները, բանակցային արվեստի գործիքակազմով պաշտպանելու ազգային տնտեսության շահերը, ապահովելու երկրի տնտեսական անվտանգությունը, մրցակցային դիրքեր զրավելու միջազգային շուկաներում: Տնտեսական դիվանագիտոթյան գործիքակազմի արդյունավետ կիրառումը հատկապես արդիական է դառնում հետպատերազմյան հայաստանյան իրակությունում, երբ երկրում խիստ կարիք է զգացվում օտարերկրյա ներդրումների ներգրավման, ատահանման ծավալների ընդլայնման, օտարերկրյա կապիտալով համատեղ ձեռնարկությունների գործարկման գծով: Սակայն, դրան ներկայումս գումարվում է նաև տնտեսական դիվանագիտության կողմից անվտանգություն ապահովող գործառույթը (տես գծապատկեր 1):

Այսօր արդեն պատերազմում հաղթում են ոչ միայն ռազմական, այլև տնտեսական էքսպանսիայի ճանապարհով, երբ երկրները արտաքին պարտքերի կտրուկ ավելացումների և օտարերկրյա թշնամական կապիտալի ագրեսիվ ներդրումային քաղաքականության շնորհիվ կորցնում են իրենց տնտեսական անկախությունը, արդյունքում նաև քաղաքական ինքնավարությունը, ընկնելով ոչ բայերացկամ պետությունների թելադրանքի տակ: Հատկապես, նման ռիսկայնության ոլորտում է ներկայումս գործում Հայաստանի Հանրապետության հետպատերազմյան տնտեսությունը, որը ուղղակիորեն կարող է հայտնվել թշնամական օտարերկրյա կապիտալի ճնշումների դաշտում: Եվ հենց այստեղ է, որ պիտի գործի տնտեսական դիվանագիտությունը, թույլ չտալով պանթուրքիստական կապիտալի ներխուժմանը երկիր և կանխելով ազգային տնտեսության ինքնավարության կորստի ռիսկերը:

**Գծապատկեր 1.** Տնտեսական դիվանագիտության առանցքային գործառույթները[1]




Փորձը ցույց տվեց, որ թավշյա հեղափոխությունից հետո այդպես էլ չակտիվացավ օտարերկրյա ներդրումների հոսքը Հայաստանի Հանրապետություն, որը պետք է դառնար տնտեսական բարեփոխումների հիմնասյուներից մեկը: Ավելին, հետպատերազմյան առաջիկա տարիներին, մեր խորին համոզմամբ, ներդրումային ակտիվություն հանրապետությունում ևս չի արձանագրվելու, պայմանավորված մի շարք պատճառներով: Նախ, պատերազմից հետո ազգաբնակչության ընկճված տրամադրությունը անպայման իր ազդեցությունը կթողնի գործարար ակտիվության վրա, և կնպաստի “կապիտալի արտազաղթմանը” երկրից; Իսկ օտարերկրյա պոտենցիալ ներդրողը, տեսնելով ներքին ներդրումային պասիվությունը, որոշակիորեն սպասողական վիճակում կհայտնվի:[2]

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը թերևս չունի վստահելի և շահախնդիր գործընկեր պետություններ, որոնք տնտեսապես կօժանդակեն և ներդրումներ կիրականացնեն երկրում: Ավելին, հետպատերազմյան թուլացած տնտեսությունը ևս մեկ առիթ կհանդիսանա միջազգային դոնորների կողմից տրամադրելու թանկարժեք վարկեր և ավելացնելու Հայաստանի արտաքին պարտքը:

[1] Կազմվել է հեղինակների կողմից:
[2] https://www.aravot.am/2021/01/06/1163420/

Եվ վերջապես, սփյուռքը, որը նույնպես ներդրումային մեծ պոտենցիալ ունի, դժվար թե առաջիկա տարիներին ակտիվ ֆինանսական ներարկումներ կատարի հայրենիքում, և նույնպես սպասողական դիրք կգրավի, քանի դեռ Հայաստանում չեն հանդարտվի քաղաքական կրքերը և երկիրը չի հայտնվի մակրոտնտեսական հավասարակշիռ վիճակում:

Իսկ որ ամենակարևորն է, պատերազմի վառոդի հոտը դեռ մի քանի տարի կմնա մեր տարածաշրջանում, պայմանավորված աշխարհաքաղաքական շահերի բախումներով: Ներկայումս հրանոթները լռել են, բայց մեր հարևան պետությունները անցել են սպառազինությունների մրցավազքի, կարծես պատրաստվելով նոր պատերազմի: Բնականաբար, նման իրողությունը պետք է որ բացասաբար  անդրադառնա ՀՀ ներդրումային միջավայրի գրավչության վրա:

Ներդրումային պասիվացման նման իրավիճակից կարող է օգտվել թշնամին, և թուրքական կապիտալի ինտերվենցիա կատարել Հայաստան: Երբեք չպետք է խանդավառվել և մեր հարևանների հետ սահմանների բացումը դիտարկել որպես տնտեսական համագործակցության ակտիվացման գործոն: Խնդիրն այն է, որ “թուրքալեզու կապիտալը” օգտվելով մեր հայրենիքում ձևավորված ներդրումային վակումից, կարող է ներխուժել տնտեսություն և ներազդել ազգային տնտեսական անվտանգության վրա, հանդես գալով որպես :[1]

Ընդհանուր առմամբ, “տոքսիկ” ներդրումների գծով տրվում են մեկնաբանություններ հիմնականում այն դեպքում, երբ կազմակերպությունները ակտիվներ ձևավորելով, հետագայում կանգնում են դրանց իրացվելիության խնդրի առջև: Հատկապես, այն դրսևորվում է բանկային համակարգում՝ հիփոթեքային վարկեր տրամադրելիս: Հայաստանի համար, օտերերկրյա “տոքսիկ” ներդրումների մեկնաբանման պարագայում մեր կողմից նկատի է առնվում նաև թուրքական կապիտալի ներհոսքը երկիր, որի ընդլայնումը պարզապես կառաջացնի տնտեսական անվտանգության թուլացման լուրջ ռիսկեր: Ուստի, բնավ պետք չէ ոգևորվել ՀՀ կառավարության պաշտոնյաների  ներկայիս հայտարարություններից սահմանների բացման, հարևանների հետ առևտրի աշխուժացման առումով, այլ անհրաժեշտ է այս հարցում զգուշավորություն ցուցաբերել՝ օրենսդրական ճանապարհով կանխարգելելով անբարենպաստ ներդրումային ռիսկերը և ձևավորելով տնտեսական անվտանգային ազգային իմունիտետ: Այս պարագայում, կարող է լուրջ դերակատարում կարող է ունե-

---

[1] http://www.dec.lv/mi/Baranay_Pavol.pdf

նեալ նաև տնտեսական դիվանագիտության կանխարգելիչ գործառույթի արդյունավետ կիրառումը։

Այսպես, վերլուծությունները ցույց են տալիս, որ Թուրքիայի հետ արտաքին առևտրաշրջանառության դեպքում, մասնավորապես՝ 2019 թվականին Թուրքիայից Հայաստան ներկրվել է 268,1 մլն ԱՄՆ դոլար արտադրանք, իսկ Հայաստանից Թուրքիա արտահանվել՝ ընդամենը 2,22 մլն դոլարի արտադրանք (ոսկերչական իրեր, անմշակ մորթիներ, մարդատար ավտոմեքենաներ և այլն), այսինքն՝ շուրջ 120 անգամից ավելի շատ ներկրում ենք Թուրքիայից, քան արտահանում։ Դրան զուգահեռ, պետք է արձանագրել, որ Թուրքիայից ներկրման ծավալները տարեցտարի ավելանում են։ Այսպես, 2019 թվականին Թուրքիայից Հայաստան ներկրումը ավելացել է 6,1 տոկոսով, իսկ դեպի Թուրքիա արտահանումը նվազել է 12,3 տոկոսով։[1] Ընդհանուր առմամբ Հայաստանի արտահանման կառուցվածքում Թուրքիայի տեսակարար կշիռը 2020 թ. առաջին կիսամյակում գրեթե 0% է, իսկ ներմուծման կառուցվածքում՝ 4.9%։

Վերջին տասը տարիներին Հայաստանը Թուրքիայից ներմուծել է 137-268 մլն ԱՄՆ դոլարի արտադրանք, իսկ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2019 թվականին՝ 268.1 մլն ԱՄՆ դոլար։[2] Հայաստանի արտահանման կազմում Թուրքիայի տեսակարար կշիռը 2019 թվականի տվյալներով 0.1% է կամ 2.22 մլն ԱՄՆ դոլար (ոսկերչական իրեր, անմշակ մորթիներ, մարդատար ավտոմեքենաներ և այլն), իսկ ներմուծման կազմում՝ 4.9% (գծապատկեր 2)։

Մաքսային ծառայության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանն ավելի քան 700 անուն ապրանք է ներմուծում Թուրքիայից։ Ընդ որում, այս ներմուծումը բավական բազմազանեցված է՝ հագուստից, կոշիկից, նավթամթերքից մինչև կենցաղային ապրանքներ, շինանյութ և այլն։ Ներմուծվում է ինչպես պատրաստի արտադրանք, այնպես էլ տեղական տարատեսակ արտադրություններին անհրաժեշտ հումք։

Հայկական շուկայում 2019 թ. առկա թուրքական արտադրանքն ըստ տեսակների և արժեքների հետևյալն է[3].

- հագուստ՝ 69.4 մլն ԱՄՆ դոլար,
- ցիտրուսային պտուղ՝ 10.3 մլն ԱՄՆ դոլար,
- մեքենաներ, կենցաղային սարքավորումներ և մեխանիզմներ՝ 35.3 մլն ԱՄՆ դոլար,
- նավթ և նավթամթերք՝ 24.3 մլն ԱՄՆ դոլար,

---

[1] https://b24.am/economy/260653.html

[2] **Բարսեղյան Ա., Խաչատրյան Ա,** Թուրքական ծագման ապրանքների հնարավոր այլընտրանքը ՀՀ շուկայում, ՀՊՏՀ, Ամբերդ տեղեկագիր, 2020, #6, էջ 74։

[3] https://www.e-draft.am/projects/2801/justification74

- քիմիայի և, դրա հետ կապված, արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ 23.6 մլն ԱՄՆ դոլար,

- ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 21.6 մլն ԱՄՆ դոլար:

**Գծապատկեր 2** Հայաստան–Թուրքիա առևտրաշրջանառությունը 2010–2020 թթ. (մլն ԱՄՆ դոլար)[1]




Հայաստանը Թուրքիայից ներմուծում է հիմնականում վերջնական սպառման՝ պատրաստի ապրանքներ, որոնք ներմուծման մոտ կազմում 80% են, իսկ մնացած 20% - ը բաժին է ընկնում միջանկյալ սպառման

Թուրքիայի հետ առևտրային հարաբերություններում Հայաստանը գլխավորապես ներմուծողի դերում է և արտահանումը չափազանց սահմանափակ բնույթ է կրում: Վերջին տարիներին մեր երկիր է ներմուծվել տարեկան նվազագույնը 137 մլն ԱՄՆ դոլարի թուրքական ապրանք, ու թեև այդ գումարը մեր տնտեսության համար զգալի է, Թուրքիայի տնտեսության մեջ այն չնչին դերակատարում ունի:[2]

Թերևս, Արցախյան 2020 թվականի գոյամարտի օրերին ՀՀ կառավարության հոկտեմբերի 20-ի թիվ 1708-Ն որոշմամբ արգելվեց վերջնական ապրանքների սպառման ներմուծումը Թուրքիայից Հայաստան, սակայն այն ժամանակավոր բնույթ ունի և ավելին՝ հումքի վրա առայժմ արգելք դրված չէ:[3] Դրան հավելենք նաև այն, որ մեր օրերում անընդհատ քննարկվում է Թուքիայի և Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետութ-

[1] https://www.trademap.org/Country_SelProductCountry_TS.
[2] https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIForeignTradeByCountries
[3] https://www.gov.am/news/item/14934/

յան տնտեսական և քաղաքական շփումների ակտիվացման հարցը: Ընդ որում, կարծիքները չափազանց ծայրահեղ են. մոռանալ անցյալը, նայել առաջ, և սկսել ակտիվ առևտուր անել մեր հարևանների հետ, կամ ընդհակառակը, մեկուսանալ և պասիվանալ՝ ընդհանրապես չշփվելով թշնամի հարևանների հետ: Կարծում ենք, որ այսօր այդ հարցերը պետք է լուծվեն ողջամտության սահմաններում, երբեք թուրքերին չհամարելով վստահելի գործընկերներ, առավել ևս՝ անվտանգության երաշխավորներ: Բայց զուգահեռաբար անհրաժեշտ համարել նաև ակտիվացնելու ենթակառուցվածքների բացման գործընթացում հայանպաստ ուղիների որոնումը և դրանով իսկ, մեր կամքը թելադրելու ոչ բայրացկամ հարևաններին: Իսկ այդ ուղիները կան, և գոնե հիմա իրավունք չունենք դրանք մեր ձեռքից բաց թողնելու:[1]

Եթե բացելու ենք սահմանները, թուրքական կապիտալին թույլ տալով անարգել միրճվել Հայաստանի տնտեսական շուկա, ապա մեր դարավոր թշնամուն տուն ենք հրավիրելու, որ տնտեսական համագործակցության քողի տակ երկիրը քանդի ներսից, խարխլի ազգային անտանգությունը, խլպառ վերացնի առանց այն այն էլ մեր պետության տկարացած տնտեսության ինքնավարությունը: Այս պարագայում, մեզ համար բնավ չի գործելու այն ընդունլի մոտեցումը, թե օտարերկրյա կապիտալը ազգություն չի ճանաչում և հանգրվանում է այնտեղ, որտեղ շահաբեր է, անգամ, երբ այն նույնիսկ շահաբեր է մեզ համար:

Թուրքիայի կողմից նախաձեռնած շրջափակումը, որն ի դեպ դեռևս երեսուն տարի առաջ նպատակ ուներ տնտեսապես ծնկի բերելու Հայաստանը, իր բացասական հետևանքներով մեզ համար դրական ազդեցություն ունեցավ այն առումով, որ ձեռք բերեցինք գոյատևման իմունիտետ, անգամ արտաքին աշխարհ դուրս գալու սահմանափակ ճանապարհների դեպքում: Ուրեմն, չպետք է խանդավառվենք, թե սահմանների բացումով տնտեսական թռիչքաձև աճ ենք ունենալու, նամանավանդ, համագործակցելով և մերձենալով մեր թուրքալեզու հարևաննեի հետ:

Սակայն, սահմանների բացումը, որն արդեն 2020 թվականի նոյեմբերի 9-ից պարտադրանք դարձավ մեզ համար, ունի նաև իր դրական նշանակությունը: Իրանը և Ռուսաստանը, որոնք չափազանց շահագրգռված են տնտեսական հաղորդակցման ճանապարհներ ունենալու համար, ամեն ինչ անելու են, որ Մեղրիի տարանցիկ ճանապարհը անխափան գործի: Իսկ դա շատ կարևոր խաղաթուղթ կդառնա մեզ համար: Որքան էլ որ գտնվենք տնտեսապես հզորների թելադրանքի ազդեցության ներքո, այնուամենայնիվ, ստեղծված նոր իրավիճակում հայերի կողմից էլ կլինեն

[1] https://www.aravot.am/2021/02/18/1171881/

հակազդեցության լծակներ, կապված տարանցիկ ճանապարհի անխափան գործարկման հետ, եթե իրականացնենք ճկուն դիվանագետություն: Նամանավանդ, որ այն արդեն իսկ իրականացվում է հենց Թուրքիայում:

Այսպես, ներակյումս Թուրքիան իր ներքին շուկայի պաշտպանության համար շատ լայն գործիքակազմ ունի, օրինակ՝ թուրքական պետական բանկը տրամադրում է արտահանման վարկեր, երկրի թույլ զարգացած շրջաններում պետությունը սուբսիդավորում է էլեկտրաէներգիայի սպառումը, ԱՀԿ-ին իր անդամակցության պայմանների համաձայն՝ Թուրքիան կարող է ներկրվող ապրանքախմբերի կեսի համար նախատեսել մինչև 48 տոկոս մաքսատուրք, ինչը բնականաբար լուրջ խոչընդոտներ է ստեղծում դեպի Թուրքիա արտահանման համար: Բացի այդ, Թուրքիան սահմանափակում է ներկրումները տարբեր քաղաքական շարժառիթներից ելնելով, օրինակ՝ տարիներ առաջ Թուրքիայի մաքսային ծառայությունն արգելել էր հայկական «Արարատ» կոնյակի ներմուծումը՝ պատճառաբանելով, որ «Արարատ» անվանումը կարող է թյուրիմացության մեջ գցել թուրք սպառողին:[1]

**Армен Джугурян, Виген Бодоян, Послевоенные вопросы экономической дипломатии в РА** - В статье выражается убежденность в том, что в результате окончания Арцахской войны 2020 года если границы будут открыты, то со стороны армян будет сделано все, чтобы не перейти к опасному сотрудничеству и сближению с недружественными соседями. Наоборот, становится необходимостью перехода к гибкой экономической политики и дипломатии с целью обеспечения безопасности национальной экономики. Тем самым, для армянского народа в регионе Мегри налаживание транзитного коридора должен стать влиятельным рычагом в сфере дипломатии, пытаясь вести переговоры с сильными державами, насколько это возможно, тем самым решая проармянские вопросы.

**Armen Tshughuryan, Vigen Bodoyan, Post-War issues of economic diplomacy in RA** - The article expresses the conviction that, as a result of the end of the Artsakh war in 2020, if the borders are open, then the Armenians will do everything not to move to dangerous cooperation and rapprochement with their unfriendly neighbors. On the contrary, it becomes a necessity for a transition to a flexible economic policy and diplomacy in order to ensure the safety of the national economy. Thus, for the Armenian people in the Meghri region, the imposition of a transit corridor should become an influential lever in the field of diplomacy, trying to negotiate with strong powers as much as possible, thereby solving pro-Armenian issues.

---

[1] https://b24.am/economy/260653.html

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ, ԱՐՏԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**Բանալի բառեր** - գյուղապահովագրություն, ֆինանսական կայունություն, ապահովագրավճարներ, ապահովագության շահառուներ, ապահովագրական փոխհատուցում:

Գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետ քաղաքականություն իրականացնելիս անհրաժեշտություն է ծագում ձևավորելու ապահովագրական գործընթացի կայուն միջավայր, որը դրսևորվում է ոչ միայն ապահովագրության շարունակականության ապահովմամբ, այլև նաև այդ շրջանակի ընդլայմամբ: Գյուղատնտեսական ապահովագրական ռիսկերը առավելպես ձևավորման օբյեկտիվություն ունեն, որոնք կարող են սրվել, ելնելով բնակլիմայական պայմանների վատթարացման հանկարծակիությունից, կենդանիների շրջանում համաճարակների բռնկման անկախատեսելիությունից, գյուղմթերքների իրացման շուկայական պայմանների կտրուկ վատթարացումից: Ուստի, ապահովագրումը եթե ֆերմերների տեսանկյունից չի գնահատվում արդյունավետ, ապա կարող է իրականացման երկարաժամկետություն չունենալ և ընդհատվել պայմանագրերի ժամկետների լրանալուց հետո: Խոշոր եղջերավորների պիլոտային ծարգիրը, հենց դրա վառ օրինակն է: Երբ ապահովագրավճարի սուբսիդավորումը չեղավ, բոլորը հրաժարվեցին վերակնքել պայմանագրերը:

Հենց այս նկատառումներով էլ կարևորվում է գյուղատնտեսական ապահովագրության կայուն մակարդակի պահպանումը, որին կարող են օժանդակել այնպիսի առանցքային գործոններ, ինչպիսիք են ապահովագրական անհրաժեշտ և բավարար ֆինանսական պաշարի ձևավորումը, ապահովագրական ծածկույթի շարունակական ընդլայնումը, ապահավագրության հասանելիությունը, շահառուների շրջանում ապահովագրության ռիսկային վնասների հիմնավոր վերաբաշխումները (տես գծապատկեր 1):

Ապահովագրական գործառույթների ապահովման անհրաժեշտ ֆինանսական պաշարների ձևավորումը թե մասնագիտական գրականության, և թե գործնականում, հիմնականում կատարվում է երկու ուղղությամբ՝ բավարար ապահովագրավճարների հավաքագրում[1] և ապա-

[1] Обзор ключевых показателей деятельности старховчиков, Инфоврмационно-аналитический материал, Центральный бнак Росиии, М. 2017, стр. 6-8.

հովագրական ընկերությունների ֆինանսական կայունության նորմատիվների պահպանում[1]:

**Գծապատկեր 1.** Գյուղատնտեսական ապահովագրության կայուն մակարդակի ապահովման առանցքային գործոնները[2]




Միաժամանակ, ապահովագրական ընկերությունների կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները, մեր կարծիքով, լիարժեք չեն ներկայացնում ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունությունը, քանի որ դրանք ռետրոսպեկտիվ բնույթ են կրում և ընդամենը ընդգրկում են անցյալ ժամանակաշրջանի գործողությունների արդյունքներ:

ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունների կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները վկայում են ֆինանսական կայունության մասին, քանի որ վերջին տարիներին արձանագրվում է շահույթի աճ, տնօրինվող ակտիվների ավելացում: Սակայն, հրատա-

[1] ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» 3/02 կանոնակարգ, 311-Ն որոշում, 02.10.2007 թ.:

[2] Կազմվել է հեղինակների կողմից:

րակված ցուցանիշները չեն կարող ամբողջական համապարփակ պատկերացում տալ ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունության մասին, քանի որ դրանցով հնարավորություն չի ստեղծվում գնահատելու գյուղատնտեսական վերոհիշյալ ապահովագրության հասանելիության, ապահովագրական ծածկույթի ընդլայնման, շահառուների միջև ապահովագրական ռիսկերի վերաբաշխման բարելավումների ընթացքը (տես գծապատկեր 1):

ՀՀ Կենտրոնական բանկը գործողության մեջ է դրել ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականի (քամելս) հաշվարկման մեթոդաբանություն, որով ՔԱՄԵԼՍ համակարգի միջին գնահատականով հաշվարկվում է ապահովագրական ընկերության կապիտալի համարժեքության, ակտիվների որակի, վերապահովագրության, ակտուարային հաշվարկների և տեխնիկական պահուստների, եկամտաբերության, իրացվելիության, շուկայական ռիսկերի նկատմամբ զգայնության ցուցանիշներ:[1]

Այսպես, համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ՔԱՄԵԼՍ հաշվարկման մեթոդաբանության, ակտիվների որակ հարաբերակցություններից Ա3 ցացանիշը 5 բալանոց համակարգով գնահատում է ապահովագրական ընկերության գործունեությանը վերաբերող ստացվելիք միջոցների կշիռը բուն ապահովագրական գործունեության գծով եկամուտ ճանաչված միջոցներում, որը կարելի է համարել նաև ֆինանսական պաշարների գնահատման ցուցանիշ:[2]

Ընդ որում, բալերի հավաքագրումը իրականացվում է հետևյալ սանդղակով, որտեղ Ա3-ը հանդես է գալիս որպես հարաբերական մեծություն, նրան վերագրելով համապատասխան բալեր.

Ա3 ≤ 15% =5

15% < Ա3 = 25% =4

25%< Ա3 = 30 % =3

30% < Ա3 = 40 % =2

Ա3 > 40% =1

Հարաբերական Ա3 ցուցանիշի համարիչում ներառվում են ստացվելիք ապահովագրավճարները, վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ստացվելիք վերաապահովագրավճարները, հատուցումների գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարները, հատու-

[1] «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականի (քամելս) հաշվարկման մեթոդաբանության կարգը հաստատելու մասին», ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 16.11.2007թ. թիվ 365-Ն որոշում:

[2] Նույն տեղը:

ցումների գծով համաապահովագրողներից ստացվելիք գումարները՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ: Իսկ այդ ցուցանիշը հայտարարում ընդգրկվում են ապահովագրության, համաապահովագրության պայմանագրերի գծով եկամուտ ճանաչված ապահովագրավճարները, վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով վերաապահովագրավճարները, վերաապահովագրողների բաժինն ապահովագրական հատուցումներում, հատուցումների գծով եկամուտները համաապահովագրողներից՝ հաշվետու և դրան նախորդող 3 եռամսյակների կտրվածքով:[1]

Մեր հետազոտությունների արդյունքնում կարծում ենք, որ ապահովագրական գործընթացի ֆինանսական պաշարի գնահատման նման մոտեցումը որոշ պայմանականություններ ունի: Նախ, բալային համակարգով գնահատումները իրատեսական պատկերի հստակ ներկայացում չեն ապահովում, քանի որ բալային գնահատումները հիմնականում համեմատման վերլուծությունների նկատառումներ ունեն: Բացի այդ, ԱՅ-ը հաշվարկվում է կոնկրետ ապահովագրական ընկերության գծով, և որպես կանոն, հաշվի չի առնում ապահովագրական գործընթացի մյուս շահառուների առնչությունը ֆինանսական կայունությանը:

Այս առումով, մեր կողմից առաջարկվում է կիրառել ֆինանսական կայունության պաշարի գնահատման այնպիսի մոտեցում, որի դեպքում հաշվի է առնվում ապահովագրական գործընթացի շահառուները ուղղակի կամ անուղղակի ճանապարհով մասնակցության չափաբաժինը ապահովագրական գործընթացի ֆինանսական հոսքերի ձևավորման գործընթացին: Այսինքն, ի նկատի են առնվում այն ֆինանսական հոսքերը, որոնք նպաստում են ապահովագրական գործընթացն առնչություն ունեցող ապահովադիրի ֆինանսական բեռի:

Այսպես, եթե պետությունը սուբսիդավորում է ապահովագրավճարների որոշակի բաժնեմաս (G), առևտրային բանկերը արտոնյալ վարկեր են տրամադրում գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման համար՝ կարկտապաշտպան ցանցեր, հակակարտային կայաններ, կաթիլային ոռոգման համակարգեր և այլն, նվազեցնելով այդ նպատակով փոխառնված վարկերի տոկոսային ծախսերը (B), համայնքային բյուջեից ֆերմերներին տրվում են սուբսիդիաներ թունաքիմկատների ձեռք բերման նպատակով (C), բերքի վերամշակման կազմակերպությունները մթերվող գների սահմանման կայուն քաղաքականություն են իրականացնում գյուղմթերքների շուկայական գների կտրուկ նվազման պարագայում, կանխելով ֆերմերի վնասները (M), կատարում են ֆյուչերսային գնումներ, ապա ձևավորվում է մի իրավիճակ, երբ ֆերմերներին ֆինանսական ա-

[1] Նույն տեղը:

ջակցություն է ցուցաբերվում ΣFS=G+B+C+M գումարով, որը ուղղակի կամ անուղղակիորեն առնչվում է ապահովագրական գործընթացին:

Հետևաբար, նման պարագայում, որքան մեծանում է այդ աջակցությունը (ΣFS), այնքան ֆերմերները շահախնդիր են դառնում մասնակցելու ապահովագրությանը և վճարելու ΣEP ապահովագրավճարներ:

Ելնելով դրանից, կարելի է առաջարկել ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունության գնահատման ընդհանրական ցուցանիշ, որը արտահայտվում է գյուղատնտեսական ապահովագրության գործընթացին առնչվող այլընտրանքային օգուտների և հավաքագրվող ապահովագրավճարներ հարաբերությամբ (ΣFS/ ΣEP): Բնականաբար, որքան աճի այդ ցուցանիշը, այնքան կբարձրանա գյուղատնտեսական ապահովագրության ֆինանսակայան կայունությանը շահառուների մասնակցային աստիճանը, և հակառակը:

Այդ հարաբերակցության կիրառումը, որպես ֆինանսական կայունության գնահատման ընդհանրական ցուցանիշի, մեր կարծիքով, կնպաստի գյուղատնտեսական ապահովագրության կայունության գնահատման հավաստիության բարձրացմանը՝ մի շարք առումներով: Նախ, այն հաշվի է առնում ոչ թե մեկ, այլ ապահովագրական գործընթացում ընդգրկված բոլոր շահառուների ֆինանսական հոսքերը: Նաև, ցուցանիշը յուրատեսակ տեղեկատվություն է տրամադրում շահառուների միջև ապահովագրական գործընթացում ռիսկային ֆինանսական վնասների վերաբաշխման առումով (տես գծապատկեր 1):

Այսպես, ցուցանիշի աճի միտումը կարձանագրի ապահովագրության շահառուների ֆինանսական աջակցությունը մեծացումը՝ գյուղատնտեսական ապահավգրական գործընթացի կայունության ամրապնդելիս: Մյուս կողմից, եթե գրանցվի գյուղատնտեսական ապահովագրավճարների աճի միտում, ապա այն նվազեցնում է ֆինանսական կայունության գնահատման ընդհանրական ցուցանիշի մեծությունը, որն իր հերթին յուրատեսակ ազդակ է հանդիսանում այն առումով, որ ապահովագրական գործընթացի մյուս շահառուները պասիվանում են ապահովագրության կայուն զարգացման ֆինանսական աջակցման ոլորտում:

Հետևաբար, ֆինանսական կայունության գնահատման ընդհանրական ցուցանիշը կարող է համարվել նաև ապահովագրական գործընթացի ֆինանսավորման արդյունավետությունը գնահատող յուրօրինակ գործիք, որով տեղեկատվություն է տրամադրվում ֆինանսական մասնակցային ներհոսքերի վերաբերյալ:

**Армен Акопян, Артак Мартиросян, Совершенствование оценки финансовой устойчивости страхования сельского хозяхюйства** - Повышение

степени доступности страхования и соответственно расширение страхового покрытия в аграрном секторе не должно приводить к снижению темпов участия бенифициаров в этом процессе. В статье предлагается использовать комплексный показатель финансовой устойчивости страхового процесса.

Применение предложенного показателя, может способствовать как отчетности так и совершенствования самого процесса сельскохозяйственного страхования и обоснованности управленческих решений, принимаемых в области непрерывности страхования и финансовой стабильности.

**Armen Hakobyan, Artak Martirosyan, Improvement of the financial stainability assesment in agricultural insurance** - Improvment of availability of insurance servises and accordingly a coverage in the agricultural sector, should not decrease a rate of involvement of insurance beneficiaries in that process. In the article has offered a comprehensive indicator of the financial stability of the insurance process. Thus, the application of the proposed indicator, could contribute to the reporting process of the agricultural insurance as well as improve the management decisions regarding the continuity of insurance and financial stability.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻՑ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

ՄՀԵՐ ՕԹԱՐՅԱՆ

**Բանալի բառեր** - տնտեսական կապեր, ապրանքաշրջանառություն, ներմուծող/արտահանո երկիր, առևտրատնտեսական հարաբերություններ, ապրանքախումբ, փոքր ու միջին ձեռնարկատիրություն, կանխատեսելի ռիսկեր։

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության (այսուհետ ՀՀ և ԹՀ) աշխարհագրական մերձեցումը, պատմականորեն ձևավորված տնտեսական կապերն ու մշակությանին, կենցաղային նմանությունները ելակետային նախադրյալներ են հանդիսացել քաղաքական հակասություններին զուգահեռ տնտեսական կապերի առաջացման համատեքստում։ ՀՀ-ի համար ԹՀ-ի հարաբերությունների խորացումը մի կողմից դիտարկվում է առավելապես նոր հնարավորություն երկրի տնտեսության զարգացման համար,մյուս կողմից հայ թուրքական տնտեսական հարաբերությունների խորացումը դիտարկվում է որպես անվտանգության սպառնալիք։ Այս առումով մտավախությունների սպեկտրը լայն է: Այն ընդգրկում է ներկրվելիք ապրանքների որակի ու սննդի անվտանգության վերաբերյալ մտահոգությունները, անշարժ գույքի շուկայում գնաճն ու վարկերի մատչելիության նվազումը, օտարերկրյա ներդրումների դաշտի օրենսդրական կարգավորման բացեր, Թուրքիայի պրոտեկցիոնիստական քաղաքականությունը՝ սեփական արտահանողներին ի շահ և ի վնաս հայ արտահանողների և այլն[1]:

Երկու երկրների տնտեսական համագործակցությունից ակնկալվող վնասների և օգուտների մասին խոսելիս հիմնականում հղում է կատարվել քանակական տվյալների վերլուծությանը՝ մասնավորապես վիճակագրական տվյալներին, արտահանում-ներկրում հարաբերակցությանը։ Այս հոդվածում բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրություն ապահովելու նպատակով մենք խորը վերլուծության ենք ենթարկել ՀՀ և ԹՀ տնտեսական համագործակցության մասին ուսումնասիրություններ,

[1]Հայաստան - Թուրքիա հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները. Համայնքային քննարկումներ Հայաստանի Հանրապետության մարզերում. արդյունքների վերլուծություն:

տարբեր մոտեցումներ և հիմնավորումներ ունեցող փորձագիտական խմբի դիտարկումները[1]:

Հետազոտության համար ընտրված թեմայի հետ կապված փորձա-գետները ունեին տարբեր մոտեցումներ և հիմնավորումներ, ինչը մեզ հնարավորություն տվեց խորությամբ ուսումնասիրել հետազոտության համար ընտրված երկրների փոխհամագործակցային տիրույթի մաս կազ-մող անհրաժեշտ ոլորտների տեսկան հիմքը, ստացված տվյալների միջև առկա պատճառահետևանքային կապերը:

Անդրադառնալով թուրք հայկական ապրանքաշրջանառության հիմ-քերին փորձագետներից մեկը նշեց, որ հայերն ու թուրքերը առևտուր ա-րել են նաև 1918-1920 թվականներին և խորհրդային առաջին տարիներին: Այդ ժամանակ առևտուրը ուղղակի էր, քանի որ սահմանները բաց էին:1922 թվականի մարտին Խորհրդային Հայաստանը, որ դեռ մաս չէր կազմել ԽՍՀՄ-ին, թույլատրում էր առանց մաքսի Թուրքիայից ներմուծել առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքներ՝ անտառային նյութեր, անասուններ, աղ, անասնակեր (գլխավորապես սեղմած խոտ), հատիկ-ներ, կաթնատնտեսական մթերքներ և այլն: Վերլուծաբանի խոսքերով Հայաստանի արտաքին առևտրի հաշվեկշռում Թուրքիայի արտահան-ման մեջ կազմում է 0,1 տոկոսից էլ պակաս:

*Մեջբերում ենք .«Եթե Հայաստանը մի օր որոշի, որ այլևս ոչ մի ապ-րանք չի գնելու Թուրքիայից, վերջինիս տնտեսությունը որևէ ձևով դա չի զգա: Հակառակը, եթե թուրքերը որոշեն, որ հայաստանցիներին որևէ ապ-րանք չեն վաճառում, ապա հայկական շուկայում կառաջանա առաջին անհրաժեշտության մի քանի տասնյակ ապրանքների դեֆիցիտ: Ճիշտ է, անհարաժեշտություն է դրանց տեղը լրացնելու ռուսական, չինական կամ այլ երկրների ապրանքներով»[2]:*

Փորձագետներից մեկը անդրադառնալով հետզոտության համար ա-ռանձնացված երկրների ոչ ֆորմալ առևտրատնտեսական հարաբերութ-յունների խորացման հնարավոր միտումներին նշեց, որ մի շարք ոլորտ-ներում արդեն իսկ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերություններ, համագործակցություն ու շփումներ գոյություն ունեն: Ավելին դրանք ու-նեն որոշակի կշիռ, շարունակաբար աճում կամ զարգանում են լրջագույն քաղաքական հակասությունների ու դիվանագիտական հարաբերություն-ների բացակայության պայմաններում: Սահմանը շարունակում է փակ մնալ, սակայն ինչպես այն նախկինում բաց էր մասնակիորեն, ապա այժմ

---

[1]Անհատական հարցազրույցներ են անցկացվել պատմաբան-վերլուծաբանի, 2 տնտեսա-գետի հետ: Հիմք ընդունելով հարցազրույցի մասնակիցների ցանկությունը հոդվածում մեջ չեն նշվել հարցազրույցի ընթացքում տեղ գտած մեջբերումների հեղինակների անունները:

[2]Հատված **տնտեսագետ փորձագտի** հետ ունեցած հարցազրույցից (02.03.2020)

էլ փակ է մասնակիորեն: Խոսելով Հայաստանի և Թուրքիայի օդային սահմանի մասին՝ փորձագետը նշում է , որ միջև ցամաքային սահմանի հատումն անօրինական է և անիրական,օդային սահմանն ակտիվորեն օգտագործում են Երևանից Ստամբուլ և հակառակ ուղղությամբ թռչող օդանավերը բերերելով զբոսաշրջության ոլորտց առակա համագործակցային կապողիներ նա նշեց.

